Էջմիածին



Բ-Գ
2007

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրուար - Մարտ

2007

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՎՐՈՒՄ

Ռուսաստանում Հայաստանի տարին տակավին չավարտված սեպտեմբերի 2 ին մերազնյա Հանրապետության անկախության տոնի օրը մեկնարկեց Ֆրանսիա յի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության տարին

Հայոց Մեծ Եղեռնից հետո Ֆրանսիան այն երկրներից մեկն էր որը ապաստան տվեց հայ ժողովրդի եղեռնահար բազմահազար զավակների

Այսօր սակայն Ֆրանսիան իր դռները արդեն բացել է ոչ թե հայ գաղթականնե րի առջև այլ հաղթանակած հայ ժողովրդի վերհառնած Հայոց Պետության Այսօր այդ դռները բացվում են ոչ թե կարեկցությամբ այլ հիացմունքով ու խորը գնահա տանքով. այս անգամ Ֆրանսիան հյուրընկալում էր հայոց հավատքի սրբազան մա սունքները հայոց ճարտարապետության մշակույթի ու գրականության կոթողային ստեղծագործությունները

Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակում հայ բազմադարյա մշակույթի առջև իր դռներն է բացել նաև աշխարհահռչակ Լուվրի թանգարանը

Փետրվարի ին այստեղ տեղի ունեցավ . . . Սրբազան Հայաս տան խորագրով ցուցահանդեսը որի կազմակերպմանը իրենց մասնակցությունն էին բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ՀՀ Մշակույթի ու երիտասարդության հարցերի նախարարությունը Մաշտոցի անվան Մատենադարանը Հայաստանի պատմության և Սարդարապատի թանգարանները ինչպես նաև Ֆրանսիայից մի քանի հաստատություններ

«Սրբազան Հայաստան ցուցահանդեսը ներկայացնում է Դ-ԺԹ դարերի հայ հո գևոր արվեստը և մշակույթը

Նորին Սրբություն Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Լուվրի ցուցահանդեսին ներկայացրել էր թվով 7 սրբություններ և եկե ղեցական սրբազան առարկաներ ի շարս որոնց Նոյյան տապանի մասունքը Աստվածամուխ Սուրբ Գեղարդը Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաք յալների Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները Աշոտ Բ Երկաթ արքայի Սուրբ Խաչը Կենաց Փայտի մասունքով Խոտակերաց Սուրբ Նշանը և հոգևոր արվեստի այլ նմուշներ

Ցուցահանդեսի պաշտոնական բացումը կատարվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամե նայն Հայոց Կաթողիկոսի օրհնաբեր ներկայությամբ և մասնակցությամբ Հայաս տանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ֆրանսիայի Հանրա պետության նախագահ Ժակ Շիրակի Բացման արարողությանը մասնակցեցին նաև Ֆրանսիայի և Հայաստանի պետական ավագանու բարձրաստիճան ներկայա ցուցիչներ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ և Արևմտյան Եվ րոպայի հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագ գաշյանը մշակութային գործիչներ ֆրանսիացիներ և ֆրանսահայեր

Նույն օրը փետրվարի ի երեկոյան հանրության համար նախատեսված մուտքի արարողությանը մասնակցեցին ավելի քան 2000 այցելուներ որոնք իրենց հիացմունքն արտահայտեցին հայ քրիստոնեական արվեստի գոհարները տեսնե լով իրենց համար Հայաստանը և հայությունը նորովի բացահայտելով

Արդարև այս հեղինակավոր միջոցառումը բարձրակետն է Ֆրանսիայում Հա յաստանի տարվա միջոցառումների որը հայ և ֆրանսիացի ժողովուրդների պատ

մության մեջ պիտի հավերժանա այդ առիթով հրատարակված . . . կա տալոգով Ահավասիկ ուրախալի մի իրադարձություն որը սակայն մթագնվեց այնպիսի լուրջ սխալներով որոնք զարմանալի ձևով տեղ էին գտել ցուցահանդեսի պաշտոնական այցեքարտ հանդիսացող կատալոգում

Հայոց Եկեղեցին ինչպես անցյալում այսօրվա թյուրիմացության կապակցութ յամբ ևս իր արդար ձայնը բարձրացրեց. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Գերագույն Հոգևոր Խորհուրդը Լուվրի թանգարանի նախագահ-տնօրեն Անրի Լո ւարետին ուղղեց մի գրություն որում ի մասնավորի ասվում է. Ցավով պետք է ար ձանագրենք սակայն որ մեր ուրախությունը մեծապես մթագնեց երբ իմացանք որ այս առիթով հրատարակվող հարուստ կատալոգի էջերին կան այնպիսի լուրջ սխալներ որոնք Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների կողմից իրավամբ կա րող են համարվել ոչ բարեկամական մոտեցում մեր Եկեղեցու հանդեպ Ափսոսում ենք հատկապես որ կատալոգի հեղինակները խոցել են աստվածաբանական հիմ քերը և Հայ Առաքելական Եկեղեցու ավանդությունը այն ներկայացնելով որպես «մոնոֆիզիտ Եկեղեցի և վիճելի համարել նրա առաքելական ծագումը Բազմաթիվ այլ անհիմն սխալներ դժբախտաբար զարդարում են համենայն դեպս հայտնի հեղինակների տեքստերը Իրականում բազմաթիվ հին աղբյուրներ հաստատում են Հայ Եկեղեցու առաքելական հիմքը և մեր քույր Եկեղեցիները Հռոմեական Կաթո լիկ Եկեղեցի բյուզանդական ավանդությամբ Ուղղափառ Եկեղեցի ճանաչել են ա ռաքելական այդ բնույթը Սուրբ Էջմիածին փետրվարի 2007 թ. թիվ 2 2

Եվ որպեսզի ընթերցողների համար բացահայտվեն այդ սխալները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Լուվրի թանգարանից պահանջեց որ հիշյալ կատալոգի մեջ զե տեղվի մի գրություն հետևյալ բովանդակությամբ. Կատալոգում տեղ են գտել Հա յաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությանն ու դավանաբանությա նը վերաբերող հաստատումներ . . . . . ռ . . . ռ . 2 27 ռ . Չ Ռ . 7 7 . որոնք հակասում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետությանը և տեսակետներին

Նորին Վեհափառությունը Լուվրի թանգարանում կայանալիք ցուցահանդեսի բացման արարողության առիթով Փարիզ ժամանած օրը փետրվար 7 ին այցելեց Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի և Հայ րապետական օրհնություն բաշխեց թեմական Պատգամավորական անդրանիկ ժո ղովին Թեմական Խորհրդի և դիվանի նորընտիր անդամներին թեմական ժողով ների մասին տե՛ս էջ 2

Նորին Սրբությունն իր օրհնության խոսքում նշեց որ Թեմական Խորհուրդը և առաջնորդական տեղապահ Սրբազան Հայրն իրենց արդյունաշատ աշխատանքնե րով իր բարեհաջող ավարտին պիտի առաջնորդեն թեմական կառույցների ձևա վորման գործընթացը որը պիտի պսակվի թեմական առաջնորդի ընտրությամբ

Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը փետրվարի 2 ից մարտի ը հովվապետական այցով եղավ Հնդկաստանում՝ Հայ բապետական իր օրհնությունը բերելով հնդկահայ համայնքին Հովվապետական այս այցի ընթացքում Նորին Սրբությանը ուղեկցում էին Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը Մայր Աթոռի միաբան Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը Տ. Կտրիճ քահանա Դևեջյանը Տ. Հովնան աբեղա Հակոբյանը՝ որպես գավազանակիր և օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը

Նոր Դելիի՝ Ինդիրա Գանդիի անվան միջազգային օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի սրահում Վեհափառ Հայրապետի գլխավորած շքախմբին դիմավորեցին Հնդկաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիար Աշոտ Քոչարյանը և Հայաստանի դեսպանատան աշխատակիցները

Փետրվարի 2 ին Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը ՀՀ դեսպանի ուղեկցությամբ այցելեց Նոր Դելիում գտնվող Հնդկաստանի ազգային հերոս և Հնդկաստանի անկախության շարժման առաջնորդ Մահաթմա Գանդիի հուշահամալիր Համալիրի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեց հուշահամալիրի տնօրենը և ուղեկցեց այգու կենտրոնում գտնվող Գանդիի շիրմաքարի մոտ Նորին Սրբությունը ծաղկեպսակ դրեց Մահաթմա Գանդիի գերեզմանին և աղոթք բարձրացրեց աշխարհում խաղաղության և ազգերի միջև եղբայրության համար Հայոց Հայրապետը նաև գրառում կատարեց համալիրի հուշամատյանում

Նույն օրը Հայրապետական պատվիրակությունը այցելեց հնդիկ հավատքի հուշարձան ու տաճար հանդիսացող Ակշարդհամ համալիր ուր Նորին Սրբությանը դիմավորեցին հնդիկ քահանաներ՝ սվամի Սադհու Ատմասվարուպադասի գլխավորությամբ

Կեսօրին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելեց նաև Հնդկաստանի Ազգային թանգարան

Փետրվարի 2 ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով մեկնեց Ագրա քաղաք ուր 2 թ. կառուցվել է Հնդկաստանում երկրորդ հայկական եկեղեցին՝ Ս. Մարտիրոսը Ներկայիս եկեղեցին կանգուն չէ սակայն Ագրայի գերեզմանատանը պահպանվել են մի շարք հայկական շիրմաքարեր Ագրայում գտնվելու ընթացքում պատվիրակությունն այցելեց նաև Թաջ Մահալ և Ագրայի ամրոց

Փետրվարի 2 ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական շքախմբի ուղեկցությամբ այցելեց Նոր Դե

լիում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն Նորին Սրբությանն ուղեկ
ցում էր նաև Կալկաթայի Եկեղեցական Խորհրդի ատենապետ պրն Հայկ Սուքիաս
Կրտսերը

Վեհափառ Հայրապետի գլխավորած շքախմբին դեսպանատանը ողջունեց
Հնդկաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ա
շոտ Քոչարյանը Հանդիպմանը ներկա էին դեսպանատան աշխատակիցները՝ ի
րենց ընտանիքներով ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության Կիպրոսի և Սի
րիայի Արաբական Հանրապետության դեսպանատներում պաշտոնավարող հայոր
դիներ և Նոր Դելիում բնակվող և ուսանող հայեր

ՀՀ դեսպանը ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին դեսպանատուն կատա
րած առաջին այցի կապակցությամբ շնորհակալություն հայտնեց Նորին Սրբութ
յանը՝ ցուցաբերած բարձր պատվի համար և նշեց որ Վեհափառի այս այցը
Հնդկաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ամ
յակի տոնախմբման լավագույն արտահայտությունն է Հայաստանի Հանրապե
տությունը դիվանագիտական պաշտոնական հարաբերություններ Հնդկաստանի
հետ հաստատել է 2 թվականին իսկ ՀՀ դեսպանատունը Դելիում բացվել է
թվականին

Եկեղեցական Խորհրդի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց Հայկ
Սուքիաս Կրտսերը՝ վերստին շնորհակալություն հայտնելով այցի համար և ընդգ
ծելով որ վերջին 0 տարիների ընթացքում սա առաջին Հայրապետական այցն է
Հնդկաստան Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվա
պետական այցելությունը Հնդկաստան տեղի է ունեցել թվականին Տիար Սու
քիասը նշեց նաև որ Հնդկաստանում բնակվող հայերը մեծ ուրախությամբ են սպա
սում իրենց Հայրապետի այցին

Այնուհետև Եկեղեցական Խորհրդի ատենապետը Դելիում բնակվող բոլոր հայե
րին հրավիրեց Կալկաթա՝ մասնակցելու Տինգրայի հայկական եկեղեցու վերաօծ
ման արարողությանը որը կատարվելու է փետրվարի 2 ին ձեռամբ Ամենայն Հա
յոց Կաթողիկոսի

Վերջում Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամը և օրհնությունն
ուղղեց ներկաներին ի մասնավորի ասելով. *«Համայն հայության հոգևոր կենտրոն
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկել ենք լուսավորչահաստատ Մայր Աթոռի բյուր
օրհնություններով զորացնելու հնդկահայ մեր հայորդյաց՝ հավատարիմ մնալու
մեր Սուրբ Եկեղեցուն նախնյաց ժառանգությանը և շարունակելու հնդկահայութ
յան հարուստ ավանդներն ու ձեռքբերումները Հնդկաստանի ավանդաշատ երկ
րում հայորդիք ապրում են դարեր շարունակ՝ ժամանակների հոլովույթում այստեղ
թողնելով բարի հիշատակներ ու արարումներ Այսօր հնդկահայ համայնքը շարու
նակում է ազգային-եկեղեցական իր կյանքը բարեզարդել նոր հաջողություններով*

*Մենք մեծապես կարևորում ենք Հնդկաստանում Հայաստանի Հանրապետութ
յան դեսպանատան գործունեությունը՝ ի նպաստ մեր երկրների միջև հարաբերութ
յունների զարգացման և հնդկահայ համայնքի ազգային կյանքի զորացման Ուրախ
ենք որ Մեր ժամանմանը Մեզ դիմավորեց նաև մեր երկրի դեսպան տիար Աշոտ
Քոչարյանը ով Մեզ ուղեկցելու է Մեր Հայրապետական այս այցելության ընթաց
քում Մեզ համար առանձնակի ուրախություն է որ այս հարկի ներքո Մեզ ողջունե
լու են եկել ոչ միայն Հայաստանի Հանրապետության դեսպանատանը աշխատող*

մեր երկրի քաղաքացիները այլև տարբեր երկրների դիվանագիտական ներկայա ցուցչություններում ներգրավված հայորդիք՝ որդիական սեր ու հարգանք արտա հայտելով Հայոց Եկեղեցու Սուրբ Էջմիածնի և Հայոց Հայրապետի հանդեպ

Այնուհետև Նորին Սրբությունն ամենքին փոխանցեց իր օրհնությունն ու գնա հատանքը ապա աղոթք բարձրացրեց հայ և հնդիկ ժողովուրդների եղբայրության և Հայաստանի ու Հնդկաստանի միջև սերտ համագործակցության համար

Երեկոյան Վեհափառ Հայրապետի շքախումբը Նոր Դելիից մեկնեց Կալկաթա՝ ուղեկցությամբ Հնդկաստանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանի և Եկեղեցական Խորհրդի ատենապետ Հայկ Սուքիաս Կրտսերի Կալկաթայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վարդապետ Գյուլգ յուլյանը Մայր Աթոռի միաբան Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը Տիգրան սրկ. Բաղումյանը և Կալկաթայի Հայկական Եկեղեցական Խորհրդի անդամները

Փետրվարի 27 ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական շքախմբի և ՀՀ արտակարգ և լիազոր դես պան Աշոտ Քոչարյանի ուղեկցությամբ այցելեց Կալկաթայի հայոց Մարդասիրա կան ճեմարան

Ճեմարանի մուտքին հայրապետական շքախմբին դիմավորեցին ճեմարանի կա ռավարիչ Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը դպրոցի տնօրեն Զեյմս Դայասը Եկեղեցական Խորհրդի անդամները ուսուցիչները ճեմարանի ուսանողները և ողջ պաշտոնեությունը Էջ Միածինն ի Հօրէ շարականի և Հայրապետական մաղթանքի երգեցողության ներքո ուսանող ները Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցեցին դեպի դպրոցի դահլիճ ուր ի պա տիվ Վեհափառ Հայրապետի տեղի ունեցավ գրական-գեղարվեստական հանդի սություն Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով և Հնդկաստանի ու Հա յաստանի օրհներգերով

Մարդասիրական ճեմարանի պաշտոնեության և սաների անունից Ամենայն Հա յոց Կաթողիկոսին ողջունեց վարչական տնօրեն Տիգրան սրկ. Բաղումյանը՝ ի մաս նավորի ասելով.

«Այսօր նվիրական և պատմական օր է ամենքիս համար քանզի երջանկությունն ու շնորհն ունենք ամյա հայոց Մարդասիրական ճեմարանի լուսավոր կամար ների ներքո բարի գալուստ մաղթելու ազգիս Վեհափառ Հորը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և իր գլխավորած պատվիրակության պատվար ժան անդամներին

Օրը նշանակալից է և պարտավորեցնող քանզի տարիների երկար ու ձիգ դադարից հետո ճեմարանը կրկին հյուրընկալում է Հայոց Եկեղեցու Ընդհանրական Հայրապետին ով այս անգամ Մարդասիրական տուն է այցելում այլևս անկախ մեր Հայրենիքից օրեցօր ծաղկող ու բարգավաճող համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից՝ իր հետ բերելով հայրենյաց անմոռաց մշտամնա սերն ու Ս. Էջմիածնի դարավոր ու կենսահաստատ օրհնությունը Հե տևաբար այս պահին Վեհափառ Տեր Զերդ Սրբության տիրական ներկայությու

նից մեր հոգիներն ու սրտերը լցված են անկողոպտելի ուրախության և հրճվանքի անօրինակ զգացումներով իսկ մեր հայացքն ուղղված է դեպ Երկնավոր մեր Հայրը՝ բարբառելով. Փա՛ռք Քեզ Աստուա՛ծ փա՛ռք Քեզ յաղագս ամենայնի Տէր փա՛ռք Քեզ

Ուրախությամբ պիտի արձանագրենք որ 2 թ. ջուղայեցի նշանավոր վաճառականներ Աստվածատուր Մուրադխանյանի տեսիլքով և Մնացական Վարդանյանի անմիջական նախաձեռնությամբ հիմնադրված ճեմարանը շարունակում է իրեն վստահված առաքելությունը հայրենիքից այդքան հեռու՝ Հնդկաստանի հյուրընկալ հողի վրա՝ հայեցի կրթություն և դաստիարակություն ջամբելով մեր մատաղ սերնդին

Որպես հնդկահայ գաղութի անկապտելի մաս՝ անկումներով և վերելքներով լի է նրա պատմությունը Դժբախտաբար տասնյակ տարիներ ուշադրություն չի դարձվել ճեմարանի շենքային երեխաների կենսական պայմաններին ու կրթական մակարդակին Փա՛ռք Տիրոջը որ պատմական այս հաստատության դեգերումներին վերջ տրվեց երբ թ. Կալկաթայի Գերագույն դատարանի իմաստուն տնօրինությամբ և որոշմամբ այն հանձնվեց Մայր Աթոռի տնօրինությանը և դրանով մեկընդմիշտ ապահովվեց կրթական այս դարբնոցի հարատևությունը Քանզի իբրև Ս. Գրիգորի և Ս. Մեսրոպի ճշմարիտ զավակներ աներկբայորեն հավատում ենք մեր «փոքր ածուի կյանքում աստվածակառույց Ս. Էջմիածնի առաքելությանն ու նրա արժանընտիր Հայրապետի շնորհաբաշխ Ս. Աջի զորությանը Ուստի քանի դեռ կանգուն է մեր հոգու ծննդավայր Ս. Էջմիածինը կանգուն կլինի նաև Մարդասիրական ճեմարանը որը Կալկաթայի բաբախող սիրտն է Հնդկահայ գաղութն ապրում է իր մայրամուտը խզվել է կապն անցյալի և ներկայի միջև և այսօր միակ հայաշունչ և հայախոս հաստատությունը Մարդասիրական ճեմարանն է Ուստի ճեմարանի զորացումից և նրա խնամյալ վիճակից է կախված նաև համայնքի վաղվա օրը

Քաջածանոթ լինելով հնդկահայ գաղութի և հատկապես ճեմարանի պատմությանը կարող ենք վստահեցնել Զերդ Սրբությանը որ անցնող մեկ ու կես տարիները Հայրապետիդ օրհնությամբ ճեմարանի բարեջան կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանի անձնդիր կեցվածքի աշխատակազմի ուսուցիչների և սաների միասնական ջանքերի շնորհիվ ճեմարանն արձանագրել է նկատելի առաջընթաց Ճեմարանի հարկից ներս տեղի ունեցած շուրջ 0 բազմաբովանդակ միջոցառումները բազմաթիվ վերանորոգչական-շինարարական աշխատանքները ուսումնակրթական և այլ գործընթացները եկան մեկ անգամ ևս փաստելու որ այո՛ հայաշունչ է Մարդասիրական ճեմարանը և անշեղ իր առաքելության մեջ՝ դրանով իսկ ի կատար ածելով իր երախտարժան հիմնադիր-բարերարների երազն ու կտակը Այսօր կասեցված է տարիների անկումը և կամաց-կամաց ճեմարանը վերագտնում է իրեն Չնայած բազմաթիվ դժվարություններին և մարտահրավերներին վստահ ենք որ իմաստուն և շրջահայաց մարտավարության դեպքում մոտ ապագայում կարող ենք ունենալ մի կրթական-ազգային հաստատություն որը պատիվ պիտի բերի Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը մի հաստատություն որի շրջանավարտը հասակ պիտի առնի երբեմնի ծաղկող հնդկահայ գաղութի նվիրյալ հայորդիների ոգով ու շնչով՝ նախանձախնդիր մեր ազգային արժեքային համակարգին՝ իր կրթական և հասարակական պատրաստվածությամբ՝ պատրաստ լինելով դիմագրավելու դա

րիս փորձություններին

Հուսով ենք որ Ձերդ Սրբության այցելությամբ դրական տեղաշարժեր պիտի լի նեն ճեմարանում Պիտի շրջեք և ականատեսը լինեք կատարված փոփոխություն ներին պիտի շփվեք ճեմարանի աշխատակազմի ուսուցիչների և աշակերտների հետ՝ ի մոտո ծանոթանալով առկա խնդիրներին որ են՝ անհրաժեշտ սերնդափո խություն կրթական մակարդակի բարձրացում և կենսապայմանների բարելավում և ամենակարևորը՝ Հայրական Ձեր օրհնությունը պիտի բաշխեք ամենքիս որը մեզ վստահաբար պիտի զորացնի և գոտեպնդի՝ ավելի նվիրումով և խանդավառութ յամբ շարունակելու մեր անսակարկ ծառայությունը պատմական այս կրթօջախում

Վեհափառ Տեր կրկին ու կրկին բարի գալուստ ենք մաղթում Ձերդ Սրբությանը և աղոթում մեր Երկնավոր Հորը՝ անսասան պահելու և պահպանելու առաքելա հաստատ և լուսավորչահիմն մեր Սուրբ Եկեղեցին՝ իր Նվիրապետական Աթոռնե րով՝ Ամենայն Հայոց Հայրապետիդ պարգևելով քաջառողջ կյանքի երկար օրեր և ծաղկյալ հովվապետական գավազան որպեսզի Ս. Հոգու յոթնարփյան շնորհներով զարդարված՝ օր առաջ կարողանաք կյանքի կոչել Ձերդ Սրբության հայրենաշեն և եկեղեցանվեր տեսիլքներն ու երազները Եվ այս պահին Հայոց Եկեղեցու խոնարհ սպասավորիս այլ բան չի մնում ասելու քան՝

Գա՛լդ բարի Հայոց Հայրապետ Կալկաթայի Մարդասիրական ճեմարան

Ուսուցիչների անունից Վեհափառին բարի գալուստ մաղթեց նաև տնօրեն Ջեյմս Դայասը

Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես եկան ասմունքի երգեցողութ յան ազգային ու հնդկական պարերի կատարումներով

Հանդիսության ավարտին խոսեց ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վարդա պետ Գյուլգյուլյանը ապա հրավիրեց Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրա պետական պատվիրակ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանին՝ իր խոսքն ուղղե լու ներկաներին Գերաշնորհ Սրբազան Հայրը ևս ողջունելով Նորին Սրբությանը կարևորեց Վեհափառ Հայրապետի այցը Հնդկաստան Աղան Սրբազանը ի մասնա վորի ասաց որ Կալկաթայի հայության ինչպես նաև ամբողջ հնդկահայության համար ուրախության և երջանկության առիթ է Վեհափառ Հայրապետի այցելութ յունը Մեր հավատո հայր Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլով հիմնվեց լուսակառույց Ս. Էջմիածինը և Ս. Էջմիածնի լույսը ու հավատքը ամեն ժամանակ և ամեն տեղ տարածվում է մեր ժողովրդի վրա այդ թվում և՝ հեռավոր այս երկրում ուր լույսի զավակները 2 թ. հիմքը դրեցին այս վարժարանի որպեսզի Կալկաթայում և Հնդկաստանում առիթ և պատեհություն ունենան հայեցի կրթություն ստանալու Այս հաստատությունը տարեկան է և Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռից ե կել է Ս. Էջմիածնի լույսը բաշխելու հնդկահայությանը և Հնդկաստանի ժողովրդին որը ևս ուշադրությամբ հետևում է Վեհափառի այցելությանը

Վեհափառ Տեր Ձեր այցելությունը թող ամեն մեկի համար դառնա օրհնություն և խթան իրենց հավատքը պահելու

Վերջում ճեմարանի պաշտոնեությանը ուսուցիչներին և Հայաստանից Իրաքից ու Իրանից եկած ավելի քան 0 ուսանողներին Հայրապետական իր օրհնությունը բաշխեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողի կոսը և իր խոսքը ուղղելով հավաքվածներին՝ ասաց. *«Փառք ենք վերառաքում առ*

Բարձրյալ Տերը որ Մեզ առիթը շնորհեց այցելելու փառավոր պատմությամբ հայտնի Կալկաթայի Մարդասիրական ճեմարան և Հայրապետական Մեր օրհնությունը բերելու ճեմարանի տեսչական ու մանկավարժական կազմին ինչպես նաև Հայաստանից Իրանից և Իրաքից ժամանած ու ճեմարանում ուսանող Մեր սիրասուն սաներին

Այս հարկի ներքո սերունդներ են կրթվել Լուսավորչի հավատքով ու Մաշտոցյան շնչով հյուրընկալ այս երկրի բարի ավանդույթներով ու մշակույթով Հավատում ենք որ Մեր այս այցելությունը նոր ոգևորություն պիտի լինի կրթական հաստատության տեսչական ու դասախոսական կազմի և սաների համար Տեսչության և մանկավարժների հոգածու դաստիարակության ներքո սաներն առավել նախանձախնդրորեն պիտի շարունակեն ուսումնառությունը՝ նոր հաջողություններով լուսաշող դարձնելու երբեմնի փառքը ճեմարանի քանզի այս հաստատության հետ են կապված նաև մեր հույսն ու լավատեսությունը հնդկահայ համայնքի վաղվա օրվա հանդեպ

Մեր շնորհակալությունն ենք հայտնում Հնդկաստանի և Կալկաթայի իշխանություններին որոնք բարյացակամորեն ընձեռել են ամեն հնարավորություն որ Մեր զավակները հասակ առնեն զորեղ հավատքով և ազգային ոգով

Ադոթքով հիշենք Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի բոլոր հիմնադիրներին որոնց նվիրյալ ջանքերով հաստատվեց կրթական այս հաստատությունը և այսօր շարունակում է բարի հունդեր սերմանել Մեր զավակների հոգիներում

Վերստին Մեր օրհնությունն ենք բերում ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմին ողջ աշակերտությանը Ադոթում ենք առ Աստված որ տերունական օրհնությամբ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը դառնա Սփյուռքի լավագույն կրթօջախներից մեկը ուր հայ պատանիները պետք է կրթվեն ու հասակ առնեն և լինեն արժանավոր զավակները մեր ժողովրդի հայրենիքի և Հնդկաստանի Թող Աստված օրհնի և հաստատուն առաջընթացի մեջ պահպանի այս ճեմարանը

Այնուհետև Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ ճեմարանի տեսչական և ուսուցչական կազմի հետ որից հետո ծանոթացավ դպրոցի պայմաններին

Նույն օրը Վեհափառ Հայրապետը շուրջ երեք ժամ անցկացրեց ուսանողների հետ՝ պատասխանելով նրանց հուզող հարցերին

Հայոց Մարդասիրական ճեմարան այցի առիթով Նորին Սրբությունը նվերներ հանձնեց ճեմարանի գրադարանին տնօրենին ուսուցիչներին և ուսանողներին

Այնուհետև հայրապետական շքախումբը եղավ նաև աղջիկների Դավիդյան դպրոցում ծանոթացավ դպրոցի պայմաններին և հանդիպեց դպրոցի անձնակազմի հետ

Փետրվարի 2 ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Արևմտյան Բենգալիայի նահանգի գլխավոր նախարար Բուդդհադեբ Բհաթթաչարյայի հետ Նորին Սրբությանն ուղեկցում էին Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը Հնդկաստանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը Տ. Կտրիճ քահանա Դևեջյանը և Կալկաթայի Եկեղեցական Վարչության անդամներ Հայկ Սուքիաս Կրտսերը Սունիլ Սոբթին և Սյուզան Ռուբենը

Նահանգապետը ողջունելով Վեհափառ Հայրապետի այցն Արևմտյան Բենգա

լիա և Կալկաթա անդրադարձավ Հնդկաստանում հայ համայնքի կարևոր դերա կատարությանը հատկապես Կալկաթայի սոցիալական մշակութային և տնտեսա կան զարգացման մեջ Նա նշեց այն բարձր հարգանքի մասին որ հնդիկ ժողովուր դը տածում է հայ համայնքի հանդեպ՝ հույս հայտնելով որ երբեմնի բազմանդամ համայնքը որն իր թվով նվազել է վերջին տարիներին վերստին կաճի և կբարգա վաճի

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնելով բարի խոսքերի հա մար անդրադարձավ Հայաստանի և Հնդկաստանի միջև առկա բազմադարյա հա բաբերություններին Հայոց Հովվապետը բարձր գնահատեց երկու ժողովուրդների բարեկամությունը և ուրախություն հայտնեց որ ներկայիս բազմաթիվ հնդիկ երի տասարդներ իրենց ուսումնառությունն են շարունակում Երևանի բարձրագույն կրթական հաստատություններում Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց գլխավոր նախարարին և ի դեմս նրա՝ նաև Հնդկաստանի իշխանություն ներին՝ կրոնական և ազգային փոքրամասնությունների այդ թվում նաև հայերի նկատմամբ ցուցաբերվող ուշադրության և հոգատարության համար։ Վեհափառ Հայրապետը նշեց որ շնորհիվ այդ վերաբերմունքի՝ հնդկահայերը որպես Հնդկաս տանի Հանրապետության արժանավոր քաղաքացիներ մասնակից են նաև Հնդկաստանի հասարակական ազգային և մշակութային կյանքին

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի միջև համագործակցության ոլորտներին ինչպես նաև Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի Արևմտյան Բենգալիայում հայկական եկեղե ցիների գերեզմանատների և հուշարձանների ներկայիս կարգավիճակին առնչվող հարցեր

Նույն օրը երեկոյան Թաջ Բենգալ հյուրանոցում ի պատիվ Ամենայն Հայոց Կա թողիկոսի տեղի ունեցավ ընդունելություն որը կազմակերպել էր Կալկաթայի Եկե ղեցական Վարչությունը Ընդունելությանը մասնակցում էին հայ համայնքի ան դամներ և բազմաթիվ հյուրեր

Ընդունելությանը բարիգալստյան խոսքով Նորին Սրբությանը դիմեց վարչութ յան ատենապետ Հայկ Սուքիասը՝ երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայ բապետին օրհնաբեր այցի համար Ինչպես նշեց պրն Սուքիասը Հայոց Հովվապե տի այցին հնդկահայ համայնքն սպասել է երկար ավելի քան քառասուն տարի

Հայաստանի և Հնդկաստանի միջև զարգացող կապերի և համագործակցության մասին խոսեց Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյա նը Նա ուրախություն հայտնեց իրեն ընձեռված մեծ պատվի համար որ առիթ ունի ուղեկցելու աշխարհասփյուռ Հայոց Եկեղեցու պետին պատմական այս այցի ըն թացքում

Տ. Կտրիճ քահանա Դևեջյանը ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այժմ յան գործունեությունը՝ առանձնաբար անդրադառնալով քրիստոնեական դաստիա րակության և քարոզչության սոցիալական ծառայության և մշակութային ոլորտնե րում արձանագրած ձեռքբերումներին

Ապա Հայրապետական իր օրհնությունն ու սերը բոլոր ներկաներին հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց հայ համայնքի անդամներին՝ նախնյաց հավատի հանդեպ

նրանց նվիրումի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ հավատարմության համար Նորին Սրբությունը հորդորեց նրանց համայնքային կյանքում առաջնային նկատել Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի գործունեությունը՝ նշելով որ հայոց ճեմարանում ուսանող երեխաները հնդկահայ համայնքի հարատևության և Հնդկաստանի հայկական եկեղեցիների պահպանության ապագա երաշխավորներն են. *«Հնդկահայության ստեղծած մեծ արժեքները մեզ պարտավորեցնում են նվիրյալ ոգով շարունակելու նույն հավատավոր և ստեղծարար ընթացքը Մեր հոգին լեցուն է հպարտությամբ և ուրախությամբ որ փառավոր անցյալ ունեցող հնդկահայ համայնքն այսօր ևս նոր հաջողություններ է ամրագրում ազգային-եկեղեցական կյանքում՝ ունենալով բարեկարգ և պայծառաշուք եկեղեցիներ Եկեղեցական Վարչության հոգածու խնամքի ներքո*

Այսօր բարեկարգ է նաև Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը որ վստահենք ձեր եռանդուն ջանքերի շնորհիվ պետք է առավել պայծառացնի անցյալի իր փառքը Մենք մեծապես կարևոր ենք նկատում այս հաստատությունը որի գործունեությունն աշխուժություն է հավելում հնդկահայոց կյանքում ճեմարանի ինչպես և համայնքային կյանքին ոգևորություն բերող ձեռնարկների ու միջոցառումների անտեսումը տասնամյակներ անց սոսկ քարե հուշարձանների պիտի վերածեն բարեզարդ և բարեշուք մեր եկեղեցիներն ու տարբեր հաստատությունները՝ որպես լուռ վկայություն այս երկրում հայ ժողովրդի զավակների ներկայության ու գործերի Սակայն հավատում ենք որ դուք ձեր եկեղեցանվեր ու ազգասեր ընթացքով միշտ զորեղ և բարօր պիտի պահեք Հնդկաստանի հայ գաղթօջախը

Մեր այցելության ընթացքին Մենք հանդիպեցինք Արևմտյան Բենգալիայի նահանգապետին և զգացինք թե ինչպիսի գնահատանքով ինչպիսի սիրով էր նա արտահայտվում հայ գաղութի մասին Մենք վերստին հպարտության զգացում ապրեցինք որ ունենք այսպիսի համայնք այսպիսի զավակներ ովքեր բարձր են պահում ոչ միայն հնդկահայության այլև մեր ողջ ժողովրդի պատիվը՝ հայությանը լավագույնս ճանաչելի դարձնելով Հնդկաստանում

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց նաև Հովվապետական այցի կազմակերպիչներին և իր շնորհակալությունն արտահայտեց հնդիկ ժողովրդի հյուրընկալ ոգու համար որի շնորհիվ հայերն ավելի քան հինգ հարյուր տարի առաջ իրենց ստեղծագործ արժանավոր կյանքով հաստատվել են Հնդկաստանում

Փետրվարի 2 ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով Կալկաթայից մեկնեց Տինգրա՝ վերաօծելու տեղի Ս. Երրորդություն վերանորոգված եկեղեցին։ 7 թ. կառուցված եկեղեցին ամբողջությամբ վերանորոգվել է Կալկաթայի Եկեղեցական Վարչության ջանքերով ավելացվել են նոր զանգակատունն ու գմբեթը բարեկարգվել է եկեղեցու տարածքը

Օծման արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետն օծեց Ս. Խորանը և խաչերից չորսը իսկ մնացած 2 խաչերն օծվեցին Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանի ձեռամբ Արարողությանը մասնակցում էին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Օշական վարդապետ Գյուլզյուլյանը Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը և Տիգրան սրկ. Բաղումյանը Վերաօծվող եկեղեցու կնքահայրերն էին ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը և Կալկաթայի Եկեղեցական Վարչության յոթ անդամներ՝

ատենապետ Հայկ Սուքիաս Կրտսերը փոխատենապետ Սունիլ Սոբտին Սուզան Ռուբենը Վաչագան Թադևոսյանը Նարինե Սահակյանը Միքայել Դուտտը և Արշամ Սուքիասը

Արարողությանը ներկա էին Կալկաթայի հայ համայնքի ներկայացուցիչներ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի սաները

Օծման ընթացքում օրհնության իր խոսքը ուղղելով այս եկեղեցում հավաքված հայորդիներին և ընդհանրապես հնդկահայությանը Նորին Սրբությունը ասաց. *«Վերստին ուրախությունն է թևածում Մեր հոգում որովհետև Աստված Մեզ արժանացրեց առանձնակի մի շնորհի՝ Հովվապետական Մեր այս անդրանիկ այցի ընթացքում կատարելու օծումը Սուրբ Երրորդություն եկեղեցու Սուրբ Մեղանի Բարեշուք եկեղեցին դարձյալ իր դռներն է բացել հավատացյալ Մեր զավակների առջև ուր վերստին հնչելու են աղոթք և օրհնություն Բարեզարդ այս աղոթավայրում Մեր զավակները Աստծո առջև կանգնած՝ բանալու են իրենց հոգիները՝ հայցելով Երկնավորի օգնությունն ու զորակցությունը որպեսզի տերունական օրհնության և հովանավոր Աջի ներքո կարողանան ապրել հավատարմությամբ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին մեր ազգային ավանդություններն ու սրբությունները*

Աղոթքով և խոնարհումով հիշենք երկնային լուսախորան բարձունքներում հանգչող մեր նախնյաց ովքեր հավատքով և տեսիլքով կառուցեցին այս եկեղեցին Այսօր Մեր գնահատանքն ենք բերում բոլոր նրանց ովքեր նորոգել և այսպես բարեզարդել են եկեղեցին՝ ուրախություն պարգևելով ոչ միայն Կալկաթայի հայ համայնքին այլև ողջ հայությանը

Թող Աստված անսասան պահի ու պահպանի հնդկահայ գաղութի մեր բոլոր եկեղեցիները և ազգային հաստատությունները

Եկեղեցու օծման առիթով Վեհափառ Հայրապետը Եկեղեցական Վարչությանը նվիրեց Ս. Էջմիածնից բերված մի գեղեցիկ խաչքար որ այն ագուցվի եկեղեցու որմերում և ինչպես Նորին Սրբությունը մաղթեց *Ս. Էջմիածնից բերված մշտական օրհնություն դառնա հնդկահայության համար և ով մուտք գործի այս եկեղեցի իր շուրթերով հպվի այս խաչքարին ու արժանանա Ս. Էջմիածնի օրհնությանը և Աստված առավել զորացնի Մեր զավակների հավատքը*

Կեսօրին Նորին Սրբությունն այցելեց Հնդկաստանում կառուցված վերջին հայկական՝ Կալկաթայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 0 թ. եկեղեցի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Նորին Սրբության նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն ապա Վեհափառ Հայրապետն այցելեց եկեղեցու տարածքում գործող հայկական ծերանոց ուր ներկայիս բնակվում են տարեցներ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձին-առանձին զրուցեց տարեցների հետ՝ նրանց փոխանցելով Սուրբ Էջմիածնի օրհնությունն ու Հայրապետական իր սերը

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցի Նորին Սրբությունը այստեղ հավաքվածներին ուղղելով հայրապետական իր օրհնությունը և գնահատանքի խոսքը ասաց որ թեև *«Կալկաթայում և ողջ Հնդկաստանում հայության թվի նվազման պատճառով Կալկաթայի հայ գաղութը այլևս չունի նախկին փառքը սակայն ճեմարանում սովորող այս պատանիները պիտի գան նոր շունչ հաղորդելու և զորացնելու հայ կյանքը Հնդկաստանում և ի մասնավորի Կալկաթայում Թող Տերը եկեղեցաշեն և ազգաշահ գործոց երկնառաք հաջողություններ*

պարգևի ձեզ և ազգիս հայոց Եվ Բարձրյալի օրհնությունը թող մշտահեղ լինի ձեր հավատավոր հոգիներից ներս

Հայրապետական այս այցելության առիթով Նորին Սրբությունը որպես Ս. Էջ միածնից բերված օրհնություն Ս. Նազարեթ եկեղեցուն մի սկիհ նվիրեց՝ մաղթելով որ այս սկիհից ստացած հաղորդությամբ այստեղի հայությունը կապված մնա Ս. Էջմիածնին և որ Հաղորդության այս սկիհից ստացած Հաղորդությամբ հայորդիք մշտահեղ օրհնությունների արժանանան և հաղորդ դառնան Ս. Էջմիածնին քանզի *«Սուրբ Էջմիածինը դրոշմն է մեր Տեր Հիսուս Քրիստոսի կնիքը մեր հավատքի որ հաստատվեց 0 թվականին ի Հայաստան Տերունական էջքով*

Մարտի ին Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական շքախմբով Տ. Օշական վարդապետ Գյուլզյուլյանի և Եկեղեցական Վարչության անդամների ուղեկցությամբ Կալկաթայից մեկնեց Չին սուրա

Չինսուրայում Հայրապետական պատվիրակությունն այցելեց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի որը կառուցվել է 7 թվականին և Արևմտյան Բենգալիայի երկ րորդ հնագույն եկեղեցին է

Եկեղեցում Նորին Սրբությունն աղոթք վերառաքեց առ Բարձրյալն Աստված բո լոր այն հայորդիների հոգիների հանգստության համար ովքեր ժամանակին Հեռա վոր Արևելքում կենդանություն էին տվել հայոց կյանքի նշանավոր այս կենտրոնին Այսօր Չինսուրայում որևէ հայ չի բնակվում

Կեսօրին Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Կալկաթա ուր վերստին այցելեց Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարան և որոշ ժամանակ անցկաց րեց ճեմարանի սաների հետ՝ հայրական իր հորդորները սերն ու օրհնությունը փո խանցելով նրանց

Երեկոյան Գարեգին Բ Հայրապետն իր շքախմբով մեկնեց Մադրաս

Մարտի 2 ին Մադրասում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ա մենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց այստեղ 7 2 թվականին կառուցված Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցի որի հարևանությամբ գտնվում է նաև հայկա կան գերեզմանատունը Ու թեև Մադրասում հայկական բնակչություն չկա սակայն եկեղեցին բաց է այցելուների համար

Վեհափառ Հայրապետի այցի առիթով մոտակա շրջաններից բազում հնդիկներ էին եկել ողջունելու Նորին Սրբությանը և հայցելու Հայոց Կաթողիկոսի օրհնությու նը

Եկեղեցում Նորին Սրբության նախագահությամբ հոգեհանգստյան պաշտոն մա տուցվեց վերջին հինգ դարերի ընթացքում Հնդկաստանի հայ համայնքին իրենց հո գևոր ծառայությունը բերած բոլոր հոգևորականների հոգիների խաղաղության հա մար Ապա Հայոց Հովվապետը ծաղկեպսակ դրեց Տ. Հարություն ավագ քահանա Շմավոնյանի շիրմաքարին ով 7 թվականին նախաձեռնել էր հայոց առաջին պարբերականի՝ Ազդարարի հրատարակությունը

Եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց նաև Մադրասի պատմա կան և ճարտարապետական պահպանության հանձնախմբի հետ և քննարկեց Սուրբ Աստվածածին եկեղեցու պահպանմանը և վերանորոգմանն առնչվող հար

ցեր

Կեսօրին Գարեգին Բ Կաթողիկոսը եղավ նաև Մադրասի հայտնի բլրի գագաթին գտնվող Սուրբ Թովմասի մատուռում ուր նրան դիմավորեցին բազում քրիստոնյա հնդիկներ

Հռոմեակաթոլիկ ավանդության համաձայն Սուրբ Թովմաս առաքյալն առաջին դարում այս բլրի վրա է նահատակվել ուր հետագայում կառուցվել է մի մատուռ ապա՝ եկեղեցի 7 թվականին այս բլրի վրա կառուցվել է Հեռավոր Արևելքում առաջին հայկական եկեղեցին Եկեղեցին այսօր էլ կանգուն է: Այն գործում է սակայն՝ Հռոմեակաթոլիկ Եկեղեցու իշխանության ներքո Հայկական ակունքների մասին վկայում են եկեղեցում՝ հատկապես Սուրբ Սեղանի վրա առկա բազում արձանագրությունները որմնանկարները և տապանաքարերի արձանագրությունները

Մարտի ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Բոմբեյ: Վեհափառ Հայրապետի գլխավորած շքախմբին ողջունեց Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ Բոմբեյի միտրոպոլիտ Մար Կուրիլոսի գլխավորությամբ Մալանկարա Եկեղեցու հոգևորականների ուղեկցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Բոմբեյի Սուրբ Պետրոս հայկական եկեղեցի ուր շարականների և սաղմոսների երգեցողությամբ Նորին Սրբությանը դիմավորեցին Բոմբեյի հայազգի երեք բնակիչները ինչպես նաև հնդիկ եկեղեցականներ և հնդիկ ուղղափառ հավատացյալներ

Հայրապետական թափորը Հրաշափառի հանդիսավոր երգեցողության ներքո մուտք գործեց եկեղեցի: Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ու օրհնությունը բաշխեց ներկաներին Վեհափառ Հայրապետը փառք և գոհություն վերառաքեց առ Աստված՝ Հնդկաստանի հեռավոր ափերը հասնելու և հայ համայնքին ու նրա դարավոր ժառանգությունը տեսնելու հնարավորության համար Դիմելով հնդիկ քրիստոնյաներին՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց անսասան մնալ քրիստոնեական հավատի մեջ հավատարիմ՝ Ս. Թովմաս առաքյալի հիմնադրած Հնդիկ Մալաբար Առաքելական Սուրբ Եկեղեցուն

Բոմբեյի միտրոպոլիտ Գերաշնորհ Մար Կուրիլոսն իր հերթին բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հովվապետին և նրան փոխանցեց Արևելքի Կաթողիկոս և Մալանկարա Պատրիարք Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա-ի եղբայրական ողջույններն ու սերը

Երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը շքախմբի ուղեկցությամբ մեկնեց Նոր Դելի

Մարտի ին Նոր Դելիում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահական նստավայրում հանդիպեց Հնդկաստանի Հանրապետության նախագահ Աբդուլ Քալամի հետ

Ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նախագահ Քալամն անդրադարձավ հայ և հնդիկ ժողովուրդների դարավոր բարեկամությանը Նա հատկապես ընդգծեց 7 րդ դարերում հայ վաճառականների ունեցած կարևոր դերակատարությունը Կալկաթա Բոմբեյ և Մադրաս քաղաքների տնտեսական և հասարակական զարգացման գործում Դոկտ. Աբդուլ Քալամն ուրախություն հայտնեց Հայաստանի և

Հնդկաստանի միջև հատկապես վերջին տարիների ընթացքում զարգացող հարաբերությունների համար

Վեհափառ Հայրապետը իր հերթին ողջունելով Հնդկաստանի նախագահին գոհունակություն հայտնեց ազգային փոքրամասնությունների նկատմամբ Հնդկաստանի իշխանությունների կողմից մշտապես ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար՝ նշելով որ Հնդկաստանում բնակություն հաստատած հայորդիները միշտ էլ ազատ են եղել իրենց ազգային և հոգևոր կյանքը կազմակերպելու գործում Վեհափառ Հայրապետը նաև Հնդկաստան այցի իր տպավորությունները փոխանցեց նախագահին՝ մասնավորաբար վերհիշելով Նոր Դելի Կալկաթա Մադրաս և Բոմբեյ քաղաքներ կատարած իր այցերը Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց նաև որ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը հայկական եկեղեցիներն ու կառույցները հայկական գերեզմանատները լավ խնամվում են

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց հնդիկ ժողովրդին և պետությանը՝ թվականի երկրաշարժի օրերին Հայաստանին ցուցաբերած մարդասիրական օգնության ինչպես նաև այսօր գյուղատնտեսության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում շարունակական աջակցության համար

Հանդիպման ընթացքում կարևոր նկատվեց հայ և հնդիկ երիտասարդների ուսումնառությունը Հայաստանի և Հնդկաստանի տարբեր կրթական բարձրագույն հաստատություններում

Նորին Սրբությանը ուղեկցում էին Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը Տ. Կտրիճ քհն. Դևեջյանը և գավազանակիր Տ. Հովնան աբդ. Հակոբյանը Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանում Հնդկաստանի դեսպան Ռինա Պանդեյը

Մարտի ին երեկոյան ավարտելով հովվապետական անդրանիկ այցելությունը Հնդկաստան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Խորը ցավով սգում ենք անսպասելի մահը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի: Մեծ է կորուստը հայրենի մեր պետության, ժողովրդի և Մարգարյան ողբացյալ ընտանիքի:

Վաղաժամ ավարտվեց երկրային կյանքը մեր ժողովրդի նվիրյալ զավակ, հայրենասեր ու ազգանվեր պետական-քաղաքական գործիչ հոգելույս Անդրանիկ Մարգարյանի: Բարեհիշատակ վարչապետը առանձնակի նախանձախնդրությամբ իր կարևոր ներդրումը բերեց Հայրենի պետականության զորացման, հայոց նոր կյանքի կերտման և մեր ժողովրդի վաղվա լուսավոր օրը կառուցելու շնորհակալ գործին:

Երախտարժան է վաստակը հանգուցյալ վարչապետի նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունների ամրապնդման ու արդյունավորման գործում:

Վշտալի այս պահին հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ աղոթքով սրտակից ենք հանգուցյալի սգակիր այրուն և զավակներին, ՀՀ նախագահին, Հայոց պետական ավագանուն, ննջեցյալի մերձավորներին ու կուսակիցներին և համայն մեր ժողովրդին:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ երկնից երանավետ հանգրվաններում լույսերի և խաղաղության մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Իր Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփոփանքը պարգևի վշտացյալ բոլոր սրտերին:

Խունկ, աղոթք և օրհնություն հոգելույս Անդրանիկ Մարգարյանի բարի հիշատակին:

«Զննջեցեալս մեր արժանի արա, Տէ՛ր, ընդունիլ ի կեանսն յաւիտենից. Ամէն»:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
25 մարտի 2007 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սգակիր Նախագահ, հանգուցյալ վարչապետի սգացյալ այրի և զավակներ, բարեպաշտ ժողովուրդ.

Մեծ վիշտ ենք ապրում ամենքս: Կորստի ցավն ու տխրությունը մեր սրտերում՝ հրաժեշտ ենք տալիս պետական-քաղաքական սիրված գործիչ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ով երկրային կյանքից անժամանակ հեռացավ՝ թողնելով բարի հիշատակ, հայրենաշեն և ազգանվեր գործեր:

Բոլորիս աչքի առջև է գործերով արժեվորված և արժեքներով ներշնչված նրա կյանքը: Հայրենիքի սերը հոգում՝ դեռ երիտասարդ հասակից անկեղծ նվիրումով մասնակից դարձավ Հայաստանի անկախության համար պայքարին, հայության արդար դատի պաշտպանությանը և ազգային իղձերի մարմնավորմանը: Տեսավ իրականացած հայրենի անկախ պետականության վերականգնման իր երազը և առանձնակի նախանձախնդրությամբ իր կարողությունները ծառայեցրեց Հայաստանի նոր կյանքի կառուցմանը: Ազգային արժեքներով բարոր ու շեն, օրինահարգ և զարգացող Հայրենիք ունենալու տեսիլքը իր հոգում՝ նա կոչվեց գործադիր բարձր իշխանության: Իշխանությունն ու պաշտոնը ճշմարտապես ընկալեց որպես ժողովրդին մատուցվող ծառայություն և իր վարչապետության տարիները արդյունավորեց անձնվեր աշխատանքով ու մնայուն ձեռբերումներով՝ ի խնդիր մեր երկրի առաջընթացի և մեր ժողովրդի բարեկեցիկ կյանքի: Հայրենիքը սիրելու, ազգը սիրելու վառ օրինակը թողեց մեզ և սերունդներին, օրինակը՝ նվիրյալ գործունեությամբ համազգային իղձերի տերը լինելու և դրանք կյանքի կոչելու պատասխանատվության և վճռականության:

Մենք սիրով ենք հիշում հոգելույս Անդրանիկ Մարգարյանի հետ ունեցած հանդիպումները, որոնց ընթացքում զգացել ենք նաև նրա խորին հարգանքը հանդեպ համայն հայության նվիրական Սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Հանգուցյալ վարչապետը նույնպես իր գնահատելի նպաստը բերեց Հայ Եկեղեցու առաքելությանը՝ անվարան հավատով, որ Աստծուն ապավինած, Հայ Եկեղեցու օրհնության ներքո պիտի շարունակի ապրել հայ ժողովուրդը:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հիշատակը միշտ ապրելու է մեր հոգիներում իր անմիջական ու բարի, մարդասեր և հայրենասեր նկարագրով, ծառայության իր վաստակով Հայրենիքին ու ժողովրդին:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր անբավ ողորմությամբ երկնից հավիտենական հանգրվաններում լույսերի և երանավետ խաղաղության մեջ ընդունի հոգին հանգուցյալ վարչապետի և Սուրբ Հոգու շնորհով սփոփանք և մխիթարություն պարգևի ննջեցյալի սգակիր այրուն և զավակներին, մերձավորներին և մեզ ամենքիս:

Թող Տերը խաղաղության Իր շնորհի ներքո պահպանի հայրենի մեր պետությունը և ազգս հայոց և օրհնի մեր ժողովրդին՝ իրականության առաջնորդելու այն իղձերը, որոնք կրում էր իր հոգում նաև լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Խունկ, աղոթք և օրհնություն ի Տեր հանգյալ Անդրանիկ Մարգարյանի բարի հիշատակին ու շիրիմին. Ամեն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ռուսաստանի Դաշնությունում վերջին օրերին տեղի ունեցած ողբերգական դեպքերի առիթով սույն թվականի մարտի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքին:

Ցավակցագրի մեջ մասնավորապես ասվում է. «*Այս ծանր պահին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի, եկեղեցականաց դասի և հավատավոր հոտի անունից Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը, հանգուցյալների հարազատներին ու մտերիմներին և Ռուսաստանի համայն ժողովրդին:*

Աղոթք ենք բարձրացնում տուժածների շուտափույթ ապաքինման համար: Հայցում ենք Ամենողորմ Տիրոջը, որ երկնային Իր հարկերում հանգստության մեջ ընդունի զոհվածների հոգիները և Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգավորներին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և հանդիսապետությամբ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի, հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար, ով սպանվել էր հունվարի 19-ին Ստամբուլում:

Մինչ արարողությունը ներկա հավատացյալներին խոսքով դիմեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Սրբազան Հայրն իր խոսքում կարևորեց Հրանտ Դինքի գործունեությունը և հրավիրեց համախումբ աղոթքի ննջեցյալի հոգու հանգստության համար:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 7-9-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ժողովականներին՝ մասնավոր գնահատանք հայտնելով Եկեղեցու առջև ծառացած խնդիրների քննարկմանն ու լուծմանն իրենց բերած նպաստի համար:

Որպես ատենապետեր՝ եռօրյա նիստերը վարելու հրավիրվեցին Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը և Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

Օրակարգի հաստատումից և նախորդ ժողովի արձանագրության վավերացումից հետո Վեհափառ Հայրապետի կողմից կատարվեցին ծանուցումներ նախորդ ժողովի ընթացքին կայացված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ: Այնուհետև քննության առնվեցին հաստատված օրակարգի հարցերը:

Ժողովականներին ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2006 թվականի գործունեության տարեկան զեկույցը և ֆինանսական հաշվետվությունը: Մասնակի անդրադարձումներ կատարվեցին սոցիալական ծառայությունների, եկեղեցաշինության, հոգևորականների պատրաստության, Եկեղեցի-պետություն, Մայր Աթոռ-նվիրապետական Աթոռներ հարաբերությունների, գիտա-կրթական գործունեության ոլորտներին: Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց զեկույցը:

Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի զեկույցով ներկայացվեցին Համահայկական երիտասարդական եկեղեցասիրաց կազմակերպության կառույցի ձևավորման ուղղությամբ կատարված աշխատանքները: Սրբազանը տեղեկացրեց, որ մարտի 6-ին Մայր Աթոռում տեղի ունեցավ երիտասարդական ներկայացուցչական հավաք՝ մասնակցությամբ Հայաստանից և արտերկրից շուրջ 70 երիտասարդների, որն ընտրեց կենտրոնական խորհուրդ՝ կազմակերպության 2008 թ. առաջին պատգամավորական ժողովը նախապատրաստելու համար (տե՛ս էջ 68): Ժողովը գնահատանքով ընդունեց կատարված աշխատանքների մասին ծանուցումները՝ վստահություն հայտնելով, որ այս կառույցը նոր խթան կդառնա թեմերում եկեղեցասեր երիտասարդաց միությունների գործունեության առավել արդյունավորման համար:

Օրակարգի հաջորդ հարցով անդրադարձ կատարվեց Վիրահայոց թեմի խնդիրներին: Հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկող Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը հանգամանորեն անդրադարձավ թեմի առջև ծառացած մարտահրավերներին, թեմի իրավաբանական կարգավիճակի հաստատ-

ման ու եկեղեցիների վերադարձման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների անհրաժեշտությանը: Խնդրի առնչությամբ տեղի ունեցած քննարկումների արդյունքում Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց շարունակել աշխատանքները Վրաց պետության և Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ՝ մատնանշված խնդիրներին բարվոք լուծում գտնելու համար:

Գերագույն Հոգևոր Խորհրդը քննության առավ նաև թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի նախագիծը: Զեկուցող Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը նախորդ ժողովի ընթացքին նախագծի վերաբերյալ կատարված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա ժողովականներին ներկայացրեց թեմական կանոնադրության ուղենիշային փաստաթղթի նախագծի՝ ծուխին վերաբերող բաժնի լրամշակված տարբերակը, որը մասնակի քննարկումներից հետո ընդունվեց որպես հիմք: Ժողովականները քննարկեցին նախագծի մյուս բաժինները, որոնք վերաբերում են առաջնորդի, թեմերի կառավարման մարմինների, դրանց ընտրության և գումարման կարգին, իրավասությունների ու պարտականությունների շրջանակներին և հարակից այլ հարցերի:

Ընթացակարգային առումով թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի նախագիծը պիտի առաքվի թեմեր, լրամշակման ենթարկվի թեմերից եկած դիտողությունների և առաջարկների հիման վրա, ապա Գերագույն Հոգևոր Խորհրդի և թեմական ներկայացուցչական ժողովի վերջնական քննարկումից հետո ներկայացվի ի հաստատումն Ամենայն Հայոց Հայրապետին:

Ի շարս այլ հարցերի որոշում կայացվեց, որ առաջիկա՝ 2008 թ. սեպտեմբերի 28-ին կկատարվի Մյուռոնօրհնության արարողություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԵԿԱՄՅԱ՝ 200 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ

մարտի 2007 թ.

Սիրելի Սրբազաններ և մեծարգո Տիարք

Ընկալյալ ավանդույթի համաձայն՝ ներկայացնում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջ միածնի 200 թ. գործունեությունը՝ անդրադառնալով այդ ժամանակահատվածում իրականացված աշխատանքներին և դեռևս ընթացքի մեջ եղող ծրագրերին որոնց իրագործումը պիտի շարունակվի առաջիկա տարի

Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական ընդունված արարողակարգով՝ տարբեր երկրներից պաշտոնական այցով Հայաստան ժամանած բարձրաստիճան ղեկավարները գիտության և մշա կույթի նշանավոր գործիչները ընդունված պաշտոնական արարողակարգով այցե լում են և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Մայր Աթոռում ընդունել ենք.

Հունվարի 7 ին՝ երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաս տանի Արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլիին՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ

Հունվարի 2 ին՝ Ս. Էջմիածնում ընթացող Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության երրորդ հանդիպման մաս նակիցներին՝ գլխավորությամբ երկխոսության համանախագահներ Հռոմի Քրիս տոնեական Միությունը Խրախուսող Քահանայապետական Խորհրդի նախագահ Կարդինալ Վալտեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի գլխա վոր քարտուղար Դամիեթի Մետրոպոլիտ Ամբա Բիշոյի Հերթական այս հանդիպ մանը մասնակցում էին Հայ Կաթոլիկ Ղպտի Ասորի Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցիների 27 ներկայացուցիչներ։

Հունվարի ին՝ Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Օննո Էլդերենբոսին Նույն օրն ընդունել ենք նաև Ամենայն Հա յոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության՝ Հայ Եկեղեցու կանոնական վիճակի հանձնախմբի անդամներին՝ նրանց բերելով Մեր թելադրութ յունները և Հայրապետական օրհնությունը։

Մարտի ին՝ Լյուքսեմբուրգի կառավարող՝ Քրիստոնեա-սոցիալիստական կու սակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Ֆ. Էնգելին և Պետանժի քաղաքապետ Պ. Սիբելաներին

Մարտի ին՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի ներկայացուցիչ տի

կին Կոնսուելո Վիդալին ով իր անդրանիկ այցն էր կատարում Մայր Աթոռ

Մարտի 22 ին՝ Պետական Էրմիտաժի տնօրեն Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Միխայիլ Պիոտրովսկուն՝ ուղեկցությամբ Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտի հարավկովկասյան մասնաճյուղի տնօրեն Արմենիկա Կիվիրյանի

Մարտի 2 ին՝ Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության անդամ պետությունների թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը հակազդելու ուղղությամբ իրավասու մարմինների ղեկավարների Կոորդինացիոն խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ Ոստիկանապետ գեներալ-լեյտենանտ Հայկ Հարությունյանի

Մարտի 0 ին՝ Դորտմունդյան կոնֆերանսի՝ Լեռնային Ղարաբաղի հարցով աշխատանքային խմբի համանախագահներ ռուս քաղաքագետ Ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչ Վիտալի Նաումկինին և Շարու նակական երկխոսության միջազգային ինստիտուտի նախագահ Հարոլդ Սանդերսին՝ ուղեկցությամբ խմբի հայաստանյան կողմի ներկայացուցիչների

Ապրիլի ին՝ Վան-Վասպուրական հայրենակցական միության անդամներին որոնք ամեն տարի Մկրտիչ Ա Խրիմյան Հայրապետի մահվան օրը գալիս են՝ ոգեկոչելու Հայոց Հայրիկի վառ հիշատակը։

Ապրիլի ին՝ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբիին՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան տիկին Հայկե Փայչի ուղեկցությամբ

Ապրիլի 2 ին՝ Հայաստանի Հանրապետությունում Հունգարիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Արպադ Սեկեյին նստավայրը՝ Մոսկվա

Ապրիլի 2 ին՝ 200 թ. Գերմանիայում կազմակերպված Վիտտենբերգի կոնֆերանսի 0 մասնակիցների որոնք ուխտի էին եկել Հայաստան՝ ուղեկցությամբ պրոֆ. Հերման Հոլցի Լեփսիուսի տուն-թանգարան Պոտսդամ միության առաջին նախագահ Հ. Շուլցի և Վիտտենբերգի ակադեմիայի տեսուչ Ջ. Գոպֆերտի

Ապրիլի 2 ին՝ Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսին և տիկին Ալմա Ադամկիեին՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի

Մայիսի ին՝ Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության նորընտիր անդամներին։

Մայիսի 2 ին՝ ֆրանսահայ մի խումբ ուխտավորների՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանի ուղեկցությամբ

Մայիսի 27 ին՝ Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչների պատվիրակությանը Պատվիրակության կազմում էին դոկ. Միխայիլ Հյուբնեը՝ Ուղղափառ ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար Էնլարգենից դոկ. Յոհան Շնայդերը՝ Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների կողմից ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար Շտուտգարդից դոկ. Դագմար Հելլեր՝ Ուղղափառ Եկեղեցիների հետ կապերի պատասխանատու Հանովերից

Հունիսի ին՝ Ռուսաստանի Դաշնության Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրա

համյանի

Հուլիսի 2 ին՝ Լիբանանի Արտաքին գործերի և սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխին՝ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ։

Օգոստոսի 7 ին՝ ԱՄՆ Արևելյան թեմի Բոստոնի Վոթերթաունի Ս. Հակոբ եկեղեցու հիմնադրման 7 ամյակի առիթով կազմակերպված Հայաստան ուխտագնացությանը մասնակից հայորդիների՝ ուղեկցությամբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Առաքել քահանա Ալջալյանի

Օգոստոսի 2 ին՝ Համահայկական կրթական երկրորդ համաժողովի մասնակիցներին։ Նույն օրը նաև՝ Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովին

Սեպտեմբերի 2 ին՝ Մեր հրավերով Մայր Աթոռ ժամանած Սիրիայի Արաբական Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակությանը

Սեպտեմբերի ին՝ Հայաստան ուխտի եկած կաթոլիկ եկեղեցականների՝ գլխավորությամբ Պադովայի ճեմարանի տեսուչ մոնսենյոր Սանդրո Պանիցոլոյի և առաջնորդությամբ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտտիի

Սեպտեմբերի ին՝ հոգևոր առաքելության մեջ կարդինալ Աքիլլե Սիլվեստրի նիին աջակից եկեղեցասեր համայնքի անդամներին՝ գլխավորությամբ Անդրկովկասում պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտտիի և տիար Պիեռսիլվերիո Պոցցիի Կազմակերպությունն իր հիմնադրման 0 ամյակի առիթով ուխտագնացություններ է կազմակերպել Պաղեստին ապա Հայաստան՝ որպես քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին քրիստոնյա երկիր

Սեպտեմբերի 7 ին՝ Անգլիկան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների Ուխտագնացություն Աստվածաշնչային երկրներ ծրագրի շրջանակներում Հայաստան այցելած մի խումբ ուխտավորների Ուխտագնացության ղեկավարն էր Եվրոպայում Անգլիկան Եկեղեցու առաջնորդ Ջեֆրի Ռոուել Եպիսկոպոսը

Սեպտեմբերի 27 ին՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի և խորհրդի անդամ Տ. Վահրամ քհն. Մելիքյանի

Հոկտեմբերի ին՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակին և իր գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդվարդ Նալբանդյանի և Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունիի ուղեկցությամբ

Հոկտեմբերի ին՝ Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուին և իր գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Կապի և տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ Հանդիպմանը ներկա էր նաև Մայր Աթոռի Վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը

Հոկտեմբերի ին՝ ԱՊՀ և Բալթյան երկրների երկաթուղային տրանսպորտի

խորհրդի րդ նիստի 7 մասնակիցների՝ ուղեկցությամբ Հայկական երկաթուղի ընկերության գլխավոր տնօրեն Արարատ Խրիմյանի

Հոկտեմբերի ին՝ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արդարադատության նախարարների 27 րդ համաժողովի շուրջ 0 մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի

Հոկտեմբերի ին՝ Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ռումինիայի Հանրապետության դեսպան Նիկոլաե Իորդակեին: Նույն օրն ընդունել ենք նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայ-դանիական առաքելություն կազմակերպության միջև համագործակցության վերաբերյալ սեմինարի մասնակիցներին

Հոկտեմբերի 7 ին՝ Հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Անրի Կյունիին: Նույն օրն ընդունել ենք նաև Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի պատվիրակությանը՝ գլխավորությամբ հանձնաժողովի համանախագահ ՌԴ Դաշնային խորհրդի անդամ Նիկոլայ Ռիժկովի:

Հոկտեմբերի ին՝ Իտալիայի Արտաքին գործերի փոխնախարար Ֆամիանո Կրուչիանելիին՝ ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 2 ին՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահ Սյու Ցզյալուի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ-ում ՉԺՀ դեսպան Ցզո Սյուելյանի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 2 ին՝ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Բելառուսի Հանրապետության վարչապետ Սերգեյ Սիդորսկուն՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 2 ին՝ ՌԴ Պետդումայի պատգամավոր Մարդկային արժանապատվության և անվտանգության պաշտպանության միջազգային լիգայի նախագահ բանակի գեներալ Վալենտին Վարենիկովին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի և ՀՀ վարչապետի խորհրդական Ֆադեյ Սարգսյանի ուղեկցությամբ

Հոկտեմբերի 2 ին՝ ՀՀ-ում Շվեդիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Հանս Գունար Ադենին և ՀՀ-ում Շվեդիայի պատվո հյուպատոս Էդիտ Խաչատրյանին

Նոյեմբերի 2 ին՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի նախագահ Սերգեյ Իգնատևի գլխավորած պատվիրակությանը՝ կազմված ԱՊՀ տարբեր երկրների կենտրոնական բանկերի պաշտոնյաներից

Նոյեմբերի 7 ին՝ Լեհաստանի Հանրապետության Սենատի Մարշալ Բոգդան Բորուսևիչի գլխավորած պաշտոնական պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ ներկայացուցիչների և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ

Նոյեմբերի ին՝ ՀՀ-ում Կանադայի Համադաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ռալֆ Լիսիշինին

Նոյեմբերի 2 ին՝ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սերժ Սմեսովին

Մայր Աթոռը շարունակում է իր գործուն մասնակցությունը բերել Հայաստանի գիտամշակութային ու հասարակական կյանքին՝ զանազան միջոցառումների կազ մակերպումով և տարբեր ձեռնարկումների իրականացմամբ Անցյալ տարում Մայր Աթոռում ընդունել ենք Սուրբ Էջմիածնի կողմից հրավիրյալ պաշտոնական ան ձանց ինչպես նաև՝ հասարակական կազմակերպությունների ստեղծագործական միությունների ակադեմիական ու բուհական համակարգերի ինչպես նաև քաղա քական կուսակցությունների ներկայացուցիչների

Բ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տարվա ընթացքում Հովվապետական այցելություն ենք կատարել Կոս տանդնուպոլսի հայոց Պատրիարքություն և մասնակցել տարբեր համագումարնե րի և միջեկեղեցական ժողովների

Հունիսի 20 2 ը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի և Կոստանդնու պոլսի հայոց Պատրիարքի հրավերով Հովվապետական Մեր անդրանիկ այցը կա տարեցինք Կոստանդնուպոլիս՝ հյուրընկալվելով նախ Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքության կողմից այնուհետև՝ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութ յան Կ. Պոլսի հավատավոր մեր ժողովրդի հետ հանդիպումով և միասնական աղո թակցությամբ Մայր Աթոռի օրհնությունը բաշխեցինք Կ. Պոլսո մեր հավատացյալ ներին։

Հուլիսի ին մեկնեցինք Մոսկվա՝ մասնակցելու աշխարհի կրոնապետերի հա մաժողովին։

Սեպտեմբերի 0 ը Հայրապետական այցով եղանք Սիդնեյում Մեր օրհնութ յունը բաշխեցինք ավստրալահայ հավատավոր հայ համայնքին և մասնակից ե ղանք Համազգայինի Արշակ և Սոֆի Գալստան դպրոցի 20 ամյակի կապակցութ յամբ կազմակերպված միջոցառումներին։

Սեպտեմբերի 2 ը մասնակցել ենք Աստանայում տեղի ունեցած Ավանդա կան և համաշխարհային կրոնների՝ քրիստոնյա մուսուլման հուդայական բուդ դիստ հինդու և այլ կրոնապետերի 2 րդ համագումարին որի ընթացքում հանդես ենք եկել Հավատքի ազատություն և հարգանք այլադավանների նկատմամբ թե մայով բանախոսությամբ

Դեկտեմբերի ը Հովվապետական այցով եղանք Ֆրանսիայում Դեկտեմբերի ին Փարիզում մասնակցեցինք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 00 ամյա տարեդարձին նվիրված հանդիսությանը՝ Մեր օրհնությունը բերելով ՀԲԸՄ-ի անդամներին։ Դեկտեմբերի 0 ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր ե կեղեցում մատուցեցինք Ս. Պատարագ հընթացս որի ընթերցվեց Հայրապետական Կոնդակը Փարիզի Առաջնորդությունը և Ֆրանսիայի հայոց եկեղեցական համայնք ները Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակությունից առանձնացնե լու և Փարիզ առաջնորդանիստ կենտրոնով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Ե կեղեցու Ֆրանսիայի մեկ միասնական հայոց թեմ հռչակելու մասին Հանդիպում ու նեցանք նորակազմ թեմի պատգամավորների հետ՝ քննարկելով թեմի կանոնադ րությանն առնչվող հարցեր։ Դեկտեմբերի ին Փարիզից մեկնեցինք Մարսել ուր դեկտեմբերի 7 ին Ս. Թարգմանչաց եկեղեցում Ս. Պատարագ մատուցեցինք և Մեր

օրհնությունն ու շնորհավորանքը բերեցինք մարսելահայ համայնքին եկեղեցու օծ
ման 7 ամյակի հոբելյանի առիթով։ Պատարագի արարողությունից հետո Մեր
հանդիսապետությամբ տեղի ունեցավ Ս. Թարգմանչաց եկեղեցուն կից գործող Ս.
Սահակ-Ս. Մեսրոպ մշակույթի կենտրոնի նոր մասնաշենքի հիմնարկեքի արարո
ղությունը։ Հանդիպումներ ունեցանք նաև Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդե
նի ընդհանուր խորհրդի նախագահ Ժան-Նոյել Գերինիի և շրջանային խորհրդի
նախագահ Միշել Վոզելի հետ։

Գ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուրախությամբ ենք արձանագրում որ ընթացիկ տարում Առաքելական մեր
Սուրբ Եկեղեցու հոգևորականաց շարքը համալրվեց նոր եկեղեցականներով տեղի
ունեցան եպիսկոպոսական քահանայից և սարկավագաց ձեռնադրություններ
վարդապետական աստիճանի տվչություններ Այս տարի արքության պատվի են
արժանացել եպիսկոպոսներ վարդապետական աստիճան են ստացել աբեղա
ներ ձեռնադրվել են եպիսկոպոսներ աբեղա քահանա սարկավագ

Հայրապետական Մեր օրհնությամբ հունիսի ին արքության պատիվ է շնորհ
վել Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկո
պոս Պետրոսյանին և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փո
խանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին հունիսի ին՝ Արամ
եպիսկոպոս Աթեշյանին նոյեմբերի ին՝ Վիգեն եպիսկոպոս Այքազյանին դեկ
տեմբերի ին՝ Արիս եպիսկոպոս Շիրվանյանին և Սևան եպիսկոպոս Ղարիբյա
նին՝ ի գնահատություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստա
նում իրենց անմնացորդ ծառայության և տարիների վաստակի

Հունվարի ին հընթացս Սուրբ Պատարագի Մեր ձեռամբ եպիսկոպոսական
ձեռնադրություն և օծում ստացան Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ վրդ.
Մնացականյանը և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վրդ. Նալբանդյա
նը

Փետրվարի ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցավ քահանայա
կան ձեռնադրություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ու Քահանայից պատրաս
տության լսարանն ավարտած չորս սարկավագներ կոչվեցին քահանայության և օծ
վեցին՝ ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիս
կոպոս Պետրոսյանի Արտակ սրկ. Գրիգորյանը վերանվանվեց Տ. Մխիթար աբեղա
Դավիթ սրկ. Գուլյանը՝ Տ. Լևոն աբեղա Գևորգ սրկ. Դավթյանը՝ Տ. Կիրակոս աբեղա
Գևորգ սրկ. Միրզոյանը՝ Տ. Ընծա քահանա։

Փետրվարի 2 ին՝ Սրբոց Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում
Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի ձեռամբ սարկավագական
աստիճանի արժանացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ

Հոկտեմբերի ին՝ Վարագա Ս. Խաչի տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում
ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի Գևորգյան Հոգևոր
Ճեմարանի և Քահանայից լսարանի շրջանավարտ ինը սարկավագներ ստացան
քահանայական աստիճան։ Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին

վերանվանեց հոգևոր նոր անուններով. Հովհաննես սրկ. Յապարյանը անվանակոչ վեց Տ. Վարագ Սահակ սրկ. Ղազարյանը՝ Տ. Աշոտ Խոսրով սրկ. Եսայանը՝ Տ. Թոռոս Սամվել սրկ. Խանոյանը՝ Տ. Շիրակ Արմեն սրկ. Աշուրյանը՝ Տ. Մովսես Հովհաննես սրկ. Գրիգորյանը՝ Տ. Հակոբ Անդրեյ սրկ. Սարգսյանը՝ Տ. Նշան Գարեգին սրկ. Համբարձումյանը՝ Տ. Արսեն և Գևորգ սրկ. Մկրտչյանը՝ Տ. Պսակ

Հոկտեմբերի ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սարկավագության աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 27 սաներ՝ ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի։

Նոյեմբերի ին կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրությունն ու օծումը Մայր Աթոռի պատկան վանքերի տեսուչ Տ. Արարատ ծայրագույն վարդապետ Գալթագճյանի ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանի և Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մարկոս վարդապետ Հովհաննիսյանի

Դեկտեմբերի ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց քահանայական ձեռնադրություն։ Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Քահանայից լսարանի շրջանավարտ չորս սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն։ Ձեռնադրող Սրբազան Հայրը նորընծա քահանաներին վերանվանեց հոգևոր նոր անուններով. Նվեր սրկ. Մելքումյանը կոչվեց Տ. Ահարոն Արկադի սրկ. Օրդոյանը՝ Տ. Արարատ Ներսեհ սրկ. Սարգսյանը՝ Տ. Մարկոս և Սևակ սրկ. Գալստյանը՝ Տ. Փառեն

Դեկտեմբերի 2 ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնի օրը Միածնաէջ Մայր Տաճարում հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի սարկավագական աստիճան ստացան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներ։

Այս տարի վարդապետական իրենց թեզերը պաշտպանեցին և վարդապետական տվչության արարողությամբ մասնավոր վարդապետության չորս աստիճանների արժանացան ութ աբեղաներ.

Տ. Արզար աբեղա Հովակիմյանը թեման՝ Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացին հայ մատենագրության մեջ

Տ. Սահակ աբեղա Մաշալյանը թեման՝ Հավատք և հրաշք

Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյանը թեման՝ Ֆեմինիստական փրկաբանության վերլուծության փորձ

Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը թեման՝ Էկումենիզմը 20 րդ դարում և Հայ Եկեղեցին

Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյանը թեման՝ Հոգևոր մշակութային կյանքը հունգարահայ գաղութում

Տ. Դանիել աբեղա Թումանյանը թեման՝ Ծննդոց գրքի րդ գլխի 7 համարները ժամանակակից մի շարք մեկնություններում և հայ պարականոն գրականության մեջ

Տ. Վազգեն աբեղա Նանյանը թեման՝ Տյառնընդառաջի տոնը ներառումը հայոց

Տոնացույցի մեջ և ծիսական կառուցվածքը

Տ. Առեն աբեղա Շահինյանը՝ թեման՝ Պատմական ակնարկ Արևագալի ժամերգության մասին մինչև հիմա եղած հետազոտությունների

Հայրապետական տնօրինությամբ հունվարի ին կարգալույծ է հռչակվել Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը՝ կանոնազանց ընթացքի՝ հնազանդության ուխտը խախտելու համար Հոկտեմբերի 2 ին Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանի դիմումի համաձայն կարգալույծ է հռչակվել թեմի հոգևոր սպասավոր Տ. Հովհաննես քահանա Սողբաթյանը՝ եկեղեցականին անհարիր վարքի և ընթացքի համար

Ընթացիկ տարում Հայրապետական Մեր տնօրինությամբ կատարել ենք հետևյալ նոր նշանակումները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում և թեմերում

Փետրվարի ին ձեռնադրյալ հոգևորականները քառասնօրյա պատրաստության շրջանից հետո ծառայության են կոչվել.

Տ. Լևոն աբեղա Գուլյանը նշանակվել է ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդի օգնական։

Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում՝ որպես Բաթումի հոգևոր հովիվ՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո

Տ. Մխիթար աբեղա Գրիգորյանը՝ Արարատյան Հայրապետական թեմում առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո՝ որպես Արարատի մարզում առաջնորդական փոխանորդի օգնական։

Ճեմարանի տեսչի պաշտոնում յոթնամյա գործունեությունից հետո Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը նշանակվել է որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական հաստատությունների համակարգող իսկ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ է նշանակվել Տ. Վազգեն վարդապետ Նանյանը

Այնուհետ Մայր Աթոռի պարետ Տ. Նարեկ աբեղա Ավագյանը նշանակվել է Մայր Աթոռի Մկրտարանի տեսուչ և Մայր Աթոռի պարետի պաշտոնում նրան փոխարինել է Տ. Լևոն աբեղա Գուլյանը

Հոգևոր կյանքին նորոգ զորություն է հաղորդում Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնի առիթով արդեն ավանդույթ դարձած Մայր Աթոռում հրավիրվող ամենամյա քահանայից հավաքը որին Մեր նախագահությամբ մասնակցում են Հայաստանի և Արցախի թեմակալ առաջնորդներն ու քահանայից դասը

Օգոստոսի ին Մեր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեց ընդհանուր միաբանական չորրորդ եռօրյա համագումարը որին մասնակցեցին Հայաստանի և արտերկրի թեմերում ծառայող և ուսանող Սուրբ Էջմիածնի միաբան Հայրեր՝ ծայրագույն վարդապետներ վարդապետներ աբեղաներ Հերթական այս համագումարին քննության առնվեցին միաբանի՝ որպես ժողովրդի հովվի հավատքի ուսուցչի քարոզչի խորհրդատուի վարիչի առաքելությանն առնչվող խնդիրներ։

Մայր Աթոռում պարբերաբար գումարվում են նաև միաբանական ժողովներ Այս հավաքների ընթացքում քննարկվում են եկեղեցականների ծառայությանը ժողովրդի կյանքում Եկեղեցու առաքելության բարվոք իրականացմանը միաբանական կյանքին վերաբերող հարցեր

Պարբերաբար գումարվում են նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված ինչպես նաև ԳՀԽ հայաստանաբնակ անդամների նիստեր որոնց ընթացքում քննարկվում են մեր ժողովրդի կյանքում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը Ե կեղեցի-պետություն և միջեկեղեցական հարաբերություններին ներեկեղեցական կյանքին վերաբերող խնդիրներ դրանց առնչությամբ առաջարկվում են լուծումներ և ընդունվում համապատասխան որոշումներ

Մայր Աթոռում գումարվում են նաև թեմական առաջնորդների ժողովներ Այդ ժողովների ընթացքում քննության են առնվում թեմերի գործունեությանը թեմական կյանքի բարվոք կազմակերպմանը վերաբերող հարցեր քննարկվում հայաստան յան թեմերում տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակ ցությամբ ծխական համայնքների կազմակերպման ուղղությամբ տարվող աշխա տանքները անդրադարձ է լինում թեմերում ծառայող հոգևորականների առաքե լության առավել արդյունավետ իրագործման և թեմերում մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու ծեսի վարդապետության վերաբերյալ ուսուցումների Աստվածաշնչի սերտողությունների իրականացման համար տարվող աշխատանքներին Թեմական առաջնորդները պարբերաբար հանդիպում են նաև ԳՀԽ անդամներին՝ մասնակցե լով Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին՝ քննարկելու թեմական կյանքին առնչ վող հարցեր և խնդիրներ

Այս տարի ևս Մեր օրհնությամբ իրենց բարձրագույն կրթությունը արտասահ մանի հեղինակավոր ուսումնական հաստատություններում շարունակելու համար ուսման ենք ուղարկել հետևյալ միաբաններին.

Ռուբեն աբդ. Զարգարյան՝ Հռոմի Գրիգորյան համալսարանում Շահե աբդ. Ա նանյան՝ Փարիզի Կաթոլիկ ինստիտուտում Արսեն սրկ. Գամաղելյան՝ Ռումինիա որտեղ ամիս Սիբիու քաղաքում սովորելու է գերմաներեն ապա 2007 200 ուս տարվանից սովորելու է տնտեսագիտություն Գերմանիայում Գեղարդ աբդ. Վա հունի՝ Հռոմի համալսարան Էդգար սրկ. Ծատուրյան՝ Աթենքի համլսարան

Դ. ՆԵՐԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

. Եկեղեցիների հիմնարկեք և օծում

Տիրոջ ողորմությամբ և հավատացյալ մեր հայորդիների նախանձախնդիր ա ջակցությամբ շարունակվում են եկեղեցաշինական աշխատանքները

Մայիսի 2 ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հավարտ Սուրբ Պատարագի Մեր հանդիսապետությամբ կատարվեց Մայր Տաճարի հյուսիսային կողմում կա ռուցվող նոր Մկրտարանի՝ Ս. Վարդան եկեղեցու և Ս. Հովհաննես Մկրտիչ մատ ռան հիմնարկեքը։ Մայր Աթոռի նոր մատուռ-մկրտարանը կառուցվում է ՀՀ նախ կին վարչապետ Արմեն Սարգսյանի և նրա ընտանիքի ազնիվ բարերարությամբ Շենքը նախագծել է վաստակաշատ ճարտարապետ Ջիմ Թորոսյանը

Հուլիսի 2 ին Արարատյան Հայրապետական թեմում կատարեցինք Երևանի Է րեբունի համայնքի Ս. Մեսրոպ եկեղեցու հիմնարկեքը Եկեղեցին կառուցվում է ա մերիկահայ բարերարներ տեր և տիկին Սարգիս և Բոբի Հակոբյանների հովանա

վորությամբ։ Նրանց բարերարությամբ Հայաստանում կառուցվել է ևս մեկ՝ Գյում րիի Անի թաղամասի Ս. Հակոբ եկեղեցին։

Օգոստոսի ին կատարվեց օծումը Սոլակի Ս. Աստվածածին եկեղեցու ճար տարապետ՝ Արտակ Ղուլյան

Օգոստոսի 2 ին Մեր հանդիսապետությամբ կատարվեց Աբովյան քաղաքի Ս. Հովհաննես եկեղեցու հիմնարկեքը որի կառուցումը նախատեսվում է ավարտել երկու տարուց։ Եկեղեցին կառուցվում է հովանավորությամբ Ազգային Ժողովի պատգամավոր Գագիկ Ծառուկյանի ում ազնիվ բարերարությամբ նաև կառուցվել է Առինջի Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգվել Ս. Հովհաննես եկեղեցին (ճարտարապետ՝ Արտակ Ղուլյան

Կատարել ենք հիմնարկեքը Ստեփանակերտի Ս. Աստվածածին Մայր եկեղեցու

Նոյեմբերի ին օծվեց Արարատյան Հայրապետական թեմի Ներքին Չարբախի նորակառույց Ս. Խաչ եկեղեցին

2. . . . կազմակերպության «Գարեգին Բ տնաշինական ծրագիր

Սույն թվականի ապրիլի 20 ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և . . . քրիստոնեական բարեգործական կազմակերպության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի արդյունքում սկիզբ առավ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան Կառուցենք հավատով ծրագիրը որի շրջանակներում Հայկական Հաբիթաթը այս տարվա ընթացքում կառուցեց 7 տներ կարիքավոր ընտանիքների համար ԱՄՆ-ից ժամանած Եկեղեցիների Ազգային Խորհրդի անդամները՝ գլխավոր քարտուղար դոկտոր Բոբ Էդգարի առաջնորդությամբ Միջազգային Հաբիթաթի ներկայացուցիչ դոկտոր Քեննեթ Բենսոնը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տնօրենների խորհրդի նախագահ Փոլ Էքելշոթը միջազգային կամավորների այլ խմբեր միացան Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերի ներկայացուցիչներին և Մայր Աթոռի միաբաններին՝ սեպտեմբերի ը ավարտին հասցնելու այս տարվա մայիսին Գեղարքունիքի Գավառ քաղաքում սկիզբ առած 2 բնակարաններից բաղկացած շենքի շինարարական աշխատանքները

. Հայրապետական Կոնդակներ և Օրհնության գրեր

Ընթացիկ տարում Մեր կողմից տրվել է 0 Հայրապետական Կոնդակ որոնցից ը Ֆրանսիայի հայոց թեմի հոչակման ը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ 2 ը՝ Ս. Սահակ Ս. Մեսրոպ 2 ը՝ Ս. Ներսես Շնորհալի շքանշանով պարգևատրելու և վեցը՝ արքության պատվի արժանացնելու վերաբերյալ Այս տարի շնորհել ենք նաև Օրհնության գիր Նաև խոսքեր ենք ասել ու հղել միջեկեղեցական հանդիպումների և մի շարք հանդիսությունների միջոցառումների ու գիտաժողովների առիթներով

Կազմակերպված միջոցառումների ընթացքին շքանշանով պարգևատրվել են հետևյալ անձինք.

Ապրիլի 22 ին Ս. Սահակ Ս. Մեսրոպ շքանշան հանձնեցինք մեծանուն ճար

տարապետ Ջիմ Թորոսյանին և Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեղամ Գրիգորյանին՝ հայ մշակույթին մատուցած իրենց ծառայությունների և մեծ վաստակի համար

Օգոստոսի 0 ին՝ Ս. Սահակ Ս. Մեսրոպ շքանշան տիար Թոմ Սամուելյանին՝ ազգօգուտ ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակի համար

Սեպտեմբերի ին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշան տեր և տիկին Պետրոս և Աննա Օրունջաքճիելներին՝ հավատավոր իրենց ոգու ազգանվեր ու եկեղեցաշեն արդյունավոր ծառայությունների համար

Սեպտեմբերի 2 ին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանով պարգևատրվեցին թեհրանաբնակ բարերարներ տեր և տիկին Լևոն և Բելլա Ահարոնյանները՝ իրենց բարեսիրական բազմամյա արդյունաշատ ծառայությունների համար

Դեկտեմբերի 2 ին՝ Ս. Սահակ Ս. Մեսրոպ շքանշանով պարգևատրվեց Ազգ օրաթերթի գլխավոր խմբագիր տիար Հակոբ Ավետիքյանը և Ս. Ներսես Շնորհալի շքանշանով՝ տիար Լևոն Սարգսյանը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց ծառայությունների համար

Ե. ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

Մայր Աթոռի Դիվանատունն իրականացրել է ստացված գրություններին ու նամակներին պատասխան գրություններ առաքելու շնորհավորական հրավեր գրություններ հղելու և Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի կազմակերպման ու դրանց օրակարգի հետ կապված նյութերի հավաքման Մայր Աթոռում միջոցառումների կազմակերպման աշխատանքները

Այս տարվա ընթացքում Դիվանատանը ստացվել են շուրջ . 0 գրություններ ու նամակներ և պատրաստվել ու առաքվել են 70 ը

Հանդիսություններ

Սեպտեմբերի ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից Մեզ շնորհված Բարեկամության շքանշանի հանձնման հանդիսավոր արարողությունը Հանդիսությանը ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ պետական այրեր գիտության ու մշակույթի գործիչներ

Օգոստոսի 2 ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեցինք Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովին ով Հայրենյաց հպարտություն ռուսական բարեգործական հիմնադրամի կողմից Մեզ հանձնեց ՌԴ հասարակական բարձրագույն պարգև՝ Ռուսաստանի հպարտություն ոսկե շքանշանը՝ ի գնահատություն աշխարհի ժողովուրդների հոգևոր միավորման գործում ունեցած ավանդի հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման ինչպես նաև խաղաղարարական գոր

ծունեության համար

Հոկտեմբերի 2 ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում Մեր հանդիսապետությամբ տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայ Եկեղեցու ավագագույն և վաստակաշատ հոգևորական Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանին Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմն ու ուսանողությունը և հյուրեր

Հոկտեմբերի ին՝ Սրբոց Թարգմանչաց տոնի օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Հայ հնագրության ալբոմի հայերեն տարբերակի հրատարակության շնորհանդեսը Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ ալբոմի ստեղծմանը նպաստած անձինք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ գիտության և մշակույթի գործիչներ

Հոկտեմբերի 2 ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռի հովանավորությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից Հայաստանում անցկացվող հանրակրթական դպրոցների ուսուցիչների երրորդ մրցույթը՝ Մեր հանդիսապետությամբ և մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի Մեր կողմից մրցույթի հաղթողներին հանձնվեցին վկայականներ և դրամական պարգևներ

Նոյեմբերի ին Մեր կաթողիկոսական օծման և գահակալության 7 րդ տարեդարձի առիթով Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի ջանքերով Մայր Աթոռ փոխադրվեցին Սկևռայի մասունքները։ Սկևռայի սուրբ մասնատուփը քրիստոնյա աշխարհի կարևորագույն սրբություններից է որ պատրաստվել է 2 թ. Սսի Կոստանդին արքեպիսկոպոսի հրամանով և պարունակում է սրբերի Ս. Պողոս Պետրոս Թադեոս Բարդուղիմեոս առաքյալների Ս. Գրիգոր Լուսավորչի Հակոբ Մծբնա Հայրապետի Հովհան Ոսկեբերանի Ս. Կատարինեի և այլոց մասունքները Այն ՌԴ Էրմիտաժի տնօրինության կողմից 2000 թ. նվիրաբերվել է Հայոց Եկեղեցուն և պահվում էր Սանկտ Պետերբուրգի նորաօծ Ս. Կատարինե հայկական եկեղեցում Մեր տնօրինությամբ սուրբ մասունքները մեկ շաբաթ պահվեցին Մայրավանքում՝ Իջման Սուրբ Սեղանի առջև ուր հավատացյալները հնարավորություն ունեցան հաղորդակցվելու սրբազան մասունքների հրաշագործ զորությանը Այնուհետ Սկևռայի սրբազան մասունքները տեղափոխվեցին Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն՝ լրացնելով այնտեղ պահվող հոգևոր գանձերի շարքը

Զ. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայր Աթոռը շարունակում է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի միջոցով մասնակցել միջեկեղեցական համագումարների ժողովների գործակցել եկեղեցական ու միջեկեղեցական տարբեր կազմակերպությունների հետ

. Մասնակցություն միջեկեղեցական ժողովներին

Հունվարի 2 0 ը Մայր Աթոռում տեղի ունեցավ Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության հերթական հանդիպումը Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 2 աստվածաբաններ Կաթոլիկ Հայ Ղպտի Ասորի Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցիներից՝ Հռոմի Քրիստոնեական Միությունը Խրախուսող Քահանայապետական Խորհրդի նախագահ Կարդինալ Վալտեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Դամիեթի Մետրոպոլիտ Ամբա Բիշոյի համանախագահությամբ Հանդիպման ընթացքում քննարկվեցին Եկեղեցին որպես հաղորդություն թեմային վերաբերող աստվածաբանական հարցեր Այս հավաքին Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ներկայացնում էին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ Գերաշնորհ Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը և Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը

Հայ Եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկման և ներքին միասնականության առավել ամրապնդման առաջադրանքով գումարված խորհրդակցական առաջին ժողովից մարտի 200 թ. հետո 200 թ. հունվարի ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունները վերստին հանդիպեցին և Հայ Եկեղեցու վերանորոգության հրամայականը թեմայի լույսի ներքո ճշտեցին հետագա աշխատանքային գործընթացը։

Փետրվարի 2 ը Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում կայացած Աստված Քո շնորհով փոխակերպիր այս աշխարհը խորագրով ԵՀԽ դ համաժողովին մասնակցեց Մայր Աթոռի պատվիրակությունը՝ թվով անդամներ

Մարտի ը Սպահանում՝ Իրանի մշակութային մայրաքաղաքում կայացավ միջկրոնական-աստվածաբանական գիտաժողով՝ Կառուցողական համագործակցություն աստվածային կրոնների միջև խորագրով՝ կազմակերպված Իրանի Իսլամական Հանրապետության Իսլամական և Մշակութային կապերի կազմակերպության և Իսլամական մտքի դպրոցների միջև նմանության համաշխարհային ֆորումի կողմից Այս գիտաժողովին մասնակցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ հանդես գալով Կրոնի դերը ընկերային կյանքի կարգավորման գործում թեմայով բանախոսությամբ

Ապրիլի 7 ը Ժնևի մոտ գտնվող Բոսեի էկումենիկ ինստիտուտում տեղի ունեցավ Եկեղեցական համատեղ գործողություն ալյանսի տարեկան ժողովը որին մասնակցում էր նաև Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ հայաստանյան միջեկեղեցական Կլոր Սեղանի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը

Ապրիլի 27 0 ը Ստամբուլում Կոստանդնուպոլսի Տիզերեկան Պատրիարքության հրավերով և Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի ու Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ուղղափառ-Բողոքական Եկեղեցիների միջև եկեղեցաբանությանը նվիրված երրորդ խորհրդակցությունը Այս հանդիպմանը Ուղղափառ և Բողոքական Եկեղեցիները ներկայացնող աստվածա

բանները անդրադարձան Եկեղեցու միության և ընդհանրականության խնդրին ինչպես նաև մկրտությունների փոխադարձ ճանաչմանն առնչվող թեմաների Այս հանդիպմանը Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Մայր Աթոռ Ս. Էջ միածնի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը

Մայիսի 2 2 ը Մոսկվայում Դանիլովսկի հյուրանոցում տեղի ունեցավ Կրոնական առաջնորդների համաշխարհային գագաթաժողովը նախապատրաստող մասնագետների հանդիպումը որը կազմակերպվել էր Ռուսաստանի միջկրոնական խորհրդի կողմից Հանդիպմանը մասնակցեցին քրիստոնյա մուսուլման հուդայական բուդդիստ և հինդու 0 ներկայացուցիչներ Ալբանիայից Հայաստանից Ադրբեջանից Բահրեյնից Բուլղարիայից Բոսնիա-Հերցեգովինայից Չինաստանից Եգիպտոսից Էստոնիայից Ֆինլանդիայից Ֆրանսիայից Գերմանիայից Հունաստանից Վատիկանից Հնդկաստանից Իրանից Իսրայելից Իտալիայից Ղրղզստանից Լատվիայից Լիբանանից Ռումինիայից Ռուսաստանից Շվեյցարիայից Սիրիայից Թուրքիայից Միացյալ Թագավորությունից և ԱՄՆ-ից Մայր Աթոռ Ս. Էջ միածինն այդ հանդիպմանը ներկայացնում էր Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը

Մայիսի 2 ը Հյուսիսային Իռլանդիայի Դերրի քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեի տարեկան հանդիպումը Հանդիպմանը մասնակցում էին Կենտրոնական Կոմիտեի 0 անդամներ՝ նախագահությամբ Ժան Առնոլդ դե Կլերմոնի ԵԵԿ նախագահ)՝ Ֆրանսիայի Բարեկարգչական Եկեղեցուց և փոխնախագահությամբ Տիրանայի և Համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Անաստասիոս Արքեպիսկոպոսի Հայ Առաքելական Եկեղեցուց այս ժողովին մասնակցում էր Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը

Մայիսի 0 ից հունիսի 2 ը Հռոմում տեղի ունեցավ Հռոմեականթոլիկ Եկեղեցու Քահանայապետական Աշխարհական Խորհրդի երրորդ ամաժողովը Համաժողովին մասնակցում էին ավելի քան 20 հոգևորականներ ու աշխարհականներ ինչպես նաև հրավիրվածներ Ուղղափառ Եկեղեցիներից

Քահանայապետական Աշխարհական Խորհրդի համաժողովները հրավիրվում են Վատիկանի կողմից Այս հանդիպումները հնարավորություն են ընձեռում միմյանց ավելի մոտից ծանոթանալու ու համագործակցության նոր եզրեր փնտրելու՝ աշխարհականներին Եկեղեցու գործունեության մեջ ընդգրկելու նպատակով

Հայ Առաքելական Եկեղեցուց ժողովին մասնակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Միլանի հայ համայնքի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Առեն աբեղա Շահինյանը

Հայ Առաքելական Եկեղեցին առաջին անգամ մասնակցեց Կրոնները խաղաղության համար եռօրյա համաշխարհային համագումարին որն սկսվել է սույն թվականի օգոստոսի 2 ին Ճապոնիայի Կիոտո քաղաքում Համագումարին մասնակցել են ավելի քան 00 ներկայացուցիչներ՝ կրոնական առաջնորդներ հասարակական և քաղաքական գործիչներ Համագումարի թեման էր. Կրոններն աշխարհում խաղաղության համար բռնության դիմագրավում և համընդհանուր անվտանգության ձեռքբերում Մեր օրհնությամբ համագումարին մասնակցեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկո

պոս Պալիոզյանը

Օգոստոսի 0 ից սեպտեմբերի ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի նորընտիր Կենտրոնական Կոմիտեի առաջին նիստը որը որոշումներ է կայացնում Խորհրդի անունից և ղեկավարում այն 7 տարին մեկ տեղի ունեցող համահավաքների միջև ընկած ժամանակահատվածում Հանուն մեր Սուրբ Եկեղեցու՝ ժողովին մասնակցեցին Ամերիկայի հայոց Արևելյան թեմի Միջեկեղեցական հարցերով պատասխանատու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեում և Գործադիր Կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ինտերնետային գրասենյակի տնօրեն և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ երեցկին Փոլա Դևեջյանը ովքեր այս կառույցում ընտրվել են ԵՀԽ դ համահավաքի ընթացքում

Սեպտեմբերի 2 ից 27 ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան բարգործական միջեկեղեցական հիմնադրամի տարեկան հերթական ժողովը՝ մասնակցությամբ հիմնադրամի միջազգային և Հայաստանյան գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների Ժողովը նախագահում էր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը

Սեպտեմբերի 27 ից հոկտեմբերի ը Շվեդիայի Ֆլամսլաթ քաղաքում տեղի ունեցած Եվրոպական Քրիստոնեական Բնապահպանական Ցանցի դ համագումարին մասնակցեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Մկրտիչ վրդ. Պոռշյանը Համագումարը կրում էր Ապրել էներգիայի նոր դարաշրջանում խորագիրը և հիմնականում անդրադարձել է բնապահպանության հետ կապված խնդիրներին՝ դրանք քննելով արագորեն փոփոխվող աշխարհի համատեքստում աշխարհի ու Եկեղեցիների զարգացման գործընթացում և խրախուսելով համագործակցությունը Եկեղեցիների և պետությունների միջև

Սեպտեմբերի ը Իտալիայի Ասիզի քաղաքում Ս. Էջիդիո համայնքի կողմից կազմակերպված Աշխարհի խաղաղության համար Կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ խորագրով միջկրոնական հանդիպմանը մասնակցեց Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակի փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը

Սեպտեմբերի 20 ը Բոսեի վանքում Իտալիա դ Միջազգային էկումենիկ կոնֆերանսին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Տ. Ադամ քահանա Մակարյանը

Սեպտեմբերի 27 ից հոկտեմբերի ը Հռոդոսում Քաղաքակրթությունների երկխոսություն Համաշխարհային հասարակական համաժողովի՝ Կրոնների երկխոսությունն ի շահ հասարակության թեմային նվիրված չորրորդ նիստին որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ մասնակցեց Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը

Նոյեմբերի 2 ը Մոսկվայի Պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Արևելյան Եվրոպայի

գրասենյակի կողմից Մոսկվայում կազմակերպված Միջազգային քրիստոնեական դիակոնիայի միջոցները խորագրով միջազգային խորհրդակցությանը Հայաստանը ներկայացնում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ և ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանի հոգաբարձուների խորհրդի անդամ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը և Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը Հանդիպման ընթացքում քննարկվեցին Արևմտյան Եվրոպայում քրիստոնեական դիակոնիայի ներկայիս վիճակը և Եկեղեցիների միջև համագործակցության մեխանիզմները Օրակարգում կենտրոնական տեղ էին զբաղեցնում մարդու իրավունքների և արժանապատվության ուղղափառ ընկալումը ինչպես նաև նոր դաշինքի՝ Եկեղեցիների Համատեղ Գործունեություն Զարգացում կազմակերպության հիմնադրումը որը փորձում է խրախուսել Եկեղեցու ծառայությունը զարգացման բնագավառում

Դեկտեմբերի 7 ը Իտալիայում տեղի ունեցած Մշակույթներն ու կրոնները երկխոսության մեջ ընդհանուր Եվրոմիջերկրական տուն ունենալու համար խորագիրը կրող համաժողովին Մեր օրհնությամբ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը

Դեկտեմբերի 2 ին և ին Բրյուսելում Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը մասնակցեց Արժեքներ կրոն ինքնություն թեմայով Եվրոպական Եկեղեցիների հոգևոր առաջնորդների խորհրդաժողովին Խորհրդաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի անդամ 2 Եկեղեցիների և եվրոպական 0 երկրների շուրջ 0 ներկայացուցիչներ Քննարկվեցին հարցեր Եվրոպայի կառուցման հարցում Եկեղեցիների դերի եվրոպական արժեքների Եվրոպայի և Եվրոպական սահմանադրության ապագայի վերաբերյալ Հավարտ խորհրդաժողովի մասնակիցները հանդես կգան համատեղ հայտարարությամբ որը կներկայացվի Եվրոպայի եկեղեցական և քաղաքական առաջնորդներին Հայ Առաքելական Եկեղեցին անդրկովկասյան տարածաշրջանի միակ Եկեղեցին է որ անդամակցում է Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսին

2. Հյուրընկալություններ

Ընթացիկ տարվա ընթացքում Մայր Աթոռի հյուրընկալությամբ Սուրբ Էջմիածնում տեղի են ունեցել հետևյալ ժողովներն ու հավաքները ինչպես նաև հյուրընկալել ենք ներքոհիշյալ պաշտոնական անձանց.

200 թ. հունվարի 2 ը Մայր Աթոռում տեղի ունեցավ Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև երկխոսությանը նվիրված հանդիպումը Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 2 աստվածաբաններ՝ Կաթոլիկ Հայ Ղպտի Ասորի Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցիներից՝ Հռոմի Քրիստոնեական Միությունը Խրախուսող Քահանայապետական Խորհրդի նախագահ Կարդինալ Վալտեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Դամիեթի Մետրոպոլիտ Ամբա Բիշոյի համանախագահությամբ Հանդիպմանը քննարկվել են Եկեղեցին որպես հաղորդություն թեմային վերաբերող աստվածաբանական հարցեր Հանդիպմանը Ամենայն Հայոց

Կաթողիկոսությունը ներկայացրել են ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գե
բաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մի
ջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ ար
քեպիսկոպոս Պետրոսյանը Մասնակիցներին Մենք ընդունեցինք և Հայրապետա
կան Մեր պատգամը տվեցինք.

Փետրվարի 2 27 ը Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հյուրընկալեց Տիեզերական
Պատրիարքության Ֆրանսիայի Էմմանուել Մետրոպոլիտին

Մայիսի 2 ից հունիսի ը Մեր հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հյու
րընկալեց Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Կարելիայի և Համայն Ֆինլան
դիայի Արքեպիսկոպոս Լեո Մակոնենին և նրա գլխավորած պատվիրակությանը

Սեպտեմբերի 2 ին Մեր հրավերով Հայաստան ժամանեց Սիրիայի Արաբական
Հանրապետության մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած
պատվիրակությունը՝ կրոնների միջև երկխոսության և համագործակցության
շրջագծում

Հոկտեմբերի ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ սեմինար՝
նվիրված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայ-դանիական առա
քելություն կազմակերպության միջև համագործակցությանը Եղան քննարկումներ
համագործակցության ուղիների և ոլորտների վերաբերյալ Սեմինարի ավարտին
պատրաստվեց համաձայնագիր և համագործակցության ծրագիր Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնի և Հայ-դանիական առաքելություն կազմակերպության միջև Հա
մաձայնագիրը ստորագրվեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խա
չատրյանի և Հայ-դանիական առաքելություն կազմակերպության նախագահ Հոլ
գեր Հալդրուփի կողմից

Է. ՀՈԳԵՎՈՐ □ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

. Գևորգյան Հոգևոր Ճեմարան

200 200 ուսումնական տարում ճեմարանում ուսանել են 7 ուսանող՝ ներառ
յալ Վազգենյան Հոգևոր Դպրանոցից եկած Դ լսարանի սաները Ուսումնական
տարվա ավարտին ԳՀՃ-ի սաների թիվն ըստ լսարանների հետևյալն է՝ Ա Բ
Գ 2 Դ 2 Դ² 2 Դ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցից եկածներ Ե
Ե² 7 Զ Զ²

Ճեմարանի դասախոսական կազմը 200 200 ուստարում կազմված էր հո
գուց որից ը եկեղեցականներ են Ուսումնական տարվա ընթացքում դասերին
զուգահեռ կատարվել են նաև ճեմարանի՝ որպես Աստվածաբանական համալսա
րան պետական բարձրագույն ուսումնական հաստատություն լիցենզավորման և
հավատարմագրման աշխատանքները

200 200 ուստարում ԳՀՃ-ում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

. Գրերի գյուտի 00 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում
կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղե
ցի՝ մասնակցությամբ Երևանի տարբեր բուհերի մեծաթիվ ուսանողների որոնց ա
ռաջնորդում էին ճեմարանականները

2. Ճեմարանում կազմակերպվել են մշակութային միջոցառումներ.

ա Դեկտեմբեր ամսին ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ԳՀՃ-ի շնորհալի ների համերգը Մայր Աթոռի միաբանների համար

բ Ճեմարանում համերգներով հանդես եկան նաև Չայկովսկու անվան երաժշ տական դպրոցի սաները Լույս երգչախումբը և այլն

գ Ուսանողների ջանքերով կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներին

դ Ուսանողները հնարավորություն ունեցան մեկնելու Երևան՝ թատերական ներկայացումներ դիտելու

ե Մշակութային միջոցառումների շրջանակներում հանդես եկավ ճանաչված նկարիչ Մայիս Մխիթարյանը՝ Հոգևորը արվեստի մեջ բանախոսությամբ և Վեր ջին ընթրիքը կոլաժային աշխատանքի ցուցադրումով

. Կազմակերպվել են մարզական միջոցառումներ

. Ուսանողներից շատերը հանդես են եկել ինքնուրույն նախաձեռնությունն ե րով. Իմպուլս ռադիոկայանի միջոցով ճեմարանը ձայնասփռել է մի շարք ռադիո հաղորդումներ՝ Փարոս զրույցներ հոգևորականների հետ Շարականների բա ցատրություն Հայ Եկեղեցու տոները

. Տեսչության թույլտվությամբ ճեմարանականներից ոմանք այս ուսումնական տարվա ընթացքում այցելել են մանկատներ և հատուկ դպրոցներ՝ դասավանդելով Հայ Եկեղեցու պատմություն և քրիստոնեական գիտելիքներ

7. Ճեմարանականները բազմաթիվ հոդվածներով հանդես են եկել մի շարք թեր թերում և Երևանի համալսարանական տարբեր պարբերականներում

. Տարվա ընթացքում սաների նախաձեռնությամբ հանդիպումներ են կազմա կերպվել տարբեր համալսարանների ուսանողների հետ ինչպես նաև՝ համատեղ ուխտագնացություններ Տեղերի վանք Հաղարծին և Սևան

. Բազմաթիվ հանդիպումներ կազմակերպվեցին նաև Հայ Եկեղեցվո և օտա բազգի բարձրաստիճան հոգևորականների հետ որոնց մի մասը հանդես եկավ դա սախոսություններով

200 200 ուստարում 0 շրջանավարտ սաներ հանդես եկան ավարտաճառերի պաշտպանությամբ

Ամավերջի ավարտական քննություններից հետո բակալավրի որակավորման համար քննություն հանձնեցին Դ Ե լսարանների մագիստրատուրայի որակավոր ման համար՝ Զ լսարանի սաները

2. Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում ուսումնառությունը չորս տարի է ո րից հետո սաները իրենց ուսումը շարունակում են Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մագիստրատուրայում՝ դդ և դդ լսարաններում Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաների թիվն ըստ լսարանների հետևյալն է՝ Ա Ա² Բ 20 Գ Դ Ճեմարանի դասախոսական կազմում ընդգրկված են աշխարհական դա սախոսներ և 2 հոգևորականներ

200 200 ուսումնական տարվա ընթացքում դպրանոցում կազմակերպվել են

տարբեր միջոցառումներ հանդիպումներ արտերկրից եկած Մայր Աթոռի պաշտոնական հյուրերի հետ ինչպես նաև գիտաժողովներ՝ մասնակցությամբ հայաստանյան տարբեր բուհերի ուսանողների

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում կազմակերպվել են նաև դասախոսություններ որոնց ընթացքում դասախոսություններով հանդես են եկել գիտնականներ ինչպես Հայաստանից այնպես էլ տարբեր երկրներից

. Կալկաթայի Մարդասիրական ճեմարան

200 թ. նոյեմբերի ի Հայրապետական տնօրինությամբ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ է նշանակվել հնդկահայոց հոգևոր հովիվ Հոգշ. Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը ճեմարանի ադմինիստրատորն է Մայր Աթոռի միաբան Բրշ. Տիգրան սրկ. Բաղումյանը ճեմարանն ունի աշխատակիցներ ուսանում են 7 աշակերտներ՝ 2 աղջիկ տղա որոնցից ը իրանահայ են 2 ը՝ հայաստանցիներ 2 ը՝ կալկաթահայ և ը՝ իրաքահայ

Անցնող տարում ճեմարանի ղեկավարությունն աշխատանքներ է իրականացրել կրթության որակի բարձրացման երեխաների կենցաղային պայմանների բարելավման և շինարարական-վերանորոգչական աշխատանքների ուղղությամբ

Աշխատանքի են ընդունվել նոր ուսուցիչներ Փորձնական շրջանն անցնելուց հետո նրանց հետ կկնքվի աշխատանքային պայմանագիր

Բացի հայագիտական առարկաներից մյուս առարկաները ճեմարանում դասավանդվում են անգլերեն լեզվով Ուրախությամբ պիտի արձանագրենք որ ճեմարանի ավարտական չորս սաներ կարողացան հաջողությամբ հանձնել իրենց պետական քննությունները և այսօր նրանցից երեքը սովորում են Կալկաթայի Մի ջազգային դպրոցում իսկ մեկը՝ Լա Մարտինայի աղջիկների դպրոցում

Նախկինում ինչպես գիտեք խնդիրներ են եղել՝ կապված երեխաների առողջական վիճակի հետ Խնդրի լուծման համար 200 թ. փետրվարի ից ճեմարանն աշխատանքի է ընդունել երիտասարդ արհեստավարժ նոր բժշկի որի աշխատանքի շնորհիվ նվազել են երեխաների հիվանդության դեպքերը Բացի այդ աղջիկների և տղաների դպրոցում շուրջօրյա հերթապահություն են իրականացնում մի քանի բուժքույրեր Անցնող տարվա ընթացքում ճեմարանում կատարվել են մի շարք նորոգություններ՝ շենքային պայմաններն առավել բարենպաստ դարձնելու համար

200 թվականի ընթացքում ճեմարանի հարկից ներս կատարվել են տարբեր միջոցառումներ նշվել են Հնդկաստանի և Հայաստանի պետական և եկեղեցական տոները Երեխաները կանոնավոր կերպով մասնակցել են Ս. Պատարագներին և մյուս եկեղեցական արարողություններին ուսուցիչների ուղեկցությամբ այցելել են Կալկաթայի պատմական գիտատեխնիկական և այլ թանգարաններ մասնակցել ուխտագնացությունների ճեմարանում կազմակերպվել են գեղագրության նկարչության ասմունքի և այլ մրցույթներ լավագույն սաները պարգևատրվել են Այս տարի առաջին անգամ տեղի է ունեցել հայոց լեզվով ասմունքի մրցույթ ճեմարանում կատարված միջոցառումների մասին պատրաստվել են շուրջ 0 մամլո հաղորդագրություններ որոնք տպագրվել են Հայաստանի և Սփյուռքի տպագիր և էլեկտրոնային մամուլում Հայաստանում հրատարակվող Հայոց աշխարհ և Իրա

նի Ալիք օրաթերթերում տպագրվել են ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանի հարցազրույցները Թե՛ Հայաստանից և թե՛ արտերկրից բազմաթիվ հյուրեր են այցելել Մարդասիրական ճեմարան՝ ծանոթանալով ճեմարանի պայ մաններին ճեմարանականները մասնակցել են նաև Կալկաթայի քաղաքային սպորտային միջոցառումներին

Տպագրվել է Մարդասիրական ճեմարանի 200 200 թթ. տարեգիրքը որտեղ ճե մարանականները ներկայացրել են իրենց ստեղծագործությունները

. Հայորդյաց տներ

ՀՏ-երը ուսումնակրթական հոգևոր դաստիարակության ուսումնա-ստեղծա գործական հաստատություններ են որոնք երեխաներին ընդգրկելով բազմաբնույթ դասարաններում և խմբակներում՝ տալիս են նախնական մասնագիտական կողմ նորոշում զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները ճաշակը տալիս հոգևոր-ազգային դաստիարակություն նպաստում նրանց անհատակա նության ձևավորմանը Հայորդյաց տներ համակարգում ներգրավված են թվով վեց Հայորդյաց տները Էջմիածնում Վանաձորում Աշտարակում ու Երևանում՝ Նորքի Արաբկիրի Մալաթիայի թաղամասերում Մանրանկարչության արվեստի կենտրոնը Աղվերանի Մասիս պանսիոնատը Էջմիածնի ծերանոցը։

ՀՏ-երի տնօրեններն ունեն կրոնական ուսումնական կազմակերպչական և տնտեսական զծով փոխտնօրեններ

200 թվականի ընթացքում լույս են տեսել ՀՏ-երի Զվարթունք հանդեսի 0 րդ և

րդ համարները տպագրության է հանձնված նաև Սուրբ Հարության հրաշքը գրքույկը

Հաշվետու ժամանակահատվածում Հայորդյաց տներում սաների թիվը կազմել է շուրջ 7 (որոշ հոսունությամբ համապատասխանաբար՝ Արաբկիրում՝ 7 Նորքում՝ Մալաթիայում՝ 2 Էջմիածնում՝ 0 Վանաձորում՝ և Ման բանկարչության արվեստի կենտրոնում՝ ։ Հայորդյաց տներում աշխատում են 2 հոգի համապատասխանաբար՝ Հայորդյաց տների կենտրոնական գրասենյակ՝ Արաբկիրի Հայորդյաց տուն՝ 7 Նորքի Հայորդյաց տուն՝ 7 Մալաթիայի Հայորդ յաց տուն՝ Մանրանկարչության արվեստի կենտրոն՝ Էջմիածնի Հայորդյաց տուն՝ 0 Վանաձորի Հայորդյաց տուն՝ 22 Աշտարակի ՄՍԿ-ը՝ 7 Էջմիածնի ծերա նոց՝ Աղվերանի Մասիս պանսիոնատ՝ աշխատակից

Հայորդյաց տներում գործում են արվեստի արհեստագործության սպորտային գիտատեխնիկական տարբեր դասարաններ Արաբկիր՝ 0 Նորք՝ Մալաթիա՝ 0 Էջմիածին՝ 20 Վանաձոր՝ և Մանրանկարչության արվեստի կենտրոն՝ դասա բան)։ Յուրաքանչյուր ՀՏ ունի Հայ եկեղեցասեր երիտասարդաց միություն ՀՏ-երի սաները մասնակցել են բազմաթիվ ռադիոհեռուստատեսային հաղորդումների թղթակցել թերթերի ամսագրերի

Հայորդյաց տներ համակարգի գործունեությունն ապահովող բոլոր ֆինանսա կան գործառնությունները կատարվել են Կենտրոնական գրասենյակի հաշվապա հության կողմից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ֆինանսական բաժնի օժանդակութ յամբ

Ը. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ընթացիկ տարում ՔԴԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.
ՀՀ Կրթության և Գիտության նախարության հետ համագործակցությամբ՝

. «Հայոց Եկեղեցու պատմություն դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների բաշխում
2. Այցելություններ հանրակրթական դպրոցներ
. Այցելություններ հատուկ դպրոցներ ՀՀ մանկատներ
. Ուսուցիչների վերապատրաստում
. Ուսուցչի մրցույթ
. Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում

Առ այսօր հանրակրթական դպրոցների համար Կենտրոնի միջոցով բաշխվել է «Հայոց Եկեղեցու պատմության .000 դասագիրք և ուսուցչի ձեռնարկ

Հուլիսի 7 ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ տեղի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հանդիսավոր բացումը: Ամենամյա այս դասընթացները ՔԴԿ-ի և ՀՀ Կրթության և գիտության նախարության համատեղ ջանքերով արդեն երկրորդ տարին է ինչ անց են կացվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Թ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնն այսօր ունի ավելի քան 0.000 միավոր գիրք շուրջ 200 օրինակ հնատիպ գրականություն Կենտրոնի գրադարանում ավարտվում են գրքերի քարտագրման ու հաշվառման սիստեմատիկ և հեղինակային քարտարանների ստեղծման աշխատանքները Գիտական կենտրոնի գրադարանը աշխատանքների կատարման ընթացքում համագործակցում է ՀՀ ԳԱԱ հումանիտար ինստիտուտների և գրադարանի հետ Կենտրոնն ունի 200 ից ավելի ընթերցող

Գիտական կենտրոնի առջև խնդիր է դրված ստեղծել հայ միջնադարյան կանոնական գրականությունը և Հայոց կաթողիկոսական վավերագիր ժառանգությունը հետազոտող գիտական կառույց Այս տարի կենտրոնի նախաձեռնությամբ լույս են տեսել երկու գիրք՝ Վ. Վարդանյանի Հայոց Եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում և Մ. Սթոուն Տ. Գույումճյան Հ. Լեհման Ալբոմ հայ հնագրության հետազոտության հայերեն թարգմանությունը Կենտրոնը համագործակցում է արտասահմանյան մի շարք գիտական կենտրոնների հետ

Ժ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

200 թվականի ընթացքում Մայր Աթոռի թանգարաններ են այցելել 0.000 ից ավելի այցելուներ Կազմակերպվել են Մայր Աթոռի թանգարաններում պահվող նմուշների ցուցահանդեսներ տարբեր երկրներում Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության տարվա շրջանակներում հունվարի 2 ից մարտի 2 ը Սանկտ Պետերբուրգի Պետական Էրմիտաժում իսկ մարտի 2 ից ապրիլի 2 ը Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում տեղի ու

նեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանային 2 նմուշների ցուցահանդես Այս առիթով թանգարանների կողմից հրատարակվեցին կատալոգներ ցուցահան դեսները լուսաբանվեցին զանգվածային լրատվամիջոցների կողմից

Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության տարվա շրջանակներում սեպ տեմբերի 2 ից Մոնտելիմար քաղաքի թանգարանում բացվեց ցուցահանդես՝ Հա յաստանի սիմվոլիկ նկարազարդումները խորագրով որին մասնակցություն բերեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ ներկայացնելով ցուցանմուշներ

Առաջիկա տարի նախատեսված է Սուրբ Էջմիածնի մասնակցությամբ հինգ այլ ցուցահանդեսներ Լուվրի Լիոնի Մարսելի և Կլյունիի աբբայության թանգարաննե րում

ԺԱ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

200 թ. ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տեղեկատվական համակարգը կազմակերպել է Հայրապետական այցերի եկեղեցիների հիմնարկեքների օծման արարողությունների բարձրաստիճան պաշտոնյաների և կրոնապետերի՝ Մայր Ա թոռ այցելությունների լուսաբանումը հայաստանյան այլ լրատվամիջոցների կող մից Տարբեր իրադարձությունների կամ բարձրացված խնդիրների առիթով հայաս տանյան ԶԼՄ-ներին տրվող հարցազրույցներից զատ Տեղեկատվական համակար գը նաև տարբեր հարցերի շուրջ համագործակցել է ԾԶԹ ԿՀՀ ՀՀՀ Կուլտու րա Ռուսաստան Իմեդի Ռուսթավի Վրաստան Ալ Ջազիրա հեռուս տաբնկերությունների Ազատություն Մայակ ՌԴ Իրանի պետական ռադիո ռադիոընկերությունների ինչպես նաև միջազգային մի շարք լրատվական գործա կալությունների ու թերթերի հետ Իտառ ՏԱՍՍ Ֆրանսպրես Կիև ամսագիր և այլն

Համակարգում պատրաստված հաղորդագրությունները որոնք թարգմանվում են նաև անգլերեն լեզվով առաքվել են հասցեացանկում առկա շուրջ 2 հայաս տանյան Սփյուռքի և արտերկրի ԶԼՄ-ներին թեմերին տարբեր ազգային պետա կան կառույցներին ու հաստատություններին եկեղեցականներին ու այլ անհատնե րին Պատրաստված բոլոր նյութերը տրամադրվում են Էջմիածին ամսագրին «Քրիստոնյա Հայաստան երկշաբաթաթերթին ինչպես նաև Ինտերնետային գրա սենյակին՝ Մայր Աթոռի պաշտոնական կայքէջում տեղադրման համար Ընթացիկ տարում Հայաստանյան մամուլում հրապարակվել են կրոնական հոդվածներ որոնցից ը վերաբերում են Հայաստանյայց Եկեղեցու գործունեությանը 7 ը՝ աղանդներին ը՝ տարբեր նյութեր են որոնք վերաբերում են Եկեղեցուն առնչ ված տարբեր հասարակական խնդիրների և այլ Եկեղեցիների 200 թ. առաջին կե սին պատրաստվել և տպագրվել է . անգ լերեն պարբերականի 20 րդ համարը Համակարգի աշխատակիցները նաև տար բեր նյութերի շուրջ հեղինակային հոդվածներ են պատրաստել Հայաստանի տար բեր թերթերի համար Այս տարի առաջին անգամ Կենտրոնական Ասիա և Կով կաս վերլուծական տարեգրքի Հայաստանի բաժնում լույս է տեսել համակարգի տնօրենի հեղինակած հոդվածը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործու նեության և Հայաստանում կրոնական խճապատկերի մասին Տեղեկատվական հա

մակարգը շարունակում է կանոնավոր եթեր հեռարձակել Մայր Աթոռի ռադիոհա ղորդաշարերը Հանրային ռադիոյի Ավետիս հաղորդումն առավել բարելավվել է և ունի բավականին մեծ լսարան Այս տարի նպատակահարմար նկատվեց դադա րեցնել Ասէ Աստուած ամենօրյա հաղորդաշարը Արձագանք ռադիոկայանի փոխադրման խնդիրների հետևանքով ժամանակավորապես ապրիլ ամսից չի հե ռարձակվում նաև Լուսամատյան հաղորդումը Առաջիկա ամիս Հայ ռադիոկա յանի եթերում կսկսվի Տեղեկատվական համակարգի նոր՝ Ճրագալոյց հաղորդա շարը

ԺԲ. ՇՈՂԱԿԱԹ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Շողակաթ հեռուստաընկերությունը եթեր է հեռարձակվում օրական ժամ՝ .00 ից մինչև ժամը 0 .00 ը Հեռուստաեթերի 0 տոկոսը կազմում են սեփական հաղորդումները Մնացյալը լիցենզավորված հեռուստաֆիլմեր երաժշտական ծրագրեր և անիմացիոն ֆիլմեր են Սեփական և ձեռքբերովի ծրագրերի այսպիսի հարաբերակցությունը պայմանավորված է հեռուստաընկերության տեխնիկական և գրասենյակային ներկայիս պայմաններով

«Շողակաթի հեռուստալսարանը Երևան քաղաքն է և Արարատյան հարթավայ րի բնակավայրերը Հեռուստաընկերության հաղորդումները օրական ռոպե հե ռարձակվում են նաև Հանրային Հեռուստատեսության արբանյակային ալիքով

Հեռուստաընկերությունը պատրաստում և ցուցադրում է հաղորդումներ որոնք նպաստում են Հայ Առաքելական Եկեղեցու քարոզչությանը հասարակության մեջ քրիստոնեական արժեքների հաստատմանը հոգևոր-մշակութային կրթությանը Հեռուստացանցում ներառված են հոգևոր կրթական ուսումնական և մանկական 2 հեռուստածրագրեր տեսաֆիլմեր հեռուստահաղորդումներ անիմացիոն տե սահոլովակներ Շողակաթը հեռարձակում է լրատվական ծրագիր՝ Եկեղեցա կան կյանք Տոնացույց Մշակութային ազդագիր Ձայնագիր

«Եկեղեցական կյանք ծրագիրը ներկայացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայ Ա ռաքելական Ս. Եկեղեցու և Հայոց Հայրապետի գործունեությունը թեմական կյան քը եկեղեցական տոները Մշակութային ազդագիր Ձայնագիր լրատվական հաղորդումները ներկայացնում են Հայաստանի մշակութային կարևոր իրադար ձությունները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհուրդների տոների ծեսերի քարոզխոսությունների Սուրբ Գրային մեկնությունների հանրայնացմանն ու քրիս տոնեական կրթությանն են ծառայում Հոտ և հովիվ Հարցեր քահանային Եր րորդ հազարամյակ Պատկեր և խորհուրդ Ճամփաներ Աստվածաշնչի հան րագիտարան Մեր եկեղեցիները պարբերական հեռուստաշարերը որոնք նա խատեսված են տարիքային և սոցիալական տարբեր լսարանների համար Սուրբ Պատարագը ներկայացնելու բացատրելու և ուսուցանելու համար պարբերաբար տարբեր հոգևորականների հետ համատեղ իրականացվում է Մեր Պատարագը ուսումնական ծրագիրը Ժամանակ առ ժամանակ եթերում նորացվում են Աստվա ծաշնչյան պատգամներ Պատգամում են Հայրապետները քարոզչական տեսահո լովակներն ու կոլաժները տոները ծանուցող հոլովակները Շողակաթ հեռուս տաընկերությունն իր ծրագրերում տեղ է հատկացնում նաև մշակութային գիտա

կան և կրթական հաղորդումներին Ամեն շաբաթ Ուրբաթագիրք հաղորդաշարը ներկայացնում է լույս տեսած արժեքավոր գրքերը հրատարակությունները պար բերականների հետաքրքիր հոդվածները Հեռուստաշարը անդրադառնում է ոչ միայն Մայր Աթոռի տպարանի նոր հրատարակություններին այլև այն գրակա նությանը որը օգտակար կարող է լինել ընթերցողի հոգևոր գիտելիքների հարս տացման համար Նվիրյալ անձեր Էություն հեռուստաշարերը հեռուստադիտո ղին ներկայացնում են ճանաչված վաստակաշատ մտավորականներին Եկեղեցու հավատի նկատմամբ նրանց վերաբերմունքն ու ակնկալությունները Հեռուս տաբնկերությունը ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան և Բրիտանական խորհրդի հետ համատեղ պատրաստում և թողարկում է Հանդիպում Էյֆելի հետ և Ռեդի սթեդի գո ֆրանսերեն և անգլերեն լեզուների ուսուցման ծրագրերը թողարկում է նաև ժամանցային ծրագրեր

Այս տարի հեռուստացանցի մշտական հաղորդումներից բացի պատրաստվել է տեսաֆիլմ և հեռուստահաղորդում Դրանք պատրաստվել են ինչպես սեփական միջոցներով այնպես էլ այլ կազմակերպությունների հետ համատեղ Առավել խո շոր ու հաջողված ծրագրերից է Մի սեփականաշնորհման պատմություն բոպե տևողությամբ տեսաֆիլմը՝ պատրաստված Համաշխարհային Բանկի Հայաստան յան ներկայացուցչության պատվերով Ֆիլմը ցուցադրվել է Վաշինգտոնում՝ Հա մաշխարհային Բանկի Կենտրոնական Գրասենյակում թարգմանվել է անգլերեն՝ այլ երկրներում ցուցադրվելու համար Ֆիլմի շնորհանդեսը կազմակերպվել է «Կոնգրես հյուրանոցում Էներգետիկայի ոլորտի նախկին և ներկա պատասխա նատուների մասնակցությամբ Հայ Զմեռ պապ տեսաֆիլմը պատրաստվել է Հայ Զմեռ պապ բարեգործական հիմնադրամի հետ համատեղ Այս ֆիլմի ցուցադրութ յունից հետո շոշափելի օգնություն է տրամադրվել ծայրահեղ աղքատ այն ընտա նիքներին ովքեր ներկայացված էին նկարահանված ֆիլմում Այն հեռավոր հա րևան գյուղում տեսաֆիլմը պատրաստվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամի պատվերով Ֆիլմը ներկա յացնում է սահմանամերձ Այգեպար գյուղում պատերազմի հետևանքները և խաղա ղության հաստատման հարևան Ալիբեյլու ադրբեջանական գյուղի հետ բարիդրա ցիական կապերի վերականգնման անհրաժեշտությունը

Զուտ սեփական արտադրության առավել հաջողված և հասարակական լայն ճանաչում ստացած տեսաֆիլմերից կարելի է առանձնացնել՝ Մաղաքիա Օրման յան երկմասանոց վավերագրական տեսաֆիլմը Վարդ Պատրիկ կամ պարոն Կ Գալուստ Գյուլբենկյանի մասին վավերագրական տեսաֆիլմը Ուխտագնացութ յուն Ս. երկիր 200 թ. Երուսաղեմ Հայրապետական ուխտագնացության մասին պատմող վավերագրական տեսաֆիլմը Շարունակվող առաքելություն Մայր Ա թոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը ներկայացնող վավերագրական տեսաֆիլ մը Ծառայում եմ ՀՀ-ին ՀՀ Զինված ուժերում հոգևոր ծառայության մասին վավե րագրական տեսաֆիլմը Հին ու նոր Երևան մայրաքաղաքի վերակառուցման այ սօր իրականացվող ծրագրերը ներկայացնող վավերագրական երկմասանոց տեսա ֆիլմը Սա է մարդը քահանա վաստակաշատ քահանաների կյանքի ուղին ներ կայացնող տեսաֆիլմերը Խունկ տեսաֆիլմը որում ներկայացվում է թե ինչպես է պատրաստվում և ինչ խորհուդ ունի ծիսական կյանքում խունկը Սուրբ տաճա րի մեղեդին տեսաֆիլմը որը ներկայացնում է Ս. Էջմիածնի եկեղեցական երգչա

խումբը Փրկություն հաղորդումը որտեղ քրիստոնյա հրեա և մուսուլման հոգևոր ականները կրոնագետը վերլուծում են փրկության թեման համաշխարհային կրոններում Պատարագի գինին հաղորդումը գինու օրհնության արարողության միջոցով անդրադառնում է Ս. Պատարագի խորհրդին Հիսուսի արյանը հաղորդվելու անհրաժեշտությանը Տասներկուամյա կրթություն Պետական քննություն «Հոգևոր սերունդ հաղորդումներն անդրադարձ են կրթական ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին Հայ Եկեղեցու պատմություն առարկան կրթական ծրագիր ընդգրկելու խնդիրներին Կառուցենք հավատով տեսաֆիլմը ներկայացնում է Հաբիթաթ կազմակերպության հետ համատեղ իրականացված Գարեգին Բ. կառուցենք միասին շինարարական ծրագրի ընթացքը Գեղարքունիքի թեմում

Հեռուստաընկերության և Հանրային հեռուստատեսության համատեղ ջանքերով ուղիղ եթեր են տրվել կամ տեսագրվել և Հ Շողակաթ ալիքներով հեռարձակվել են եկեղեցական արարողություններ Մայր Տաճարում Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

Հեռուստաընկերությունը զբաղվում է նաև թարգմանական գործունեությամբ Հիմնականում թարգմանվում են քույր Եկեղեցիները ներկայացնող կամ պատմական տեսաֆիլմեր Այս տարվա թարգմանված տեսանյութերից են Վատիկանը ներսից կանադա-ամերիկյան մասանոց վավերագրական տեսաֆիլմը

Արդեն պատրաստ է և Մեր հաստատմանն է ներկայացված Շողակաթ հեռուստաընկերության ինտերնետային կայքէջը

ԺԳ. ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԲԱԺԻՆ

200 թ. հունվար-մարտ ամիսներին կայքէջի գործունեությունը եղել է փորձարկման փուլում որի հաջող արդյունքներից և տեխնիկական խնդիրների հաղթահարումից հետո 200 թ. ապրիլի ից համացանցում սկսեց գործել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ինտերնետային կայքէջը Կայքէջի պատրաստման և սկզբնական գործարկման ընթացքում հաղթահարվել են մի շարք այլ դժվարություններ Ձեռք են բերվել այլ անձանց կողմից գործածության մեջ եղող՝ *Մայր Աթոռ* կամ *Հայ Եկեղեցի* բառերը պարունակող շուրջ 0 ինտերնետային հասցեներ՝ կայքէջի գործարկման և այդ հասցեներով Մայր Աթոռի կայքէջ մուտք գործումը անխափան ապահովելու համար Վերջնական արդյունքում չորս հիմնական հասցեներ են ապահովվել Մայր Աթոռի կայքէջի համար՝ . . . . . .

. Համացանցում կայքէջի գործունեությունն իրականացվում է Արմենթել և . . կազմակերպությունների կողմից մատակարարվող ծառայությունների շնորհիվ որով Մայր Աթոռի կայքէջը համացանցում գործում է օրը 2 ժամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վերաբերյալ կայքէջում զետեղված նյութը խմբագրվել է Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի կողմից Կայքէջը առայժմ հայերեն և անգլերեն լեզուներով է պատրաստության ընթացքի մեջ է կայքէջի ռուսերեն տարբերակը նախատեսվում են նաև ֆրանսերեն և իսպաներեն տարբերակները Պատրաստվում և համալրվում է կայքէջի ֆոտոարխիվը կայքէջն ունի հազարավոր լուսանկարներ պարունակելու տարողունակություն Պատրաստվում են Հայրապետական այցելությունների լուսանկարային արխիվնե

ը Մայր Աթոռի Ինտերնետային բաժնի կողմից կայքէջում զետեղվում են տեղե կություններ և հաղորդագրություններ եկեղեցական կյանքի Մայր Աթոռի և թեմերի կողմից իրականացվող միջոցառումների և ձեռնարկների Հայրապետական այցե լությունների վերաբերյալ

ԺԴ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Տնտեսական բաժնի գործնեությունը նպատակ ունի ապահովելու Մայր Աթոռի կառույցների բաժինների և օղակների համար տնտեսական բազմաբնույթ ծառա յությունների իրականացումը Տնտեսական բաժնի ենթակայության ներքո գտնվում են շինվերանորոգման տեղամասը սեղանատները մատակարարման բաժինը մո մաձուլարանը ավտոտնտեսությունը բակային տնտեսությունը պարետային ծա ռայությունը պահակային ծառայությունը պահեստները լվացքատունը դերձա կատունը Անցնող տարում տնտեսական բաժինը համակարգված աշխատանքներ է իրականացրել՝ ապահովելով Մայր Աթոռի կենսագործունեությունը

ԺԵ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ընթացիկ տարում Մայր Աթոռի իրավաբանական ծառայությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Պատրաստվել են համապատասխան նամակներ՝ ուղղված ՀՀ կառավարությա նը Երևանի քաղաքապետին համապատասխան մարզպետարաններին Էջմիածնի քաղաքապետին Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և կոմիտեի տա րածքային ստորաբաժանումներին ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայությանը դատական և նոտարական մարմիններին ոստիկանությանը և այլ կառույցների

Ըստ անհրաժեշտության ծառայությունը համապատասխան մարմիններում՝ ՀՀ կառավարությունում Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչությունում Երևանի քաղաքապետարանում նոտարա կան գրասենյակներում և այլ կառույցներում մասնակցել է Եկեղեցու անշարժ գույքի հետ կապված հարցերի քննարկման որոշումների կայացման և անշարժ գույքի ձևակերպումների հետ կապված կատարման աշխատանքներին

Տարբեր բնույթի խնդիրների լուծման աշխատանքների կատարման և ծառա յությունների ձեռքբերման նպատակով մշակվել կազմվել ինչպես և ուսումնասիր վել և համապատասխան ընթացք են տրվել թվով երեք հարյուրից ավելի աշխա տանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի ու համաձայնագրերի Ըստ անհրաժեշտության առաջարկվել են դրանցում կատարել փոփոխություններ լրա ցումներ

Օժանդակություն է ցուցաբերվել հրամանների նախագծերի կազմման ինչպես և Մայր Աթոռի ստորաբաժանումների աշխատակիցներին իրավաբանական խորհր դատվական օգնությամբ ապահովելու աշխատանքներում

Զեկուցագրերով տեղեկանքներով և գրություններով Մեզ և Մայր Աթոռի կա

ռուցվածքային ստորաբաժանումներին տարբեր հարցերի փաստաթղթերի և գրությունների վերաբերյալ տրվել են գրավոր եզրակացություններ և կարծիքներ

ԺԶ. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Մայր Աթոռի Համակարգչային բաժինը ընթացիկ տարում իրականացրել է Մայր Աթոռի բաժինների ծրագրային սպասարկման Մայր Աթոռում համակարգչային ներքին ցանցի ստեղծման և անխափան աշխատանքի ապահովման ինտերնետա յին և էլեկտրոնային փոստով տեղեկատվական համակարգերի միջոցով արտաքին աշխարհի հետ Մայր Աթոռի կապի հաստատման Մայր Աթոռի գրասենյակներին անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով զինման և սպասարկման աշխատանք ները

ԺԷ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

200 թվականին Մայր Աթոռի շինարարական ծրագրերի իրականացման ըն թացքում Ճարտարապետա-շինարարական բաժինը կատարել է հետևյալ աշխա տանքները.

. Նոր և վերակառուցվող կառույցների նախագծային աշխատանքների կազմակերպում
2. Ընդունվել են ավարտված նախագծային աշխատանքներ
. 200 թ. շինարարական աշխատանքների կատարման համար կազմա կերպվել են մրցույթներ

200 թ. սկսված շինարարական աշխատանքներն են.

. Մայր Աթոռի ողջ տարածքի արտաքին ջրամատակարարում և կոյուղի
2. Վանաձորի Հայորդյաց տան կառուցում
. Գեղարդավանքի պարսպապատերի և օժանդակ կառույցների մասնակի նորոգում
. Հառիճավանքի դպրատան նորոգում
. Եկեղեցի Երևանի Էրեբունի համայնքում
. Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի հին մասնաշենքի նորոգում
7. Մայր Աթոռի Մկրտարանի կառուցում
. Մայր Աթոռի Վանատան նորոգում
. Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տանիքի նորոգում
0. Սևանի թերակղզու վանական համալիրի բարեկարգում
. Երևանի Մանրանկարչության արվեստի կենտրոնի նորոգում

200 200 թթ. վերահսկվել են շարունակվող հետևյալ շինարարական աշխա տանքները.

. Մայր Աթոռի տպարանի շենքի հիմնանորոգում
2. Մայր Աթոռի միաբանական շենքեր
. Մայր Աթոռի նոր կաթսայատուն

. Մայր Աթոռի Կաթողիկոսական գրասենյակ
. Մայր Աթոռի Հին Վեհարանի մուտքի այցելուների մուտք նորոգում
. Մայր Աթոռի ավտոտնտեսություն և պահեստներ
7. Սուրբ Հռիփսիմե վանքի վանական համալիրի միաբանության շենքի նորոգում
. Էջմիածնի Վ. Կոստանյան փողոցի նախկին մանկապարտեզի շենքի վերակառուցում մանկատան
. Էջմիածնի Հայորդյաց տան հիմնանորոգում
0. Խոր Վիրապ վանքի վանահոր կացարանի նորոգում
. Գյումրու Ս. Աստվածածին Յոթ վերք վանքի նորոգում
2. Երևանի Հ. Հովսեփյան շենքի հիմնանորոգում
. Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի մուտքերի շինարարություն
. Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տարածքի ցանկապատ

Այս տարի ավարտվել են Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու կառուցման և Սուրբ Գայանե վանքի վանական համալիրի միաբանության շենքի նորոգման աշխատանքները

Ճարտարապետա-շինարարական բաժինը Մայր Աթոռի ջերմացանցի և կաթսայատան սարքավորումների ձեռքբերման նպատակով նաև բանակցություններ է վարել ֆիննական Կոլորտեք և Սանկտ Պետերբուրգի Ֆարտո կազմակերպությունների հետ կնքել նախագծման և մոնտաժային աշխատանքների ղեկավարման և նյութերի մատակարարման վերաբերյալ պայմանագրեր

ԺԸ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

Նվիրապետական Աթոռների հետ Մայր Աթոռի հարաբերությունները այս տարի ևս եղել են բնականոն և արդյունալի Եղբայրական գործակցության ոգով պարբերաբար զանազան գրությունների փոխանակմամբ մեր Աթոռները անխափան հաղորդակցության մեջ են եղել միմյանց հետ Մեր և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի տնօրինությամբ Հայ Եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկման և ներքին միասնականության առավել ամրապնդման առաջադրանքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում աշխատանքներն են շարունակել Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունները: Սույն աշխատանքները պիտի շարունակվեն նաև հաստատված այլ միասնական հանձնախմբերի գործունեությամբ Մեր հրավերով նաև Արամ Ա Կաթողիկոսը այցելել է Հայաստան՝ միասնաբար մասնակցություն բերելու սեպտեմբերի 20 ը «Հայաստան-Սփյուռք համահայկական երրորդ խորհրդաժողովին Սեպտեմբերի 2 ին Հայաստանի Հանրապետության անկախության դդ տարեդարձի առիթով Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում Մեր հանդիսապետությամբ և Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրենաբնակ և արտերկրների թեմական առաջնորդների մասնակցությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայրենիքի անսասանության բարօրության ու առաջընթացի համար

Հունիս ամսին Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի հրավերով Հովվապետական այցով եղանք Ստամբուլում

Մշտապես կապ ենք պահպանել նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հետ

ԺԹ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Այս տարի ևս հայրենի կառավարության հետ հարաբերություններն ընթացել են համագործակցության ոգով

Մարտի ին Մեր հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայաստանի և Արցախի թեմակալ առաջնորդների և ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ ՀՀ մարզպետների Երևանի և մարզկենտրոնների քաղաքագլուխների և Երևանի թաղապետերի հանդիպում։ Հանդիպմանը ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները Հանդիպման ընթացքում Մենք Մեր գնահատանքը հայտնեցինք ՀՀ իշխանություններին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն զորակցության համար և անդրադարձանք Եկեղեցու վարչակազմակերպական կյանքին առնչվող խնդիրներին գյուղերում ու քաղաքներում ծխական համակարգի վերականգնման անհրաժեշտությանը՝ որպես կարևոր նախապայման Եկեղեցու հոգևոր քարոզչական կրթադաստիարակչական առաքելության իրականացման

Շարունակվում են Եկեղեցու և պետության հարաբերությունները կարգավորող օրենքի նախագծի պատրաստման աշխատանքները որին Մայր Աթոռի հետ գործակցությամբ իր գործուն մասնակցությունն է բերում ՀՀ ԱԺ նախագահ տիար Տիգրան Թորոսյանը՝ ըստ հարկի իր դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացնելով Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին

Կառավարության կողմից շարունակվել են եկեղեցական շինություններին կից հողատարածքների և կից եկեղեցապատկան շինությունների վերադարձը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ինչպես նաև հողատարածքների տրամադրումը եկեղեցիների շինության համար

Մայր Աթոռի կողմից նաև բանակցություններ են տարվում ՀՀ Սոցապ նախարարության հետ՝ տարեց եկեղեցականների՝ խորհրդային ժամանակաշրջանում ծառայություն մատուցած տարիները ևս որպես աշխատանքային ստաժ նկատի ունենալու և համապատասխան թոշակ տրամադրելու համար

Ի. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի

մարզը Թեմն ունի համայնք որոնցից ը քաղաքային՝ շուրջ . 20.000 բնակչութ յամբ Թեմի տարածքում գործում են 2 եկեղեցիներ և մատուռներ Թեմի եկեղեցի ներում հոգևոր ծառայություն են մատուցում աբեղա քահանա 0 սարկավագ ներ թեմում աշխատում են 7 հոգի

Առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ ներկայացվող տարում օծվել է Արարատի մարզի Արևշատ գյուղի նորակառույց ե կեղեցին բարերար՝ Սամվել Դավթյան կատարվել է Նոր Կյանք գյուղի եկեղեցու հիմնարկեքը թիվ բժշկական կենտրոնում օրհնվել է նորակառույց Ս. Մարիամ Աստվածածին մատուռը Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հարևանությամբ կա ռուցվել և կահավորվել է երիցատունը կառուցվել և կահավորվել է նաև Մալաթիա յի Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ գտնվող երիցատունը

Թեմի համայնքների հոգևոր կյանքն աշխուժացնելու համար ուշադրություն է դարձվում գործող եկեղեցիների Ծխական խորհուրդների գործունեությանը Թե մում գործում է մամլո դիվանը Զվարթնոց տեղեկատվական-վերլուծական կենտ րոնը որի նպատակն է էլեկտրոնային կայքի միջոցով հանրությանը ներկայացնել Հայ Եկեղեցու պատմությունը աստվածաբանությունը երաժշտությունը խոր հուրդները և այլն Արդեն պատրաստ է կայքի անգլերեն տարբերակը

Թեմը բարեգործական գործունեություն է իրականացնում՝ աջակցություն ցուցա բերելով կարիքավորներին ծնողազուրկ երեխաներին Թեմի երիտասարդական միությունն իրականացնում է բազմաթիվ միջոցառումներ բուհերի երիտասարդա կան կազմակերպությունների հետ Կրթադաստիարակչական առաքելություն են ի րականացնում թեմի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը ՀԵԵՄ-ի կրթադաստիարակչական կենտրոնը Հովհաննես Կոզեռնի անվան կրթամշակու թային կենտրոնը

2. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ

Թեմում ծառայում են քահանաներ 2 կուսակրոն սարկավագ և 0 դպիր

Արագածոտնի թեմը բաժանվել է հովվությունների թեմում գործում են ե կեղեցիներ Թեմը կրթադաստիարակչական աշխատանքներ է իրականացնում Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի միջոցով թեմի կրթական կարևո րագույն կառույցներից է Թալինի թիվ մանկապարտեզը որի գործունեությունն ի րականացվում է բարեգործական կազմակերպությունների օժանդակությամբ ինչ պես նաև Արագածոտնի թեմի ֆինանսական միջոցներով Թեմի Ս. Մեսրոպ Մաշ տոց դպրատանը կազմակերպվում են գիտաժողովներ նախաձեռնվում են հրատա րակչական աշխատանքներ

Բարերարներ տեր և տիկին Գառնիկ և Անժելա Հովսեփյանների բարերարութ յամբ Չքնաղ գյուղի Ս. Ստեփաննոս եկեղեցու երիցատան և թանգարանի կառուց ման աշխատանքներն ավարտական փուլում են Գործարար տիար Հրաչիկ Պողոս յանի նախաձեռնությամբ և նվիրատվությամբ Ագարակ գյուղում եկեղեցի կառուցե լու նպատակով գնվել է 0 քմ հողատարածք առաջիկայում սկսվելու են եկեղեցու շի նարարական աշխատանքները

Երևանաբնակ տիար Արթուր Սարգսյանի նախաձեռնությամբ 00 քմ հողատա

բածք է ձեռք բերվել թեմի Ապարանի տարածաշրջանի Երնջատափ գյուղում ուր նախաձեռնողի միջոցներով կառուցվելու է մատուռ

. ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ

Ընթացիկ տարում թեմում շարունակվել են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն պատկանող հողատարածքների ձևակերպումները պետական մարմիններում ի բականացվել են եկեղեցիների մասնակի վերանորոգություններ Թեմի հովանու ներքո գործում են մանուկների և պատանիների կրթադաստիարակչական խմբակներ բարեգործական առաքելության իրականացմամբ թեմը համագործակցում է գործընկեր հաստատությունների բարերարների հետ՝ աջակցություն ցույց տալով կարիքավորներին և աղքատ ընտանիքներին Թեմում գործում են եկեղեցիներ

. ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Անցնող տարում Արցախի թեմի առաջնորդի ձեռամբ օծվել է Պողոսագոմեր գյուղի Ս. Սարգիս եկեղեցին ինչպես նաև Շուշիի Եղծահող գյուղի Ս. Սարգիս եկեղեցին Վերանորոգվել և օծվել է նաև Ասկերանի շրջանի Խաչ Մաչ գյուղի Ս. Ստեփաննոս եկեղեցին Վերանորոգվել է Դադիվանքի Ս. Նշան եկեղեցին իշխանական դամբարանը և զանգակատունը Ավարտին է մոտեցել Ստեփանակերտի Ս. Հակոբ բազիլիկ եկեղեցու կառուցումը Ավարտվել են Ասկերանի շրջանի Կղարծի գյուղի Ս. Թարգմանչաց եկեղեցու Քարագլուխ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու նորոգման աշխատանքները Սկսվել է Ասկերանի շրջանի Խաչեն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու նորոգումը

Թեմը հոգևոր քարոզչական գործունեություն է իրականացնում նաև տարբեր հաղորդումների հեռարձակմամբ

. ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմում կան 27 եկեղեցիներ և մատուռներ որոնցից այս տարի կառուցվել են Շաղկունքի Ս. Սարգիս եկեղեցին Արտանիշի Ս. Աստվածածին մատուռը Նորոգվել են Զորագյուղի Ս. Կարապետ Վերին Գետաշենի Ս. Աստվածածին Հացառատի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները Սարուխանի Թուխ մանուկ և Ծաղկաշենի Ս. Խաչ մատուռները Նորոգության ընթացքի մեջ են Դդմաշենի Ս. Թադեոս և Ցամաքաբերդի Ս. Աստվածածին եկեղեցիները կառուցման ընթացքի մեջ են երկու մատուռ Ճամբարակում և Ծովազարդ գյուղում Թեմում ծառայում է քահանա

Թեմում գործում են 2 կիրակնօրյա դպրոցներ՝ Վարդենիսում՝ 7 աշակերտով և Ծովինար գյուղում՝ աշակերտով Թեմն իրականացնում է հոգևոր քարոզչական գործունեություն նաև հեռուստահաղորդումներով՝ Մարտունու Զանգակ Գավառի Քյավառ և Սևանի ՍՏՎ տեղական հեռուստաալիքներով

. ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Թեմի եկեղեցիներում պաշտոնավարում են 7 հոգևորականներ գործում են եկեղեցիներ

Թեմն իրականացնում է կրթական ու սոցիալական ծրագրեր՝ ուղղված քաղաքա յին ու գյուղական համայնքների զարգացմանը Եկեղեցական ու ազգային տոների թեմում կատարված հիշարժան իրադարձությունների մասին հրատարակվել են հոդվածներ և տեղեկատվություն է տրամադրվել հանրային և մարզային լրատվա միջոցներին Հոգևոր կրթական գործունեություն է իրականացնում թեմի Քրիստո նեական Դաստիարակության Կենտրոնը Հոգևոր-քարոզչական նպատակներով ա մեն օր Վանաձորի ռադիոյով և հեռուստատեսությամբ եթեր են հեռարձակվում հո գևոր հաղորդումներ Ստեփանավանի քաղաքային հեռուստատեսությամբ կազմա կերպվում է Մեկ հոտ մեկ հովիվ հաղորդաշարը Սկսյալ փետրվար ամսից իրա կանացվում է Աստված սեր է քարոզչական ծրագիրը Վանաձորի կրթօջախնե րում հասարակական կազմակերպություններում մանկատներում ծերանոցնե րում զինվորական մասերում հիվանդանոցներում

Թեմի առաջնորդի նախագահությամբ և մասնակցությամբ Տավուշի մարզի փո խառաջնորդի և հոգևորականաց դասի կատարվել է Մովսես գյուղի եկեղեցու հիմ նարկեքը

7. ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

Թեմի տարածքում գործում են եկեղեցիներ հոգևոր ծառայություն են իրակա նացնում 0 եկեղեցականներ

Թեմի՝ հոգևոր-քարոզչական նպատակներով իրականացվող միջոցառումներից են նաև տեղական հեռուստատեսություններով հոգևոր հաղորդումների ցուցադ րումը Հրազդան Չարենցավան Աբովյան քաղաքներում Թեմում գործում են կի րակնօրյա դպրոցներ՝ 7 սաներով Ընթացիկ տարում թեմի առաջնորդի ձեռամբ կա տարվել է օծումը Ջրաբերի Ս. Աստվածածին եկեղեցու Աբովյան քաղաքում սկսվել է նոր եկեղեցու շինարարությունը Վերանորոգվել մեծացվել է Աբովյանի Ս. Ստե փաննոս եկեղեցին Ջրվեժում կառուցվել է Խրիմյան Հայրիկ կիրակնօրյա հոգևոր մշակութային կենտրոնը Ծաղկաձոր քաղաքում կառուցվել է Հարություն և Վար սենիկ Հարությունյանների անվան գրադարանը մասամբ վերանորոգվել է Կո տայքի թեմի Առաջնորդարանի շենքը և բարեկարգվել հարակից տարածքը մաս նակի վերանորոգվել է Չարենցավանի Հայորդյաց տունը Կեչառիսի վանական հա մալիրին կից կառուցվել է հուշանվերների խանութ

Թեմի ջանքերի շնորհիվ Չարենցավան քաղաքի նախկին կինոյի շենքը սեփականա շնորհվեց և վերածվեց Հայորդյաց տան Հրազդան քաղաքի թիվ մսուր-մանկա պարտեզը հանձնվեց թեմին որը ծառայելու է որպես Հայորդյաց տուն Աբովյան քաղաքի սպորտային խանութի մի մասը սեփականաշնորհվեց և հանձնվեց կիրակ նօրյա դպրոցին

. ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Թեմում գործում են 22 եկեղեցիներ և աղոթատուն Թեմում ծառայում են աբեղա 0 քահանա և սարկավագ

Ընթացքի մեջ են Գյումրիի Ս. Աստվածածին եկեղեցու հիմնական վերանորոգման աշխատանքները Առաջիկային սկսվելու է Հայորդյաց տան կառուցումը «Կլոր Սեղան ի օժանդակությամբ ընթանում է թեմի Սոցիալական կենտրոնի կառուցումը ջեռուցում է անցկացվել Ս. Հակոբ եկեղեցում Շարունակվում է Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերակառուցումը ավարտին են մոտենում Ս. Սարգիս մատուռի կառուցման աշխատանքները

Թեմում գործում են մանկական խմբակներ երիտասարդաց միություններ ու սանողական միություն շարունակվում են հեռուստատեսային հաղորդումները թեմն ունի իր կայքէջը

. ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Թեմն ունի 20 գործող եկեղեցիներ Յուրաքանչյուր եկեղեցի ունի իր ծուխը

Թեմում հոգևոր ծառայություն են իրականացնում ամուսնացյալ և 2 կուսակրոն քահանաներ

Թեմական կառույցներում աշխատում են հոգի

Ընթացիկ տարում ևս թեմի բոլոր եկեղեցիներում կատարվել են պսակի մկրտության խորհրդակատարություններ Թեմում կազմակերպվել են միջոցառումներ եկեղեցական տոների առիթներով շարունակվել է թեմի կողմից իրականացվող բարեսիրական գործունեությունը որով աջակցություն է ցույց տրվել թեմի կարիքավորներին և ծնողազուրկ երեխաներին

Սյունյաց թեմում այս տարի նաև վերաբացվել են Անգեղակոթի Ս. Աստվածածին և Սիսիանի Բռնակոթ գյուղի եկեղեցիները

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԶԻՐՅԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻԶԻՐԵԱՆ, ՈՐ Ի ՖԻԼԱՏԵԼՖԻԱ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանից տեղեկացանք, որ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եւ Ս. Երրորդութիւն եկեղեցիների նախաձեռնութեամբ կազմակերպուում է հանդիսութիւն՝ Ձեր քահանայական ձեռնադրութեան 60-ամեակը նշելու համար: Այս ուրախալի առիթով մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ձեզ ենք յղում Մեր Հայրապետական օրհնութիւնն ու բարեմաղթանքը:

Սիրելի Սրբազան,

Վեց տասնամեակ առաջ, աւարտելով Անթիլիասի Դպրեվանքի Ժառանգաւորաց վարժարանը, ձեռնադրուեցիք կուսակրոն քահանայ եւ մուտք գործեցիք եկեղեցական ասպարէզ, պատրաստ՝ իբրեւ առաքինի եւ նուիրեալ սպասաւոր, Ձեր ողջ կարողութիւնները, ուժն ու եռանդը ներդնելու ի բարօրութիւն Առաքելահիմն մեր Սուրբ Եկեղեցու: Ձեր քահանայագործութեան առաջին իսկ օրերից ստանձնեցիք մի շարք պատասխանատու պաշտօններ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնում՝ լինելով «Հասկ» պաշտօնաթերթի վարիչ, կալուածոց տեսուչ եւ միեւնոյն ժամանակ դասաւանդելով Դպրեվանքում եւ Անթիլիասի Մեսրոպեան վարժարանում:

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ բարեյիշատակ Տիրան արքեպս. Ներսոյեանի հրաւէրով եւ օրհնութեամբ՝ երկար տարիներ նախանձախնդիր եւ մշտար-

թուն սպասաւորութեամբ Դուք զգալի աւանդ բերեցիք Նիւ Եօրքի Ս. Խաչ, Մայամիի Ս. Յովհաննէս Մկրտիչ եւ այլ եկեղեցիներում՝ այդ համայնքներում բնակուող բարեպաշտ հայորդեաց հոգեւոր կեանքում՝ զօրացնելով նրանց հաւատքը եւ սէրը հանդէպ ազգային-եկեղեցական նուիրական մեր սրբութիւններն ու արժէքները: Եկեղեցաշէն եւ ազգօգուտ ծառայութեան եւ գովարժան վաստակի շնորհիվ՝ երանաշնորհ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր գնահատանքով Դուք արժանացաք եպիսկոպոսութեան աստիճանի՝ որպէս Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ, ուր տարիներ շարունակ Աստծոյ Խօսքը քարոզեցիք Անգլիայի հաւատաւոր Մեր զաւակներին:

Սիրելի Սրբազան, Ձեր քահանայագործութեան 60-ամեա յոբելեանի առիթով Միածնաէջ Լուսոյ Սուրբ Խորանից բերում ենք Ձեզ՝ մեր Եկեղեցու վաստակեալ սպասաւորիդ, շնորհաւորանքներն ու ամենայն բարեաց մաղթանքները: Մեր աղօթքն է, որ Տէրը Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի Ձեզ քաջառողջ եւ պարգեւի կենաց արեւշատութիւն յուրախութիւն հոգեւորականաց եւ հաւատացելոց մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 21-ն Մարտի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 720

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՌՈՊՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌՈՊՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆ, ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ

Գոհութիւն ենք մատուցում Աստծուն, որ Իր ամենառատ շնորհի ներքոյ ծաղկուն է պահպանում մեր մշակոյթի անդաստանը, որի վաստակաշատ մշակիդ, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյնով յղում ենք Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները:

Ուրախութիւն է Հայրապետիս համար գնահատանքի խօսք ուղղել Ձեզ: Ահաւասիկ, աւելի քան կէս դար Դուք ծառայում էք մեր ժողովրդին՝ բերելով Ձեր հոգու ողջ նուիրումը, աստուածապարգեւ ազնիւ ձիրքերը, եռանդն ու նախանձախնդրութիւնը՝ շարունակելով ու բարձր պահելով գրական-մշակութային այն հզօր ու պայծառ աւանդները, որոնք դարերով խնամուել ու պահպանուել են պոլսահայ համայնքում:

Ձեր գրական հարուստ վաստակով, մեծարգոյ պրն Հատտէճեան, ճանաչուած էք ինչպէս Սփիւռքի մեր գաղթօջախներում, այնպէս եւ՝ Մայր Հայրենիքում: Մեր ժողովուրդը մեծարում է Ձեզ որպէս մեծ գրողի եւ հայ գրականութեան երախտարժան գործչի: Ինքնուրոյն դիմագիծ, մտածողութիւն եւ ճաշակ կրող բազմաժանր արգասիքները Ձեր բեղուն գրչի մնայուն արժէքներն են մեր գրականութեան մէջ: Բնատուր տաղանդով, ստեղծագործելու ինքնաբուխ ապրումով ծնունդ առած Ձեր գործերի նպատակն է կեանքի հաստատումը, մարդու բարձրացումը դէպի կատարեալը, օրհնեալը, արժանին, դէպի ճշմարիտ մարդկայինն ու աստուածայինը: Մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ այս հաւատամքը Ձեր շնորհակնիք խօսքի զօրութեամբ փոխանցուում է նաեւ ընթերցողներին: Դուք, քաջածանօթ հայ եւ համաշխարհային գրականութեանը, Ձեր գեղարուեստական ստեղծագործութիւններով, թարգմանութիւններով ու գրախօսականներով ջանացիք, որ աշխարհասփիւռ մեր ժողովրդի հոգում արթուն մնայ սէրը հայրենի ժառանգութեան հանդէպ, արուեստի ու մշակոյթի հանդէպ:

Պոլսահայ համայնքային կեանքին, հանուր ազգային մեր կեանքին Ձեր գործուն մասնակցութեան ակնառու դրսեւորումն են նաեւ «Մարմարա» օրաթերթի առաքելութեանը բերած Ձեր ծառայութիւնները՝ որպէս արժանաւոր խմբագիր: Ձեր խմբագ-

բականները, յոդուածաշարերը, գրական նշմարները իրենց արժէքաւորութեամբ յաճախ վերահրատարակուել են Սփիւռքի պարբերականներում: Ներկայիս ազգային-մշակութային մեր կեանքին իր նպաստն է բերում նաեւ Ձեր հիմնած տպարանը՝ հրատարակելով գրքեր, պարբերականներ, յուշամատեաններ, որոնց շարքում՝ Կոստանդնուպոլսի հայոց երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքի պայծառ յիշատակին նուիրուած Ձեր հեղինակութեամբ կազմուած յուշամատեանը:

Աղօթում ենք առ Աստուած, որ պահպանի Ձեզ քաջառողջ եւ պարգեւի կեանքի երկար ու բերկրալի օրեր՝ շարունակելու Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին, հայ գրականութեանն ու մշակոյթին: Թող Տէրը նոր յաջողութիւններ պարգեւի ստեղծագործական Ձեր ջանքերին, Ձեր ծրագրերին ու բոլոր բարի գործերին:

Շնորհք ընդ Ձեզ եւ օրհնութիւն Աստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի շնորհաբաշխ Հոգւոյն Սրբոյ՝ կենարարէ եւ առատածաւալ պարգեւատուէ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 15-ը Մարտի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 717

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով փետրվար-մարտ ամիսներին

Օրհնության գիր է տրվել.

Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Գևորգ Մուրադյան (Արցախի թեմ)
Սյուզան Ռուբեն (Հնդկահայ համայնք)
Սունիլ Սոբթի (Հնդկահայ համայնք)
Արմենակ Գյումուշյան (Ռումինիայի հայոց թեմ)
Տ. Գրիգոր քահանա Հոլքյան (Ռումինիայի հայոց թեմ)
Ռուդոլֆ Խաչատրյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Չերկասիի հայ համայնքին (Ուկրաինայի հայոց թեմ)
«Հայրենիք» միությանը (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.

Տ. Շմավոն քահանա Ղևոնդյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Դավիթ քահանա Կյուրեղյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Սողոմոն քահանա Ավետիսյան (Գուգարաց թեմ)
Տ. Սիմեոն քահանա Առաքելյան (Գուգարաց թեմ)
Տ. Վիրապ քահանա Ղազարյան (Արագածոտնի թեմ)
Տ. Մուշե քահանա Վահանյան (Արագածոտնի թեմ)
Տ. Տարոն քահանա Կիրակոսյան (Արմավիրի թեմ)
Տ. Շահան քահանա Միրզոյան (Կոտայքի թեմ)
Տ. Զգոն քահանա Անտոնյան (Շիրակի թեմ)

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.

Տ. Շահե քահանա Հայրապետյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Տիրան քահանա Առուշանյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Խորեն քահանա Մարուքյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան (Արարատյան հայրապետական թեմ)
Տ. Գրիգոր քահանա Մարկոսյան (Արցախի թեմ)
Տ. Մեսրոպ քահանա Արամյան (Արցախի թեմ)
Տ. Գևորգ քահանա Միրզոյան (Արմավիրի թեմ)

ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ Տ. ԱՐԻՍ, Տ. ՍԵՎԱՆ ԵՎ Տ. ՎԻԳԵՆ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությամբ արքության պատիվ է շնորհվել Երուսաղեմի հայոց Պատրիարքության Միջեկեղեցական և արտաքին հարաբերությունների վարիչ Գերաշնորհ Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանին, Գերաշնորհ Տ. Սևան եպիսկոպոս Ղարիբյանին (Երուսաղեմի հայոց Պատրիարքություն) և ԱՄՆ Արևելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու և Ամերիկայի Եկեղեցիների Խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանին՝ ի գնահատություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց անսակարկ բոլորանվեր ծառայության և տարիների վաստակի:

Թող Բարձրյալն Աստված քաջառողջ և արևշատ կենաց օրեր, հոգու անսպառ կորով պարգևի Արիս, Սևան և Վիգեն Սրբազաններին՝ Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքո եկեղեցաշեն և ազգօգուտ ձեռքբերումներով շարունակելու իրենց առաքելությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում բոլոր տիկնանց և օրիորդներին և շնորհավորում Կանանց տոնի՝ Մարտի 8-ի առիթով:

Աղոթում ենք առ Ամենակալն Աստված, որ տերունաշնորհ երջանկությունը միշտ ապրի մեր մայրերի, քույրերի ու դուստրերի սրտերում, և նրանք շարունակեն ազնիվ ու նվիրյալ ընթացքով ծառայել իրենց ընտանիքների բարօրությանը և Հայրենիքի զարթոնքին ու առաջընթացին:

Թող Աստված Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահի և պահպանի բոլոր տիկնանց և օրիորդաց, պարգևի քաջառողջություն ու արևշատություն և հանապազ օրհնությամբ ու երկնառաք բյուր բարիքներով բարեզարդի նրանց կյանքը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն Ձեզ ամենքիդ հետ. Ամեն:

Ս. Էջմիածին,
8 մարտի 2007 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ:

Արարատ Սրբազանը շարունակելու է կատարել նաև վանքերի տեսչի պարտականությունները:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱԲԳԱՐ ՔԱՀԱՆԱ ԳԸԼԸՃՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Ուկրաինայի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Աբգար քահանա Գըլըճյանը:

Հայրապետական վճռի կայացման համար հիմք են ծառայել Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի միջնորդագիրը Տ. Աբգար քահանա Գըլըճյանին քահանայական կարգից ազատ կացուցանելու վերաբերյալ, ինչպես նաև՝ Տ. Աբգար քահանա Գըլըճյանի դիմումը:

Կարգալույծ հռչակված քահանան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը և կկոչվի ավազանի անունով՝ Լևոն Գըլըճյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավորությամբ նշվեց Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնը: Տոնի առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Պարույր քահանա Ավետիսյանը:

Ս. Պատարագի ընթացքում խոսված իր քարոզում Տեր Հայրը ներկայացրեց տոնի խորհուրդը՝ անդրադառնալով Ղևոնդյանց քահանաների հոգևոր սխրանքին: «Չկան այսօր այնպիսի ահասարսուռ պատերազմներ, կենաց-մահու կռիվներ, ինչպիսին Ավարայրի դաշտն էր, սակայն դա չի նշանակում, որ Սրբոց Ղևոնդյանց պատգամն այսօր չի կարող գործել: Սրբոց Ղևոնդյանց պատգամը միայն ու միայն պատերազմի դուրս գալու համար չէ, առհասարակ կյանքի ցանկացած ոլորտում մենք պետք է այդ նույն հավատքով հաղթանակներ տանենք՝ սկսյալ մեր ընտանիքից, մեր միջավայրից, քաղաքից և մեր համազգային բոլոր տեսակի խնդիրներից» ,- նշեց Տեր Պարույրն իր խոսքում: Տեր Հայրը հաստատեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որ դարեր շարունակ պահապան և զորավիգ է եղել հայրենի երկրին և հայ ժողովրդին, այսօր ևս նույն վճռականությամբ ու հավատքով կանգնած է՝ զորացնելու մեր Հայրենիքը և քարոզելու ու հավատքի մեջ զորացնելու մեր ժողովրդին:

«Հայ հոգևորականությունը տարավ արիության հաղթանակ, և այդ հաղթանակով կերտվեց հայ հոգևոր դասի դեմքը և դիմագիծը: Ինչքան էլ որ լինեն նեղություններ, դժվարություններ, արտաքին հարվածներ և ներգործություններ, այնուամենայնիվ, հայ հոգևորականությունը պիտի հաստատուն և անփոփոխ մնա, որովհետև մշտապես հավատարիմ է Քրիստոսի խոսքին և նույն ուղղափառ դավանությամբ, եթե անգամ հարկ լինի, պիտի խաչակից դառնա Քրիստոսին»,- ասաց Արժանապատիվ Տեր Հայրը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Տեառնընդառաջը՝ 40-օրյա Քրիստոսի ընծայումը տաճարին: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Տեառնընդառաջի Ս. Պատարագից հետո հայոց եկեղեցիներում տեղի ունեցավ նաև նորապսակների օրհնության կարգ:

Տոնի նախօրեին, փետրվարի 13-ին, Մայր Աթոռի Միածնաէջ Տաճարում, երեկոյան ժամերգության ավարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Տերունի տոնի սկիզբն ավետող նախատոնակի հանդիսավոր արարողություն, ապա նաև անդաստանի կարգ, երբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը: Շարականների երգեցողության ներքո բարեպաշտ բազում հայորդիներ Մայր Տաճարի կանթեղներից վառված մոմեր իրենց հարկերը տարան՝ լուսավորելու Քրիստոսի խորհրդանիշ լույսով:

Փետրվարի 14-ին Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբը, մեկնելով քառասնօրյա մանուկ Հիսուսի՝ տաճարին ընծայման խորհուրդը, անդրադարձավ նաև մանուկների հանդեպ ծնողների պարտականություններին՝ նկատելով, որ առաջին հերթին նրանք պետք է մանուկներին Աստծո Խոսքի՝ Սուրբ Գրքի ճանաչողությունը մատուցեն և աղոթական կյանքին մասնակից դարձնեն, քանզի դրանցով մանուկները պիտի դառնան քրիստոնյաներ և դրանցով պիտի ժառանգորդներ դառնան հավիտենական կյանքի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի ին Սրբոց Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Վազգեն վարդապետ Նանյանը

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդներ Մայր Աթոռի միաբաններ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսներ և սաներ

Հավարտ Ս. Պատարագի Վարդանանց խորհրդին անդրադարձավ Հոգեշնորհ Հայր Սուրբը Մենք հիշում և ամեն անգամ տոնախմբում ենք Վարդանանց տոնը և պիտի նշենք քանի դեռ երկրագնդի վրա մեկ հայ կա որովհետև սա մեր ինքնության մեր լինելության տոնն է ....Փառք Աստծո այսօր խաղաղություն է և կարիքը չկա որ մեր կյանքը տանք մեր հավատի և մեր Հայրենիքի համար Սակայն մահվան հավասար կարևոր է նաև իմանալ թե ինչպես ենք ապրում. լի հույսով առ Տեր լի հավատքով առ ապագան նշեց Հայր Վազգենն իր խոսքում

Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրվա առիթով Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Սրբության քաջառողջության ու կենաց արևշատության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառության համար

Ս. Պատարագից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց անմար հիշատակին Հանդիսությունը բացեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը

Վարդանանց նվիրված բանախոսությամբ հանդես եկավ քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանը Շարականների և հայրենասիրական երգերի կատարումներով ելույթ ունեցան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախումբը և ՀԲԸՄ ու Մայր Աթոռի Նորքի Հայորդյաց տան Հայկազունք համույթը Երգչուհի Լեյլա Սարիբեկյանի կատարմամբ առաջին անգամ հնչեց նոր հեղինակված Վարդանանք հայոց երգը խոսքերի հեղ.՝ Արփինե Թադևոսյան

Հանդիսությունը եզրափակվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով *....Վարդանանց տոնը դարեր շարունակ ուղեկցել է մեր ժողովրդին Մեր ժողովուրդն ապրել է Վարդանանց խորհրդով Այսօր էլ մենք խոսում ենք այդ խորհրդի մասին իբրև մեր գոյության հիմնական երաշխիքի իբրև ազգային մեր ոգու և դիմագծի պահպանության առհավատչյայի Վարդանանց խորհուրդը Վարդանանց ոգու մեջ է Դա վասն հայրենյաց և վասն հավատո իրենց ունեցած սերն էր* նշեց Ամենայն Հայոց Հայրապետը

Նորին Սրբությունն անդրադարձավ հատկապես վերջին շրջանին հնչող կոչերին դառնալու դեպի մեր ազգային արմատները և իբրև այդ դարձի ուղի հանրությանը տարբեր անհատների կողմից ներկայացվող զանազան արժեհամակարգերին

Վեհափառ Հայրապետը սակայն նկատեց որ այդ ճանաչողությունը և դարձը դեպի ազգային արմատներ ճշմարտապես և հարազատորեն արտացոլված է Վարդանանց ոգու մեջ *Եթե մենք ցանկանում ենք ճանաչել մեր արմատները ճանաչել մեր ինքնությունը պետք է հավատարիմ մնանք մեր սիրո մեջ առ Աստված և առ Հայրենիք Եվ այդ սերը դարձնենք մեր կյանքի շարժիչ ուժը մեր ինքնությունը նորոգող ուժը մեր ազգը առաջնորդող ուժն ու զորությունը* ասաց Հայոց Հայրապետը

Գարեգին Բ Կաթողիկոսը կարևոր նկատեց նաև որ Վարդանանց տոնի ոգեկոչումը վերստին համազգային բնույթ ստանա այն նշվի թե կրթական հաստատություններում և թե յուրաքանչյուր հայորդու հարկից ներս դառնա զորության ու ներշնչումի մեր կյանքի և աշխատանքի անհատական և համազգային հաղթության մի անսպառ ակունք *Եթե ուզում ենք որ աղանդավորներ տեղ չունենան մեր կյանքից ներս ուրեմն Վարդանանց ոգին պիտի կերտենք յուրաքանչյուր հայորդու և սրտում և մտածողության մեջ Եթե ուզում ենք որ Հայրենիքն առաջընթաց և բարգավաճ կյանք ունենա երջանկությունն ուղեկից դառնա մեր ժողովրդին եթե ուզում ենք հեռու վանել մեզանից պարտվողականության գիտակցությունն ու մտածողությունը եթե ուզում ենք քաջ սրտով մեր գլուխն ամեն երեկո բարձին դնել ուրեմն պետք է Վարդանանց այդ ոգին ապրեցնել մեր մեջ մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի հոգուց ներս* ասաց Ամենայն Հայոց Հայրապետը

Նորին Սրբությունը Վարդանանց տոնի նվիրական առիթով իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց հայ ժողովրդի բոլոր զավակներին ովքեր այսօր նշում են իրենց անվանակոչության տոնը

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ՀԻՄՆՎՈՒՄ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մարտի ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և նախագահությամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի տեղի ունեցավ երիտասարդական ներկայացուցչական հավաք

Հավաքի նպատակն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո հիմնադրել Համազգային հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպություն որի կենտրոնական գրասենյակը գտնվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կազմակերպության ստեղծման աշխատանքները համակարգում է Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը իսկ Սրբազանին օգնական է նշանակվել Մայր Աթոռի միաբան Տ. Նշան աբեղա Պետրոսյանը

Ներկայացուցչական հավաքին մասնակցում են Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաներ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության ներկայացուցիչներ Հայաստանի Արցախի և աշխարհասփյուռ գրեթե բոլոր թեմերից ժամանած շուրջ յոթանասուն երիտասարդներ

Ժողովի աշխատանքներն սկսվեցին Տերունական աղոթքով և Սուրբ Աստուած շարականի երգեցողությամբ ապա հավաքի բացման խոսքով երիտասարդներին դիմեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը Այս օրը ձեր կյանքի մեջ պատմական պետք է համարեք որովհետև առաջին անգամ պաշտոնապես հիմք է դրվում Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության Թեև առանձին թեմական կառույցներից ներս երիտասարդաց միություններ կան սակայն այսօրվա ժողովի նպատակն է ստեղծել համազգային երիտասարդական մի կառույց որը պետք է առաջնորդվի մեկ ընդհանուր կանոնադրությամբ և համակարգված գործի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո ասաց Սրբազան Հայրն իր խոսքում

Վերհիշելով Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 700 ամյա հոբելյանի տոնակատարությունների շրջանակներում ստեղծված Մայր Աթոռի երիտասարդական գրասենյակի գործունեությունը Հովնան Սրբազանը կարևոր և հրամայական նկատեց երիտասարդների ամբողջական մասնակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կյանքին Սրբազանը հորդորեց ամենքին միմյանցով զորանալ և զորացնել իրենց հոգիներից ներս Աստծու տված կոչումը Այս հավաքը պետք է որ մեր կյանքում այլակերպության փոխակերպման առիթ դառնա որպեսզի յուրաքանչյուր հանգրվան մեր ծառայության հնարավորություն դառնա դեպի Աստված բարձրանալու նշեց Հովնան Սրբազանը

Կազմակերպության առաքելության և գործունեության ոլորտների վերաբերյալ քննարկումներից հետո հավաքի մասնակիցներն ընտրեցին Կենտրոնական խորհուրդ որը գործադրելով ներկայացուցչական ժողովի որոշումները կնախապատրաստի Համազգային հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության 200 թ. առաջին պատգամավորական ժողովը Պատգամավորական ժողովին կներկայացվի նաև ներկայացուցչական հավաքի կողմից կազմած Կազմակերպության կանոնադրության նախագիծը Մինչ պատգամավորական ժողովը Հայ Եկեղեցու թեմերում կհաստատվեն Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության գրասենյակներ տարբեր մայրցամաքներում կգումարվեն շրջանային ենթահանձնախմբերի ժողովներ

Հավաքի մասնակիցներին Վեհարանի հարկի ներքո ընդունեց և Հայրապետական իր օրհնությունը փոխանցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը *Մեզ համար շատ էական է և կարևոր այս նախաձեռնությունը Հայ Եկեղեցու եկեղեցասեր երիտասարդաց կառույցի ձևավորումը որն օգտակար և շահեկան պիտի լինի եկեղեցական մեր առաքելության իրականացման գործում ...Եկեղեցին պետք է կարողանա ներկայություն լինել մեր կյանքի բոլոր ոլորտներում Դա չի կարող միայն հոգևորականների աշխատանքի շնորհիվ իրականացվել այլ ավագ և երիտասարդ սերնդի բոլոր հայորդիների աջակցությամբ ...Երիտասարդների ձայնը պետք է հնչի եկեղեցական մեր կառույցներից ներս և ձեր շարքերը պիտի ժամանակի մեջ ավելի ընդարձակվեն և համալրվեն նոր անդամներով* ասաց Նորին Սրբությունը խոստումնալից և հուսադրող նկատելով ձեռնարկված առաջին քայլերը Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևոր նկատեց որ երիտասարդները հաղորդ դառնան եկեղեցական կյանքի խնդիրներին որպեսզի իրենց գործունեությամբ թե ներկայիս և թե ապագային նպաստեն հոգևոր կյանքի առավել արդյունավետ կազմակերպմանը և առկա խնդիրների լուծմանը

Վեհափառ Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Հովնան Սրբազանին երիտասարդների նկատմամբ ունեցած սիրո և հետևողական ու նախանձախնդիր աշխատանքի համար

Ներկայացուցչական հավաքին ներկա էր Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահինյանը

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ քահանայից հերթական ամենամյա հավաքը: Հավաքին իրենց մասնակցությունն էին բերել շուրջ 180 եկեղեցականներ՝ Հայաստանի և Արցախի թեմական առաջնորդներ, Սուրբ Էջմիածնի միաբաններ և թեմերից ժամանած քահանա Հայրեր:

Մինչ հավաքի բացումը՝ եկեղեցականների թափորի ուղեկցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առաջնորդվեց Մայր Տաճար, ուր կատարվեց Արևագալի հանդիսավոր ժամերգություն: Ժամերգությունից առաջ եկեղեցականներին Վեհափառ Հայրապետի անունից ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Հավարտ սրբազան արարողության քահանաների հավաքն սկսեց իր աշխատանքը: Ժողովն սկսվեց Տերունական աղոթքով, ապա ժողովականները մեկ րոպե լռությամբ հարգեցին ՀՀ հանգուցյալ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հիշատակը, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց ՀՀ վարչապետի հոգու հանգստության համար: Այնուհետև ժողովի կազմակերպիչ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը ներկայացրեց հավաքի օրակարգը: Հավաքն ատենապետելու հրավիրվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Հավաքին զեկուցումներ ներկայացրեցին Տ. Վահան քահանա Ազարյանը (Գուգարաց թեմ), Տ. Կյուրեղ քահանա Տալյանը (Կոտայքի թեմ), Տ. Գևորգ քահանա Տեր-Բարսեղյանը (Գեղարքունյաց թեմ) և Տ. Վարագ քահանա Հակոբյանը (Շիրակի թեմ), ապա ներկայացված բանախոսությունների շրջանակում ծավալվեցին քննարկումներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և թեմերի հոգևոր-քարոզչական, հովվական, վարչակազմակերպական և եկեղեցական կյանքի այլ բնագավառների վերաբերյալ: Ժողովականներին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության հարաբերությունների մասին օրենքը հանգամանալից բացատրություններով ներկայացրեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Այս առնչությամբ քահանայից ժողովն իր շնորհակալությունը հայտնեց հայրենի իշխանություններին Եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորող օրենքի նախաձեռնման և ընդունման առնչությամբ:

Քննարկումների ավարտին Վեհարանի հանդիսությունների դահլիճում հոգևորականաց դասին Հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց ժողովի կազմակերպիչ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին՝ հավաքի

շահեկան կազմակերպման առիթով: Ապա ողջունելով քահանայից դասին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց եկեղեցականներին՝ իրենց նախանձախնդիր ծառայությամբ Եկեղեցու ներկայությունը հայոց կյանքում զորացնելու և այն իր առաքելության մեջ առավել արդյունավետ դարձնելու համար: «*...Շնորհիվ ձեր նվիրյալ ծառայության՝ մենք առաջընթաց ենք տեսնում մեր Եկեղեցու կյանքից ներս: Հարկավ, թերություններ ևս կան, և անելիք աշխատանքներն ավելի շատ են, բայց այս ամենով հանդերձ միանշանակ կարող ենք ասել, որ մեր Եկեղեցին օրավուր զորանում է: Լավատեսությամբ ենք նայում մեր Եկեղեցու վաղվա օրվան*»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Հայոց Հայրապետը հորդորեց քահանա Հայրերին շարունակել նույն ոգով ու եռանդով, նույն համարձակությամբ ու նախանձախնդրությամբ ծառայություն բերել Հայոց Եկեղեցուն և ժողովրդին:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև անցնող տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությանը և արձանագրած ձեռքբերումներին, պատասխանեց հավաքի մասնակիցներին հետաքրքրող ու հուզող հարցերին:

Այնուհետև նվիրյալ ու գնահատելի ծառայության համար Նորին Սրբության կողմից պարգևաբաշխության արժանացան տասնվեց քահանա Հայրեր: Ծաղկյա փիլոն կրելու իրավունք ստացան Տ. Գևորգ քահանա Միրզախանյանը (Արմավիրի թեմ), Տ. Մեսրոպ քահանա Արամյանը (Արցախի թեմ), Տ. Գրիգոր քահանա Մարկոսյանը (Արցախի թեմ), Տ. Տիրան քահանա Առուշանյանը (Արարատյան թեմ), Տ. Խորեն քահանա Մարուքյանը (Արարատյան թեմ), Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյանը (Արարատյան թեմ), Տ. Շահե քահանա Հայրապետյանը (Արարատյան թեմ): Լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց Տ. Զգոն քահանա Անտոնյանին (Շիրակի թեմ), Տ. Տաթև քահանա Կիրակոսյանին (Արմավիրի թեմ), Տ. Սողոմոն քահանա Ավետիսյանին (Գուգարաց թեմ), Տ. Սիմեոն քահանա Առաքելյանին (Գուգարաց թեմ), Տ. Դավիթ քահանա Կյուրեղյանին (Արարատյան թեմ), Տ. Շմավոն քահանա Ղևոնդյանին (Արարատյան թեմ), Տ. Շահան քահանա Միրզոյանին (Կոտայքի թեմ), Տ. Վիրապ քահանա Ղազարյանին (Արագածոտնի թեմ), Տ. Մուշե քահանա Վահանյանին (Արագածոտնի թեմ):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՑՄԱՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով Վանի նահանգապետ Մեհմետ Նիյազի Տանիլիրից ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է հրավեր՝ սույն թվականի մարտի 29-ին մասնակցելու Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բացման արարողությանը:

Նկատի առնելով, որ Թուրքիայի իշխանությունների կողմից վերանորոգված Սուրբ Խաչ եկեղեցին վերածվելու է թանգարանի և չի շարունակելու գործել որպես եկեղեցի Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հոգևոր իշխանության ներքո, և բացման արարողությունը կատարվելու է զուտ աշխարհիկ արարողակարգով և ոչ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնական ծեսի համաձայն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցություն չի բերելու արարողություններին:

Թուրքիայի իշխանությունների կողմից հայ ժողովրդի քրիստոնեական բարեպաշտ զգացումների դեմ ուղղված այս գործողությունը չի կարող ընկալվել որպես դրական քայլ հայ և թուրք ժողովուրդների փոխմերձեցման ճանապարհին՝ առավել ևս ներկա դարի՝ ժողովուրդների գործակցության և կրոնների ու մշակույթների երկխոսության համընդհանուր ձգտումի համատեքստում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 փետրվարի 2007 թ.)

«Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գա առ Իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի»:

(Հովհ. Զ 35)

Այսօրվա ավետարանական ընթերցվածը մեզ պատմում է հացի բազմացման հրաշքի մասին, որից հետո Քրիստոս Իր աշակերտների հետ անցնում է ծովի մյուս ափը, իսկ երբ ժողովուրդը գտավ Նրան՝ ասաց. «Ռաբբի, ե՞րբ եկար այստեղ»: Հիսուս պատասխանեց նրանց ու ասաց. «Դուք Ինձ փնտրում եք ոչ թե նրա համար, որ նշաններ տեսաք, այլ նրա համար, որ կերաք այն հացից ու կշտացաք»:

Այստեղ, սիրելիներ, հավաքվածները ոչ թե ընդունում էին Քրիստոսի վարդապետությունը և հետևում Նրան, այլ ընդհակառակը՝ նրանք իրենց մարմնավոր կարիքներին հագուրդ տալու համար էին փնտրում Հիսուսին: Դրա համար մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոս ասում է. «Գնացեք, աշխատեք և կորստական գործեր մի կատարեք»: Այսինքն՝ ով որ չարություն է խորհում և չար գործեր է կատարում, նա ինքն իրեն անհիշատակության և մահվան է դատապարտում: Քրիստոս, նրանց կորստական մտածելակերպը և սրտի ցանկությունները իմանալով, պատվիրեց՝ ասելով. «Գնացեք, ոչ թե ժամանակավոր կյանքի կերակրի մասին հոգ տարեք, այլ այն կերակրի մասին, որ հավիտենական կյանքի համար է»: Եվ որպես ճշմարիտ հաց Ինքն Իր մարմինն է տալիս մեզ ու հավիտենական ջրի փոխարեն՝ Իր արյունը: Ինչ երևելի բան պետք է լիներ, եթե մի թագավոր սեղան նստած իր ամանից բաժին ուղարկեր մի աղքատի: Բայց Հիսուս հաղորդության Սուրբ Սեղանից մեզ կերակրում է ոչ թե մի կտոր բաժին ուղարկելով կամ Իր մսից ու արյունից մի փոքր բաժին հանելով, այլ տալիս է մեզ Իր ամբողջ մարմինն ու արյունը, հոգին և աստվածությունը:

Մեր Փրկիչն Իր սերը միայն մարդանալով չհայտնեց, այլ տալով Իր մարմինն ու արյունը ամբողջությամբ, ցանկացավ, որ ամեն մեկիս հետ առանձին միանա: Դրա համար Իր անձը խառնեց, շաղախեց մեզ հետ, որ մեկ դառնանք, որովհետև իսպառ սիրեց ու ասաց. «Ես եմ կենաց հացը, ով դեպի Ինձ գա, քաղց չի զգա, և ով Ինձ հավատա, երբեք չի ծարավի»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Քրիստոս Սուրբ Հաղորդության խորհուրդը հաստատեց և այս խորհրդով մի փոքր սիրո գանձ չէ, որ տվեց մեզ, այլ ամբողջը: Ինքը մարդացավ, բնակվեց մեր մեջ, որպեսզի մենք աստվածանանք և այդ իսկ պատճառով ասաց. «Ես իջա երկնքից, ոչ որ Իմ կամքով արեցի, այլ Նրա կամքով, Ով ուղարկեց Ինձ»: Մեզ համար պետք է հասկանալի լինի հոգևոր և մարմնավոր կերակուրների տարբերությունը: Մարմնավոր կերակուրը միայն փոփոխման է ենթարկում մարմինը և որոշակի ժամանակ է միայն ուժ հաղորդում նրան, իսկ հոգևոր կերակուրը, որ է Քրիստոսի մարմինն ու արյունը, գալով և բնակվելով մեր մեջ՝ բժշկում է մեր հոգիները և անկասկած՝ նաև մեր մարմինները:

Արդ, սիրելիներ, ինչպես մենք մարմնավոր կերակուր ուտելուց առաջ պատրաստվում ենք, լվանում ենք սնունդը, մեր ձեռքերը, սեղան ենք պատրաստում, ապա նույն ձևով պետք է մաքրենք մեր հոգիները բոլոր տեսակի չար մտածումներից, չար գործերից, մեղքից հրաժարվենք ու նոր մոտենանք հոգևոր կերակրին և գոնե ամենափոքր պարտականությունները կատարելուց հետո միայն Աստծուն ընդունենք մեր մարմնավոր տաճարներից ներս: Թե ծարավ ենք, չհապաղենք, որովհետև քաղցրաբուխ կյանքի աղբյուրը Տերն է, որ ասում է. եթե որևէ մեկը ծարավ է, թող գա Ինձ մոտ և հագենա, որովհետև հավիտենապես չեն ծարավելու:

Տիրոջ խոսքի համաձայն՝ նրանց որովայններից կենդանության ջրերի գետեր կհոսեն, իսկ ովքեր որ քաղցած են, թող չհուսահատվեն, որովհետև Տիրոջ պատգամը հստակ է, որ ասում է. «Ես եմ կենաց հացը երկնքից իջած, եթե որևէ մեկն ուտի այս հացից, հավիտյան կապրի»: Եթե մեկը մեղքին ծառա գտնվի, Տերն Իր մարմնով և արյամբ մաքրելով, սրբագործելով կազատի ու մեզ կդարձնի Աստծով ընտրյալ, ճշմարիտ զավակներ:

Եսայի մարգարեն մարգարեական շնորհ ստանալուց առաջ տեսիլք է տեսնում, որ սերովբեներից մեկը վկայության խորանի վրա երկնքից իջած լույսից վառվող ունելիով մի փոքր բերում և իր շրթներին է հպում ու դրանից հետո է միայն մարգարեական շնորհ ստանում: Այս տեսիլքի մասին Շնորհալի Հայրապետն ասում է շարականի մեջ. «Տեր Հիսուս, Քո աստվածային կայծերին անարժանությամբ մոտեցանք ու պարտապան եղանք»:

Ահա այսպիսին է մեր Տիրոջ մարմինն ու արյունը, սիրելի հավատացյալներ: Անգամ սերովբեները, որ մշտապես փառաբանում, գովերգում և Սուրբ, Սուրբ են երգում, ունելիով և երկյուղածությամբ էին մոտենում Տիրոջ մարմնին ու արյանը: Ապա մենք՝ հողեղեններս, մեղքերով պարուրված, ինչպիսի ահով և դողով պետք է մոտենանք Սուրբ խորհրդին: Մոտենանք ոչ թե դատաստան ընդունելու, այլ հավիտյան ապրելու համար:

Այսպիսով, սիրելիներ, Տիրոջ Սուրբ մարմնին մշտապես մոտենալուց առաջ ասենք. «Տեր, մենք արժանի չենք Քեզ մեր մեղավոր անձերից ներս ընդունելու, բայց գիտենք, որ Դու անչափ, անհաշվելի բարի ես: Մեր մեջ գալով՝ Դու մեզ կլուսավորես Քո սրբության լույսով: Տեր, Քեզ մոտենում ենք իբրև հիվանդը՝ բժշկին, և ինչպես կարող ենք Քեզ չճանաչել և մեր մեջ չընդունել, չսիրել Քեզ ամբողջ սրտով ու հոգով»:

Թող աստվածային սիրո և խաղաղության մեջ հարատև լինենք. Ամեն:

Տ. ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 փետրվարի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Որ նորին դաւանութեամբն խաչակից Քեզ ընտրեցեր զդասս քահանայիցն,
Շնորհաբաշխ օծութեամբ կարգեալ հովիւս եւ վարդապետս,
Գովեմք զՔեզ ընդ զօրս անմարմնականացն Որդիդ Միածին»:

(Շարական)

Նույն ուղղափառ դավանությամբ որ Քեզ խաչակից դարձրեցիր քահանաների այս դասին, շնորհաբաշխ Քո օծությամբ նրանց կարգելով հովիվներ և վարդապետներ, գովաբանում և փառաբանում ենք Քեզ, Որդիդ Միածին, երկնային անմարմին զորքերի հետ:

Սիրելի հավատացյալներ.

Այսօր Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնն է, և այս տոնի առիթով շարականագիր Հայրապետը այսպես է ներբողում նրանց հիշատակը և նրանց խաչակից է համարում մեր Տեր և փրկիչ Հիսուս Քրիստոսի հետ: Համաձայն մեր Տոնացույցի, Բուն Բարեկենդանից առաջ, նախընթաց շաբաթվա մեջ տոնվում են երկու խումբ սրբերի հիշատակի օրեր: Դրանցից առաջինը Ղևոնդյանց քահանայից տոնն է, որ այս օրը մենք հիշատակում ենք ձեզ հետ միասին, և երկրորդը՝ Սրբոց Վարդանանց հիշատակի տոնն է, որ պիտի նշվի երկու օր հետո, հինգշաբթի օրը:

Ինչու եմ այս երկու խումբ սրբերի հիշատակը հիշում ձեզ համար, որովհետև նրանք երկուսով անքակտելիորեն կապված են մեկը մյուսի հետ: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և հավատացյալ մեր ժողովուրդը, սակայն, այս երկու դաս սրբերին սրբադասել է, որովհետև նրանց հետ կապվել է մեր ազգի փրկության, մեր հավատքի ամրության գաղափարը: Պատարագի նվիրական այս պահին մենք մեր հոգու մեջ, մեր հոգու աչքերով մտաբերում ենք Ավարայրի հերոսամարտը: Եվ, սակայն, ամեն անգամ, երբ մենք առիթ ենք ունենում մտորելու Ավարայրի ճակատամարտի մասին, մենք նաև միաժամանակ փորձում ենք հասկանալ, թե ինչ նշանակություն ուներ, ինչ խորհուրդ ուներ Ավարայրի ճակատամարտը մեզ համար, և ովքեր էին այդ երկու դաս խումբ սուրբ նահատակները, որոնք այսպիսի մեծ նշանակություն ունեն մեր հոգևոր-ազգային կյանքի մեջ և շուրջ 1500, 1600 տարիներ հետո, այսօր, նույն ոգևորությամբ և խանդավառությամբ տոնվում է նրանց հիշատակը:

Երբ դիտարկում ենք մեր ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքը և փորձում ենք այն համեմատել Ավարայրի ճակատամարտի հետ, տեսնում ենք, որ դարերի հոլովույթում, այդ համապատկերի վրա, Ավարայրի ճակատամարտը ոչ այնքան մեծ մի տեղ է զբաղեցնում: Ի՞նչ առումով. գիտենք որ մեր ժողովրդի թագավորական հարստությունների մեջ՝ Երվանդունիներ, Արտաշեսյաններ, այնուհետև Արշակունիներ, Բագրատունիներ, ինչքան հզոր և ահեղ ճակատամարտեր են տեղի ունեցել, մանավանդ Ավարայրի ճակատամարտից առաջ, երբ աշխարհներ աշխարհների դեմ էին պատերազմում, երբ մեր ժողովուրդը նրանց մասն էր կազմում, անհամեմատելի էր զորքի, զինամթերքի չափն ու քանակը և նաև անհամեմատելի էին այն պահանջները և այն աշխարհաքաղաքական նկրտումները, որ դրված էին այդ պատերազմի հիմքերում: Եվ սակայն որն է, որ առանձնակի նշանակություն և իմաստ է հաղորդում Ավարայրի հերոսամարտին:

Քննելով պատմության խորքերը՝ տեսնում ենք, որ հիշյալ բոլոր պատերազմները մղվում էին տարածքներ ազատագրելու, նոր տարածքներ գրավելու, մարդկանց գերի վերցնելու, հարստություններ կորզելու, մի խոսքով՝ նյութական շահերի հետապնդման համար: Ավարայրին նայելով՝ տեսնում ենք, որ մի բուռ ժողովուրդ, մի փոքր ածու ժողովուրդ, ինչպես որ պատմիչը պիտի ասեր, ելել է բազմահազարանոց պարսկական զորքի դեմ և փորձում է պատերազմ մղել: Ինչ նպատակ ուներ պատերազմը: Արդյոք դա նպատակ ուներ մեծացնելու Հայաստանի տարածքները, սահմանները, նպատակ ուներ ոչնչացներ դրացիներին: Նորից ու նորից ոչ, և այսպես կարելի է ցանկը թվարկել, որ մեր պահանջները այդ պատերազմում ոչ թե նյութական շահեր էին հետապնդում, այլ ընդհակառակը, ունեին շատ խորը հոգևոր հենք և այդ հենքը հավատքի պաշտպանությունն էր:

Մեր վարքագրական և քարոզխոսական գրականության մեջ պիտի տեսնենք գնահատականներ՝ տրված Ավարայրի ճակատամարտին, և բնորոշումներ՝ տրված Սրբոց Ղևոնդյանց քահանայից և Սրբոց Վարդանանց: Գիտենք «Մահ իմացեալ անմահութիւն, մահ ոչ իմացեալ՝ մահ» արտահայտությունը ոսկեղենիկ Եղիշեի: Գիտենք, որ Սուրբ Ղևոնդ Երեցին Արծիվ Ավարայրի կոչեցին: Ի՞նչն էր, որ միավորում էր նրանց այս ընդհանուր գաղափարի մեջ: Այն էր, սիրելի հավատացյալներ, որ նրանք խաչակից դարձան Քրիստոսին:

Ծանր էին այդ շրջանում աշխարհաքաղաքական պայմանները և մեր երկրից վերցված էր մեր ինքնանկախ թագավորությունը: Գիտենք, որ 428 թվականին Արշակունյաց հարստությունը ավարտվեց և Հայաստանը մի տեսակ դարձել էր պատերազմների թատերաբեմ մի կողմից Բյուզանդիայի և մյուս կողմից պարսիկների միջև: Նրանք երկուսով էլ ուզում էին տիրանալ մեր երկրին և իրենց հիմքերն ամրապնդել այստեղ: Եվ հանկարծ Սասանյան գահին բազմած Հազկերտ երկրորդը, որ մի շարք պատերազմներում հաղթանակած էր դուրս եկել, որոշում է նոր քաղաքականություն վարել Հայաստանի հետ, բարեկարգություններ անցկացնել և այդ ամենից վեր հենց առաջին հարվածը ցանկանում է ուղղել մեր հավատին: Եվ որոշում է կայացնում, որ հայերը այլևս չպիտի հետևեն Քրիստոսին, այլ պիտի պաշտեն կրակը, լինեն մազդեզական կրոնի հետևորդներ և այդ նպատակով մոգեր և մոգպետներ է ուղարկում Հայաստան աշխարհ և նաև սրան զուգահեռ փորձում է զանազան եղանակներով սիրաշահել հայոց մարզպաններին, նրանց իրենց կողմը գրավել, որպես-

զի շատ ավելի հեշտ լինի հավատափոխությունը և դրա միջոցով հայոց երկրին տիրանալը: Այսպես շատ հաջողություններ է ունենում և գիտենք պատմությունից, թե որքան մարզպաններ և որքան իշխաններ հետևեցին պարսից այդ առաջարկին: Եվ, սակայն, դրանց մեջ անխախտ մնաց Հայոց Եկեղեցին իր հոգևորականաց դասով: Նրանք որոշում կայացրեցին հայոց կենտրոնամետ իշխանների հետ, որ չպետք է անսան Հազկերտի առաջարկին, քանի որ նա պահանջ էր ներկայացրել հայոց ավագանուն, այլ պետք է նույնիսկ կյանքի գնով պայքարել, եթե հարկ լինի զոհվել այդ հայրենիքի համար, որովհետև նրանց զենքն ուղղված էր ոչ միայն շահին, դրամին, ոսկուն և արծաթին, այլև հայրենի սահմաններին և որ ամենակարևորն է՝ նրա միջնաբերդ հանդիսացող հայոց հավատքին:

Այս իրավիճակի մեջ տեսնում ենք եղջյուրի պես բարձրացած հայ հոգևորականության ցասումը Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, ով անցած ժողովրդի գլուխը, երբ որ պարսիկ մոգերը ցանկանում էին եկեղեցին քանդել, ատրուշանի վերածել, նրանց շպրտում է հայոց սահմաններից դուրս, այնուհետև այլևս անխուսափելի էր բախումը: Եվ Ղևոնդ Երեցը մյուս ինը հավատակից հոգևորականաց դասի հետ, որոնց շարքին Հովսեփ Կաթողիկոսը, Սահակ եպիսկոպոս Ռշտունյանցը, Թաթիկ եպիսկոպոս Բասենին, Մուշե քահանա Աղբակեցին, Արշեն երեց Բագրևանդցին, Սամվել քահանան, Աբրահամ սարկավագը և Քաջազ սարկավագը, այս ինը հոգին են, որ կազմում են Սրբոց Ղևոնդյաց քահանայից դասը և նրանք են, որ սրբերի դասը դասվեցին մեր ժողովրդի կողմից: Պատերազմից առաջ, հենց նախօրեին տեսնում ենք, թե ինչպես է հայոց բանակը պատրաստվում պատերազմին: Նրանք թվով քիչ էին, սակայն Ղևոնդ երեցը, ինչպես պատմիչն է ասում, «Հոգեւոր բանիւք» քարոզում էր Աստվածաշունչը և նրանց քաջալերում, սրտապնդում էր պատերազմից առաջ: Թերևս նա գիտակցում էր, որ արյաց ահեղ զորքի առջև նրանք ֆիզիկապես չպիտի կարողանան դիմադրել: Համոզումն ու հավատը ուներ, որ Քրիստոսով զգեցած, Քրիստոսի հավատը իրենց մեջ ապրեցնող, Քրիստոսի լույսը պարունակող զենքով է, որ միայն կարող են ընդդիմանալ չարին և նրանց դեմ պայքար մղել:

Պատմիչները վկայում են, թե ինչպես հենց պատերազմի դաշտում օծյալ մի քարի վրա խորան են կառուցում և Ս. Պատարագ են մատուցում, մկրտվում են այն բոլոր մարտիկները, ովքեր որ մկրտված չէին, և Հովսեփ Կաթողիկոսի օրհնությամբ և օգնականությամբ բոլորին մեկ առ մեկ հաղորդություն էր տրվում: Պատրաստվում են մի սուրբ գործի, որը պետք է դարեր մնար և որի փառքը պետք է հյուսվեր մեր ժողովրդի կողմից:

Սիրելի հավատացյալներ,

Գիտենք, թե ինչ ելք ունեցավ Ավարայրի ճակատամարտը մեզ համար: Այնտեղ մենք չտարանք զենքի հաղթանակ, որովհետև զենքով և թվով փոքր էինք, այլ տարանք հավատքի հաղթանակ, որով կարողացանք շարունակել մեր քրիստոնեական հավատքով ապրել: Գիտենք՝ հաշտության պայմանագիր է կնքվում և Հայաստանը անմերձենալի է մնում զրադաշտական կրոնի հետևորդներին, և Քրիստոսի հավատարիմ ժողովուրդը կարողանում է վերստին փառաբանել, մնալ իր հավատքի մեջ և փառաբանել Աստծուն, Սուրբ Երրորդությանը:

Ո՞րն է Ավարայրի պատգամը, սիրելի հավատացյալներ, եթե փորձենք մենք այսօր այն դիտարկել ետադարձ հայացքով: Այն, որ այսօր մենք՝ այդ նույն քաջերի հե-

տևորդները, նույն քաջ զավակներն ենք Սրբոց Ղևոնդյանց և Սրբոց Վարդանանց, և փառք Աստծո, ապրում ենք ազատ հայրենիքի մեջ, ապրում ենք անկախ պետականության և երկրի մեջ: Չկան այսօր այնպիսի ահասարսուռ պատերազմներ, ինչպես որ Ավարայրի դաշտն էր, կենաց և մահու կռիվներ: Սակայն դա չի նշանակում, որ Սրբոց Ղևոնդյանց պատգամն այսօր չի կարող գործել: Սրբոց Ղևոնդյանց պատգամը միայն ու միայն պատերազմ դուրս գալու համար չէ: Առհասարակ, կյանքի ցանկացած ոլորտում այդ նույն ոգով պետք է հաղթանակներ տոնենք, սկսյալ մեր միջավայրից, սկսյալ մեր քաղաքից և համազգային մեր բոլոր տեսակի խնդիրներից: Մեր Եկեղեցին, որ դարեր շարունակ պահապան և զորավիգ է եղել մեր երկրին և ժողովրդին, այսօր ևս նույն վճռականությամբ և նույն հավատքով կանգնած է՝ զորացնելու նաև մեր հայրենիքը և հավատքի մեջ զորացնել նաև մեր ժողովրդին:

Հայ հոգևորականությունը տարավ արիության հաղթանակ: Ինչքան էլ որ նեղություններ, դժվարություններ լինեն, արտաքին հարվածներ և ներգործություններ, այնուամենայնիվ, միակ անփոփոխ մասը մեր ժողովրդի հայ հոգևորականաց դասը պիտի մնա, որովհետև մենք մշտապես հավատարիմ ենք Քրիստոսի խոսքին և այդ նույն ուղղափառ դավանությամբ, եթե անգամ հարկ լինի, պիտի խաչակից դառնանք Քրիստոսին, ինչպես որ շարականագիր Հայրապետն է ասում: Եվ այս ոգով փորձենք ապրել մեր կյանքը, այս խորհուրդը ապրեցնել մեր կյանքում, որպեսզի Տերը, որ դարեր շարունակ եղել է մեր կողքին և օրհնել է մեզ և հաղթանակներ պարգևել անգամ մտքով աննկարագրելի պահերին, այս պահին ևս, սիրելի հավատացյալներ, պիտի ամուր կառչենք մեր հավատքից, ամուր մնանք մեր հայրերի դավանությանը, նրանց ուղղափառ հավատքի մեջ, որպեսզի վայելենք Աստուծո օրհնությունը, և մեր հայրենիքը, մեր ժողովուրդը ապրի խաղաղ ու բարօր երկար տարիներ:

Գեղեցիկ այս առիթով ես ցանկանում եմ իմ շնորհավորանքները ուղղել իմ լծակից քահանա եղբայրներին: Եվ սակայն սա մի տեսակ միայն քահանայից տոն չէ, որ ժողովրդի մոտ ընկալված է: Բայց մենք գիտենք, որ Ղևոնդյանց քահանայից մեջ ներկայացված էր ամբողջ հոգևոր դասը՝ կաթողիկոսից մինչև սարկավագ, մինչև բոլոր աստիճանները ներգրավված էին դրա մեջ և այս առիթով շնորհավորանքներս մեր ողջ հոգևոր դասին ի գլուխ Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Սրբազնագույն Կաթողիկոսին, մեր եպիսկոպոսաց դասին, վարդապետաց դասին, քահանայից դասին, որպեսզի Տերը բարեխոսությամբ Սուրբ Ղևոնդյանց ուժ, կարողություն և հավատքի ամրություն հաղորդի մեզ, որպեսզի մենք կարողանանք քաջարի հաղթանակներ տոնել այսօրվա կյանքի բոլոր պայմանների մեջ:

Թող Աստուծո սերը, շնորհը և ողորմությունը հովանի լինի ամենքիս այժմ և հավիտյանս. Ամեն:

Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 փետրվարի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Այսօր մեր Եկեղեցվո մեծագույն տոներեն մեկը կտոնենք: Մեծ է, որովհետև Հին Կտակարանի շատ մարգարեությունները կատարվեցան այս օրը, երբ որ քառասնօրյա մանուկ Հիսուս տաճար բերվեցավ, ընծայվեցավ և իրենց ժամանակի օրենքի համաձայն պետք եղած արարողությունը կատարվեցավ: Այդ միջոցին տաճարին մեջ երկու ծերունիներ, Ս. Հոգով լցված և Աստծո արքայությանը սպասող, մարգարեացան, ըսին, որ այս մանուկն է մեսիան, այս է մեր սպասած Տերը և Փրկիչը: Չհասկցավ ժողովուրդը, Մարիամը և Հովսեփն ալ շատ չհասկցան եղածը, սակայն Մարիամը այս բոլորը իր սրտին մեջ պահեց և հետո Ղուկաս Ավետարանիչն պատմեց, և մենք այսօր տեղյակ կդառնանք, որ քառասնօրյա ընծայումին Տերը իրականացրեց մարգարեությունները Իր մասին:

Այս տոնին մեջ շատ իմաստներ կան: Ինձ համար անկարելի է բոլորին մեկ առ մեկ անդրադառնալ, սակայն մի քանի կարևոր խորհրդանիշերու վրա կուզեմ ծանրանալ: Անոնք կարևոր են, պետք չէ արտոնենք, որ այս օրվան նշանակությունը սահի և երթա: Հիսուսի ընծայումը կվերաբերվի բոլոր ժամանակներուն, նաև այժմ, երբ որ մանուկ մը կծնվի, երբ որ հայրը, մայրը այդ մանուկը գրկեն, կհասկնան, որ հրաշք մը պատահած է, չկար այս մարդ էակը տասը ամիս առաջ և հիմա կա, իրենց պես մեկը, անձ՝ միկրոքոսմոս մը, Աստծո նմանությամբ արարած, հրաշք, հրաշք մը: Եվ իրենք գիտեին, որ այս մանկան տերը իրենք չեն, հետևաբար կուզեն Աստծուն շնորհակալություն հայտնել և նվեր մը տալ անոր համար:

Հին Կտակարանի մեջ, սիրելիներ, այս ընծայումը օրենքով սահմանված է և Աստված այդ օրենքով հրեա ժողովուրդին և նաև մեզի շատ հստակ գիծերով կսորվեցնե, որ «մանուկները ձեզի չեն պատկանի, մանուկները Իմինս են»: Երբեմն կհարցնեն, ինչ կմտածեք ձեր մանուկներու համար, մեր ժողովուրդեն շատերը կպատասխանեն՝ Աստծու նվերն է: Չէ՛, սխալ է, մարդ մարդու համար նվեր չի ըլլար, մեր մանուկները Աստուծմե մեզի տրված պարտք մըն են, ավանդ մըն են:

Աստված կուտա և հետո պիտի ակնկալի ձեզմե, որպեսզի այդ մանուկը լավագույն կերպով մեծցնեք և Աստուծո ճամփաներու մեջ կրթեք, որպեսզի այդ մանուկը այս աշխարհեն դեպ Աստուծո արքայություն անվտանգ առաջանա: Անոր համար Հին Կտակարանի մեջ Աստված օրենք դրած էր, այն մանուկը, որ առաջին անգամ կծնի, անդրանիկը, պետք է քահանային բերեին, քահանային մատուցանեին այդ

մանուկը: Քահանան պետք է առներ այդ մանուկը, որ Աստուծո կպատկանի, և անոր ծնողները մանուկը ետ առնելու համար պետք է զոհ մատուցանեին՝ գառնուկ մը կամ եթե աղքատ են, զույգ մը տատրակ: Եվ հինգ շեքիլ դրամ պետք է վճարեին տաճարի գանձանակին և ետ առնեին այդ մանուկը: Ուրեմն այս բոլորը մեզի կսորվեցնե, որ ինչպես Մարիամը և Հովսեփը Հիսուսը տաճարին նվիրեցին, այդպես ալ մենք մեր զավակները պետք է նվիրենք Աստծուն: Շատ քիչ մարդիկ կան, որ իրենց զավակները չեն սիրեր, մնացյալ բոլոր մարդիկ կսիրեն իրենց զավակները և իրենց լավագույնը տալ կցանկանան անոնց:

Վստահ եմ, որ դուք ալ ամեն առիթով ձեր զավակներուն նվերներ տալիս եք: Ինչ նվեր պիտի տաք՝ լավագույն հագո՞ւստը, արտոնված չէ, լավագույն ճա՞շը, արտոնված չէ, եթե նախ և առաջ անոր մանկան Սուրբ Գիրք մը չեք նվիրած: Եթե անոր աղոթել չեք սորվեցուցած, շատ կզղջաք: Պետք է ձեր մանուկներուն Աստված տաք նաև, աղոթք տաք, արտոնեք, որ Սուրբ Հոգին բուն դնե այդ մանկան մեջ, այդ մանուկը քրիստոնյա ըլլա: Եթե այս չեք ըներ ձեր այդ սիրած արարածին, էակին, ամենամեծ չարությունը պիտի ընեք, անոր հավիտենական կյանքի ընթացքը պիտի խափանեք: Աստված գիտե, եթե դուք չեք ըներ այդ բանը, երբ պիտի գտնե այդ մանուկը ճշմարտությունը, պիտի կարողանա՞ գտնել:

Հիսուս տաճար ընծայվեցավ: Ի՞նչ էր այդ տաճարը: Այդ տաճարը Սողոմոնի կողմեն շինված էր մեզմե երեք հազար տարիներ առաջ: Շատ կարևոր տաճար մըն էր: Հրեաները շատ սինագոգներ ունեին, բայց մեկ հատ տաճար ունեին, որ կրնային զոհ մատուցանել և իրենց մեղքերուն քավություն ստանալ: Այդ տաճարը հինգ հարյուր ութսունյոթը թվին բաբելոնացիներու կողմեն քարուքանդ եղավ, կործանվեցավ Երուսաղեմի հետ միասին: Եվ հրեաները աքսոր տարվեցան յոթանասուն տարի: Երբ որ վերադարձան, Երուսաղեմը շինեցին և տաճարը վերականգնեցին:

Հետևաբար այն տաճարը, որին Հիսուս մատուցվեցավ, երկրորդ տաճարն էր և առաջինեն մի քիչ անշուք էր: Հրեաները իրենց լավագույնը ըրած էին այս տաճարի համար և երեսը ոսկիով և արծաթով պատած էին: Երբ որ արևը կծագեր, կշողար ադամանդի պես: Շատ ջահեր ունեին, բայց բան մը պակաս էր այդ տաճարին մեջ, յոթ հազար քահանա կծառայեր այդ տաճարին, բայց բան մը պակաս էր, և իրենք լավ գիտեին՝ ինչը պակաս է:

Առաջին տաճարը երբ որ քանդվեցավ հրեաներու մեղքի պատճառով, սրբություն սրբոց կոչված վայրի մեջ գտնվող ուխտի տապանակը կորսված էր, որ կպարունակեր Աստուծո ներկայությունը, ոսկիով պատված, մեջը Ահարոնի գավազանը, երկինքեն իջած մանանան և Աստուծո մատով գրված ուխտի տախտակները կային, տասնաբանյայի օրենքը, և այդ կորած էր:

Երկրորդ տաճարին մեջ չկար անիկա, կուզեին գտնել այն և դնել իր տեղը: Հրեաները կրնային այն շինել, բայց չուզեցին կեղծել ատիկա: Աղոթեցին Աստծուն, որ տեղը հայտնե, հրեաները աղոթեցին, որ գտնեն այդ տապանը, տեղը դնեն, բայց Աստված չէր ըսեր, թե ուր է այդ տապանակը: Ճիշտ հակառակը, ուրիշ բան մը կըսեր, կըսեր, որ հոգ մի ընեք, երկրորդ տաճարը առաջինեն ավելի փառավոր պիտի ըլլա, ո-

րովհետև Տերը ինքը պիտի գա, Տերը հանկարծակի պիտի գա և պիտի այցելե այս տաճարը: Ուրեմն, մեսիական մարգարեություններու այս ոսկի շղթան սկսավ: Տերը պիտի գա, Փրկիչ պիտի ըլլա, ոչ միայն Իսրայելի, այլ նաև բոլոր ժողովուրդներու համար:

Հետևաբար, մարդիկ կսպասեին այս մեսիայի հանկարծ գալստյանը, բայց ով կրնար երևակայել, որ մեսիան, Փրկիչը մանուկ ըլլալով պիտի գա: Իրենք երկինքեն իջնելիք մեսիա մը կակնկալեին: Ինչպե՞ս կրնային ճանչնալ մանուկ մեսիա մը, մանուկի մեջ թաքնված Աստված մը: Ասիկա եղավ քրիստոնեության մեծագույն հայտնությունը: Քրիստոնեությունը, որ սերմին մեջ հսկա կաղնի մը կտեսնե: Ուրեմն Սուրբ Հոգիով լեցվողները միայն կրնան տեսնել մանուկին մեջ Աստված, և այդպես եղավ: Սիմեոնը և Աննա մարգարեական հոգիով լեցված ճանչցան Ան:

Տաճարը շատ կարևոր խորհուրդ ունի Հին Կտակարանին մեջ: Նոր Կտակարանին մեջ ալ շատ կարևոր է, որովհետև Նոր Կտակարանը այդ տաճարը իր ճիշտ, բուն տեղը կդնե: Պողոս առաքյալը կըսե, որ դուք եք Աստուծո տաճարը, տաճարը դուք եք, անձեռակերտ, Աստծու կողմե շինված, տասը հազար տրիլիոն բջիջներով կազմված, մեծագույն հրաշքը տիեզերքի: Դուն ես այդ տաճարը և այդ տաճարը պակասավոր է, հրեաներու այդ երկրորդ տաճարին պես պակասավոր, եթե Տերը չկա քու մեջդ, եթե Տերը չէ եկած քու մեջդ: Տեր Հիսուս կըսե, դռան առջև կկենամ և կզարնեմ քու տաճարիդ դուռը, եթե մեկը բանա, ներս պիտի մտնեմ և անոր հետ միասին գիշերային ընթրիք պիտի ունենամ:

Մենք կենդանի Աստուծո կենդանի տաճարներ ենք և առանց Աստուծո, առանց հավատքի պակասավոր ենք մենք: Երբ որ ներս կմտնինք, կմտնինք մոմ կառնինք, կառնինք անկախ նրանից, թե կըլլա փոքր կամ մեծ, մեղրամոմեն շինված, փառավոր, թե փոքր և աննշան: Այդ մոմը պակասավոր է, մինչև որ բոցը բռնկե անոր: Երբ այդ բոցը գա և անոր միանա, միայն այն ատեն ճշմարիտ մոմ կդառնա: Մարդը մարդ չէ, խելացի անասուն է միայն, մինչև Աստված, Աստուծո Հոգին անոր մեջ չմտնե, այն ատեն մարդը իր փառավոր վիճակը կստանա, այն ատեն Աստուծո նմանությունը և պատկերը կկատարելագործվի անոր մեջ: Միշտ պակաս բան մը պիտի ունենաս, բայց երբ որ Աստված գա հոն, երբ որ հավատքիդ լույսը թարմ է, այն ատեն դուն ալ կզգաս, որ ապրել սկսար ճիշտ այն պահուն, երբ որ Աստուծո հոգին քու մեջդ է:

Սիմեոն ծերունին երբ որ գրկեց Հիսուսը, աղոթեց Աստծուն, ըսավ, որ ով Տեր, համաձայն Քու խոստումիդ արձակե զիս: Այլևս կուզեր ուրիշներու համար այդ ակնկալված, մարգարեացված փրկիչը տեսնել և մինչև անոր գալուստը անհանգիստ էր: Ինքը փրկված էր, բայց ուրիշներու փրկությունը տեսնել կուզեր: Ինչ փառավոր մարդ, **Ահա մարդը, որ ոչ միայն իր փրկությունը կուզե, այլև ուրիշներուն փրկությունը նույնպես**: Կկարծեիք, որ մենք քրիստոնյա կրնայի՞նք ըլլալ, եթե Գրիգոր Լուսավորիչը Կեսարիո մեջ նստեր և ըսեր, «Ես ամուսնացյալ եմ, երկու զավակներ էլ ունիմ, և նաև լավ գործ, թող մնամ հոս: Եթե մնար, կփրկվեր Գրիգոր Լուսավորիչ հոն, հանգիստ կմեռներ, բայց չընտրեց: Գիտեր, որ իր ժողովուրդը խավարի մեջ է, չուզեց այդ դրախտը:

Տասնիններորդ դարում, երբ որ բողոքական շարժումը սկսեցավ, բողոքական պատվելի մը հայ եպիսոպոսին կուգա, կըսե, որ նայեք ձեր եկեղեցին հինցած է, շիջած է: Դուք պատկերներուն կպաշտեք, մեռելներուն կաղոթեք, Պատարագ կընեք և այլն: Մենք ենք ճշմարտության տեր, փրկված ենք: Մենք դրախտ պիտի երթանք: Չե՞ս ուզեր մեզի հետ դրախտ երթալ: Եվ եպիսկոպոսը կըսե, որ չէ, չեմ ուզեր: Ինչու կըսե պատվելին, որովհետև, կըսե քահանան, «ես կնախընտրեմ իմ ժողովուրդով դժոխք երթալ, քան թե քեզի հետ դրախտ: Եթե, կըսե, Գրիգոր Լուսավորիչները, Նարեկացիները, Շնորհալիները դժոխք պիտի երթան և իմ հազար բյուր նահատակներս դժոխք պիտի երթան, ես անոնց հետ դժոխք պիտի երթամ, քան թե քեզի հետ դրախտ երթամ»: Այս է պատասխանը և այս օրհնյալ մարդոց մենք կպարտինք ինչ որ այս աշխարհին մեջ գեղեցիկ է: Եվ դժոխքը լեցուն է, սիրելիներ, միայն իրենց փրկությունը ուզող մարդոցով, կուզեն անոնք առանձին փրկվիլ: Անոնք կկողոպտեն մեզի, անոնք մեր դրամը մեր գրպանեն առնել կուզեն և կուզեն, որ միայն իրենք միլիոնատեր ըլլան:

Անոնք են, որ ժողովուրդներու վրա խաղեր կխաղան, որպեսզի իրենց անունները մեծնան, անոնք դրախտ կուզեն միայն իրենց համար: Ոչ մեկ հոգի պիտի ըլլա Աստծո դրախտին մեջ այդպես: Միայն անոնք, որ միայն իրենց փրկությունը չեն ուզեր, ուրիշներու փրկությունը կուզեն, ուրիշ ազգի փրկությունը կուզեն, մարդկության փրկությունը կուզեն: Աղվոր ծառ մը տնկել կուզեն ուրիշին համար, որպեսզի պտուղը գալիք սերունդները ճաշակեն: Այդպես էր Սիմեոն ծերունին:

Այս տոնը լույսի տոն է, Աստուծմե իջած լույսի տոն է: Նորապսակներ կուգան, մանուկներ կուգան, ընտանիքներ կուգան և լավ կընեն: Բնազդով կուգան և գիտեն, որ իրենց կյանքի մեջ բան մը պակաս է, շիտակ կընեն, բան մը պակաս է: Պակասը լույսն է, Աստուծո լույսն է, այդ լույսը առեք ձեր տներում: Սուրբ Գիրքը հստակ կըսե, եթե տունը Տերը չշինե, շինարարները իզուր կաշխատին: Ուրեմն եկեք մեր տաճարին մեջ Աստված ընդունինք, մեր ընտանիքներուն մեջ Աստված ընդունինք, մեր հայրենիքին մեջ Աստված ընդունինք և այդ լույսով լուսավորվինք:

Տերը օրհնե ձեզի բոլորդ. Ամեն:

Տ. ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 փետրվարի 2007 թ.)

«Իմ հայրենեաց հոգի՛ Վարդան,
Հոգիս հոգւոյդ լինի դուրբան»:

Սիրելիներ,

Ահավասիկ, այսպիսի բառերով մեր ժողովուրդն իր հիացմունքն ու իր զգացմունքներն է արտահայտել Սուրբ Վարդան զորավարի և 1036 նահատակների հանդեպ: Հայոց պատմությունը հարուստ է անթիվ-անհամար պատերազմներով և ճակատամարտերով, սակայն Ավարայրի ճակատամարտն իր ուրույն տեղն ունի ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ Հայ Եկեղեցու պատմության մեջ՝ այն պարզ պատճառով, որ սոսկ հերթական մի ճակատամարտ չէր: Պարսից զորքի դեմ հայկական բանակն առաջին անգամ չէր, որ պատերազմում էր, սակայն այս մեկը միանգամայն տարբեր էր: Այդ իսկ պատճառով 451 թվականը գալիս է գումարվելու հայ ժողովրդի համար նվիրական այնպիսի թվականներին, ինչպիսիք են 301 և 405 թվականները: Հազկերտ Բ պարսից արքան վաղուց ի վեր ծրագրել էր հայ ժողովրդի կրոնափոխությունը՝ զրադաշտականության և կրակապաշտության ընդունումը, քանզի լավ էր հասկացել, որ ազգը պառակտելու, ազգը սպանելու համար բավական չէ հողին տիրանալը, որը առանց այն էլ Հայաստանի բաժանումից հետո ըստ ամենայնի արդեն իրականացված էր:

Անհրաժեշտ էր հասնել արմատներին, գնալ մինչև ամենասուրբ ու ամենանվիրական ակունքը, անհրաժեշտ էր խոցել ժողովրդի սիրտը: Իսկ ամեն ժողովրդի սիրտ ու նամանավանդ հայ ժողովրդի սիրտն իր հավատքն է: Պատմաբանները և աստվածաբանները զարմանքով են արձանագրում այն իրողությունը, որ Հայաստանում քրիստոնեության հաստատումից ընդամենը 150 տարի անց հնարավոր էր այդպիսի հակազդեցության ալիք, երբ ողջ ժողովուրդը՝ իր բոլոր խավերով՝ մեծազնիվ և ռամիկ, Եկեղեցի և պետություն, այր և կին, մեծ ու մանուկ դուրս էին եկել ընդդեմ թշնամու:

Համաժողովրդական այս ապստամբությունը գլխավորում էր Վարդան Մամիկոնյանը, ով սերում էր Սահակ Պարթևի ազնվական ընտանիքից և Համազասպ քաջ Մամիկոնյանի որդին էր: Նա էր, որ 449 թվականին, երբ Տիզբոնում բոլոր նախարարները ուրացան, Պողոս առաքյալի օրինակին հետևելով հայտարարեց, թե՝ մենք մեր հավատքը երբեք չենք ուրանա, և ոչ ոք չի կարող մեզ բաժանել մեր հավատքից, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը և ո՛չ մեկ այլ բան, քանզի մեր ուխտը Աստծու հետ հավիտենական է:

Հայ ժողովրդի նվիրական այս պայքարը, վասն հայրենյաց և վասն հավատո, միայն մեր ժողովրդին հատուկ չէ: Աստվածաշունչ մատյանում ևս հանդիպում ենք նման մի օրինակի՝ Մակաբայեցիների գլխավորած հրեա ժողովրդի ազատագրական պայքարին՝ Մաթուսաղա Մակաբայեցու օրոք, երբ Ասորեստանի Անտիոքոս թագավորը, պղծելով Երուսաղեմի Տաճարը, այնտեղ կուռքեր է կանգնեցնում և հրեա ժողովրդին պարտադրում պաշտել և զոհ մատուցել այդ կուռքերին:

451 թվականի մայիսի 26-ը մնայուն կերպով արմատավորվեց և իր տեղը գրավեց մեր ժողովրդի պատմության պանծալի էջերի շարքում: Այդ օրը հայ ժողովուրդը պարսից զորքի դեմ ելավ առաջնորդությամբ հայ հոգևորականության՝ գլխավորությամբ կաթողիկոսական տեղապահի՝ Ղևոնդ Երեցի, սրբազան հայրերի և ողջ արքունիքի ու պետական ավագանու: Վարդանանք թեև թվով սակավ, սակայն գիտեին՝ վասն ինչի էին ելնում, որովհետև գիտեին պատճառը, որի համար և պատրաստ էին իրենց կյանքը զոհելու:

Այսօր եթե նման խնդիր ծագի, հազար ու մի քաղաքական պատճառներ կգտնենք, հազար ու մի նրբություններ, հանգամանքներ, այլևայլություններ, միայն թե մեր սրտի ձայնը չլսենք: Վարդանանք ևս կարող էին, Տիզբոնում առերես ուրանալուց հետո, շարունակել նույն քաղաքականությունը՝ այն պատճառաբանելով խաղաղության անհրաժեշտությամբ: Սակայն այդուհանդերձ նախընտրեցին պատերազմելու և իրենց սուրբ արյունը հեղելու ի խնդիր մեր ազգի և Եկեղեցու: Ինչո՞վ էր պայմանավորվում այսօրինակ նվիրումը: Ավարայրի ճակատամարտի ականատես Եղիշեն ասում է, որ քրիստոնեությունը մեզ համար մաշկի գույն է, այսինքն հնարավոր չէ ուրանալ սեփական ինքնությունը: Մենք չենք կարող ուրանալ մեր լինելությունը, իսկ մեր լինելությունը քրիստոնեության դրոշմն է կրում: Շատ գաղափարներ կան, սիրելիներ, որոնց համար արժե կյանք տալ և առանց որոնց չարժե ապրել նույնիսկ մեկ վայրկյան: Այդպիսի գաղափարներից մեկն է նաև հավատքը, որի վրա ամուր հաստատված է մեր ժողովուրդը, և որի համար Վարդանանց քաջերն իրենց կյանքը տվեցին:

Պարսից պատմագրությունը նույնիսկ չի հիշատակում, որ Ավարայրի նման ճակատամարտ է տեղի ունեցել: Իրենց պատերազմների անսահման թվի մեջ Ավարայրը սոսկ հերթական մի ճակատամարտ էր թերևս: Հակառակ այս ամենի, մենք հիշում ենք այս հերոսամարտի օրը, ամեն անգամ այն տոնախմբում ենք և պիտի տոնախմբենք, քանի դեռ երկրագնդի վրա մեկ հայ կա, որովհետև սա մեր ինքնության և լինելության տոնն է: Շատերը կարող են ասել. բայց ի՞նչ կարիք կար, չէ՛ որ Եկեղեցին ուրիշ բան է սովորեցնում, չէ՛ որ Եկեղեցին սովորեցնում է խոնարհություն, հեզություն, չէ՞ որ հնազանդություն ենք քարոզում:

Հավատացեք, եթե հայ ժողովուրդը չլինի, եթե հայ քրիստոնյա տեսակը չլինի, ո՞վ է ի վերջո պաշտելու Հիսուսին, եթե մենք չլինենք, եթե այս հավատացյալ հոտը չլինի: Ճիշտ է, որ Եկեղեցին մի ամրոց է, մի սրբություն, որը միշտ պաշտպանում է մեզ, երբ մենք դրա կարիքն ունենք, սակայն ճիշտ է նաև, որ հենց նույն Եկեղեցին իր դժվար պահերին մեր օգնության կարիքն ունի: Ինչպես ծնողը խնամում է մեզ, այնպես էլ

մենք ենք պարտավոր խնամել մեր ծնողին: Հետևաբար, սիրելիներ, մեր կյանքն ապրենք այն խորհուրդն ու գիտակցությունն ունենալով, որ չգիտակցված մահը սոսկ մահ է և ոչնչություն, իսկ գիտակցված մահը անմահություն է: Մահվանը նախորդող հիվանդությունները, դժվարություններն ու տառապանքը դարձյալ կյանք են և ոչ թե մահ: Մեր կյանքի ընթացքում մենք կարող ենք հազար անգամ բարոյապես մահանալ, բայց, սիրելիներ, մենք պիտի միշտ հիշենք և իմանանք. ինչպե՞ս և ինչի՞ համար ենք մահանում:

Փառք Աստծո, այսօր մենք նման խնդիր չունենք, որ մեր կյանքը տանք մեր հավատքի և մեր հայրենիքի համար: Խաղաղություն է, փառք Տիրոջ, բայց մահվան հավասար կարևոր է գիտակցել, թե ինչպես ենք ապրում: Մեր կյանքը մեր մահվան նույն արժեքն ունի, լի հույսով առ Տեր, լի հույսով առ ապագան: Սիրելիներ, այսօր, Ս. Պատարագից հետո, հավաքվել ենք այստեղ, որպեսզի կատարենք նաև Հայրապետական մաղթանք, նշելու համար անվանակոչության տոնը մեր սիրելի Վեհափառ Հայրապետի և բոլոր նրանց, ովքեր կրում են Վարդանանց հերոսների անունները՝ Գարեգին, Խորեն, Վազգեն և ուրիշ անուններ: Մեր այսօրվա մաղթանքն ու աղոթքն է, որպեսզի սուրբ զորավար Վարդանը և իր նահատակները բարեխոս լինեն Միածին Որդուն, մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որպեսզի բոլոր նրանք, ովքեր կրում են Վարդանանց հերոսամարտի քաջ նահատակների անունները, ապրեն իրենց անվան շնորհներով, և որպեսզի նվիրական այս հոգին երբեք չնվազի մեր ազգի մեջ, որպեսզի նոր Վարդաններ և նոր սուրբ քաջեր միշտ ելնեն մեր ժողովրդի միջից այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 փետրվարի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Յորում ցնծայր զուարճանայր անտխրական խնդութեամբ»:
(Շարական)

Այսօր, սիրելի հավատացյալներ, Բուն Բարեկենդանն է: Մեր Եկեղեցին Բարեկենդանի տոներ է սահմանել շաբաթապահքերին նախորդող կիրակիներին: Բուն Բարեկենդանը ամենակարևոր Բարեկենդանն է, որովհետև այն նախորդում է Մեծ Պահքին:

Այս քարոզի համար որպես բնաբան ընտրված տողերը առնված են Բուն Բարեկենդանին նվիրված շարականի տողերից, որոնցում սրբազան շարականագիրը կըսե Ադամի համար, թե դրախտում «ցնծայր զուարճանայր անտխրական խնդութեամբ»: Այսինքն՝ դրախտի մեջ Ադամը և Եվան ցնծում էին խնդությամբ, տխրություն չճանաչող խնդությամբ:

Աստված Արարչագործության վեցերորդ օրը ստեղծեց մարդուն և տվեց Իր շունչից շունչ, Իր դիմագծից՝ նմանություն: Այսինքն՝ Իր հոգուց հոգի տվեց մարդուն: Ստեղծագործության ավարտին Աստված դրախտի մեջ ապրեցուց Ադամը և Եվան՝ նրանց ասելով, թե ահավասիկ ձեզ հրաշալի պայմաններ ապրելու համար, վայելելու համար ամեն ինչ, որ ստեղծված է վեց օրերի ընթացքում: Պարտեզի մեջ ցույց տվեց այն ծառը՝ բարու և չարի գիտության ծառը, և ասաց, թե այս ծառի պտղից մի ուտեք. այն օրը որ կուտեք, կորստյան կմատնվիք: Այսպիսով Ադամը և Եվան և մարդկային ցեղը երբեք չպիտի բնաջնջվեին, երբեք չպիտի կորսվեին, այսինքն՝ մահը չպիտի ճանաչեին, եթե չճաշակեին այդ ծառից, սակայն մի օր օձը մոտեցավ Եվային ու խաբեց՝ ասելով. «Գիտեք, ինչու Աստված արգելեց այս ծառի պտղից ձեզի ուտել. այն պահին, երբ ուտեք, դուք էլ աստվածներ կդառնաք»: Եվան խաբվեց, կերավ, հետո Ադամին էլ համոզեց, որ ուտի այդ պտղից: Եվ երբ Աստված տեսնելով, որ Ադամը և Եվան չեն երևում, ձայն տվեց. «Ադամ, Ադամ, ո՞ւր ես»: Եվ Ադամը որովհետև այդ ծառի պտուղը կերել էր, ճանաչելով մեղանչական իր մերկությունը՝ ասաց. «Մերկ ենք և ամաչում ենք Քո առաջ ելնելուց»: «Արդյոք այդ ծառի պտղի՞ց կերար»,- հարց տվեց Աստված: Ադամը արդարանալ փորձեց և ասաց. «Այն կինը, որ ինձի տվիր՝ Եվան, անիկա ճաշակել էր և պատճառը եղավ, որ ես էլ ճաշակեմ»:

Հին մարդը՝ Ադամը, ահա այսպես կորստյան մատնվեց և դրախտից արտաքսվեց և աշխարհի մեջ իր ճակատագիրը այդ օրից մինչև այսօր փնտրում է, փորձում է այս կյանքը դրախտի կյանքի վերածել: Բայց զուր է փորձում, որովհետև նոր մարդը միայն կարող էր այս կյանքը դրախտային կյանքի վերածել, և այդ նոր մարդը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս էր:

Պողոս առաքյալ Կողոսացիներին ուղղված թղթում գրում է. «Եթե չնորոգվինք Հիսուս Քրիստոսով, կորստյան կմատնվինք հավետ»: Ո՞րն է Քրիստոսով նորոգությունը՝ ինչ որ Եկեղեցին այսօր ձեզ պատվիրում է, պահեցողության միջոցով, ապաշխարության միջոցով պիտի փորձեք ձեր մարմինը, ձեր հոգին սրբել, ձեր նկարագրի մեջ եղող սև բծերը մաքրել: Ինչպե՞ս կարելի է դա անել: Մի՞թե պահեցողությամբ, մի՞թե կենդանական որևէ կերակուր չուտելով է, որ մենք պետք է նոր մարդ դառնանք, Քրիստոսի հետևողներ դառնանք: Ո՛չ, նման պահեցողության նպատակը մեր նկարագրի մեջ զսպվածություն դնելն է, մեր կամքի ուժը զորացնելը, և պահքը պատճառ կդառնա միայն, որ մեր կամքի ուժը, զսպվածությունը կարողանանք սանձել: Իսկ մյուս կողմից այնպիսի մեղքեր կան աշխարհի վրա, դուք հավանաբար ինձանից ավելի լավ գիտեք՝ բամբասանքից սկսած, սպանությունից սկսած, ատելությունից սկսած, տարբեր մոլությունները, որոնք կուգան մեր վրա: Ահավոր բաներ են դրանք, որոնք մեր հոգին կսպանեն: Մի վախեցեք նրանցից, որոնք մարմինը կրնան սպանել, վախեցեք հատկապես նրանցից, այն բաներից, որոնք հոգին կարող են սպանել, պատվիրում է Տերը:

Քո հարևանը, քո ընկերը կամ եղբայրդ, կամ քույրդ, կամ մայրդ, կամ հայրդ պահքը եթե չի պահում, դու մի վշտանար դրա համար և ոչ էլ բամբասիր նրան, որովհետև Աստծո դատաստանի առջև ամեն մեկս առանձին է, որ պիտի ներկայանանք և պիտի դատվենք ըստ մեր կենցաղի, մեր կյանքի օրերի և ըստ մեր նկարագրի: Ինչպե՞ս կարելի է Հիսուսին նմանվել: Պողոս առաքյալ Սողոս էր և հալածող քրիստոնյաներին: Նա մի օր սինոդրեոնի որոշմամբ սենատի միջոցով ուղարկվեց Դամասկոս, որպեսզի քրիստոնյաներին հալածի և բանտարկի: Ճանապարհին հանկարծ նրան ճառագեց աստվածային լույսը: Հիսուս երևեցավ և ըսավ նրան. «Սողոս, ինչո՞ւ հալածում ես Ինձ»:

Սողոսը կուրացավ, ձիուց ընկավ: Եվ երբ Դամասկոս հասավ, այնտեղ Անանիա անունով մի քրիստոնյա նրա աչքերը բացեց, աղոթեց, և Սողոսը դարձավ ամենամեծ ջատագովը և քարոզիչը, քրիստոնեական Եկեղեցու հիմնադիրներից մեկը և այդպիսով իր կյանքը, ողջ էությունը նվիրեց քրիստոնեական քարոզչության և Աստծո փառքը քարոզելուն և քրիստոնեական Եկեղեցու սերմերը շաղ տալուն: Մի՞թե պարագան նույնը չէ Տրդատ Երրորդ Հայոց թագավորին:

Հայոց թագավորը հատուկ հրովարտակ արձակեց՝ ասելով, որ բոլոր քրիստոնյաներին պիտի հալածենք, և այդ հալածանքը հասավ մինչև Հռիփսիմյանց, Գայանյանց կույսերը, մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչը, որ ավելի քան 13 տարի Խոր Վիրապի գուբին մեջ բանտարկվեցավ՝ այնտեղ մահը ճաշակելու համար: Բայց ի՞նչ հրաշք. մեր կյանքում շատ հրաշքներ պատահում են, եթե ուշադիր լինենք: Ի՞նչ հրաշք, այդ գուբին մեջ չմահացավ Գրիգորը, այլ Աստուծո հրեշտակը պատվիրեց, որ Տրդատ թագավորը կարող է բուժվել միայն Ս. Գրիգորի աղոթքով, և այդպես էլ եղավ: Գուբից

հանեցին Գրիգորին, և եկավ Վաղարշապատ քաղաք, այս քաղաքը, և այստեղ բուժեց Տրդատ թագավորին: Տրդատը քրիստոնյա դարձավ: Աստվածային լույսը իջավ նրա հոգու մեջ, Եկեղեցին սրբացրեց նրան, որպես Սուրբ Տրդատ թագավոր Հայոց: Տեսեք, թե ինչ հրաշքներ են գործվում մեր կյանքի մեջ: Մենք էլ եթե կարողանանք մեր թերությունները, մեր սխալները ընդունել և ապաշխարության միջոցով դարձի գալ 40 օրերի ընթացքում, ապաշխարությամբ եթե անցկացնենք մեր կյանքը, մենք էլ կսրբվենք, հրաշքներ մեզ հետ էլ կպատահեն: Երբե՛ք չկասկածեք. ամեն մեկ անհատի կողքին մի բարի հրեշտակ է կանգնած: Խղճի խայթի միջոցով թելադրում է նրան, ինչը ճիշտ է անել, ինչը՝ սխալ, և մենք եկեք՝ լսենք մեր խղճի ձայնը և ապաշխարության այս շրջանին աղոթքով, երկյուղածությամբ, պահեցողությամբ, բարիք գործելով, չշնանալով, չմեղանչելով կարողանանք մաքրել մեր սիրտը, հոգին և այդպիսով արժանանանք աստվածային փառավոր հրաշքին:

Վաղվանից մեր Եկեղեցին սկսում է քառասնօրյա պահեցողությունը: Ով որ կարող է պահք պահել ոչ թե բժշկական և առողջապահական նպատակով, այլ անդրադառնալով, որ այս զոհողությունը անում է Աստծուն հաճելի դառնալու համար, նրա պահքն ընդունելի է:

Սիրելի հավատացյալներ, ձեր լեզուները պետք է զսպվեն և չարախոսություն, շատախոսություն, բամբասանք, հայհոյանք երբեք պետք չէ ձեր բերնից դուրս գա: Նաև նրանք ձեզանից, որոնք մոլություններ ունեն, այդ մոլություններից հեռու պետք է պահեն իրենք իրենց, որպեսզի մաքրեն իրենց մարմինը և հոգին: Մանչեստր քաղաքում իմ հովվությանս շրջանին մի եկեղեցի ունեինք՝ Սուրբ Երրորդություն եկեղեցի, և այնտեղ մի քահանա ունեինք՝ Տ. Աշոտ քահանա, լավ կրթված մարդ էր: Մեծ Պահքին հիսուն օրեր ծխելը թողնում էր, չէր ծխում, ասում էր, իմ զոհողությունս էլ Աստված այս ձևով ընդունի: Քու զոհողությունդ Աստված ինչպես պետք է ընդունի: Մտածեք և որոշեք:

Աստվածային օրհնությունը և քառասնօրյա պահեցողության շնորհները միշտ անսպառ կերպով մեզ տրվեն Ս. Հոգու միջոցով այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 փետրվարի 2007 թ.)

«Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա՛ ջնջելու, այլ՝ լրացնելու»:

(Մատթ. Ե 17)

Մեծի Պահոց մեր ապաշխարության և ինքնաքննության ընթացքին մեջ այսօր երկրորդ կիրակին է, որ մեր Եկեղեցին կոչել է Արտաքսման կիրակի: Մեր նախահայրերու դրախտեն վտարման պատմության մեջ մենք կոչված ենք մեր ապաշխարանքի ճիշտ ուղին գտնելու, հասկանալու, թե ինչո՞ւ ենք ապաշխարում, մանավանդ ի՞նչ պետք է անել, որպեսզի ապաշխարանքը իր լիարժեք իմաստն ստանա:

Իրոք, մեր Եկեղեցին Աստծո ընտանիքն է, ուր եկող ամեն մի հավատացյալ, իր փրկության հույսը իր հոգու պայծառության մեջ և հոգու կրթության մեջ տեսնելով, այդ փրկությունը, շնորհը կջանա իր առօրյա կյանքին մեջ իրագործել: Այդ իմաստով մեր եկեղեցին իր հավատացյալների հանդեպ ինչպիսի զգայուն վերաբերմունք է ցույց տալիս, երբ մեր ամբողջ ապաշխարության կյանքը փորձում է առաջնորդել միայն ու միայն Տիրոջ խոսքերով, Նրա պատվիրաններով և Նրա՝ մեզի տված շնորհներով: Որովհետև ոչ մեկ պատվիրան ինքնանպատակ չէ: Այդ պատվիրանները եղել են մի ուղի, որ մենք մեր Աստծո տունը գտնենք: Նրա շնորհքով առաջ գնանք, Նրա ուժը, Նրա իմաստությունը մեր մեջ հանգչի: Որովհետև, ինչպես ասում է մեր մեծ խորհող աստվածաբան Ս. Գրիգոր Տաթևացի վարդապետը, «Հավատով Աստված մեր մեջ կհանգչի, և մարդը դեպի Աստված կուղվի»:

Տեսնենք, թե այսօր մեր հայրերը ինչ են վերապահել, ինչ ավետարանական հատվածներ են մեր ուշադրությանը հրավիրում, որպեսզի մենք այդ ապաշխարության շրջանի հիմնական նպատակը իրագործենք: Ս. Ավետարանի ընթերցման պահուն Հիսուս՝ ամենամեծ ուսուցիչը Եկեղեցու, Որուն Վարդապետ անունն էլ կտանք, իբրև կրթիչ, դաստիարակիչ և ծնող ամենքիս՝ ասում է. «Մի՛ կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա՛ ջնջելու, այլ՝ լրացնելու»:

Մեր Տերը առաջին հերթին օրենքի կարևորության մասին է մեզ հետ խոսում շատ մտերմիկ շեշտով: Ինչո՞ւ: Շատ պարզ է: Հիմա, որ եկեղեցուց դուրս գաք, ի՞նչ փորձառության պիտի հանդիպեք: Այսօր մարդիկ օրենքը գործադրելու մասին չէ, որ մտածում են: Կարծեք՝ հերոս դառնալու համար պետք է օրենքին դեմ գնալ: Այդպես է մարդկային բնությունը: Ինչո՞ւ վտարվեցին մեր նախահայրերը: Աստված ամեն ինչ

տվեց նրանց, դրախտը տվեց, որուն կարոտը մենք ունենք հիմա: Մի օրենք սակայն դրեց, ասաց, որ բարվո և չարի իմացության ծառից մի կերեք: Մեր հայրերը հակառակ գնացին այդ միակ օրենքին: Օրենքը, ըստ Հիսուսի, Աստծո ընտանիքը, աշխարհը պահելու այն կանոնակարգումն է, որի մեջ բոլորս կարող ենք միասին գործակցել և իրար օգնելով ապրել: Երևակայեցեք, որ օրենքը չկա, ի՞նչ պիտի լինի մեր կյանքը՝ քաոս: Հիմա, քիչ ետք, տուն պիտի գնաք: Որևէ մեկ անցորդ, որևէ մեկ ավտոմեքենա օրենքը պահո՞ւմ է: Քիչ կմնա՝ մեզ տրորեն: Մենք չենք պահում նույնիսկ եկեղեցի իսկ գալու օրենքները, թե պետք է պատշաճ հագնվիլ, պետք է լուռ մնալ: Պահո՞ւմ ենք օրենքը: Ո՛չ, առաջին խախտողներն ենք բոլորս:

Մարդու բնության մեջ կա օրենքին չհնազանդվելը: Բայց մեր Տերը ասում է, որ օրենքը կարևոր է, որովհետև ինքնանպատակ չի: Օրենքի պատվիրանի միջոցով, որ Աստված տվել է, մենք մի կարևոր բան ենք անում՝ Աստծուն ենք ճանաչում: Առանց Նրա խոսքը լսելու, պատվիրանները լսելու մենք ինչպե՞ս Աստծուն պիտի հանդիպենք: Ամեն մեկ պատվիրանի միջոցավ դուք Աստծո ձայնն եք լսում, Աստծո պատկերն եք տեսնում, Աստծո հոգին եք ընկալում, Նրա շնորհքի, Նրա իմաստության մեջ եք լինում, և այդ իսկ պատճառավ Հիսուս ասում է. «Ես եկել եմ ոչ միայն օրենքը գործադրելու, այլ եկել եմ օրենքը կատարելագործելու, ամբողջացնելու»:

Մեր Եկեղեցու հավատացյալներին պարտավորությունը չէ միայն պահոց օրենքները գործադրել, այլ դրա իմաստը գիտնալով այդ օրենքը կատարելագործել: Իրավամբ հարց պիտի տաք, թե ինչպե՞ս ենք օրենքը կատարելագործում, ինչպե՞ս ենք օրենքը լրացնում: Հիմնական սկզբունքը կրկին մեր Տերը Ինքն է բացատրում՝ ասելով. «Արդ, դուք կատարյալ եղեք, ինչպես որ ձեր Երկնավոր Հայրը կատարյալ է»: Ի՞նչ պիտի հասկանանք այս խոսքերից, ի՞նչ պիտի անենք, որ Աստծու պես կատարյալ լինենք:

Մեր Տերը մեզ անուղղակիորեն հուշում է և թելադրում, որ մտածենք, թե երեխաները ինչպես են մեծանում և իմաստություն և փորձառություն ձեռք բերում: Մի պահ եթե այդ մասին խորհենք, պիտի տեսնենք, որ նրանք փորձում են նմանվել իրենց Հորը, մորը կամ դաստիարակին: Նրանց ասածներն ու արածներն են կրկնօրինակում: Իրենց ծնողաց և դաստիարակին սիրուց մղված լսում են նրանց խրատներին, հետևում թելադրված կենսառճին և շնորհալի, օգտակար և գիտակից քաղաքացիներ են դառնում:

Մեծահասակներս նույնը չե՞նք անում: Փորձում ենք նմանվել անվանի, հարուստ, ազդեցիկ և ղեկավար մեծ մարդկանց: Ավելի վատ, նույնիսկ փորձում ենք նմանվել հեռուստացույցի մեջ մեր տեսած կինոնկարների և սերիալների հերոսներին: Նրանց նման ենք քայլում, նրանց նման ենք խոսում, նրանց նման ենք հագնվում և նրանց վարքն ենք ընդօրինակում:

Նմանվելու ցանկությունը կա, բայց արդյո՞ք միշտ դեպի բարին և լավն ենք ուղղորդվում: Ո՛չ երբեք: Մենք աշխարհով մեկ դարձել ենք նույն տիպի մարդեր: Մեկը մի բան արեց, մենք ալ պիտի նույնը անենք: Մոռանում ենք ամեն օր, որ ամեն րոպե, ամեն վայրկյան Աստված ինչ է անում, և չենք նմանվում մեր Աստծուն: Պատվիրանի

միջոցով, Աստծու դրած օրենքների հնազանդության միջոցով մենք նմանվում ենք Նրան:

Եկեք՝ հարց տանք: Ինչպե՞ս պատահեց, որ աղքատ, մուրացիկ, գերի, ստրուկ առաջին դարու քրիստոնյաները Հռոմեական կայսրությունը նվաճեցին: Քրիստոնյա ստրուկը անում էր իր գործը, բայց այդ գործը անում էր իր երկնավոր Տիրոջ հանդեպ հավատարմությամբ և այդու իսկ տարբերվում էր մյուս ստրուկներից: Հռոմեացիները, ազնվականները կանչում էին և հարց տալիս, թե դու ո՞վ ես, ինչո՞ւ գործդ այլոց պես չես անում: Այդ ստրուկները նաև զարգացած մարդիկ էին և դաստիարակում էին ազնվականների երեխաներին: Տանուտերերն ասում էին, թե ուրիշ ուսուցիչ բերել ենք մեր զավակներին կրթելու, բայց դուք տարբեր եք: Քրիստոնյաները ասում էին. մեր Տերը այսպես է դաստիարակել մեզ, Իր հրամանը այս է, հնազանդվիր տիրոջդ, հնազանդվիր օրենքին: Ոչ թե մի գործ անել ու անցնել, այլ ամբողջ սրտով **աստվածահաճո** գործ անել: Եվ այսպես Աստծո գործերով ամբողջ Հռոմեական կայսրության ուժին հաղթեցին:

Իրավամբ մեր հոգևոր ուժին աղբյուրը աստվածանմանությունն է և ապաշխարանքը՝ Աստվածճանաչողություն է: Եթե կուզեք մեր Տերը լավ ճանչնալ, եթե կուզեք Իրեն նմանվելու ճիգը հաջողցնել, այսօր մեր Եկեղեցու թելադրանքն է՝ Ավետարան կարդալ, մեր Տիրոջ խոսքը լսել, ճիշտ հասկանալ այդ խոսքերը, որպեսզի մեր Աստծուն հարազատ պատկերը կարողանանք լիարժեք ցոլացնել:

Մեր Եկեղեցու զավակները պիտի նկատեն, որ պահոց օրերին մեր հավաքական աղոթքների ընթացքին Աստվածաշնչական ընթերցումներ շատ ենք կատարում՝ երբեմն երկար և ձանձրացուցիչ շատերի համար: Բայց Եկեղեցին գիտի, որ այս օրերին մեր ժողովուրդը Աստվածաշունչ չի կարդում: Առանց Աստվածաշնչի չկա Աստվածճանաչողություն: Աստվածաշունչը պետք է մեր բարձի գիրքը ընել, պետք է մեր գրասեղանի գիրքը լինի, մեր աշխատանքի ուղեցույցը, որովհետև մենք ի վերջո Ավետարանի քարոզիչներն ենք և Ավետարանի կյանքը տարածողները:

Ասվածը ընդհանրացնելու համար, վերադառնանք այսօր եկեղեցում մեր կատարած աղոթքներին:

Շարականագիր վարդապետը ասում է. «Սուրբ պահքը Աստծու օրենքն է», և տեսանք, որ մեր նախահայրերը մի օրենք որ չպահեցին, ինչ եղավ դրա հետևանքը: Մենք վտարվեցինք դրախտից, ինչպես շարականագիրն է ասում. «Սուրբ պահքի օրենքը նախապես, սկզբնապես, դրախտի մեջ անգամ Դու դրիր, Տեր, և ավանդեցիր մեր նախահայրերին: Արդ, նրանք երբ չպահեցին, գացին արգելված՝ մահաբեր պտուղ ճաշակեցին, դրա համար մահվան դառնությունը ճաշակեցին: Ուստի, Տեր, Քեզանից մի խնդրանք ունենք կարևոր, Դուն պատվիրաններուդ քաղցր լինելը մեզի սովորեցրու»:

Երկրորդ կարևոր աղոթքը, որ շարականների երգեցողությամբ արեցինք, հետևյալն է: Ճիշտ է, մեր նախահայրերը իրենց անհնազանդության հետևանքով արտաքսվեցին դրախտից, բայց Դու, Ով Տեր, չես ուզում մեզ դրախտից արտաքսել: Դրա համար Քո սիրով, Քո պատվիրաններով մեզ խրատեցիր, մեզ իմաստություն շնորհեցիր,

որ Դրախտ վերադարձի ապաշխարության ճանապարհը գտնենք: Մեր նախահայրերը օձին լսեցին և նրա մահաբեր թույնը ճաշակեցին: Իսկ մեզ Դու տվեցիր անմահական կենաց ճաշակը և նրանով մեզ փրկության առիթ շնորհեցիր:

Իրոք, այս է Եկեղեցու իսկական առաքելությունը: Դա այն անլռելի զանգակատունն է, որ մարդկանց ավետում է՝ Աստված չի ցանկանում որևէ մեկին արտաքսել դրախտից: Նա ցանկանում է անմահական դրախտի կարոտը արթնացնել յուրաքանչյուր մարդու հոգվույն և սրտին մեջ, որպեսզի նրան հնարավորություն տա վերադառնալու իր Հոր տունը:

Իբրև Աստծո տուն այսօր մեր ժողովուրդը պիտի հավատա, որ Աստծո պատվիրանները զրկանք չեն, մեզ աղքատացնող և նվաստացնող դրույթներ չեն: Պահքը այս կամ այն կերակուրը ուտելը չի, այլ Աստծո հնազանդ լինելու քաղցրությունը վայելելն է, Իր մեջ լինելու, Նրա հետ ապրելու մեր ճիգին արտահայտությունն է:

Մեր Եկեղեցին ցանկանում է, որ մենք Աստծո կարոտով սնվենք, որպեսզի մի օր Իր տունը վերադառնալու առիթն ունենանք և Նրա քաղցրությունը ճաշակելու, Նրա հրաշք կյանքը ժառանգելու իրավունքը ձեռք բերենք:

Անառակ որդին ինչպե՞ս փրկվեց: Կարոտեց իր Հոր տունը, կարոտեց իր հորը, կարոտեց իր հալալ, արդար աշխատանքը: Այսքան անօրինականությանց մեջ, այսքան օրենքների խախտումից ինչ ենք մենք շահում, պատվական ժողովուրդ հայոց: Այսօր Աստծո և մեր Եկեղեցու կոչն է՝ օրենքի քաղցրությունը զգալ, կարոտել Նրան, մեր Տերը լավ ճանաչելով, Նրա կյանքը տարածել այս աշխարհում:

Օրենքը պահեք, որովհետև Եկեղեցվո օրենքները դառը չեն, ինչպես ասում է շարականագիրը՝ Քաղցր են նրանք: Այդ քաղցրությունը այսօր Եկեղեցին ցանկանում է տալ ձեզ, որպեսզի կատարյալ, արդար Աստուծո բարի զավակները լինեք այժմ և հավիտյանս. Ամեն:

Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(4 մարտի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի եղբայրներ և քույրեր.

Իմ այսօրվա խոսքը կլինի կարճ ի կարճո, և եթե այդ խոսքից գեթ մեկը ձեզանից մեկի սրտում ծլարձակի և պտուղ տա, ես ինձ կզգամ վարձատրված և, հավատացեք, իմ հոգևոր եղբայրներն էլ ինձ կդառնան խնդակից:

Մարդկության պատմությունը տիեզերքի մեջ հաստատված և սրբագործված է Արարչագործությամբ: Արարչագործությունից մինչև մեր Տեր Փրկչի Երկրորդ գալուստը գեղեցիկ պատկերներով խտացված են Մեծի Պահոց շրջանի քառասնօրյա օրերի պաստառի վրա: Ինձ նախորդած քարոզիչները թերևս գեղեցիկ ձևով մեզ բացատրել են անցնող երկու կիրակիների խորհուրդը: Ինձանից հետո նմանապես շատ գեղեցիկ ձևով նրանք ձեզ կբացատրեն եկող կիրակիների խորհուրդը, սակայն ես մի հակիրճ խոսքով ասեմ, որ այս կիրակիների ընթացքը հավերժական մեկ օրվա հարատև կրկնությունն է:

Ամեն օր փրկության օր է և ամեն օր չար օր է: Ամեն օր գալստյան օր է և ամեն օր դատաստանի օր է: Քրիստոսի Համբարձումից հետո ողջ մարդկությունը ապրում է Քրիստոսի Երկրորդ Գալստյան ակնկալիքով: Քրիստոսի Համբարձումից հետո քրիստոնյա ողջ մարդկությունը ապրում է Սուրբ Հոգու շնորհների ներքո և հույս ունի հավատքով ամրապնդված, որ գալու է փրկության օրը: Ինչպես ասացինք, ամեն օր փրկության օր է և ամեն օր չարի օր է կամ դատաստանի: Ի՞նչ է հուշում մեզ Մեծի Պահոց շրջանի էական խորհուրդը: Այն պատգամում է մեզ յուրաքանչյուրիս՝ ապրել պահքով, ապրել խոնարհությամբ և ապրել աստվածապաշտությամբ:

Արժե՞ արդյոք քննարկել, թե պահքը ինչ օգուտ է տալիս մարդուն, երբ այն վկայվել է Քրիստոսի կյանքով և բացատրվել ու մեկնվել Եկեղեցու հայրերի կողմից: Անապատի հայրերից կամ ծերերից մեկը մի գեղեցիկ մտածում ունի և այն հանձնել է թղթին: Մի օր հուղարկավորության ընթացքին հուղարկավորները նկատում են, որ թաղման շարասյան վերջում երկու հրեշտակներ են քայլում, սակայն տեսանելի կերպարանքով: Հուղարկավորներից մեկը մոտենում է նրանց և ասում. «Ի՞նչ է կապը ձեր և հանգուցյալի»: Հրեշտակները պատասխանում են. «Մենք եկել ենք մեր հարգանքի տուրքը մատուցելու հանգուցյալին, որովհետև նա իր ողջ կյանքի ընթացքում չորեքշաբթի և ուրբաթ օրերն անցկացնում էր պահեցողությամբ: Մենք՝ երկու հրեշտակներս, մեկս չորեքշաբթի օրվա հրեշտակն է, իսկ մյուսը՝ ուրբաթ օրվա»: Այս պատմությունը խորհրդանշում է, որ պահքը կգնահատվի Տիրոջ կողմից: Ապրել խո-

նարհությամբ. դժվա՞ր է, թե հեշտ՝ և՛ մեկը, և՛ մյուսը: Տիեզերալույս հայրապետներից Հովհան Ոսկեբերանը երբ ամբաստանվում է՝ թողնելով իր ծիրանին գահի վրա, խոնարհաբար իջնում և կրում է ամբաստանությունը: Եվ Պոլսից մինչև Կիլիկիո հեռավոր շրջանը քայլում է ոտաբոբիկ, երբեք չի տրտնջում: Խոնարհությամբ է հաղթահարում այն բոլոր դժվարությունները, որ գալիս են փորձությունից: Ահա ևս մեկ վկայություն, որ կգնահատվի խոնարհությունը, եթե այն ազնիվ է և ճշմարիտ:

20-րդ դարի ամենամեծ աստվածաբաններից մեկը՝ Բալթազար անունով, հարյուրավոր գրքերի հեղինակ էր, մահից մեկ օր առաջ իր նոթատետրում գրում է. «Ի՞նչ է աստվածապաշտությունը» և պատասխանում է. «Լինել խորանի առջև և մի աղոթք մրմնջալ Աստծուն: Ապրել պահքով, լինել խոնարհ և մնալ աստվածապաշտ»: Եթե այս երեք կետերով ընթանա մարդը, հույս կունենա խնդության և փրկության:

Դուք ուխտավորներ եք, սիրելիներս, և այդ ընթացքում մի մոռացեք այդ երեք պատգամները, որ տալիս է Եկեղեցին ձեզ: Որովհետև մարդ էակը միշտ ձգտում է բարության, կատարելության և սրբության: Ո՞վ է բարին, կատարյալը, սուրբը, եթե ոչ՝ Աստված: Ձեր ձգտումը արդարացված է, որովհետև արդարացված է ձեր իսկ ներկայությամբ այստեղ: Դուք մասն եք Եկեղեցու կենցաղավարության: Բարի երթ ձեր ուխտին: Ինչպես ժողովուրդն է ասում, ձեր ուխտը ընդունելի կլինի թե՛ այս պահին, թե՛ վաղը և թե՛ ընդմիշտ. Ամեն:

Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 մարտի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ. Ամէն»:

«Եւ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար»:

«Եվ Տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց»:

(Ղուկ. Ժ 28)

Այս խոսքերը քաղված են ավետարանական այսօրվա ընթերցվածից, որ քիչ առաջ մատուցվեց մեզ սրբազան այս խորանից, որպես այս օրվա համար մեր հոգիներին նախատեսված խորհրդածության, մեր մտքերին նախատեսված խորհրդածության նյութ: Եվ այս ընթերցվածի մի մասն անվանվում է Անիրավ տնտեսի առակ, անվանում, որով նաև տարբերակվում է այսօրվա կիրակին տարվա մեջ բաշխված մյուս բոլոր կիրակիներից:

Մեծի Պահոց շրջանի չորրորդ այս կիրակին մեր Եկեղեցու Տոնացույցում անվանվում է Անիրավ տնտեսի կիրակի: Ամեն տարի մենք Մեծի Պահոց շրջանին անդրադառնում ենք, մեր խորհրդածության նյութ ենք դարձնում Անիրավ տնտեսի առակը, և սակայն ամեն անգամ, երբ վերստին մեր մտքերը սևեռվում են ավետարանական այս հիասքանչ դրվագին, վերստին հայտնաբերում ենք, վերստին վերծանում ենք մեզ համար աստվածճանաչողության նորանոր և լուսավոր ծալքեր: Եվ, ուրեմն, կրկին ընթերցենք, կրկին խորամուխ լինենք այդ առակի բովանդակությանը:

Քրիստոս այս առակը պատմեց, երբ շրջապատված էր բազմաթիվ փարիսեցիներով, բազմաթիվ դպիրներով և նաև Իր համախոհներով, Իր աշակերտներով, որոնք մեծավ մասամբ կազմված էին մաքսավորներից և մեղավորներից: Հիսուս պատմեց Անառակ որդու առակը, որի հիշատակը մենք նշեցինք նախորդ կիրակի, երբ վերարծարծվում է մեղավորի գալստյան, զղջման, վերադարձման գաղափարը: Տերը այնուհետև պատմում է Անիրավ տնտեսի առակը, որում ասվում է, թե մի մեծատուն կար, մի մեծահարուստ կար, որը մի տնտես ուներ և այդ տնտեսին վստահել էր, ըստ երևույթին, իր տնտեսության մեկ մասը: Եվ մի օր ինքը այս տնտեսի մասին ամբաստանություն է լսում, թե տնտեսը վատնում է իր կալվածքի եկամուտները: Նա անմիջապես իր մոտ է կանչում տնտեսին ու ասում նրան. «Այս ինչ է, որ քո մասին լսում եմ: Դու վատնում ես իմ ունեցվածքը և այլևս չես կարող ինձ մոտ իբրև տնտես աշխատել. պետք է տաս քո տնտեսության հաշիվը և աշխատանքից ազատվես»:

Բնականաբար այն վճռականությունը, որով մեծահարուստը դիմում է տնտեսին, այլևս տարակույսի տեղ չի թողնում, որ տնտեսը մեղավոր էր և ամենայն հավանականությամբ ոչ միայն ամբաստանություն էր եղել տնտեսի մասին, այլև իրական փաստերի վրա կազմված մի մեղադրական: Փաստը իբրև այսպիսին է ընդունում նաև տնտեսը: Տնտեսը որևէ ձևով չի ցանկանում արդարանալ. ցանկություն իսկ մտքով չի անցնում արդարանալու: Ինքը գիտեր, որ մեղավոր է և հայտնվում է աշխատանքը կորցրած մարդու, գործազրկության առջև կանգնած մի մարդու իրական մտատանջությունների առջև: Նա մտածում է. «Ինչպես պիտի շարունակեմ ես ապրել. աշխատել չեմ կարող (տնտեսը, ըստ երևույթին, առաջացած տարիք ուներ), իսկ մուրալ բնականաբար թույլ չի տալիս իմ հեղինակությունը, իմ դիրքը, հասարակության մեջ ունեցած երբեմնի իմ կշիռը»:

Այս որոնումների մեջ տնտեսը հանգում է հետևյալ եզրակացության. «Հասկացա, թե ինչ պիտի անեմ, պիտի, ուրեմն, հրավիրեմ ինձ մոտ բոլոր պարտապաններին և պիտի զեղչեմ նրանց ունեցած պարտքերը, որպեսզի եթե պաշտոնս չեմ կարող պահպանել, ձեռք բերեմ նոր բարեկամներ, որոնք, հավանական է, հաջորդ տարիների ընթացքին իմ հետագա ապրուստի, աշխատանքի, հեղինակության և կշռի պահպանման համար կարող է օգտակարություն ունենան»:

Այսպես մտածելով՝ իր մոտ է հրավիրում պարտապաններին, և տնտեսը նրանցից առաջինին ասում է. «Որքան պարտք ունես դու»: Վերջինս պատասխանում է, որ այսքան տակառ, այսքան լիտր ձեթ: Տնտեսը ուղիղ կեսը զեղչում է ձեթի պարտքի և ասում, որ այսուհետև ոչ թե պարտք ես ինձ երկու հարյուր տակառ ձեթ, այլ հարյուր տակառ:

Այնուհետև կանչում է մյուս պարտապանին, որը պարտք էր ցորեն, և հարցնում է, թե որքան պարկ ցորեն պարտք ունի: Պարտապանը պատասխանում է. «Հինգ հարյուր պարկ ցորեն եմ պարտք»: Եվ զեղչելով պարկերի քանակը հարյուրով՝ վերստին արժանանում է պարտապանի երախտագիտությանը: Եվ երախտագիտություն առաջացնելու միջոցով, բնականաբար, հույսեր է փայփայում նրանց բոլորի կողմից հետագա վարձատրության:

Ահա մինչև առակի այս հատվածը որևէ արտառոց, որևէ տարօրինակ, մեր ընկերային հարաբերությունների զարգացման տրամաբանության մեջ չտեղավորվող դեպք և իրողություն չենք տեսնում: Մեր ամենօրյա կյանքի անբաժան մասն են նման երևույթները, նման իրողությունները, և յուրաքանչուրս էլ մեր կյանքի այս կամ այն հանգրվանին եթե գեթ ոչ մեր, ապա մեր ծանոթների, մեր մտերիմների, մեր բարեկամների կյանքում նման երևույթի ականատես ենք եղել: Եվ սակայն տարօրինակը առակի վերջին մասում է, ուր ասվում է. «Եվ լսելով տնտեսի կատարած աշխատանքը (որը ըստ էության զեղծարարություն էր)՝ Տերը գովեց անիրավ տնտեսին»:

Այս արտահայտությունը, որը բնաբան ենք ընտրել մեր քարոզի, նաև բանալին է, մեխն է ողջ առակի: Ավետարանը, որ արդարության, ճշմարտության, ազնվության պատգամն է բերում մեր կյանքից ներս, հանկարծ ու հանկարծ իր մեջ պարունակում է մի գովասանք՝ ուղղված զեղծարարության, անիրավության ճանապարհով ձեռք բերված էժան հեղինակությանը: Եվ առաջին հայացքից իրապես այս տպավորությունն է ստացվում: Այսպես են մեկնաբանել և մոտեցել առակին տակավին քրիստո-

նեության առաջին դարերում: Որոշ անձեր գայթակղվել են, գայթակղվել է նույնիսկ հռոմեական կայսրերից մեկը և քրիստոնյաներին մեղադրել ուղղակի զեղծարարությունը, անազնվությունը, անիրավությունը հովանավորող լինելու մեջ: Եվ այդպիսի տպավորություն կարող է առաջանալ նաև այսօր: Ինչո՞ւ հանկարծ տնտեսը, որ անիրավություն է գործում, արժանացավ գովասանքի:

Մեր մարդկային, ընկերային հարաբերությունների տրամաբանության մեջ որևէ ձևով չի տեղավորվում այս իրողությունը: Եվ դժվար թե գտնվի նաև մի մեծահարուստ, համենայն դեպս այդ մեծահարուստը չի կարող երկար պահպանել իր հարստությունը, եթե նման ներողամիտ վերաբերմունք դրսևորի իր ունեցվածքը այդպես քամուն տվող իր տնտեսների նկատմամբ: Որևէ երկրի օրենսդրության մեջ կա՞ որևէ պահանջ, որով արդարացվի նման զեղծարարության մեջ գտնվող տնտեսը: Եվ մենք էլ, փառք Տիրոջը, Հայաստանի մեջ էլ ունենք հարուստներ, սակայն չենք տեսել նման մի օրինակ, երբ հարուստը նման ներողամտության արժանացնի իր տնտեսին: Շատ պարզ է, որ շատ շուտով նա կզրկվի իր հարստությունից: Եվ, ուրեմն, պետք է ոչ թե առակը վերծանել, մեկնաբանել պարզ ընկերային, մարդկային հարաբերությունների շրջանակներում, այլ նրա մեկնաբանության համար հարկավոր է փնտրել մեկ այլ տիրույթ, մեկ այլ տարածք: Հստակ է, որ մեծահարուստը մարդ չէ: Դժվար թե լինի մի անձ, մի մեծահարուստ, որ նման մեծահոգություն, ներողամտություն ցուցաբերի իր ունեցվածքը վատնող իր իսկ տնտեսի նկատմամբ:

Տնտեսը որովհետև անցել է իր անիրավության սահմանը, այն հիշեցնում է և մոտենում է, նույնանում է սանձարձակության հետ, եթե պարզ մարդկային հարաբերությունների շրջանակների մեջ փորձենք վերծանել առակը: Ուրեմն մեծահարուստը անձ չէ: Ինչ են ասում այս առակի մասին մեր Եկեղեցու Հայրերը: Նրանք ասում են, որ մեծահարուստը առակին բնորոշ այլաբանական մեկնությամբ խորհրդանշում է Աստծուն, Ով ստեղծել է տիեզերքը, երկիրն ու երկինքը և այն ամենը, որ գտնվում են այդ տիրույթում: Իսկ ո՞վ է տնտեսը: Տնտեսի մասին Սուրբ Գրոց մեկնիչները ասում են, որ կան չորս կարգի տնտեսներ, ինչպես մեր Սրբազան Հայրապետներից Ներսես Շնորհալին է այս դասակարգումը ամփոփել և ի մի բերել: Առաջին՝ երկնային տնտեսությունը, որտեղ որ բնակվում են հրեշտակները, որոնք որ արարվել են Աստծու կողմից և նրանց իբրև տնտեսներ են կարգված հրեշտակապետերը: Այս տնտեսը, սակայն, բնականաբար հրեշտակ չէր, խոսքը միանշանակ մարդու մասին է: Երկրորդ՝ տնտեսը մարդն է, որը ստեղծվեց եդեմի պարտեզում՝ ի դեմս Ադամի ողջ մարդկությունն է, որին հանձնված է ամբողջ արարչագործությունը խնամելու, իր պետքերին ծառայեցնելու համար:

Երրորդ՝ տնտես են նաև մարգարեները, Եկեղեցու վարդապետները և ընդհանրապես հոգևորականները, որոնց հանձնված է Եկեղեցին, որպես հոգևոր տնտեսություն խնամք տանելու: Այս շարքը կարելի է ընդարձակել. տնտեսներ են բոլոր նրանք, ովքեր ունեն հանձնառություն, ունեն պարտականություն մի ոլորտում՝ լինի դա հոգևոր տնտեսություն, նյութական տնտեսություն, ցանկացած տնտեսություն, բոլոր նրանք, ովքեր հանձնառություն ունեն, պատասխանատվություն ունեն, բոլորը տնտեսներ են: Բայց տնտեսներ են նաև նրանք, ովքեր հիշյալ խմբավորմամբ չորրոդ դասի մեջ են մտնում, ովքեր չունեն որևէ պարտականություն, չունեն որևէ պաշտոն,

չունեն որևէ հանգամանք, այլ պարզ մարդիկ են: Այդ մարդկանց ևս հանձնված է տնտեսություն և այդ մարդկանց տնտեսությունը իրենց կյանքն է, իրենց շնորհված կյանքն է:

Առակը եթե մենք մեկնաբանում ենք որպես մարդ-Աստված հարաբերություններ, եզրակացնում ենք հետևյալը, այն ամենը, ինչ որ ունի մարդը, որը տնտեսն է, չի պատկանում իրեն, այն տրված է իրեն ի տնօրինություն, այն տրված է իրեն ի գործածություն, այն նվեր է իրեն: Տեսեք, մենք ոչինչ չենք արել, որպեսզի կյանք ունենանք, մեզ համար ամենից կենսական, ամենից կարևոր հանգրվանը մեր գոյության մեջ կյանքը, ծնունդը մեզանից կախված չէ, մենք չենք վաստակել այն, այն տրված է մեզ: Իսկ այն, որ մեզ տրվում է, որի համար մենք գին չենք վճարել, բնականաբար կոչվում է նվեր:

Ահա այս նվերն էր տրված տնտեսին, այդ նվերն է տրված մեզ. կյանքը իր բոլոր կարելիություններով, իր նյութական ու հոգևոր հարստություններով, իր բոլոր ձիրքերով ու շնորհներով, և մենք յուրաքանչյուրս իբրև տնտեսներ ունենք այդ կարելիությունները և տնտեսն ենք այդ կարելիությունների: Եվ տնտեսը, որպես տնօրինողը այդ կարելիությունների, այն գործածեց հասարակությանը, մարդկությանը բարություն բերելու համար: Աստված այն ամենը, ինչ որ տվել է մեզ, երբևէ չի ակնկալում, որ պետք է վերադարձնենք ուղղակիորեն:

Այն, ինչ որ Աստծու կողմից տրված է մեզ, այդ ամենը մենք կարող ենք վերադարձնել Աստծուն, հասարակությանը՝ մեր ընկերոջը ծառայեցնելու միջոցով: Դրա համար Աստված ասում է. «Սիրիր ընկերոջդ, ինչպես քո անձը»: Եվ սա կարևորագույն պատգամներից մեկն է. սիրիր Աստծուն և հանուն Աստծու նկատմամբ քո ունեցած սիրո, քո կարելիությունները ի գործ դիր, գործադրիր մարդկանց կարիքների համար: Ուրեմն մինչև այն հանգրվանը, երբ տնտեսը մեծատան ունեցվածքը գործադրում էր ընդամենը իր կարիքների համար, նա չարիք էր գործում, նա դատապարտվեց իր տիրոջ կողմից, բայց երբ որ սկսեց իր տնօրինության ներքո գտնվող կարելիությունները գործադրել պարտապանների, դրա կարիքը ունեցող անձանց կարիքների բավարարման համար, նա իրապես արժանացավ գովասանքի, արժանացավ գնահատանքի: Եվ սա է այս առակի բացատրությունը, այստեղ է այս առակի բանալին: Եվ, ուրեմն, մենք յուրաքանչյուրս կարող ենք արժանանալ Տիրոջ գովասանքին, եթե մեր տնօրինության ներքո գտնվող պարագաները, կարելիությունները, հնարավորությունները գործադրենք մեր, մեզ շրջապատող անձանց բարօրության, մեզ շրջապատող անձանց կարիքների, հիվանդությունների ապաքինման համար:

Շատ հաճախ մարդիկ հարցնում են. մենք չգիտենք, թե որն է Տիրոջ կամքը, ինչպե՞ս կարող ենք մենք հասկանալ, թե սխալ ենք վարվում Տիրոջ կողմից մեզ ընծայված կարելիությունների նկատմամբ: Աստված այնպես, ինչպես տնտեսին, մեզ չի խոսում, հաշիվ չի պահանջում, բայց Աստված ասում է՝ շատ որոշ է Իմ ասելիքը յուրաքանչյուրին և այդ ասելիքները ամփոփված են, ինչպես Քրիստոս ևս քանիցս հաստատում է Սուրբ Գրքի մեջ, օրենքի և մարգարեների մեջ: Եվ այդ հայտնությունները պահպանելու միջոցով է, որ մենք պիտի հասկանանք Տիրոջ կամքը:

Այսօր բազմաթիվ տնտեսներ կան, մենք տեսնում ենք բազմաթիվ տնտեսներ և տեսնում ենք, թե տնտեսության չարաշահումը ինչպիսի հետևանքների կարող է հասցնել:

Տնտեսներ են նրանք, ովքեր տնօրինում են զանգվածային լրատվության միջոցները, տնտեսներ են նրանք, ովքեր տնօրինում են մշակութային հաստատությունները: Միացրեք հեռուստաալիքներից շատերը և կտեսնեք քարոզ հեշտասիրության, քարոզ՝ մարդու մեջ ցանկամոլության, ցանկասիրության առաջացման, նյութական արժեքների նկատմամբ գերչափազանցման վերաբերմունքի ձևավորման:

Նյութը դառնում է մի առանցք, որի շուրջ պտտվում են մտքերը, որին ձգտում է ամեն սիրտ: Մինչդեռ տնտեսության վարման Աստվածահաճո կանոնները թելադրում են այդ բոլոր կարելիությունները, այդ տնտեսությունը գործադրել մարդկանց կրթման, դաստիարակության, առողջացման համար: Այնինչ տնտեսության անիրավ ձևով վարելը առաջ է գալիս այն ժամանակ, երբ յուրաքանչյուր տնտես ինքը իրեն տեր է կարծում այն ամենին, ինչը որ իրապես իրեն վարձակալությամբ է տրված, գործածության է տրված, ոչ թե տրված է ըստ հաճոյից գործադրելու և ծառայեցնելու անառողջ տարբեր հակումներին: Եվ, ուրեմն, ինչ կարող ենք անել նման իրավիճակներից խուսափելու համար:

Երբ անապատական հայրերից մեկին հարցնում են, թե վարդապետ, ինչպես կարող ենք անել, որպեսզի փրկվենք, անապատական Հայրը առանց շտապելու, մի պահ մտածելով պատասխանում է, որ փրկվելու համար հարկավոր է գիտենալ հետևյալը. առաջին. ինչ որ խոսում ես, ինչ որ կատարում ես, հաստատ իմացիր, որ այդ մասին Աստված գիտի, Աստված տեսնում է քո բոլոր գործերը և կարդում քո բոլոր մտքերը:

Հաճախ մենք զգուշանում ենք մեր շարժումներից, մեր խոսքերից, երբ իմանում ենք, որ մի երկրորդ կամ երրորդ անձ պիտի իմանա այդ մասին: Նույնիսկ հատուկ գործիքներ են դրվում տարբեր կազմակերպությունների կողմից՝ իրենց հետաքրքրող անձերի խոսքերը, գործողությունները պարզելու համար: Եվ չափազանց զգուշավորություն է մարդկանց կողմից հանդես բերվում իրենց մի մտադրության ձեռնարկումի մասին այլոց տեղյակ չդառնալու համապատասխան միջոցները ձեռնարկելու ուղղությամբ: Բայց պետք է իմանանք, որ ցանկացած գործիք ընդամենը խամրող, ձախող նմանակում է այն սուր հայացքի, որ Աստված ունի մեզանից յուրաքանչյուրի նկատմամբ: Աստված գիտի մեր մասին ավելին, քան մենք կարծում ենք, գիտի ավելին, քան ինչ որ ասում է մեր մասին մեր պահվածքը կամ մեր խոսքը: Տերը կարդում է մեր սիրտը: Նա տեսնում է մեր սիրտը, ինչպես որ Աստվածաշնչում է ասվում. «Աստված, որ քննում է մեր սրտերն ու երիկամները»:

Երկրորդ պատգամը, որ տալիս է անապատականը, հետևյալն է. քո ցանկացած գործողության, խոսքի համար պիտի կարողանաս հիմնավորումներ գտնել Աստվածաշնչի մեջ: Այն ամենը, այսինքն ինչ որ մենք խոսում ենք, ինչ որ մենք անում ենք, պետք է կարողանանք փաստարկել, պետք է կարողանանք արդարացնել և հիմնավորել այն խոսքերով, այն հայտնությամբ, որը մեզ տրվեց Սուրբ Գրքի միջոցով: Ահա այս երկու խրատն է տալիս անապատականը իրեն հիշյալ հարցումն ուղղած անձին:

Ուստի, սիրելի հավատացյալներ, սիրելի քույրեր և եղբայրներ, մենք տնտես ենք, մեր հանձնառությունը իբրև տնտես մենք կարող ենք երբևիցե արդարացնել, եթե մեզ

շնորհված կարելիությունների, մեզ շնորհված տնտեսության վարման մեջ առաջնորդվենք հիմնականում հետևյալ սկզբունքներով: Մենք չենք կարող մեր տնտեսության հետ, մեզ շնորհված կյանքի հետ, առողջության հետ, մեր հարստության հետ, նյութական արժեքների հետ, հոգևոր արժեքների հետ վարվել այնպես, ինչպես կցանկանանք: Մենք պարտք ունենք պահպանել այն, ինչպես որ նախանշված է Աստվածաշնչում և ինչպես որ այն ակնկալում է մեզնից Աստված:

Երբեմն մարդկայնորեն պատահում է, որ մենք թերանում ենք մեր պարտականությունների մեջ, այսինքն՝ չենք վարվում այնպես, ինչպես իրական սրտացավ տնտեսը կվարվեր իր ունեցվածքի հետ: Այն ժամանակ մեզ հնարավորություն է տրվում զղջման միջոցով, ապաշխարության միջոցով վերստին դառնալու իրական տնտեսի կերպարին և այն ժամանակ վերստին արժանանալ Տիրոջ գովասանքին: Ահա Մեծի Պահոց այս շրջանում վերստին արդիական է, վերստին շեշտակի կերպով նշվում է, զգալի է դառնում մեզ համար ապաշխարության և վերադարձի անհրաժեշտությունը մեր կյանքում:

Թող Աստված մեզ այդ կամքը շնորհի, որպեսզի մեր ամենօրյա մտազբաղումների, ամենօրյա հնարավոր սայթաքումների մեջ կամք ունենանք՝ վերստին անդրադառնալու մեր կատարած քայլերին, սխալներին, մեր վրիպումներին, սայթաքումներին և շարժվելու այն շավղով, որը մեզ համար ուղենշված է:

Տիրոջ օրհնությունը ամենքիս հետ այժմ և հավիտյանս. Ամեն:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԿԵՎՌԱՑԻՆ ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ «ՃԱՇՈՑԻ» ՀՈՐԻՆԻՉ ԵՎ ՊՃՆԱԶԱՐԴՈՂ

Ճաշոցը միակ Կիլիկեան ձեռագիրն է, որուն մէջ թեեւ պարզ, բայց մեծ թուով Հին Կտակարանի տեսարաններ կան, ինչպէս նաեւ Գործք Առաքելոցէն։ Ես տակաւին նկարներու ընտրութիւնը մօտէն չեմ քննած, բայց կարժէ նայիլ թէ ծաղկողը իր ընտրութեան մէջ որեւէ սկզբունքի հետեւած է թէ ոչ։ Անշուշտ կը նշանակէք նաեւ թէ որոնք են Ստեփաննոս Սկեւռացիի գրած տասէ աւելի ձեռագիրները, որոնք Մատենադարանը կը գտնուին եւ ինչպէս կարելի է անոնք զանազանել Ստեփաննոս Գոռոյներերիցանցի ստորագրած ձեռագիրներէն։ Դուք որ գրչութեան ուսումնասիրութիւնը այնքան մշակած էք, մեծ ծառայութիւն մը մատուցած կ՚ըլլաք ինծի նման հետազոտողներուն, որոնք նկարի ոճէն աւելի կը հասկնան քան թէ paleographie-էն։

Շատ շահեկան բացատրութիւն մը տուած էք առաջին էջի լուսանցքի նկարի մասին, եւ Ճաշոցի առաջին երեք ընթերցուածներու կապակցութեանը այդ նկարի հետ։

Անկեղծ բարեւներով՝ Սիրարփի Տէր-Ներսէսեան

Ձեռագիրը որոշակի ժամանակաշրջանի բարդ, բազմակողմանի ամբողջական հուշարձան է։ Այն մարմնավորումն է գրչության արվեստի, որն իր մեջ միախառնում էր գիտության, արվեստի, արհեստի բազմաթիվ տարրեր, որոնք հասարակական կյանքի նյութական պայմանների զարգացման հետ փոփոխվում, կատարելագործվում և ստեղծում էին գրչության արվեստի որոշակի մակարդակ։ Հայ գրչության արվեստն ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի ջանքերով արարված հայ գրերի հետ միասին, որպես նորաստեղծ գրերի գործադրման, կիրառման գիտություն և ժամանակի պահանջներին համապատասխան կատարելագործվել, ամբողջականացվել։ Ուստի այդ բարդ արվեստի արդյունք ձեռագիրը պետք է ուսումնասիրել որպես ամբողջական, ավարտուն հուշարձան, եթե նույնիսկ այդ պահին մեզ հետաքրքրում է նրա այս կամ այն կողմը, բնագիրը, գիրը, նկարը, կազմը և այլն, քանի որ, վերջին հաշվով, նրանք բոլորը պայմանավորված են միմյանցով, կազմում են տվյալ ձեռագրի բաղադրիչները։ Այս ճանապարհով առավել հանգամանորեն կարելի է բացահայտել ձեռագիր հուշարձանի ամբողջականությունը, նրա էությունն ու պատմությունը, գնահատել այն ըստ արժանվույն։

Բազմակողմանի քննության եղանակի անհրաժեշտությունն զգացվում է մասնավորապես այն ժամանակ, երբ բացակայում են տվյալ հուշարձանի ստեղծման հան-

գամանքների մասին տեղեկություններ։ Այս կարգի հուշարձան է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N 979 ձեռագիրը։ Այն գրված է 1286 թվականին Կիլիկիայի Լևոն Գ թագավորի (1270-1289 թթ.) անդրանիկ որդի Հեթում պարոնի պատվերով։ Հեթումի Ճաշոցը[1] հայ ձեռագրական մշակույթի ամենանշանավոր հուշարձաններից է, որը, գեղարվեստական ձևավորման հարստությամբ և կատարելությամբ, բնագրի բովանդակության և մանրանկարչական զարդարվածության համապատասխանության ու ներքին կապի ներդաշնակությամբ, գրչության արվեստի կատարյալ օրինակ է։

Հեթումի Ճաշոցը ստեղծելու ժամանակ Կիլիկիայում հայ գրչության և մանրանկարչության արվեստը հասել էր զարգացման իր գագաթնակետին։ Գրչության տարբեր դպրոցներում ու կենտրոններում հանդես են գալիս այդ դժվարին արվեստին տիրապետող առանձին զորեղ անհատներ, որոնք ուղղություն են տալիս վերջինիս զարգացմանը։ Այդ ժամանակ հայ մանրանկարչությունն ու գրչությունը տվել էր արդեն իր հանճարեղ կրողին՝ գրիչ և մանրանկարիչ Թորոս Ռոսլինին։ Այս էր պատճառը, որ Հեթումի Ճաշոցը վերագրվում էր նրան, որովհետև այն արժանի էր ռոսլինյան արվեստի գործ համարվելուն։ Հետագայում պարզվեց սակայն, որ այն Ռոսլինի գործը չէ։ Նշանակում է, Հեթումի Ճաշոցի հեղինակը նույնպիսի հզոր տաղանդի տեր անհատականություն է, որը տիրապետում է արվեստի բոլոր գաղտնիքներին։ Հեթումի Ճաշոցի ստեղծողը գրչության արվեստի բոլոր տարրերը կատարելության հասցնելով, ծառայեցրել է իր նպատակին, կերտել ավարտուն և ամբողջական ստեղծագործություն, ուր իրենց պատշաճ տեղն ունեն գրի և մանրանկարի բոլոր տեսակները՝ բոլորգիրը, աղյուսակգիրը, երկաթագիրը, զարդագիրը, զարդանկարը, մանրանկարը, միևնույն է, թե՛ նրանք զբաղեցնում են ամբողջական էջ, թե՛ լուսանցք, գրադաշտի և թե՛ լուսանցքի անկյուն։

Հեթումի Ճաշոցը արքայորդու պատվեր լինելուց առաջ, գրչության և մանրանկարչության արվեստի խոշոր ներկայացուցչի, զարգացած և ինքնատիպ անհատականության տեր մարդու գործ է, գրչության նշանավոր դպրոցի, շնորհալի արվեստավորների համաստեղության գործ, որոնց մասին, դժբախտաբար, որոշակի տեղեկություն չի պահպանվել, և դրանք առայժմ հայագիտությանը անհայտ են մնում։

Իր գոյության ավելի քան յոթ հարյուր տարիների ընթացքում Հեթումի Ճաշոցը տեսել է արքայական մեծարանք և գերության դառնություն, թերթակորստի ցավ, փրկագնման բերկրանք, նորոգման հաճույք և գրչի, գրչակենտրոնի ծաղկողի ու հորինողի անհայտության մորմոք։

Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում էր գտնվում Ճաշոցը, երբ այնտեղ էր նստում Հեթում Երկրորդը, բայց պահպանված հետագա հիշատակագրություններից երևում է, որ Ճաշոցը երկար դարեր գտնվել է Սիս քաղաքի Սուրբ Լուսավորիչ վանքում։ Սույն տաճարի փակակալ Հակոբ Սսեցին 1626 թվականին Հեթումի Ճաշոցի մի էջում թողնում է Զապել թագուհու՝ Սսում կառուցած հիվանդանոցի արձանագրության իր վերծանությունը[2]։ Այդ նույն գրչությամբ Ճաշոցի բոլոր նկարների և լուսանցազարդե-

---

[1] Այսպես է կոչվում պատվիրողի անունով։ Բանասիրության մեջ այն կոչվում է նաև "Հեթում արքայորդու" կամ "Հեթում Բ թագավորի Ճաշոց", որովհետև արքայորդին 1289-1307 թթ. թագավոր է դառնում Հեթում Բ անունով։ Մենք գործածում ենք պարզապես "Հեթումի Ճաշոց" համառոտ ձևը, մանավանդ որ այն ստեղծվել է, երբ արքայորդին դեռ թագավոր չէր։

[2] "Ի հայրապետութեան Տեառն մեր Մինաս կաթողիկոսին, թվականս Հայոց [Ռ]ՀԵ (1626) նուաստ յամենայնի Յակոբ (Ս)ըսեցի, որ յայժմ եմ փակակալ ի դուռն Սուրբ Լուսաւորչի ի Կըլիկեայ, այ[ժ]մ որ ի Մարաստան, որ ի Բ և Գ եղբօր հետ ելա գնացի, սանդըխտով թվական նորայ ի դռան վերայ կարդացի, որ էր օրինակն այս. **կատարեցաւ յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս, հրամանաւ մեծաւ փառաւք**

րի տակ գրված է նրանց բացատրությունները: Նշանակում է, այդ թվականին Ճաշոցը Սիս քաղաքում էր, Ս. Լուսավորիչ վանքում, և որ նկարների և լուսանցազարդերի մակագրությունների հեղինակը նույն ինքը փակակալ Հակոբ Սսեցին է:

1686 թվականին ձեռագիրն արդեն Իտալիայում էր: Այն տարվել էր Վենետիկ՝ տպագրության համար: 1688 թվականին ավարտվում է Հեթումի Ճաշոցի տպագրությունը[3]: Հրատարակիչ Թադեոս երեց Երևանցուն հրատարակության համար ուղարկված ձեռագիրն այդ ժամանակ ամբողջական էր և, ինչպես երևում է, անխաթար[4]: Ամենայն հավանականությամբ, Վենետիկից ետ վերադարձնելիս ձեռագիրը գերվել է, կազմահան արվել և կորցրել որոշ թերթեր ու նկարներ: Հետագայում ջնջված մի հիշատակագրության ընթեռնելի բառերից երևում է, որ Ճաշոցը փրկագնվել է գերությունից և վերադարձվել Սուրբ Լուսավորիչ վանք: Ինչպես հիշատակարանում է ասվում՝ «Աստուած ողորմի /// այս գիրքս խոստացայ /// ետուր ՌԾ (1050) դուռուշ, և ազատեց, և եդ իշատակ ի դուռն Սուրբ Լուսաւորչին»[5]: Թվականը հայտնի չէ: Բնականաբար այս դեպքերը տեղի են ունեցել 1688 թվականից հետո, բայց մինչև 1693 թվականը, երբ ձեռագիրը կրկին իր տեղում էր[6]:

Մեկ տարի անց, 1694 թ., Ճաշոցը տարվում է Ադանա՝ նորոգման. «Վերստին նորոգեցաւ գիրգս ի մայրաքաղաքն յԱդանայ, ձեռամբ սուտանուն Իսկենտեր դպրի, ի թուականիս մերում ՌՃԽԳ (1694), ի հայրապետութեան Տեառն Տէր Նարին Աստուածատուր կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, յունիս ամսոյ Թ(9), ի խնդրոյ բարէսէր և բարէմիտ Աջբան իրիցու որդին տէր Ըռըսթագէսին, ի վայելումն իւր և Սսոյ եղեալ ժողովրդեանն[7] և Տէր Քրիստոս Աստուածն ամենայնի բարով վայելել տացէ: ...Եւ մեք ըստ չափոյն մերոյ նորոգեցաք և կազմեցաք զգիրգս զայս...»[8]: Իսկենտերը չի թաքցնում իր հիացմունքը այս ձեռագրի հանդեպ. «Ով հայրք և եղբայրք իմ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք գիրգս այս, միոյ Հայր մեղայիւ իշեցէք զայս գիրգս գրողին հոգոյն: Փառք Քրիստոսի, որ այսչափ շնորհս պարգեւեր է առատապէս, որ ազգի-ազգի ծաղկով զարդարէր է:

Զէրէ ես տեսա՝ փառք մատուցի տվօղին այսչափ շնորհս.

Ով հայրք և եղբայրք, խնդրեցէք ի Քրիստոսէ վասն իմ, որ սորա շնորհացն մէկ կաթ մի պարգևեսցէ մեղաւորիս», անկեղծորեն խնդրում է դպիրը՝ գնահատելով մեծ վարպետի շնորհի մի կաթիլի արժեքը:

Նորոգելուց հետո ձեռագիրը վերադարձվում է Սիս, «ի վայելումն Սսոյ ժողովր-

---

քրիստոսասէր թագուհոյ Զապելի <ի թվ> ի թվականութեանս Հայոց ի Ռ և Ղ (1241)" (Մատենադարան, ձեռ. N 979, էջ 474բ): Սույն արձանագրությունը, գրված մի քարի վրա, "կատարեցաւ" և "մեծաւ փառաւք" բառերի բացակայությամբ, 1833 թվականին գտնվել է Սսի կաթողիկոսարանի արևելյան պարսպի վրա այսպիսի տեսքով. "**Ցարմարումն շինուածոյ հիւանդանոցիս քրիստոսասէր թագուհւոյ Զապելի, ի թվին Հայոց ՌՂ**" (**Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 223: Այսուհետև՝ **Ղ. Ալիշան**, Սիսուան):

[3] Ճաշոց գիրք, Վենետիկ, 1688:

[4] "Եւ աջողութեամբ Տեառն առաքեցաւ մեզ աստ Ճաշոց իմն վաղեմեան ամբողջ և անթերի, (ընդգծումը իմն է, Ա. Մ.) ի գանձուց հնոց թագաւորացն Հայոց, զոր և առընթեր եդեալ Աստուածաշնչոցն մատենից, գտի զամենեսին համեմատ և համաձայն ընթերցուածովք, գլխաթովք և համարագրովք, (Անդ, էջ 3-4):

[5] Մատենադարան, ձեռ.N 979, էջ 445ա:

[6] "Աստուած ողորմի Լուսաւորչայնչն(՞) տէր Արիսթագէսին, որ ուսուցիչն է, եղբայրն զՍուքիասն ի սաղմոս ուսոյց և լաւ պատմութեամբ, թվին ՌՃԽԲ (1693) սեպտեմբերի ամսոյն Լ(30), շաբաթ, սրբոյն Նիկիոյ սուրբ ժողովին ՅԺԸ հայրապետաց աւրնս" (Անդ, էջ 348բ):

[7] Վերջին երեք բառերը հետագայում ջնջված են:

[8] Անդ, էջ 477բ:

դեանն»:

18-րդ դարում Հեթումի Ճաշոցը այլևս Սսի Սուրբ Լուսավորիչ վանքում չէր: Քեղեցի Ղազարի որդի Բինեաթը գնել էր «ի հալալ վաստակոցն իւրեանց» և նվիրել Սուրբ Ստեփանոս եկեղեցուն[9]: Տեղի անունը չկա, թերևս Տարսոնի Սուրբ Ստեփանոսը նկատի ունի: Դարավերջին այն հիշատակ է դառնում «Կեզկինեց հանեսի և Նոյհիկանն», և այլոց[10]:

19-րդ դարի սկզբներին Հեթումի Ճաշոցն արդեն Էջմիածնի մատենադարանում էր: Այստեղ հասնելու հանգամանքները և թվականը որոշակի հայտնի չեն, միայն հաստատ է, որ Էջմիածնի մատենադարանի Մանվել Գյումուշխանեցու կողմից 1828 թվականին կազմված ձեռագրերի ցուցակում նշված ինը ճաշոցներից մեկը Հեթումի Ճաշոցն էր[11]: Այդպես ենք կարծում, որովհետև Մանվել Գյումուշխանեցու Ցուցակը կազմելուց հետո մատենադարան է մուծվում Դարաշամբի ձեռագրերի հավաքածուն, որի մեջ Ճաշոցը չկա, իսկ այս երկու (Էջմիածնի և Դարաշամբի) հավաքածուների ձեռագրերի կազմված ցուցակում որոշակի նշված է Հեթումի Ճաշոցը: Ուրեմն այն եղել է Էջմիածնում մինչև Դարաշամբի ձեռագրերի այնտեղ բերվելը, նաև մինչև Մանվել Գյումուշխանեցու ցուցակագրությունը, այսինքն՝ 1828 թվականից առաջ[12]:

Հեթումի Ճաշոցը Էջմիածին է հասել Իսկենտեր դպրի վերակազմած վիճակով[13]: Ձեռագիրն այժմ ունի 33x24,8 սմ մեծության 475 մագաղաթյա և 4 թղթյա[14] թերթեր: Գրությունը երկսյուն է, յուրաքանչյուրը 26,8 սմ գրադաշտով և 27-ական տողերով: Տողագծերը արված են ճնշումով: Վերջիններիս հեռավորությունը միմյանցից մեկ սանտիմետր է: Գրչության հիմնական գիրը բոլորգիրն է, թանաքը՝ մուգ սև: Տոները, սաղմոսները, ընթերցվածները նշված են համեմատաբար մանր բոլորգրով, բացկարմիր թանաքով: Առատորեն օգտագործված են հայոց գրատեսակները: Նյութը՝ ընտիր, սպիտակ, հիանալի մշակված մագաղաթ է:

Ձեռագիրը զարդարված է մանրանկարներով, զարդանկարներով և զարդագրերով:

Պրակները, որոնց թիվը հասնում է քառասուներկուսի, բաղկացած են 12 թերթերից, բացառությամբ ԻԵ (6 թերթ), ԽԲ (8 թերթ)[15], Ե, Զ, Է, ԻԶ (11-ական թերթ)[16]

---

[9] "Յիշատակ է Ճաշոցս Քիլեցի Ղազարի որդի՝ Բինեաթին, որ է առեալ հալալ վաստակոցն իւրեանց, և դարձեալ և իւր **ա**�գականն՝ Պետրոսին, Մուլքի որդի՝ Ղուկասին, և իւր հայրայքուր՝ Մայրանին և Կայիանին, և իւր կին՝ Մարգարիտին, իւր որդի՝ Ղազարին և ամենայն արեան մերձայորաց: Օվ ոք կարդայ՝ Աստուած ողորմի ասի, վարձն Աստուծոյ առնի: Կամ ոք հանի ի գիրս Սուրբ Ըստեփանոս եկեղեցէն, վարձն Յուդայի առի առնէ, ԳՃԿԵ սուրբ հայրապետացն **ն**ուզօվքն (ի) վերայ լինի ծախողաց, ամէն Հայր մեր, որ" (Անդ, էջ 477ա):

[10] "Իշատակ է այս գիրքս Կեզկինեց Հանեսի և Նոյհիկանն, և մարն Մարի**ր**ամին, **դ**ալին և հարսին՝ մահտեսի Շամէ". (Անդ, էջ 472բ):

[11] Մատենադարան, ձեռ. N 3801. "Հաւաքածու ձեռագրաց ցուցակների Մանուէլ վարդապետ Գիւմուշխանեցւոյն", էջ 204բ և 242ա (արտադրությունը) "266, Ճաշոց (9,6) հետո՝ 4) ամբողջ և 3 թերի":

[12] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, 1965 թ.:

[13] Բացակայում են մագաղաթյա առաջին թերթը և 1694 թ. ավելացված երկու կից թղթյա թերթերը, որոնց արմատները երևում են:

[14] Սրանք ավելացրել է Իսկենտերը, որոնցից երկուսը պահպանակներ են սկզբից և վերջից:

[15] Վերջին թերթը, որտեղ ավարտվում էր Ճաշոցի հիշատակարանը, քայքայված լինելու պատճառով Իսկենտերը փոխարինել է թղթով և քայքայված մագաղաթի վրայից արտագրել հիշատակարանը: Մաշված և քայքայված լինելու պատճառով, դպիրը դժվար է վերծանել և թույլ է տվել մի քանի անճշտություններ, որոնք ճշգրտվում են Ճաշոցի հիշատակարանի՝ մինչ այդ կատարված ընդօրինակության հիման վրա: Այն

պրակների և պրակահամարից դուրս, սկզբի 6 թերթերից, որոնց վրա ցանկերն են գրված (առաջին թերթն ընկած է և այժմ 5 թերթ է)։ Պրականիշերը նշված են գրչի ձեռքով, պրակի առաջին թերթի ա և վերջին թերթի բ էջերի ստորին լուսանցքի կենտրոնում։ Սկզբնապես ձեռագիրն ունեցել է զբաղեցված 496 մագաղաթյա թերթ (42 12 6 = 510-14 = 496)։ Բայց արդեն 1694 թ. ձեռագրից պակասում էին 20 թերթ (Ա, Բ, ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԻԹ, ԽԲ պրակներից մեկական, ԻԷ պրակից 3, ԼԲ-ից, 8, ԼԷ-ից՝ 2)։ Սկզբի մեկ թերթն էլ հետո է ընկել և այժմ Ճաշոցից պակասում է 21 թերթ (496-21 475)[17]։

*

* *

Գ. Հովսեփյանը, դեռևս 1911 թ. անդրադառնալով Հեթումի Ճաշոցին, գրում է. «Ձեռագիրը գրված և նկարված է Ակների վանքում, Հովհաննես Արքաեղբոր դպրոցում։ Գրի և պատկերների նմանությունը Հովհաննես Արքաեղբոր Ավետարանին հետ մեր մեջ զարթեցնում է այս միտքը, որ սակայն կարոտ է դեռևս ստուգության և հաստատության»[18]։

Ձեռագիրը արվեստի կատարելությամբ և ճոխությամբ, բազմազան նյութերով, պատկերագրությամբ, զարդանկարչությամբ, ծաղկագրերի, զարդագրերի, կենդանագրերի նրբությամբ, գեղեցկությամբ և գույների պայծառությամբ Կիլիկյան շրջանի հայ մանրանկարչական արվեստի ամենափառավոր հիշատակներից է համարում հոդվածագիրը՝ գրելով. «Համարձակ, իր շարժումների մեջ ազատ, ուրախ և իր ստեղծագործությունների մեջ կենսալի նկարիչի անունը»[19]։

Նոթերում նկարագրել է Ճաշոցի սկզբի Բարսեղ Կեսարացու նկարը (վստահելով նկարի ներքևում արված մակագրությանը, նրան համարել է Սահակ Պարթևը), սկզբի թերթի գլխազարդն ու լուսանցազարդը և Աստվածածնի նկարը՝ լուսանցքում[20]։

Մ. Տեր-Մովսիսյանը «Հայերեն ձեռագրերի համահավաք ցուցակում» նկարագրում է Հեթումի Ճաշոցը և նկատում, որ այն, հավանաբար, «թագավորական նկարիչ Թորոս Ռոսլինի կամ նրա դպրոցի հմուտ վարպետների» գործ է։ Նկարների «բազմությունը» նուրբ և խնամալից աշխատանքը ապացույց է, որ մի ծաղկող այդ բոլորը գլուխ հանել կդժվարանար, կամ հարկավոր էր երկար ժամանակ»[21]։

Լ. Դուրնովոն «Հին հայկական մանրանկարչություն» ալբոմում Ճաշոցից ներկա-

---

ենթադրությունը, թե Ճաշոցի հիշատակարանը վերջից թերի է, ուր գրված կլիներ գրչի, նկարչի և գրչության վայրի անունները, հերքվում է Մատենադարանի N 3078 ձեռագրում պահպանված Ճաշոցի հիշատակարանով, որն արտագրված է նորոգումից առաջ։

[16] Այս պրակները կազմված են հինգ զույգ-զույգ և մեկական կենտ թերթերից, ընդ որում կենտ թերթերի բացակա կեսերի արմատները պահպանված են հանդիպակաց կողմից, սակայն բնագիրը թերի չէ։ Կենտ թերթեր ունեն նաև 12 թերթանոց պրակներից մի քանիսը։ Բանն այն է, որ այստեղ կենտերը երկու (Է պրակ) կամ չորս (Դ պրակ) հատ են լինում, և դրվում են դեմ դիմաց։ Պատճառն այն էր նաև, որ սխալ գրված կամ կեղտոտված թերթը կտրվում էր, իսկ մյուս կեսը՝ պահպանվում։

[17] Ձեռագրի առաջին կազմը մեզ չի հասել։ Այժմյան կազմը 1694 թվականից է, պատրաստված Իսկենտեր դպրի ձեռքով, Ադանայում։ Դրոշմազարդ կաշեպատ տախտակ է 33,5 x 25,5 սմ մեծությամբ և 0,9 սմ հարստությամբ։ Կազմի առաջին փեղկի մեջտեղի և վերջին աջ անկյունի կաշին այրված է, իսկ դռնակը և կապիչները՝ պոկված։ Կազմին ժամանակակից են կապույտ կտավե կազմաստառները։

[18] **Գ. Հովսեփյան**, Համառոտ տեղեկութիւններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, “Անահիտ”, Փարիզ, 1911, N 56, էջ 104։

[19] Անդ։

[20] Մատենադարան, ձեռ. N 979, համապատասխանաբար 6բ, 7ա, 221ա էջերում։

[21] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, N 33, **Մ. Տեր-Մովսիսյան**, Ճաշոց, էջ 19։

յացնելով հինգ մանրանկար, վերջիններիս բացատրության մեջ գրում է. «...ձեռագիրը թեև Թորոս Ռոսլինի ստորագրությունը չի կրում, բայց բոլոր տվյալներով պատկանում է այդ հռչակավոր վարպետի վրձնին»: Հեղինակը բարձր է գնահատում Ճաշոցի նկարչի բացառիկ տաղանդն ու կուլտուրան, նոր վերաբերմունքը դեպի մարդը՝ իր բոլոր դրսևորումներով, դեպի շրջապատող իրականությունը: «Ունենալով գեղարվեստական գիտելիքների ու նրբազգացողության, կերպարների ու պատկերացումների և տեխնիկապես կատարյալ ունակությունների հարուստ պաշար, նա շռայլորեն դրսևորում է ինքն իրեն»[22]:

Լ. Ազարյանը Կիլիկյան մանրանկարչությանը նվիրված աշխատության մեջ Հեթումի Ճաշոցը դնում է Թորոս Ռոսլինին վերագրված ձեռագրերի շարքում՝ նկատելով, որ «գրվել և նկարազարդվել է Հեթում Բ թագավորի համար... հիշատակարանը... ամբողջական չէ, ուստի և հայտնի չեն գրչության վայրը ու նկարչի անունը»[23]:

Նկատենք սակայն, որ հիշատակարանը ամբողջական է, բայց գրչության վայրը և նկարչի, ոչ էլ գրիչի անունները չեն նշված: Լ. Ազարյանը Ճաշոցը Ռոսլինի գործ չի համարում: Ն. Դրամփյանը գրչին և ծաղկողին անհայտ է համարում[24]:

Ս. Տեր-Ներսեսյանը ընդունելով Ճաշոցի՝ Սկևռայի վանքում գրված լինելու իրողությունը, չի համաձայնում, որ Գևորգ Սկևռացին է այս ձեռագրի նկարիչը՝ ծաղկողը[25]:

Ճաշոցի հիշատակարանից առաջ բերված հատվածի վերջին պարբերությունը ցույց է տալիս, որ ձեռագրի պատրաստողները, ստեղծողները Հեթում արքայորդու Լամբրոնյան իշխանության ներքո ապրող մարդիկ են. «Զայս խրախճանութիւն հոգևոր և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր պարոնս մեր»: Ուրեմն Ճաշոցի ստացող պարոն Հեթումը Ճաշոցը ստեղծողների տերն է, որոնք այն ստեղծել են իրենց տիրոջ համար և նվիրել նրան: Ուստի ձեռագրի ստեղծման հանգամանքները պարզելու համար Պարոն Հեթումի հետ պետք է մտնենք նրա տիրույթի սահմաններից ներս. ծանոթանանք նախ Տիրոջը, Հեթում արքայորդուն, ապա հոգևոր կենտրոնին, ուխտի միաբանությանը, գրչության արվեստի հմտավարժ ներկայացուցիչներին, նրանց բաբունապետին, նրանց մշակութային վաստակին և հնարավոր կլինի հայտնաբերել թե՛ գրիչին և թե՛ Ճաշոցի փառավոր պճնազարդողին:

Սկսենք հոգևոր կենտրոնից, նախ՝ մինչև նրա՝ Հեթում արքայորդու սեփականություն դառնալը և, հատկապես, գրչության արվեստի բնագավառից:

Սկևռայի վանքը Կիլիկյան հայկական պետության հնագույն, խոշորագույն և տևական մշակութային կենտրոններից մեկն էր, ուր ծաղկում էր ուսումը, գիտությունը և գրչության արվեստը: Այն գտնվում էր Տավրոս լեռան վրա կառուցված Լամբրոնի անմատույց ամրոցին առընթեր, որ ԺԱ դարում բյուզանդական կայսրից ստացավ Գանձակից ազգատոհմով այնտեղ գաղթած Օշին հայ իշխանը:

Հայ իշխանները նորոգեցին, ընդարձակեցին Սկևռան նոր շինություններով, դարձրին Օշինյանների տոհմական դամբարան և հոգևոր կենտրոն. Օշին իշխանը

---

[22] Հին հայկական մանրանկարչություն, Երևան, 1962. բացատրություններ, որոնք կատարել է Լ. Դուրնովոն: Հմմտ. նույնի, Երևան, 1957, էջ 38-42: Ամենուր թվականը, թյուրիմացաբար, գրում է “12”88:

[23] **Լ. Ազարյան**, Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դդ., Երևան, 1967, էջ 110-148:

[24] **Ի. Դրամբյան,** Հեթում Բ արքայի Ճաշոցը, Երևան, 2004, էջ 32:

[25] **Der Nersessian S** 0 0 0
0 1993 1 93

«բազմացոյց ի սմա եղբայրութիւնս և հանապազ խնամ տանէր առ սա բարեզարդ զուգակցաւն իւրով Տիկնաց տիկին Շահանդխտիւն, որ էր տապանատուն ազգատոհմի իւրեանց»[26]:

Սկևռայի առաջնորդները նշանակվում էին Լաբրոնի տիրոջ կողմից:

Լամբրոնի իշխանների հովանավորությամբ և առատաձեռնությամբ առաջնորդների նախանձախնդրության և գրասիրության շնորհիվ Սկևռայի վանքը մոտ երկու հարյուրամյակ ապրում է մշակութային արդյունաշատ կյանքով, իր դպրոցով ու մատենագրությամբ, գրչության և մանրանկարչության արվեստների նշանավոր գրիչներով և մանրանկարիչներով:

Սկևռայի վանքը մշակութային ծաղկման երկու շրջան է ապրել: Առաջինը ընկնում է 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբներին և կապվում է Ներսես Լամբրոնացու գործունեության հետ: Նրա և ավագ եղբոր՝ Լամբրոնի տեր Հեթում գրասեր իշխանի հովանավորությամբ, քաջալերանքով և օժանդակությամբ ծաղկում է մատենագրությունը, հատկապես թարգմանական և մեկնողական, նաև գրչության և մանրանկարչության արվեստը:

Ներսէս Լամբրոնացին, «որ էր որդի եղբոր դստերն Ներսիսի կաթողիկոսի» գրում է «Մեկնութիւն Սաղմոսացն Դաւթի», «Պատարագին Խորհրդոյ», «Առակացն Սողոմոնի», «Երկոտասան մարգարէիցն», «Հանգստեանն Յովհաննու աւետարանչի», «Թարգմանեաց յունականէն ի մերս զՄեկնութիւն տեսլեանն Յովհաննու, յորում ժամանակի էր Գրիգոր գերագուն վարդապետն Սկևռացին»: Այդտեղ է Արիստակես գրիչը կամ հռետորը շարադրում գրչության արվեստի մի տեսություն, որ «կարգեալ են մեծն թարգմանիչք իսկ», որպեսզի կարողանան «ստուգիւ գաղափարել զգիրս սուրբս...»[27] և հիմք դնում գրչության արվեստի լեզվաքերականական տեսությանը, որը հետագայում կատարում են Գևորգ Սկևռացին՝ Սկևռայի դպրոցում, և Հակոբ Ղրիմեցին՝ Մեծոփա վարդապետարանում, Գրիգոր Տաթևացին՝ Տաթևի համալսարանում, և ուրիշները՝ իրենց դպրոցներում: Արիստակես գրիչը «աւ» երկհնչունի համար ստեղծում է օ շրջանակը, որպես օ նշանագիր (**կրաւնաւորի**, փոխարեն գրում և կարդում են **կրօնաւոր**, **խօսք խաւսք**-ի փոխարեն) և այլն:

Ներսես Լամբրոնացուն գործակցում էին նաև Գրիգոր Սկևռացի, Գևորգ Լամբրոնացի և Արիստակես հռետոր մատենագիրները, որոնք նաև գրչության արվեստի մեջ էին հմուտ: Նրանց հետ գործում էին Գրիգոր Սկևռացի և Կոստանդին հռչականուն գրիչներն ու ծաղկողները, Սամվել, Հովսեփ, Հուսիկ գրիչները: Հարստանում է Սկևռայի մատենադարանը հին և ընտիր մատյաններով, որոնց գրիչները տեղի սաներն էին կամ ուսուցիչները: Ձեռագրերը հռչակվում էին արդեն որպես լավ և ընտիր օրինակներ, որոնց համար այնտեղ էին շտապում գրիչները ձեռագիր ընդօրինակել «ի լաւ և յընտիր աւրինակէ... որ է ընտրեալ և հաճեալ բանիւ և բառիւ ի հռչակաւոր անապատէն, որ Սկևռա կոչեն»[28], և ստացողներ, «զի ի ձեռն գրչացն որ անդ, կատարեսցեն զփափագն իւրեանց գրութեամբ»[29]: Սկևռայի վանքը ձևավորվում է որպես ինքնուրույն գրչության դպրոց:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը, որ կապվում է Սկևռայի վանքի հետ, Ավետա-

---

[26] **Գ. Հովսեփյան**, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 553:

[27] "Վերլուծութիւնք բացերևապէս բառից եւ բայից..."՝ **Լ. Խաչերյան**, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 229:

[28] **Հ. Ոսկյան**, Կիլիկիայի վանքերը, էջ 71:

[29] Անդ, էջ 81:

ման է՝ գրված Գրիգոր գրչի ձեռքով, Ներսես Լամբրոնացու հովանավորությամբ և հոգածությամբ։ «Գրեալ... յամի Ռ-որդի, քսաներորդի երկրորդի (1173), ի հայրապետութեան աստուածապատիւ հոգեւոր Տեառն Ներսիսի Հայոց Դիտապետի, խորհուրդ իմն, որ յաստուածայինսն բերիւր, ազդեալ յոգի աստուածահաճոյ անձին Կոստանդեան քահանայի՝ սպասաւորի Տեառն Ներսէսի կաթողիկոսի, որով զըփափագ սրտին և զըտենչումն ցանկութեան միշտ առաջի արկանէր գրչիս, զի թերեւս հասցէ բաղձալեացն, զոր տեսեալ իմ Գրիգորի զբարեյաւժար կամսն, յանձն առի յաւժարական կամաւք գրել զաւետաբեր և զկենսունակ տառս քրիստոսեան մատենի։ Եւ մինչեւ յաւարտ հասեալ սորին՝ փոխի յաստեացս սրբազան հայրապետն Ներսէս...

Եւ արդ աղաչեմ զամենեսեան, որ ընթեռնուք զսա, յիշեսջիք ի Քրիստոս յառաջ սրբազան կաթողիկոսն Ներսէս, յորոյ ոտս ստացող սորին սնեալ և բազում երախտիք ի նմանէ ընկալեալ։ Եւս և զարժանին յիշատակի զդիտապետն հայոց զՏէր Գրիգոր, յորոյ ժամանակն տառս աւարտեցաւ, և սատար սմին եղեալ բանիւք եւ արդեամբք։

Այլ և զստացող սորա զըԿոստանդին աստուածամերձ քահանայն, զընծողս իմ եւ զազգատոհմս ըստ մարմնոյ։ Եւ որ զաւրինակն շնորհեաց, զՆերսէս սուրբ և ընտրեալ քահանայ՝ զորդի մեծազաւր Սեւաստոսի պարոն Աւշնի, որ ամենեւին հանգիստ եղեւ գրչիս տկարութեան իւր սեպհական անապատն Սկեւռայ անուն կոչեցեալ, որ է մերձ յանառ դղեակն Լամբրոնացու։

Յիշեսջիք աղաչեմ եւ զայնոսիկ, որք աւժանդակ եղեն գրչիս ի գրութեան սորա, մանաւանդ զարդիւնական վարդապետն Ստեփաննոս, որ դրան սարկաւագն էր Ներսիսի Հայրապետի, և զՅակոբ եկեղեցականն։

Աղաչեմ և ես մեղապարտս ի գրչաց Գրիգոր յիշել ողորմութեամբ... և որք աշխատեալ են ի վերայ իմ աստուածահաճոյ անձինք՝ Վարդան գրիչ և Կոստանդին մականուն Կ.Ո.Շ.Ի.Կ...ս.»[30]։

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր գրիչը Սկևռայի միաբան չէր։ Մինչ այս նրան հանդիպում ենք Հռոմկլայում Ներսես Շնորհալու համար Ավետարան ընդօրինակելիս, որն անավարտ թողնելով, գալիս է Սկևռա Ներսես Լամբրոնացու համար Ներսես Շնորհալուն պատկանած օրինակից Ավետարան ընդօրինակելու։ Ավետարանից հետո Գրիգորը Ներսես Լամբրոնացու համար օրինակում է Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանը, նկարազարդ, ընդ որում նկարում է Գրիգոր Նարեկացու չորս առաջին նկարները, համապատասխան մակագրություններով, նրանց դիմաց չորս էջ առաջ լուսանցազարդեր։ Չորրորդ նկարից բացի մյուս երեքն ունեն հետևյալ մակագրությունները. «Գրիգոր փիլիսոփա» (7ա), «Գրիգոր հսկող» (55բ), «Գրիգոր ճգնավոր» (117բ), 178բ-ում մակագրությունը չի կարդացվում[31]։ Լամբրոնացին սույն մատյանի 119ա,բ էջերում բոլորգրով շարադրում է Նարեկացու վարքը՝ «Վարք Սրբոյ առն Աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ»։

Ձեռագիրն ունի հետևյալ հիշատակագրությունները՝

«Զմեղապարտ գրիչս յիշեա ով տէր իմ Ներսէս»

«Ստացաւ սորա զՆերսէս՝ զորդի մեծազաւր սեւաստաւսի Աւշնի»

«Զողորմելի գրիչս Գրիգոր աղաչեմ յիշել ի Տէր»

«Թուին ՌԻԲ (1173)»[32]։

---

[30] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխտ. Ա. Ա. Մաթևոսյան, էջ 212-213։

[31] Մատենադարան, ձ. 1568։

[32] Անդ, էջ 24ա, 54բ, 234ա, 132ա։

Գրիգոր գրիչը հաջորդ՝ 1174 թվականին վերադառնում է Հռոմկլա և Ներսես Շնորհալու պատվիրած Ավետարանը ավարտում նորընտիր կաթողիկոս Գրիգոր Տղայի պատվերով. «Որ իմով ձեռամբ գծեալ Գրիգոր մեղապարտի,- գրում է գրիչը,- և անկատար մնացեալ, զորոյ պակասութիւն լցեալ իմ, հրամանաւ վերադիտողիս հայոց Գրիգորի, ի թուականիս ՌԻԳ (1174)»[33]:

Մեզ թվում է՝ և՛ այս Ավետարանը, և՛ Ներսես Լամբրոնացու համար ավարտածի գաղափար օրինակը եղել է Ներսես Շնորհալուն պատկանած Սեբաստիայում ընդօրինակված և Գրիգոր գրչի նորոգած ու զարդարած Ավետարանը, որ արդեն պատկանում էր Բակուրանին, ապա՝ որն այդ ժամանակ անցել էր Սկևռայի վանքին: 1193 թ. Ներսես և Հեթում Լամբրոնացիները Սկևռայում շուշանափայլ մագաղաթի վրա գրված մի Ավետարան են ստանում, գրիչն ու ծաղկողը Սկևռայի միաբան Կոստանդինն էր:

Իրեն մեղապարտ անվանող գրիչն աղաչում է հիշել Վարդան գրչին և Կոստանդին պատվական ծերունուն: Այդ թվականին այդ թանկագին ձեռագրով՝ Սեբաստիայի Ավետարանով հարստանում է Սկևռայի մատենադարանը:

1066 թվականին Սեբաստիայում Գրիգոր գրիչը, որ եկել էր «ի կողմանց Արևելից, ի լերանցն Այրարատ, ի գեղջէն որ կոչի Արկուռի, զկնի աստուածասէր թագաւորին մերոյ Սենեքերիմայ»[34], մի Ավետարան է ընդօրինակում:

Հետագայում այն դառնում է Ներսես Շնորհալու սեփականությունը: Այնուհետև կաթողիկոսն այն նվիրում է իր Զորավար անուն եղբոր որդուն՝ Գրիգոր Ապիրատին: Վերջինս իր կարգին 1194 թվականին այն նվիրել է Լամբրոնի և Պապեռոնի Տեր Բակուրան իշխանին[35]: Գրիգոր Ապիրատը մինչև նվիրելը «վերստին նորոգել» է տալիս «արտաքուստ կուսէ զաստուածային Աւետարանս՝ գեղեցիկ մետաքսէիւք և ակամ(բ)ք պատուականաւք՝ ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ, ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփանոսի, դրան սարկաւագի տեառն իմում, որ և վասն անմոլար ճանաչելոյ կոչի սա Յակոբցի:

Ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, նախ և առաջին հոգեւոր Տեառն իմոյ Ներսէսի կաթողիկոսի, որ և զսոյն իսկ զԱւետարանս շնորհեաց ինձ ի զբաւսանս և ի խրախճանութիւնս հոգևոր, այսու զուարճանալ և մի պատրանաւք անցաւոր կենցաղոյս...»[36]: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (N 311):

Ավետարանը, որի համար ասվում է՝ «գեղեցիկ մետաքսէիւք եւ ակամբք պատուականաւք ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ», այժմ այդ հարդարանքը չունի: Հայտնի չէ, թե երբ է զրկվել իր «արտաքուստ կուսէ» ունեցած շքեղությունից: Բայց պահպանել է մասունքներ ձեռագրի «ներքուստ կուսէ» զարդարյալ շքեղությունից, որի կատարողը հայտնի չէ, միայն որոշակի է, որ այն կատարվել է ձեռագրի Բակուրանին պատկանելուց առաջ, այսինքն Ներսես Շնորհալուն պատկանելիս այն նկարազարդ է եղել, ուստի Բակուրանը «արտաքին կուսէ», «վերստին» (մի անգամ նորոգելուց հետո) նորոգել է տվել, որից, սակայն, ոչինչ չի պահպանվել: Բայց ահա առաջին անգամ նորոգելուց՝ նկարազարդելուց պահպանվել է Մարկոս ավետարանչի և ավետարանառաջի, ինչպես նաև Ղուկասի ավետարանառաջի նկարազարդ թերթե-

---

[33] Յիշատակարանք, Ա, էջ 563:

[34] Նույն տեղում, էջ 105:

[35] **Գ. Հովսեփյան**, Յիշատակարան ձեռագրաց, Ա, էջ 581-586:

[36] Մատենադարան, ձեռ. 311, էջ 82ա, 217բ: Տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 208:

ը, սրանց երկրորդ էջերում նկարչի գրությամբ։ Պահպանվել են նաև առաջին նորոգման հետևանքով ներդիր թերթերի կտրված արմատները՝ կտրվածի (թերթերի) պահպանված մասերը։

Ուրեմն առաջին նորոգումը կատարվել է Ներսես Շնորհալու ժամանակ, մինչև 1173 թվականը Հռոմկլայում, երկրորդ նորոգումը կատարվել է դարձյալ Հռոմկլայում, որովհետև նվիրատվության հիշատակարանը Ապիրատն իր ձեռքով գրել է նկարազարդ թերթերի չգրված էջերում 1174 թվականին. «Յիշեցէք ի Քրիստոս եւ զբարեպաշտ իշխանն՝ զմեծ սեւաստիաւսն զԲակուրանն, զորդի Սմբատա, որդւոյ Հեթմոյ Սեւաստաւսի՝ տեառն Լամբրաւնին եւ Պապեռաւնին, որում եւ զԱւետարանս շնորհեցի։

Ընդ նմին եւ զքրիստոսասէր ամուսինն իւր զԹագուհի՝ զըստ մարմնոյ քոյր իմ, որոց ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս աստ եւ ի հանդերձելումն։

Ի թուին ՈԽԳ (1174)[37]։

1178 թ. Ներսես Լամբրոնացին «Ի...Սուրբ ուխտս Սկևռայ...» գրել էր և 1190 թ., ընդօրինակվում է «Վարք Սրբոց»[38], «ի զանազան օրինակս՝ ի մի հաւաքեալ ի վանքս Սկևռայ»։

1190 թ. Սկևռայում Սամվել գրիչը ընդօրինակում է Ներսես Լամբրոնացու՝ Դավթի Սաղմոսաց մեկնությունը. և վերջում շարադրում Լամբրոնացու վարքը (266)։

1192 թ. Սկևռայում Գեորգ գրիչը «Խրատ պէսպէս...» հունարենից թարգմանված երկը (267)։

1193 թ. Սկևռայում Կոստանդին գրիչը Ներսես Լամբրոնացու հրամանով «Սատարութեամբ գրչի» ավարտում և «երանգօք ծաղկանց» զարդարում է մի Ավետարան (274)։

Ողորմություն է հայցում «Վարդանին»՝ «ես Կոստանտեա մեղապարտ գրչի»։

1197 թ. Սկևռայում Ներսես Լամբրոնացին ավարտում է Առակաց մեկնությունը, որ սկսել էր երեք տարի առաջ (292)։

1198 թ. իր մահկանացուն է կնքում Ներսես Լամբրոնացին։

Մասնագետների կարծիքով Սեբաստիայում 1160 թվականին Գրիգորի գրած Ավետարանը, որը հետագայում պատկանում էր Հայոց կաթողիկոսին, նկարազարդել է Գրիգոր Հռոմկլայի գրիչը։ Նա հիմնավորվում է Սկևռայում և ապրում մինչև 1216 թվականը[39] և մեռնում «ի բարւոք ծերութեան»[40], թողնելով գրչագրական հսկայական ժառանգություն։

Ահա նրա նկարազարդած Ավետարաններից մեկի հիշատակարանը. «...Ես՝ Ստեփանոսս՝ մականուն Ադամ... աշխատութեամբ նաւեցի ի Կիպրոս և գտեալ նիւթ, զբանն ի մարմին փոխարկեցի, զի անյագաբար վայելեցից ուրախութեամբ ձեռամբ շաւշափմամբ, համբուրիւք և մտաւք և հոգւով ի բանէն կէնդանացայց, եւ զայս ոչ վայրապար, այղ ի ձեռն մեծահռչակ գովեալ գրչի, որ գեր ի վերոյ և անհաս գտաւ ի սեռս մեր, ոչ մելանաւ միայն, այղ և երանգոց և դեղոց նկարազարդ վայելչութեամբ, ոչ ըստ զաւրութեան և կարողութեան իւրոյ արուեստին, այղ ըստ իմումս զիջեալ աղքատութեամբս»[41]։

Ահա և նրա աշակերտ և վերջին Ավետարանը լրացնող Գրիգոր Սարկավագի հի-

---

[37] Նույն տեղում, էջ 277։

[38] Յիշատակարանք ձեռագրաց, էջ 551։

[39] Յիշատակարանք, էջ 459։

[40] Անդ, էջ 783։

[41] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 299-300։

շատակարանը. «Արդ մի ոք աղարտեսցէ, աղաչեմ զխակամտութիւն մանկութեանս, որ զանճառ և զաստուածազարդ քրիստոսախաւս և կենդանի և կենսածին բանս յարմարմամբ ի նիւթս գեղապանծ պաճուճիւք պանծալի փայլմամբ ի տեսիլ աչաց ցուցանել...»[42]:

«Արդ եղև զսկիզբն գրչութեան սորա ի թուաբերութեանս Հայկազնեան ազգիս ՈԿԴ (1215), ի Հայրապետութեան Տեառն Յոհանիսի, որդւոյ Կոստանդեա, և ի թագաւորութեան մեծապսակ արքայիս Հայոց Մեծաց Լևոնի որդւոյ Ստեւհանէի՝ որդւոյ Լևոնի, որդւոյ Կոստանտեայ յԱռովբինեանց... ձեռամբ Գրիգորի մեծահռչակ գրչի, ի սուրբ ուխտին Սկևռայ կոչեցեալ, զոր և հասեալ ի վերջ սորա, ոչ կարաց կատարել, զի հասարակաց բնութիւնն զիւրն պահանջեաց, մեռաւ ի բարւոք ծերութեան...»:

Գրիգոր սարկավագը շարունակում է. «Եղեւ կատարումն սորա ի թուին ՈԿԵ (1216) ի քաղաքիս Տարսոն, ընդ հովանեաւ Սուրբ Նախավկային Ստեփանոսի...», իսկ Գրիգորի մասին գրում է. «Գերահռչակ գրիչ... տրամախոհ և անհամեմատ արհեստս»[43]:

1205 թ. Սկևռայի դպրոցում Գրիգոր և Բարսեղ վարդապետների ուսուցչությամբ «առ որովք այժմ դեգերիմ ի վարժս»,- ինչպես գրում է Ներսես Լամբրոնացու քրոջ որդի Ներսեսը, ընդօրինակում է «Մատենագրութիւնք Ներսէսի Լամբրոնացւոյ»[44], 1206 թվականին «Մեկնութիւն կաթողիկեաց թղթոց... անապատս Սկևռայ ի մէջ քրիստոսազգեաց սուրբ ճգնաւոր եղբարց միաբանակեցած»[45]:

Նույն թվականին նույն ձեռագիրն ընդօրինակում է նաև Պետրոս գրիչը,[46], իսկ Կոստանդ գրչի հետ՝ մի ժողովածու[47]: 1216 թ. Բարսեղը Սկևռայում ընդօրինակում է «Յաճախապատում Ճառք Գրիգորի Լուսաւորչի», իսկ նրա խորհրդով Գրիգորը Տարսոնում Ավետարան է ընդօրինակում «յօրինակէ Ներսէսի քահանայի քորեպիսկոպոսի Տարսոնի»[48], իսկ Հովսեփ գրիչը Սկևռայում Գրիգոր վարդապետի Ճառերը[49]: Մաշտոցի անվան Մատենադարանի 10000-րդ ձեռագիրը Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունն»« է, որն 1671 թ. արտագրված է Ներսես Լամբրոնացու օրինակից: Ինչպես տեսնում ենք, Ներսես Լամբրոնացու մահից հետո էլ (1198 թ.) Սկևռայում շարունակվում է գրչության արվեստի ավանդական ծաղկումը, և անգամ հսկայական ձեռագրական կորուստներին դարձյալ մեծ թվով ձեռագրեր են հասել այդ շրջանից:

ԺԳ դարի երկրորդ կեսին Սկևռայի ուխտի առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոսը: 1263 թվականին Ստեփանոսը ընդօրինակում է մի Ավետարան, հիշում է առաջնորդին՝ Մխիթարին, սնուցիչ Թորոս հորեղբորը և հսկող Օգսենտին[50]:

1264 թ. Վարդան վարդապետ Արևելցին թագավորի համար գրում է «Մեկնութիւն Սուրբ Գրոց Ժղլանք կոչեցեալ» Անդուլ անապատում[51]: Նկատի ունենալով իր ձեռագիրը, գրում է. «Եւ ես գիտեմ, որ այս չէ թագաւորական իրք, այլ ոսկէգիր պիտէր և ճարտար գրչի... թէ կամիս դիւրին է տալ փոխել ի լաւն, որ հեշտ կարդայք եւ թող

---

[42] Յիշ. 617 Ստեփանոս-Ադամ գրիչը գրել է, բայց նկարազարդել է Գրիգոր Սկևռացի գրիչը:

[43] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 99-100:

[44] Հիշատակարաններ, ԺԳ դ. էջ 53:

[45] Անդ, էջ 56:

[46] Անդ, էջ 56:

[47] Անդ, էջ 156:

[48] Անդ, էջ 101:

[49] Անդ, էջ 254:

[50] Մատենադարան, ձ. 8590, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 323:

[51] Հիշատակարաններ ԺԳ դ., էջ 325:

Գրիգորէսն փոխէ, որ բան չկորնչի։

Բայց իմ գիրս, որ իմ մատանցս սատարն՝ մնա առ Ձեզ, ո՞ գիտէ թէ աւելի շնախաւոր լինի ձեզ, վասն յուսոյն իմոյ, որ առ Տէր և սիրոյն որ առ Ձեզ...»[52]։ Ամենայն հավանականությամբ Վարդան վարդապետի ցանկությունը կատարած լինելու համար, Կեռան թագուհին Վարդանի ինքնագիրը ընդօրինակել է տալիս, օգտագործելու համար, իսկ նրա «մատանցն սատարն» պահում է, որպես թանկագին մասունք։ «Զամենագով եւ զտրամաբան վարդապետն Վարդան՝ զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեռան թագուհէ՝ Թեւանու, հրամայեաց ինձ մեղաւորի Ստեփաննոսի և մականուն Իրիցորդի, գրել զհոգիալից տառս՝ ի մխիթարութիւն աստուածասիրաց անձանց...»[53]։

Հրատարակության պատրաստեց
Պատմական գիտությունների թեկնածու
Ա. Ղազարոսյանը

[52] Նույն տեղում, էջ 326։

[53] Նույն տեղում, էջ 419։

ՀԵՆՐԻ ՄՈՔՈՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Բարոյականությունը միջանձնային հարաբերությունների առանձնակի ձև է ո
րի բովանդակությունն արտահայտվում է որոշակի կոնկրետ նորմերի ու գնահա
տականների միջոցով որոնք էությամբ յուրաքանչյուր առանձին մարդու **Ես**-ի հա
մար ունեն պարտադիր բնույթ Նրա սկզբունքները հիմնականում պահպանում են
որոշակի սոցիալական արժեհիմքեր Որպես օրինաչափություն բարոյականութ
յան նորմերն անընդմեջ վերարտադրվում վերափոխվում և անհրաժեշտորեն վե
րանայվում են առօրյայում ո՛չ միայն ընդհանուր-զանգվածային սովորությունների
ազդեցության այլ նաև հասարակական կարծիքի գնահատականի ու իմաստավոր
ման ներքո և միաժամանակ խթանում են մարդու հոգում ձևավորվել այնպիսի հա
մոզմունքներ ու հոգեկան շարժառիթներ որպիսիք են բարձրագույն հոգևոր խղճի
խայթը բարոյական արարքի ձգողականությունը և գեղեցկությունը սեփական **Ես**
ի կողմից դրսևորվող այլասիրությունն ու ապրումակցումը ինչպես նաև անձնա
կան դրական արարքը որպես համամարդկային բարոյականության կենդանի օրի
նակ հումանիզմի մարմնավորում և այլն

Բարոյականության անցած ճանապարհն ունեցել է իր ոլորապտույտ ու բարդ
պատմա-իմաստասիրական ուղին որի ընթացքում ձևավորվեցին նրա յուրատե
սակ համակարգերը ինչպես՝ կոնֆուցիական Ն. Ք. դ. արիստոկրատական Ն.
Ք. դ. քրիստոնեական դ. պրոլետարական դ. և այլ ձևեր իրենց ինքնա
տիպ աշխարհայացքային կողմնորոշմամբ Վարքի նորմատիվային տիպօրինակնե
րը որպես սոցիալական կյանքի անհրաժեշտ ուղեկիցներ սովորաբար ամրապնդ
վում խորացվում և տարածում են գտնում սոցիալական աճ ապրող մարդկային
անձերի զանգվածային և անհատական հոգեկան և գիտակցական Եսաշխարհում։
Ըստ էության բարոյական կողմնորոշումը կայանում է նրանում որ այն ի սկզբանե
բովանդակում է մարդկային անձի՝ նրա սեփական **Ես**-ի զարգացման և կատարե
լագործման հումանիստական հեռանկարը՝ կյանքի ճառագող ապագան

Մարդու ինքնարարման ինքնակատարելագործման և ինքնահաստատման դա
րավոր գործընթացի արդյունքը եղավ այն որ նա աստիճանաբար լայնացրեց միջ
սուբյեկտային հարաբերությունների մերձեցման այն դաշտը որը պայմանավորեց
«Մի՛ սպանիր Մի՛ ստիր Մի՛ գողանա պատվիրանների ձևավորումը Առ այսօր
որպես բարոյականության ոսկե կանոն է ընդունվում՝ վարվիր ուրիշների նկատ
մամբ այնպես ինչպես դու կուզենայիր որ նրանք վարվեին քո նկատմամբ ավե

տարանական պատվերը Բարոյական կարգավորման մեջ կարևոր տեղ են զբա ղեցնում նաև՝ խիղճ անձնական արժանապատվության զգացում պատիվ բարոյա գիտական կատեգորիաները Բարոյականության հիմնական կատեգորիաների ի մաստով ամենուր հանդես են գալիս բարին և չարը պարտքը և խիղճը պատիվը և մարդկային արժանապատվությունը Հասարակության մեջ համատեղ կյանքի պա հանջը և հավաքական գործողությունները համաձայնեցնելու անհրաժեշտությունը որպես օրինաչափություն արձանագրվում է վարքի բարոյական նորմերի մեջ ո րոնք հիմնականում բնորոշվում են միջանհատական միջխմբային ազգամիջյան հարաբերություններում

Բավական հարուստ են մարդկային էական այն հատկանիշները որոնք իրենց բովանդակությամբ սահմանում և անհատականություն են հաղորդում սոցիումի ա ռանձին անդամների բարոյական **կերպարին Դրանք են կարեկցությունը գթասրտությունը ապրումակցությունը համեստությունը ներողամտությունը մեծահոգությունը միշտ բարի գործեր կատարելու ցանկությունը լավատեսութ յունը պարզամտությունն ու թափանցիկությունը մարդկայնությունը մարդա սիրությունը համբերատարությունը հոգու խիզախությունն ու համարձակութ յունը**

Մեր կողմից կատարված պատմահմաստասիրական վերլուծությունը ցույց է տալիս որ իսկապես այս և նման այլ որակների դիապազոնային ներդրումը ազ գային սոցիալական դաշտ երբևիցե հնարավոր չի եղել որովհետև դրանց իրակա նացումը խոչընդոտվել է հիմնականում արտաքին թշնամիների կողմից մեր հոգևոր և ֆիզիկական անկախությանն սպառնացող և պարբերաբար կրկնվող վտանգով ո րը միաժամանակ պատճառ է դարձել որպեսզի երկրի ներսում գլուխ բարձրացներ սոցիալական անհավասարությունը տնտեսական և քաղաքական աններդաշնա կությունը Ի դեպ անհրաժեշտ է նշել նաև այն պատմական փաստը թե ինչպե՞ս էր հայ էթնոսը միասնականորեն համախմբվում՝ Մե՛կ հայրենիք մե՛կ ազգ մե՛կ հա վատ կարգախոսի ներքո և որքա՛ն մեծ էր թշնամական ***սպառնալիքը կրկնակի անգամ ավելանում էր հայի թե՛ հայրենասիրական թե՛ կրոնական թե՛ բարոյա կան ոգին***

Ասվածի վառ օրինակն է զրադաշտականության դեմ մղված հոգևոր գոտեմար տում առավել զորացած Հայ Եկեղեցու գործունեությունը որի բնորոշ արտահայ տությունն է Եղիշեի Պատմությունը Ասենք որ հանձին Եղիշեի իսկապես կարե լի է տեսնել երկու անձնավորությունների **Ես**-երի որոնցից մեկը հանդես է գալիս «Պատմության և բազում մեկնությունների **հեղինակ–Եղիշեի Ես**-ի որի մեջ պատ միչը զուգահեռ է ընթանում Եզնիկ Կողբացուն հանդես գալով որպես վաղ շրջանի տեսական մտքի ազդեցությունը մեծապես կրող և միաժամանակ քաղաքականորեն միանգամայն եռանդուն մտածող անհատ իսկ **«մյուս Եղիշեի Ես**-ը **հանդես է գա լիս** որպես դավանաբանական երկերի հեղինակ

Հատկանշական է այն որ Եղիշեի Պատմության էջերում էական բարոյափիլի սոփայական արժեք է ներկայացնում Միհրներսեհին ուղղված պատասխանը Ըստ

Եղիշեի ազգային հայրենասիրությունը և բարոյականությունն իր որոշակի մարմ նավորումն է ստանում միաբանության մեջ որովհետև իր էությամբ և բովանդա կությամբ այն բարի և առաքինի գործերի մայրն է իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնունդը Միաբանությունն ընդունելով որպես ազատագրական պայքարի բարոյական և գաղափարաբանական ելակետային դրույթներից մեկը պատմիչը այն համոզումն է հայտնում որ ամեն մի տուն և թագավորություն որ բաժանվում է ինքն իր մեջ հաստատուն մնալ չի կարող»։

Քրիստոնեական հավատի անհրաժեշտությունը պերճախոս ապացույցն է այն բանի որ կրոնա-բարոյական զգացմունքների ու պահանջմունքների դաստիարա կությունը կայանում է նրանում որպեսզի այն ամենուր գործադրվի՝ ճկունորեն և մշտական հուզական լիցք հաղորդելով դաստիարակվողներին այլ կերպ ասած նրանց մեջ արթնացնի և վառ պահի առաքինին գեղեցիկը բարին ու մարդկայինը պահպանի և բարեհաջող կերպով գալիք սերունդներին փոխանցի հարնման մա սունքներ Որպես օրինաչափություն հուզական պահանջների իրացման համար կարելի է առանձնացնել երեք գործոն. ա դրական զգացմունքների դաստիարա կում բ զգացմունքների կառավարում և կարգավորում գ ընդվզում և մշտական պայքար ընդդեմ բացասական ձևավորման

Համաշխարհային փորձը ցույց է տալիս թե ինչ հսկայական դաստիարակչա կան կարողությամբ են օժտված կրոնա-բարոյական այն արժեքները որոնք ունեն համամարդկային տարողություն։ Աստված սեր է ասում էր Վ. Գ. Բելինսկին և սիրո մեջ գտնվողը գտնվում է Աստծո մեջ իսկ Աստված՝ նրա մեջ Ըստ նրա դա էլ հենց դաստիարակության նպատակն է[1] Ինչպես հարյուրավոր տարիների ընթաց քում հավատը կարևոր դեր է խաղացել մեր ժողովրդի **Ես**-աշխարհում բարոյակա նության պարզագույն նորմերի ձևավորման և տարածման գործում և չնայած արդի գիտական և տեխնոլոգիական տիեզերաձավալ **վերընթացին ինչպես միշտ այսօր ևս եկեղեցական սուրբ տաճարը դպրոցի հետ միասին շարունակում է մնալ այն միակ Հանդիպավայրը ուր մարդկային անձը իր ժամանման առաջին պա հից ճաշակում և վերապրում է արվեստների մի ամբողջ համալիրի հուժկու ներգործությունը որի ատրիբուտներն են կազմում եկեղեցում մեզ շրջապատող սրբապատկերները**

Ս. Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Մեծը Հայաստանում սկսեցին հիմնել ասո րական և հունական դպրոցներ որոնք ի զորու էին պատրաստել նոր հավատի սպասավորներ որոնց քարոզությամբ ժողովրդական զանգվածները աստիճանա բար հրաժարվում էին զանազան կուռքերի պաշտամունքից և ուղղամտորեն հե տևում քրիստոնեությանը Նրանք Տրդատ Գ-ն և Գրիգոր Լուսավորիչը կառու ցեցին այնպիսի եկեղեցիներ որոնց շողաշատ պատերից ներս և դուրս պայքար ծա վալեցին հեթանոսության դեմ

Անհրաժեշտ է նշել որ այդ շրջանում միանգամայն զգալի էր բարձրաստիճան հոգևորական դասի տնտեսական ու քաղաքական հիմքերի ամրապնդվածությունը

[1] **Лозинский Е.** Нобые проблемы воспитания т. . СПб 2. с. .

իսկ Արշակ Բ-ի ... վիճ.՝ թ. և Պապի օրոք արդեն ստեղծվել էր Հայոց բացար ձակ անսահմանափակ միապետություն որի հիմնական ուղղվածությունը հո գևոր և նախարարական բոլոր ուժերն իրեն ենթարկելն էր

Այստեղ չենք կարող չհիշել ռուսական գիտական մանկավարժության հիմնադիր Կ. Դ. Ուշինսկու 2 7 թթ. խոսքերը. որ ամենախուլ ռուսական գյուղերում քրիս տոնեությունը փրկեց գյուղացիներին վայրենությունից Քրիստոնեականության դասավանդումը կնպաստի բացահայտելու նաև այնպիսի անձնային արատներ ո րոնք են՝ փառամոլությունը նախանձը ծուլությունը հարբեցողությունը անբարո յականությունը որկրամոլությունը վաշխառությունը կաշառակերությունը գո ղությունը չարախոսությունը. զրպարտությունը և այլն Իսկ մյուս կողմից այն ցույց է տալիս անձին ներհատուկ առաքինությունների՝ հավատի ժուժկալության ան պաճուճության անմեղության համեստության գիտելիքի սիրո էությունը

Ասենք որ կրոնի դաստիարակչական ներուժի իրացումը հատկապես մեծ հե տաքրքրություն և գործնական արժեք է ներկայացնում հոգևորականացված կրթութ յան սկզբունքների տեսանկյունից որոնք հիմնվում են քրիստոնեական ուսմունքի խորը հիմքերի վրա իրենցից ներկայացնելով աշխարհիկ և կրոնական դաստիա բակության ճիգերի միացման հաջողված փորձերից մեկը որի բուն ուղղվածությու նը սովորողների հոգևոր-բարոյական կերպարի Ես-աշխարհի ձևավորման խնդիրների լուծումն է Մենք գտնում ենք որ հոգևորականացված կրթությունը խարսխվում է՝ սիրո 2 ազատության ճշմարտության լավատեսության ապրումակցության փոխօգնության 7 թե՛ չարի թե՛ բարու միջմարդկային հու սալի կապի հեռավորին սիրելու մարդու հոգևոր վերածննդի վրա և այլն

Կարծում ենք քրիստոնեական ուսմունքի դաստիարակչական հնարավորութ յունները կարելի է արդյունավետ օգտագործել հավատի ձևավորման **մեջ ավելի ճիշտ հավատաձևավորման հոգեբանական գործընթացում** Ցավոք առ այսօր հրապարակում եղած Բարոյագիտության բառարաններում դեռ տեղ չի գտել Հա վատ առանձին բառահոդվածը որպես այդպիսին իսկ Բացատրական բառարան ներում հավատ ը մեկնաբանվում է կա՛մ իբրև կայուն համոզմունք ինչ-որ բա նում ինչ-որ բան կատարելուց կա՛մ որպես գիտակցության այնպիսի վիճակ որը կապված է Աստծո գոյության ճանաչման հետ: Հոգեբանի բառարանում այն սահ մանվում է այսպես. ... մարդու հոգեկանի առանձնահատուկ վիճակը որն ի զորու է ամբողջական կերպով և անվերապահորեն ընդունելու ինչ-որ տեղեկություններ տեքստեր երևույթներ իրադարձություններ կամ սեփական պատկերացումներ ու մտահանգումներ որոնք հետագայում կարող են հանդես գալ որպես նրա Ես ի հիմք ընդունելով նրա արարքների դատողությունների վարքի նորմերի և հարա բերությունների աննշան մասը [2]

Պատմության դարավոր փորձը ցույց է տալիս որ առանձին անհատը իր անձ նային **Ես**-ով և ազգը՝ իր հավաքական Ես-ով չի կարող գոյատևել առանց հավատի որովհետև կորցնելով այն՝ միաժամանակ կորցնում է նաև իր **Ես**-ը՝ իրեն և անցում

[2] Словарь практического психолога. Сост. С. Ю. Головин . Минск . с. 2.

կատարում դեպի համլետյան երկընտրանքը՝ Լինել կամ չլինել Հավատը միակ բանական էակի՝ մարդու ոչ միայն հոգևոր այլ նաև մարմնական էության հիմքն է: Հատկանշական է այն որ հավատաձևավորման գործընթացը ո՛չ միայն արտա կարգ հակասական բնույթ ունի այլև խիստ անհատական անկրկնելի եզական և անվերջ երկար ու անընդմեջ շարունակվում է առհասարակ անձի ողջ գիտակցա կան կյանքի ընթացքում

Այդ առումով երբ պատմության արդարակշիռ իմաստասիրական նժարների վրա ենք դնում դարի կեսերի հայ ժողովրդի ընդվզումը Սասանյան Պարսկաս տանի դեմ մեկ անգամ ևս համոզվում ենք որ այն կրում էր արդարացի ու նրբի մաստ բնույթ որովհետև Սասանյաններն անցնելով իշխանության առաջին օրվա նից հայտարարեցին որ զրադաշտական կրոնի հավատո պաշտամունքը պետք է հաստատվի իրենց տիրապետության ներքո գտնվող բոլոր ժողովուրդների այդ թվում նաև հայերի մոտ:

Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ Սասանյանների վերաբերմունքն ու մտայնությունն իր ճշմարիտ արտացոլումն է գտել Ղազար Փարպեցու Հայոց պատմության մեջ Ինչպես պատմիչն է գրում Հազկերտ Ա-ն գիտակցում է որ հա յերը հույների հետ ունեն նույն հավատն ու նույն օրենքները [3] Սասանյանների կողմից իրականացվող հակաքրիստոնեական քաղաքականությունը բուն Հայաս տանում Մեծ Հայքում տարվում էր այն նկատառումով որ Արշակունյաց դինաս տիայի անկումից հետո Եկեղեցին իրավամբ հանդես էր գալիս երկրի կենտրոնա ձիգ ուժերը պահպանող և հզորացնող միակ գործոնի դերում այսինքն պատմա կան որոշակի ժամանակահատվածում Արշակունյաց Հայաստանի պետական կազ մակերպությունը և քաղաքական տեսակետից մասնատված երկիրը գտնվում էր հայոց կաթողիկոսի հոգևոր խնամակալության ներքո Եկեղեցին մեկ ամբողջութ յան մեջ միավորելով Մեծ Հայքի տարածքը շատ վաղ խթանեց հայ ժողովրդի հո գում ազգային առաջատար շահերի ընդհանրության ըմբռնումը Հոգևորի ու ազգա յինի միասնության լավագույն օրինակներից է Հազկերտին գրված պատասխան թուղթը Արտշատում կայացած ժողովին որին ներկա էին նախարարական դասից 7 իշխան և հոգևոր դասից՝ 7 եպիսկոպոս[4] Համաձայն ընդունված կարգի ժողո վը նախագահում էր մեծի դատավարութեան գործակալը՝ քահանայապետը՝ Հա յոց Կաթողիկոսական Աթոռի տեղապահ Հովսեփ Հողոցմեցին Արտաշատում էին հավաքվել հոգևորականության և նախարարական տների ու երկրի ավագանու ներկայացուցիչները որոնց մեծ մասը Սահակ-Մաշտոցյան դպրոցի նախկին սա ներն էին Նրանց բոլորին համակել էր հայ ժողովրդի Ես-ի պահպանության և հայ րենյաց սուրբ հողի վրա շուրջ հարյուր հիսուն տարվա քրիստոնեական հավատի ոգով ներշնչվածությունը ուր որ ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոց յանու

---

[3] **Ղազար Փարպեցի**. Հայոց պատմություն Դրվագ Ա. գլ. ԺԲ Եր. 7 աշխ. թարգմ. Բ. Ուլուբաբյանի էջ

[4] **Ղազար Փարպեցի** Հայոց պատմություն Բ. գլ. ԻԶ էջ Տփղիս 0 և **Եղիշե** .Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին Երևան 7 էջ 0

սումութենէ ասում է Եղիշեն

Հայ ժողովրդի ուսյալ և կրթյալ այս զավակները քաջ գիտակցում էին որ միայն ուսումն է մարդու մեջ զարգացնում սեփական **Ես**-ի վեհ ինքնագիտակցություն ինքնաճանաչողություն սեր մերձավորի հանդեպ և մարդասիրություն՝ ընդհանրապես Մենք պարսիկների դեմ անհավասար մարտի ենք դուրս եկել գրում է Եղիշեն այդ մարտը շահելու համար չպետք է երկնչել վարանել կամ դողալ. որովհետև «Մահ ոչ իմացեալ մահ է մահ իմացեալ՝ անմահութիւն

Մենք գիտենք թե ինչի համար ենք կռվում Մենք կռվում ենք մեր գոյության մեր երկիրը և մշակույթը օտարների ասպատակությունից փրկելու համար Այդպիսի կռվում մեռնելը անմահություն է ուստի դրանից սարսափելու հարկ չկա Առհասարակ երկնչի ի մահուանէ նա ով որ զմահ ո՛չ գիտէ իսկ որ գիտէ զմահ՝ ոչ՛ երկնչի ի նմանէ ***ասում է դարի մեծահանճար պատմիչը***

Հայոց դարձի ավանդական պատմությունը ներկայացնող Ագաթանգեղոսը գրում է որ թագավորական ընտանիքի բոլոր անդամները մկրտվում են Եփրատ-Արածանիի ակունքների մոտ Բագավան կոչվող վայրում[5] Նպատ սրբազան լեռան ստորոտում Գրիգոր Լուսավորչի կողմից որտեղ և Տրդատ Գ թագավորին շնորհվում է մկրտության Հովհաննես անունը Ի նշանավորումն այս իրադարձության հիմնվում է Սուրբ Հովհաննես բազիլիկ տաճարը Բագավանում: Այդ հիշարժան արարողության ավանդական տարեթիվն է 0 Ի փառաբանումն այդ իրադարձության երկրի մայրաքաղաք Վաղարշապատում մոտ 0 թ. կառուցվեց և օծվեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարը 0 թ. քրիստոնեության պետականորեն ընդունումը Հայաստանում խթան հանդիսացավ ազգային-հոգևոր ուրույն դիմագծով հայկական պետականության կառուցման կարևոր գործում Քրիստոնեությունը որ սկսել էր ձևավորվել անտիկ աշխարհի մայրամուտին և արդեն դդ. բավական տարածում էր գտել Մերձավոր Արևելքի երկրներում Հայաստան թափանցեց հիմնականում Հռոմից Բյուզանդիայից Կապադովկիայից Ալեքսանդրիայից և Եդեսիայից

Հայոց Եկեղեցին իր կարևորագույն նպատակներից մեկն էր համարում գոյություն ունեցող միջիշխանական և միջնախարարական երկպառակությունների վերացումը և հայ ազգային ինքնագիտակցության՝ կենտրոնաձիգ ազգային **Ես**-ի՝ հայկական պետականության ստեղծումը Հայաստանում քրիստոնեության հաստատումը բարոյապես օգնեց նաև իր սահմաններում բնակվող տարբեր ազգային փոքրամասնություններին պահպանելու իրենց ազգային մշակույթը լեզուն հավատը ազգային ինքնագիտակցությունը և այլն Նորից վերհիշենք ուխտապահ-հայրենասեր Մամիկոնյան տոհմի հարազատ զավակ Հայոց անվեհեր զորապետ Վարդանի անձնուրաց պատասխանը արքայից արքային

Սասանյանները սկսել էին Հայաստանում ավելի կտրուկ քայլեր ձեռնարկել որոնցից մեկն էր պարսկական արքունիքի ներկայացուցիչ Դենշապուհի կողմից անցկացված աշխարագիրը որով շինականների ու ռամիկների հետ արդեն հար

[5] **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, 833-834, էջ 396, տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան. հտ. Գ, էջ 539:

կատու էր դառնում նաև հոգևորականությունը որը մինչ այդ ապահարկ էր Սա սանյանների հիմնական նպատակը Հայ Եկեղեցու դերի չեզոքացումն էր Արշակու նի թագավորները ժամանակին մտածում էին թե Եկեղեցու հզորացումը նպաստում է երկրի կենտրոնաձիգ իշխանության ուժեղացմանը քանզի փոխադարձաբար Ե կեղեցին վայելում էր պետության հովանավորությունը պայքարելու հեթանոսութ յան և տարբեր տեսակի հերձվածների դեմ Իսկ Տրդատ Գ Մեծի ժամանակվանից արդեն քրիստոնեական Եկեղեցին դարձավ Հայաստանի ու Հռոմեական կայսրութ յան քաղաքական մերձեցման կարևորագույն գործոններից մեկը չնայած որ Դիոկ ղետիանոսի կողմից 0 թ. հալածանքներ են սկսվում քրիստոնեության դեմ որը շարունակվում է նաև Մաքսիմիանոս Գայա 0 թթ. կայսեր գահակալության վերջին տարիներին

Բայց ուշ շրջանի որոշ պատմիչների բնութագրմամբ՝ հռոմեա-հայկական ընդ հարումներն ունեին քրիստոնյա Հայաստանը հեթանոս Հռոմի դեմ իր հավատը պահպանելու հետևողական պայքարի բնույթ Քրիստոնեությունն ընդունելուց հե տո Մեծ Հաքի արտաքին քաղաքականության ղեկավար դերում Հայոց արքայի հետ միասին հանդես է գալիս նաև Հայ Եկեղեցու առաջնորդը

Շուտով հասնում է երկու խիստ իրարամերժ և անհարիր՝ քրիստոնեական և զրադաշտական հավատների բախման անխուսափելի պահը ուր առաջինը մար տադաշտ էր ներկայացել ի փառս իր հավատի և հայրենյաց պաշտպանության իսկ մյուս կողմի նպատակը բոլորովին այլ էր Հայոց բանակի առաջնորդ և զորագլուխ քրիստոնեական Եկեղեցու արժանավոր զավակ Վարդան Մամիկոնյանն իր ախոր ժալուր և բաղձալի խոսքերով հորդորական տոնով քաջալերում էր իր զինակիցնե րին որ Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից... իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում ընդունենք ուրախ սրտով միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառ նենք [6] քանզի Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից նրա հետ վախն էլ թող փախչի մեր մտքերից ու խոր հուրդներից [7]

Հայոց բանակում ունեցած իր հեղինակությամբ աչքի էր ընկնում Ղևոնդ Երեցը որը քաջալերում էր ապստամբներին Հայոց պատերազմ ում թ. Ավարայրի ճակատամարտում 0 նահատակների թվում իմացյալ մահով անմահացան ինը ուխտապահ *(Հ. Մ.* նախարարներ իրենց զորագնդով[8] Այստեղ լավ է հնչում դարի Հայոց մեծագույն պատգամախոս Գարեգին Նժդեհի այն խոսքը թե Մարդ կային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը Հայրենիքի չափ նվիրական է և պատերազմը հայրենական Հավաքական ավազակություն և սպանություն է այլ կարգի ամեն պատերազմ [9]:

---

[6] **Եղիշե**, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1971, էջ 99:

[7] Նույն տեղում էջ 95:

[8] Նույն տեղում: **Փարպեցի**. Բ, ԼԹ, էջ 171:

[9] **Գարեգին Նժդեհ**. Ասույթներ: Ե., 2002, էջ 58:

դարի հեղինակ Եզնիկ Կողբացին քրիստոնեական հավատի և հայրենասի
րության սկզբունքներից ելնելով քննադատում է զրադաշտական դուալիզմը երկ
վությունը առաջ քաշելով ո՛չ միայն Աստծո և նյութի այլ նաև չարի և բարու փոխ
հարաբերության հարցը որը հեթանոսական կրոնների հատկապես զրադաշտա
կանության մեջ բարոյական նորմերի նշանակություն չուներ

Հատկանշական է այն որ պարսից կրոնը քննադատելիս Եզնիկը միաժամանակ
կանգ է առնում քէշին պարսից ծննդաբանության վրա որից հետո հերքում է այն
Համաձայն այդ կրոնի սկզբում ոչինչ գոյություն չի ունեցել Ո՛չ երկինք և ո՛չ երկիր
և ո՛չ այլ արարածք՝ բախտ կամ փառք Զրվանը հազար տարի բարսմունքը[10] ձեռ
քին զոհ էր մատուցում որպեսզի մի որդի ունենա որի անունը կնքի Որմիզդ որն
ստեղծի երկինքը երկիրը և նրանցում գտնված ամեն ինչ Նա հազար տարուց հետո
երկվության մեջ է ընկնում. Օգուտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ և մինչդեռ Զրվանը
մտածում էր այսպես Որմիզդն ու Արիմանը ծնունդ են առնում նրա արգանդում Որ
միզդն ի յաշտ առնելոյ և Արիմն ի յերկուանալոյ անտի

Զրվանը իմանալով որ իր արգանդում արդեն ձևավորվել են երկու որդի ասում
է որ նրանցից ով շուտ ծնվի նրան կդարձնի թագավոր Այս բանը հոր արգանդում
նախ իմանում է Որմիզդը որ իրազեկ է դարձնում Արիմնին սա լսելով այն՝ ծակում
է որովայնը և կանգնում հոր առաջ։ Զրվանը չճանաչելով չար որդուն՝ հարցնում է
թե ո՞վ է նա Արիմնը պատասխանում է որ ինքը նրա որդին է Զրվանը զարմանքի
մեջ ընկնելով ասում է. Իմ որդին անուշահոտ և լուսավոր է և դու խավարային և
ժանտահոտ ես Հենց այս խոսակցության միջոցին ծնվում է բարի լուսավոր և ա
նուշահոտ Որմիզդը որին Զրվանը հանձնում է իր ձեռքի բարսմունքը և ասում.
«Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի յասմհետէ դու վասն իմ առնիցէս [11]

Այս արարողության ժամանակ Արիմնը մոտենում է Զրվանին և նրանից պա
հանջում կատարել իր խոստումը Հայրն իր խոսքը չդրժելու համար չար որդուն
ինն հազար տարի ժամանակով հանձնում է թագավորությունը՝ նրա վրա հսկիչ
կարգելով Որմիզդին որին նշված ժամանակը անցնելուց հետո Արիմնը պիտի
հանձնի թագավորությունը Այնուհետև Որմիզդն ու Արիմնը սկսում են արարչութ
յամբ զբաղվել տիեզերքում գտնվող բոլոր բարի արարածներին ստեղծում է առա
ջինը իսկ չար ու անօգտակարներին՝ երկրորդը[12]

Զրադաշտական երկվության հիմնական թերությունը ըստ Եզնիկի ներքին հա
կասությունն էր և պարզունակությունը Նրանք ասում էին թե ամենից առաջ գո
յություն է ունեցել Զրվանը որը ծնել է Որմիզդին ու Արիմնին Լավ ասում է Եզնի
կը բայց չէ՞ որ դա տրամաբանական չէ Եթե Զրվանը եղել է ամենից առաջ ապա
ուրեմն նա կատարյալ է եղել։ Եթե այդ այդպես է ապա այդ դեպքում կատարեալն

---

[10] Ըստ Ստ. Մալխասյանի բարսմունք է «ծառի բարակ ճյուղերի խուրձը, որ մոգերը բռնում էին ձեռներին՝ կրոնական արարողություններ կատարելիս» (տե՛ս Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, էջ 351. Եր.. 1944)։

[11] Տե՛ս **Եզն|ւկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Ե., 1970, էջ 85-86:

[12] Նույն տեղում, էջ 89:

յումմէ՞ կարաւտանայր խնդրել որդի որ գայցէ և զերկինս առնիցէ զի եթէ կատարեալ էր ինքն իսկ կարող էր առնել զերկինս ու զերկիրս...

Եզնիկ Կողբացին անհավանական է համարում հեթանոսների դրույթն այն մասին թե Զրվանը հարկ համարեց կամ հարկադրված եղավ ունենալ երկու ժառանգներ Որմիզդ՝ բարության աստված և Ահրիման՝ չարության աստված Բայց մի՞թե հնարավոր է որ միևնույն անձից երկու հակադիր դեմքեր ծնվեն հարցնում է նա և պատասխանում. Որովհետև երբեք չտեսանք որ կովերը էշեր ծնեին էշերը՝ եզներ և ոչ էլ գայլերը՝ մաքիներ մաքիները՝ աղվեսներ առյուծները ձիեր ձիերը՝ օձեր սակայն մի ծնունդ կա միայն որը մարդիկ բնության օրենքներից դուրս հնարեցին ձիերից և էշերից ջորիներ ծնեցնել նրանք էլ անսերմ են ու անծնունդ են Արդ՝ եթե Զրվանը ցուլ էր կարիճ Ահրիմանին ինչպե՞ս էր ծնում եթե գայլ էր գառ Որմիզդին ինչպե՞ս էր ծնում Պարզ չէ՞ որ սրանք մարդկանց մտքի ցնդաբանություններ են [13]:

Եզնիկը վարպետորեն է վեր հանում պարսից հեթանոսության ծայրաստիճան նաիվ մտածելակերպը և տրամաբանական դատողության իսպառ բացակայությունը Նա ապացուցում է որ պարսիկների պնդումը այն մասին թե ամենից առաջ եղել է Զրվանը անհնար է Նրանց հավաստիացումը թե Զրվանից ծնվել են երկու աստվածներ դա խիստ հակասում է պարզ բանականությանը որովհետև միևնույն ծառից երկու հակադիր տեսակի պտուղներ ստանալ՝ մեկը քաղցր մյուսը՝ դառն անհնար է ուստի անհիմն է նաև չարի և բարու աստվածների ծնունդը միևնույն մարդուց

Վարքի բարոյական և կրոնական նորմերը փոխադարձաբար կապված են և շատ մեծ ընդհանրություն կա նրանց միջև Այսպես օրինակ հավատացյալների հոգևոր բարոյական կարգավորումն ի սկզբանե իրականացվել է և այսօր էլ շարունակում է իրականացվել կոնֆուցիականության բուդդիզմի քրիստոնեության իսլամի հուդաիզմի կրոնական բարոյականության միջոցով Կրոնական բարոյախոսությունը՝ կրոնի կողմից քարոզվող կոնկրետ բովանդակություն ունեցող բարոյական նորմերի հասկացությունների արժեքների որոշակի համակարգ է Չնայած մուսուլմանների քրիստոնյաների և բուդդիստների մոտ առանձին-առանձին գոյություն ունի հաղորդությունների բարոյագիտական համակարգման ակնհայտ տարբերություն այնուամենայնիվ **նրանում ներկայացվում են որոշակի ընդհանրություններ քանի որ համաշխարհային կրոնների կողմից քարոզվող մշակույթների հիմքում որպես համամարդկային արժեքներ հիմնականում ընկած են սիրո հույսի հավատի արդարության և անձի նկատմամբ հարգանքի համամարդկային բարոյախրատական ըմբռնումները**

Մեր կարծիքով այսօրվա պայմաններում ժողովուրդների խաղաղ համակեցության պահպանմանը էապես կնպաստի էկումենիզմը թ. ստեղծվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը ԵՀԽ որտեղ ձևակերպվեց և հաստատագրվեց էկումենիկ շարժման նպատակաուղղվածությունը ԵՀԽ-ն պարբերաբար ծրագրեր է մշակում պայքարելու անարդարության ցեղապաշտության ռասիզմի և սո

[13] Նույն տեղում:

վի դեմ քարոզելով խաղաղություն և բարի դրացիական հարաբերություններ հո ղագնդի բոլոր ազգերի ու ժողովուրդների միջև Սոցիալական փորձը ապացուցում է որ հոգեպես հարուստ հասարակությունն ամենուր ձգտում է հաղթահարել ամեն կարգի մոլեռանդություն և անհանդուրժողականություն որ խղճի դաստիարակութ յունը պետք է լինի անձի՝ սեփական **Ես**-ի ազատ և անկաշկանդ կամավորության սկզբունքով Այսօր արդեն հողագնդի մի շարք մտածողներ և հասարակական գոր ծիչներ արտահայտվում են ՄԱԿ-ի օրինակով Կրոնների Միացյալ Կազմակեր պության ստեղծման մասին ինչպես նաև պետություններին և միջազգային կազմա կերպություններին իր բարոյական հեղինակությամբ աջակցելու որպեսզի հեշտո րեն լուծվեն խաղաղության հարցերը ժողովուրդների ու դավանությունների միջև

Կապված հայրենասիրական դաստիարակության բարոյական և կրոնական հո գևոր կողմնորոշման հետ կարելի է առանձնացնել անձի նվիրվածությունը իր ժո ղովրդին նրա հոգևոր-նյութական արժեքներին ու ազգային սովորություններին

Մովսես Խորենացու Հայոց պատմությունն ամբողջությամբ այդ նպատակն է հետապնդում Անկեղծ ու անկաշառ հայրենասիրություն սեր դեպի ազատությու նը դեպի ժողովրդի մշակութային բարգավաճումն ու տնտեսական բարեկեցությունը: Իր հետապնդած նպատակներն ավելի ներազդու ձևով քարոզելու համար Խորենա ցին ստեղծում է Հայկի Արամի Տիգրանի Արտաշեսի և մյուսների բարոյապես ա ռաքինի ու վսեմ կերպարները և պատմում նրանց քաջագործությունների հայրե նասիրության մասին Նա ցույց է տալիս որ Եղիշեի նշանաբանը թե Մահ իմա ցեալ անմահութիւն է միշտ էլ բուն ժողովրդի նշանաբանն է եղել և նրա ղեկա վարները իրավունք չունեն շեղվելու այդ ուղուց Դեռ ավելին նա վստահեցնում է որ մեր նախնյաց այդ թվում և ղեկավարների հիմնական հոգսը միշտ էլ եղել է երկ րի անկախության պահպանումը Իր դրույթն ապացուցելու համար նա օրինակ է բերում Տիգրան Երվանդյանին

Կերտելով իր հերոսների հայրենասիրական կերպարները Պատմահայրը ձգտել է նրանց օրինակով ժողովրդական զանգվածներին խիզախության կոչել «Մեր նախնիները քաջեր են ասում է նա ուստի ես սիրով եմ ըստ նրանց քաջութ յան այսպես կոչել Հայկ Արամ Տիգրան որովհետև քաջերի սերունդները քաջերն են իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է թող կոչի [14]

[14] Նույն տեղում, էջ 119:

ՌԱԻՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՈՒՍԳԵՏԻ ԽԱՉԹՈՒՐՆ (Ս. ԽԱՇԹՐԻԿ) ՈՐՊԵՍ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՄՈԴԵԼ

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ պատմականորեն ձևավորված ու զարգացած գեղարվեստական կայուն ձևերը (ժանրային) ենթադրում են կառուցվածքային և իմաստաբովանդակային խորքային քննություն, քանզի բանավոր փոխանցվող գեղարվեստական ստեղծագործության զարգացման գործընթացում կառուցվածքն ինքնին առաջադրում է «ազգային մոդելների»[1] ըմբռնում, իսկ ինվարիանտ կայուն ձևերն իրենց մեջ ներառում ու խտացնում են անցյալի հիշատակներ և «ստեղծագործական հիշողություններ»[2], որոնք անպայմանորեն հենվում են ազգային լեզվամտածողության, ավանդույթների և էթնիկական մշակութային ժառանգության վրա:

Միանգամայն իրավացի է Գ. Հովսեփյանը, որը, քաջատեղյակ լինելով և գնահատելով բանահյուսական նյութի սկզբնաղբյուրային դերն ու նշանակությունը, ազգի գոյության հիմքը համարում է նրա «անցյալի գիտակցությունը», մշակույթը, որի իսկական արժեքը պետք է ճանաչել, գնահատել ու պահպանել[3]:

Մերօրյա ազգային ազատագրական պայքարի երգերում կայունացել է յուրատիպ մի բանատող-երդում-բանաձև. ուխտել ենք կռվել խաչով ու սրով[4], որը ներծծված է ազգային լեզվամտածողությամբ ու գաղափարաբանությամբ, քրիստոնեական հավատքի, հայրենիքի պաշտպանության ու ազատության ձգտումներով: Նախատիպային այս բանատողի գեղարվեստական վերարտադրության հիմքը քրիստոնեական հավատքի և հայրենիքի փրկության գաղափարն է, որը գալիս է դարերի խորքից. հայ ժողովրդի բանավոր ավանդությունից, վիպական հերոսապատումներից, վիպաբանաստեղծական ակունքներից: Այն աղերսվում է հայոց ազգային ավանդության հետ, ըստ որի՝ Գրիգոր Լուսավորիչը Հայոց թագավորի հետ գալով Սասնո լեռնաշխարհ՝ Կուսգետի քարայր-տաճարում խորտակում է բոլոր կուռքերին և կանգնեցնելով «քարե վեմը»՝ օծում է այն և վրան բարձրացնում Հայոց թագավորի սուրը (խաչ-թուր), որը Սասնո բարբառում դարձավ Ս. Խաշթրիկ, սրբավայր, ուր աղոթում էր ողջ Կուսգետի ժողովուրդը (հայ թե քուրդ)[5]: Մատենագիտական տվյալնե-

---

[1] **Հ. Մարգարյան**, Փոքր պատմողական ժանրի բանահյուսական ակունքները - Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը, Երևան, 1976, էջ 188:

[2] **М. Бахтин**, Проблемы поэтики Достоевского, М., 1963, ст. 142.

[3] **Գ.Հովսեփյան**, հ. Ա, Երևան, 1983, էջ 20:

[4] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, Ռ. Խաչատրյանի ֆոնդ, FR I: 3419, այսուհետ՝ FR I:

[5] **Սեյլան**, Սասուն, Երևան, 1990, էջ 102-103:

րով[6] Դարձի ճանապարհին Գրիգոր Լուսավորիչը, Հայոց Տրդատ թագավորի հետ կործանելով հեթանոսական մեհյանները, խաչեր է կանգնեցրել՝ կանխորոշելով եկեղեցիների տեղը[7]:

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ խաչն ու թուրն իրենց խորհրդապաշտական, իմաստաբանական շերտերով դրսևորվել ու կայունացել են իբրև ազգի ինքնաճանաչման, ազգային ինքնագիտակցության և ազգապահպանության կարևոր ցուցիչներ: Իրենց ծիսապաշտամունքային դերով խաչն ու թուրը հայոց ծիսակրոնական արարողություններում, հատկապես հարսանեկան ծեսում հանդես են եկել որպես պսակադրությունն իրագործող (նվիրագործող) սրբազան պահպանիչներ: Իրենց հավատալիքային դրսևորումներով՝ խաչն ու թուրը ժողովրդական պատկերացումներում հմայական պահպանակների դեր են կատարել, և պատահական չէ, որ հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ բոլոր դռներն անցնելիս հարս ու փեսայի գլխին երկաթե ու պողպատե զենքեր են պահել, իսկ եկեղեցում քավորը զույգերի առջև մի ձեռքով սուրն էր պահում, մյուսով՝ խաչն ու Ավետարանը[8], ինչպես թագավորագովքում է հիշատակված. = Օրհնյալ է Աստված, խաչ հանեք գլխուն[9]:

Թուրը իբրև խաչկապ (գոգբանդ) պահել են փեսայի կրծքին (հմմտ. ժող. երգերում՝ Թուրը խաչկապ արեցին)[10]: Սասունում եկեղեցական պսակադրության ժամանակ քավորը քահանայից վերցրած խաչը պահում էր հարս ու փեսայի գլխին, իսկ սուրը՝ աջ ձեռքին: Փեսան կրում էր խաչ-պսակ (հմմտ. իրանահայոց մեջ՝ խաչ-նշան).

= Թագվորին գովենք օրշնելով
Գլխին՝ խաչ-նշան ունենա[11]:

Հարսանեկան «նարոտը» կարմիր-կանաչ թելերով (առնականություն–կուսություն) պատրաստելուց հետո, քահանան օրհնում էր «կենաց գինին» և սուրը. «Օրհնյալ է սուր, որով լինի արդարություն» և վերջինս, անցնելով հարս ու փեսայի ձեռքերի (նախապես միացված) միջով, կապում էր «նարոտը»՝ ի նշան միության և ամրության[12]:

Թուրը (սուր, սուսեր) բնիկ հայկական բառ է և ունի հնդեվրոպական ծագում. հնխ. tor արմատից, որը tero-ի ձայնադարձն է և նշանակում է «շփելով մաշեցնել» (հմմտ. քարե դարում՝ շփելով քարը մաշեցնել), այնուհետ՝ ծակել (պարիսպ ծակելու

---

[6] Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 777-779:

[7] **Հ. Հակոբյան**, Մեհյանների կործանումն ու Հայոց Դարձի որոշ մանրամասներ, Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 145:

[8] **Ա. Իսրայելյան**, Հմայական պահպանակները հայոց հարսանեկան ծիսակատարություններում (XIX- XX դդ.), ՀՊՊԹ, գիտական նստաշրջան, թեզիսներ, Երևան,1985, էջ 25:

[9] **Ռ. Խաչատրյան**, Թալին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Երևան, 1999, էջ 115, այսուհետ՝ ՀԱԲ 19:

[10] FR I: 3277:

[11] ՀԱԲ 19, էջ 116:

[12] **Վ. Պետոյան**, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 262-265:

գործիք) սանս. tura – վիրավորել, վնասել, ֆին. tuura, էստն. tuur – նիզակ, տեգ[13]:

Հայ ժողովրդական «Սասնա ծռեր» հերոսավեպում խաչն ու թուրը եղել են Սասնա հերոսների հանդերձանքի անբաժանելի մասը: Խաչն իբրև հմայիլ-թալիսման եղել է Սասնա ծռերի բազպանը, ոսկե խաչը, որը կրել են կռվի ժամանակ, «սուրբ նշանը» (թաղված ավերակ եկեղեցու հիմքում) և «Մսէ խաչը», որն ի ծնե դաջված է եղել Դավթի մեջքին, աջ բազկին[14] կամ անութին (հմմտ. «Ջոջանց տուն...» պատումը): Խաչն ու թուրը նախնիներից անպայմանորեն պետք է ժառանգվեր Դավթին (Մարութա խաչ – կայծակի թուր – Ոսկե գոտի)[15]: Հանդերձանքն իբրև ժառանգություն ընդգծում էր նաև նրանց արքայական ծագումն ու սերնդաբանությունը. = Մենք թագավորական ծնունդ ենք[16]: Ըստ Մեստրե Աֆոնսոյի (պորտուգալացի ճանապարհորդ, որն այցելել է Սասուն, Բիթլիս, Խլաթ) հիշատակության՝ Դավիթը եղել է մի հսկա թագավոր, որը սիրել է որսորդություն և տիրել համայն Հայաստանին, նա հարկատու է դարձրել նաև Կահիրեի սուլթանին (Մսրա Մելիք)[17]: Լինելով բարի ու մարդասեր թագավոր՝ նա ապրել է «հետին աղքատի նման»[18] և աղքատի համար, քանզի գիտեր, որ իր նախնիները «Ջոջանց տունն» հիմնելիս սկզբում չքավորների համար են տուն կառուցել և ապա հիմնել իրենց Սասնա բերդը: Վիպական այս մոտիվը (դեմոկրատական հերոս) առկա է նաև «Ասլան աղա» վիպերգում[19], կրոնամիստիկական դրսևորումներով թագավորի տղա Ասլանը կռվի է կանչում Գաբրիել հրեշտակին՝ իր աղքատի հոգին առնելու համար (հմմտ. բիբլիական ավանդապատումներում՝ նահապետական թագավորի (թագավոր-ռամիկ) կերպարը[20]: Խաչը (խաչ-պատարագին, խաչ-պատերազմին) իբրև ռազմական հանդերձանք[21] իր ազգապահպան դերով ու գործառույթով հանդիպում է վեպի գրեթե բոլոր պատումներում: Արտատեր պառավը (Նանեն) հորդորում ու պատվիրում է Դավթին տեր կանգնել հոր զենքին ու հանդերձանքին.

= Գնա, յուզէ զքու հոր ձին,
Խաչ – պատերազմին,
Քո հոր կայծակի թուր,
Օսկե գոտին՝

---

[13] **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 208-209:

[14] Սասնա ծռեր, հ. Դ (Նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Սարգ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 208-209:իս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի), Երևան, 1999, էջ 404-405, Սասնա ծռեր (աշխատասիրությամբ Սարգիս Հարությունյանի), Երևան, 1977, էջ 626-627:

[15] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, Երևան, 2000, էջ 210:

[16] Նույն տեղում, էջ 210:

[17] Սասնա ծռեր, Երևան, 1977, էջ 626-627 (**Ս. Հարությունյան**, Կուլտուր-պատմական ակնարկ):

[18] Սասնա ծռեր, հ.Դ, էջ 91:

[19] **Գ. Հովսեփյան**, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1893, էջ 5:

[20] **Զ. Կոսիդովսկի**, Բիբլիական ավանդապատումներ, Երևան, 1970, էջ 405:

[21] Սասնա ծռեր, հ. Դ, էջ 404-405:

Օր էրթաս – կռվիս[22]:

Սասնա հերոսները ժառանգաբար տիրանում և ապավինում են իրենց պահապան «Թուրն կեծակիին – խաչն պատարագին»[23] և նվիրյալ ու հավատարիմ են իրենց՝

ա) Քրիստոնեական հավատքին ու բարոյագիտությանը. = Մենք խաչապաշտ, աստվածածանոթ ժողովուրթ ենք[24]:

Պատահական չէ, որ պատումներից մեկում հայ իշխանը իր (ժողովրդին փրկելու, չկոտորելու նպատակով) աղջկան կնության է տալիս Նինվե քաղաքի Սենեքերիմ թագավորին և աղջկա խնդրանքով նրա հետ ծպտված քահանա է դնում, որը «Գողտուկ գը գարթեր թաքուհու համար»[25]:

բ) Նախնիների (ցեղի, տոհմի) պաշտամունքին. Դավիթն աղոթում է Մարութա Ս. Աստվածածնի վանքում. «Ով Թորգոմի, Արամի ու մըր պապերի Աստված տուր ըմ մանուկ թեերուն զորուտեն, ուար կառնամ կոտրըմ զքու սուրբ կրոնի նաեարնին, ուար դրածին մեջ ուրանց մտքին՝ գոտորին ուար քյանվան մկրտվող ժողովրդվուն և բղձին զքու սուրբ տաճառնին»[26]:

Երկվորյակ եղբայրները մոր խորհրդով՝ փախչում են կռապաշտ հորից և ապավինում իրենց նախնիների հավատքին ու էրգրին (հավատք – հայրենիք – պապերի էրգիր - բնօրրան).

= Գացեք իմ զառներ,
Հայ քրիստոնեայի էրգիր՝
Զըր պապու էրգիր[27]:

գ) Ինքնապաշտպանական մղումներն ու հայրենիքը փրկելու գաղափարին.

= Մըր սրբություն, հույս, հավադ,
Սասունա բերդ[28]:
= Էյ, սուրբ Մարութա վանք ... օգնա
Ընձի փրկենք Սասուն-հայրենիք[29]:

դ) Եկեղեցաշինության, երկրի շենացման ու բարգավաճման գաղափարին: Դավիթը հրեշտակի խորհրդով նորոգում է Մարութա վանքը.

= Քանդուկ վանք տեսավ, սիրտ մղկտաց,
Չոքեց վանքի պատեր, քարեր պագեց,
= Վանք շինեց, շենցուց, մէ լավ էլ աղոթեց[30]:

ե) Սասնա հերոսները տեր են ոչ միայն իրենց խաչ – թուր – հանդերձանքին, Ս.

---

[22] Սասնա ծռեր, հ. Դ, էջ 355:
[23] Սասնա ծռեր, Երևան, 1977, էջ 588:
[24] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, Երևան, 2000, էջ 199:
[25] Սասնա ծռեր, հ. Դ, էջ 133:
[26] Նույն տեղում, էջ 121:
[27] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, էջ 202:
[28] Նույն տեղում, էջ 23:
[29] Նույն տողում, էջ 254:
[30] Նույն տեղում, էջ 225:

Խաշթրիկ սրբավայրին (մենք ունինք սբբ. Մարաթուկ, սբբ. Խաշթրիկ)[31], այլև Ջոջանց տան «որձ ջրին»[32], նրա ողջ ինչքին ու հարստությանը՝ հալածելով ու ոչնչացնելով օտար հարստահարողներին ու հարկահաններին (հմմտ. Դավթի վեճը հորեղբայր Օհանի հետ՝ ոսկին չափելիս). = Մըր օսկին լը՝ թող մնը մըզի[33]:

Սասնա ծռերի գերագույն նպատակը (որն ավանդվել է վեպում իբրև ազգային գաղափարախոսություն) եղել է ցեղի, ժողովրդի, հայրենիքի փրկության, ազատության և անկախության գաղափարը: Նրանք երբևէ չեն հանդուրժել օտար հարստահարողների շունչն ու տիրակալությունը . = Մընք մըր էրգիր գդիրինք[34]: Պատահական չէ, որ ազատագրական պայքարի «ամենաթեժ բնօրրանը» (Արշակունիներից հետո) դարձավ Սասնո լեռնաշխարհը[35]: Հնագույն ժողովրդին բնորոշ անհաղթելիության մոտիվը, կապված թրի հետ, խիստ բնորոշ է հայ ժողովրդական հեքիաթներին ու վեպին: Պատումներից մեկում երբ Մելիքը Դավթին խաբեությամբ հորն է գցում, Դավթի ձին՝ Քուռկիկ Ջալալին է առաջինը փրկում Դավթի թուրը:

= Քուռկիկ Ջալալին թռավ դուս.
Հուր օդաց տակ խող փորեց,
Դուման հանեց,Դավթի թուրն առավ,
Թուրն առավ բերան՝ իջավ դաշտ[36]:

Մեր գրառած վիպական մոտիվներով հարուստ հրաշապատում հեքիաթում. «Բզդի դղան»[37], հերոսի ուժն ու զորությունը, ինչպես նաև հոգին թրի մեջ է. «Ըմ հոկին ըմ թուրն ը, ըր թուր քըշին ուր դեխեն գործուն՝ յըս մեռուգ իմ»: Կախարդ պառավը (ծծում հեձնող) մոլորեցնում է Քառսուն-Ծամ աղջկան և իմանալով գաղտնիքը՝ գողանում է թուրը և գցում ծովը: Եղբայրներն իրենց շնորհքով ու հնարամտությամբ հանում են թուրը ծովից, և տղան վերակենդանանալով՝ ամուսնանում է Քառսուն-Ծամ աղջկա հետ: Թուրը պաշտվել է հնագույն ժողովուրդների՝ խեթերի, խուռիների, իրանյան ցեղերի կողմից, իսկ օսական էպոսում հերոսը՝ Բաթրազը, նույնանում է իր իսկ թրի հետ[38] (հմմտ. մեր գրառած հեքիաթը):

Հայոց վիպական ավանդությունը իր տևական ու տարողունակ գործընթացով գեղարվեստական ժամանակի մեջ դառնում է խիստ արդիական (ներկա)՝ ընդհանրացնելով ու տիպականացնելով իր ազգային առանձնահատկությունները, ձգտումներն ու գաղափարները՝ կառուցվածքային որոշակի ենթաշերտ – հիմք – ինվարիանտ – կաղապարատիպերով (մոդել), վիպացիկլերին բնորոշ ներքին տրամաբանությամբ (ազգային ոգու ժառանգական փոխանցմամբ) վիպաբանաստեղծական

---

[31] **Մեյլան**, Սասուն, էջ 101:
[32] Սասնա ծռեր, հ. Դ, էջ 25:
[33] Նույն տեղում, էջ 313:
[34] Սասնա ծռեր, հ. Դ, էջ 313:
[35] Նույն տեղում, էջ 7 (առաջաբանը Ս. Հարությունյանի):
[36] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, էջ 109:
[37] **Ռ. Խաչատրյան**, Թալին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, էջ 48-49:
[38] **Ա. Պետրոսյան**, Արամազդ, Երևան, 2006, էջ 31:

մակարդակում՝ ներհյուսելով առասպելականը, հեքիաթայինն ու վիպականը: Պատմա-հոգեբանական որոշակի կենսափորձով, ժամանակի թելադրանքով ու անհրաժեշտությամբ, ժողովրդի գիտակցության մեջ կարևորվում ու կայունանում են ազգային խտացված ու մոդելավորված գաղափարները (խորհուրդ բանաձևումներով, գեղարվեստական դերով ու հանդերձով), որոնք ավանդույթի ուժով փոխանցվելով՝ դառնում են ազգի բնավորության, հոգեկերտվածքի (մենթալիտետ) ոգու շարունակականության ավանդակիր-ուղեցույցներ (ներկա դեպքում՝ խաչ-թուրը): Ժողովուրդն իր հավատքով ու ինքնապաշտպանական մղումներով կերտում է իր լավագույն հատկանիշները կրող, խտացնող «ազգի փրկիչ» հերոսներին, որոնց կերպարները գրեթե նույնանում են հայրենիքի գաղափարին (Դավիթ - Անդրանիկ - Գևորգ Չաուշ - Սասուն), (Գ.Նժդեհ – Լեռնահայաստան) և նրանց ազատությունն ու փրկությունը ապահովող թրին:

Հայոց ազգային ավանդավեպերում կարևորվում և հիշատակվում է նաև թրի «պատկանելիության» գաղափարը, որն աղերսվում է ազգածագման ավանդապատումին ու սերնդաբանությանը (հմմտ. «Արամի ավանդավեպում»[39] նրա թրի վրա կարդում են «Հայաստանը տիրող թագավոր Արամ»): Այն ընդգծում է ազգային-էթնիկական հերոսների և մերօրյա հերոսների ոգեղեն ժառանգական կապը, ինչպես նաև նրանց թրի ժառանգականությունն ու պատկանելիությունը (Արամի թուր – Տրդատի թուր (Հավլունի թուր) - Դավթի թուր - Անդրանիկի թուր – Մերոբի թուր և այլն)՝ միաժամանակ ընդգծելով հայրենիքի փրկության, ազատության ու արդարության խորհուրդը (հմմտ. Սասնո ասույթ - բանաձևը՝ Լաո, արդարություն թրի ձերինը)[40]:

Այստեղից էլ՝ թրի «ընծայաբերումը», «գերի ընկնելը», «թրի անվան հռչակումը», այն իբրև «պատերազմական ավար» դիտելը և այլն (հմմտ. Գ. Նժդեհը իր մոտ էր պահում թշնամու՝ Զավալ փաշայի թուրը) [41]:

Եթե հայոց վիպամտածողության մեջ Սասնա հերոսները մշտապես ապավինել են իրենց փրկությունն ու արդարությունն ապահովող խաչթրին, ապա աշխարհի անարդարությունների հետ անհաշտ ու միայնակ Փոքր Միհրը խորապես զգում ու ապրում է չար աշխարհի դեմ ժողովրդի (աղքատ, անզոր մարդու) տառապանքն ու ողբերգությունը. «Աշխարհք՝ չար ի դհա»[42], «Իսան մանդրցեր ա»[43], «խողն խալբցեր, սադանություն աշխարհ բռներ ա»[44]: Եվ ժողովուրդը կրկին երկիր-աշխարհի փրկությունը կապում է իր ազգային ավանդակիր-դեմոկրատական հերոսի՝ փոքր որդու - Փոքր Միհրի, ներկա դեպքում՝ փոքր Դավթի հետ: Այս տեսակետից յուրատիպ մի մեկնություն է մեր գրառած (1986 թ.) մերօրյա վիպասաց, բնիկ սասունցի (Տալվորիկ-Սպաղանք) 86-ամյա Միսակ Հարոյանի (Արեյան) պատմած Սասնա հե-

---

[39] Ազգագրական հանդես, գ. 9, Թիֆլիս, 1902, էջ 158-159:

[40] FF I: 3137

[41] **Գարեգին Նժդեհ**, Հատընտիր, Երևան, 2001, էջ 286, 304:

[42] Սասնա ծռեր, Երևան, 1977, էջ 421:

[43] Նույն տեղում, էջ 247:

[44] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, էջ 240:

րոսապատումի՝ »Տավտի հրկյատ»[45] ավարտ-վերջաբանը.

= Փաստորեն ջիշտը.
Հիմի փոքր Տավիտ տուրս ը իգի.
Ատոմային ռումբ տուրս էգավ,
Նետրոնային տուրս էգավ.
Տավիտ էրգիր մարտ չթողը, սուդ պանը ...[46]

Ժողովրդական լեզվամտածողությամբ ու կենսազգացողությամբ (Երպ օր փոքր Տավիտ տուրս էգավ՝ էրգրակունդ մարտ չմնը ...)[47] վիպասացը ընդգծում ու կանխազգում է համաշխարհային չար ուժերի (ատոմային ռումբ, նեյտրոնային ռումբ) առկայությունը և երկիր – հայրենիք - երկրագունդ կտրվածքով՝ աշխարհի փրկությունը կապում է արդարության, ազատության ու հավերժության (Դու անմախ որդի ես)[48] գաղափարները կրող Փոքր Միհրի (ներկա դեպքում՝ փոքր Դավիթ) հետ, որի առաքելությունն է՝ մեկընդմիշտ ոչնչացնել չարը աշխարհում (հմմտ. շում. Գիլգամեշի կերպարը)[49]: Սասնա «անմախ»[50] որդին դեռ տառապում է՝ սպասելով Քրիստոսի արդար դատաստանին, քանզի «անարդար» է աշխարհը և «խախանդ»[51] չէ, իսկ հայ ժողովուրդն աներկբայորեն ապավինում ու հավատում է իր արդարության ու խաղաղության գինը իմացող հերոսին՝ Փոքր Միհրին.

= Կէղնի վախթմ, Միհր դուրս գիկա,
Մզի կազադա դուշմնի ձեռնեն[52]:

---

[45] ՀԱԲ 19, էջ 37 * Էրգիր Միհր ը գըսեն, պայծ յըս ըմ հորոխպոր դը Թումոյից լսիր իմ՝ փոքր Տավիտ:
[46] ՀԱԲ 19, էջ 37:
[47] ՀԱԲ 19, էջ 13:
[48] Սասնա ծռեր, 1977, էջ 554:
[49] Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1983, էջ 101, 522:
[50] Սասնա ծռեր, 1977, էջ 554:
[51] **Ռ. Գրիգորյան**, Սասնա ծռեր, էջ 240:
[52] Սասնա ծռեր, Երևան, 1977, էջ 248:

ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑՈՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ ԵՐԿՈՒՄ

Հակոբ Ղրիմեցին միջնադարյան հայ տոմարագիտության ներկայացուցիչներից է Նրա տոմարագիտական կարևոր աշխատանքը Մեկնութիւն տումարին է որ գրվել է թվականին Ղրիմեցու այս երկը հարուստ է տիեզերագիտական և փիլիսոփայական հարցերի լայն ընդգրկումով

Այս աշխատանքում ընդհանուր գծերով կքննարկենք բայի եղանակային ձևերի հիմնական և երկրորդական կիրառությունները

Գրաբարի բայն ունի երեք եղանակ սահմանական ստորադասական և հրամայական Սահմանական եղանակն ունի երեք ժամանակ ներկա անցյալ անկատար և անցյալ կատարյալ ստորադասական եղանակը երկու ժամանակ և ապառնիներ իսկ հրամայականը երեք ժամանակ արգելական բուն և հորդորական հրամայականներ Գրաբարում բայի պարզ ժամանակները կազմվում են երկու հիմքերից ներկայի և անցյալ կատարյալի Ներկայի հիմքից են կազմվում ներկան անցյալ անկատարը առաջին ապառնին և արգելական հրամայականը Կատարյալի հիմքից են կազմվում անցյալ կատարյալը երկրորդ ապառնին բուն և հորդորական հրամայականները Գրաբարն ունի նաև բաղադրյալ ժամանակներ որոնք կազմվում են անցյալ ու ապառնի դերբայներով և *եմ լինիմ* օժանդակ բայերով

Գրաբարում ներկա անցյալ անկատար և ապառնի ժամանակները ունեն քերականական բազմիմաստություն այսինքն հիմնական իմաստից բացի դրսևորվում են երկրորդական կիրառություններով Պարզ ժամանակները քննենք ըստ հիմնական և երկրորդական կիրառությունների

Ներկա ժամանակ. Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է հիմքից խոնարհիչից և բայական վերջավորություններից Այս ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին համընկնող գործողություն Օրինակներ *Ո մանք նայեն այս կոյս և այն կոյս ոմանք համբիւրեն զմիմեանս իբր թէ ուրախ են այսօր ոմանք պարս ոմանց բերեն ոմանք ազգի-ազգի և պէս-պէս ձայնս ածեն ի հնչմանէ նուագարանացն*[1] *Երկբերանի քսակ է Լուսին ընդ մինն ելանէ և վերինն թիկունքն ժողովի և պակասի իմ մէնջ լոյսն և ի միւս ներքո մտանէ և լուսաւորէ մեզ 2 2 Նախ զիսաւար անգիտութեան հալածէ երկրորդ զտրտմութիւն մեղաց փարատէ երրորդ զթշնամին և զչարն փախուցանէ չորրորդ զիմաստունս և զառաքինիս ի գործս յորդորէ հինգերորդ զբարիս և զչարս որոշէ վեցերորդ զբարեկամս հրեշտակս և զթշնամիս սատանայ ցուցանէ եօթներորդ միջնորդով զայլս լուսաւորէ 2 Եւ զթոյլսն պնդէ և զյաւէտ ձիգն թուլացուցանէ*

Հին հայերենի շրջանում սահմանական եղանակի բայաձևերին բնորոշ է քերա

[1] **Հակոբ Ղրիմեցի** Տոմարագիտական աշխատասիրություններ երևան 7 էջ Այսուհետև սույն աշխատությունից կատարված վկայակոչումների էջերը կներկայացնենք մեջբերման վերջում

կանական բազմիմաստությունը Ներկա ժամանակի անփոփոխակային իմաստը բնորոշվում է համընթացության հատկանիշով և ունի բազմաթիվ դրսևորումներ.

1. ***Կոնկրետ ներկա*** որը ցույց է տալիս խոսելու պահին սկսված և ընթացքի մեջ գտնվող գործողություն Ինչպես Ա. Յուզբաշյանն է փաստում հինգերորդ դարի մատենագրության մեջ այս ներկան ավելի քիչ է հանդիպում քանի որ այն դրսևորվում է հատկապես մենախոսություններում ու երկխոսություններում այսինքն այն դեպքերում երբ անմիջապես մեկը դիմում է մյուսին[2]
2. ***Ընդհանրական ներկա*** որը ցույց է տալիս ժամանակային սահմանափակում չունեցող գործողություններ այսինքն մշտական հատկանիշների բնութագրումներ փիլիսոփայական դատողություններ ինչպես նաև բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտություններ և այլն Հ. Ղրիմեցու «Ի խնդիրս հասարակաց օգտի Մեկնութիւն տումարի երկերում բազում են ընդհանրական ներկայի գործածության օրինակները որը պայմանավորված է այդ աշխատությունների բովանդակությամբ Հարկ է նշել որ վերոնշյալ ներկաների տարբերակումը հնարավոր է միայն ու միայն շարակարգում ՍՏվՅպՍրՅ Բերենք մի քանի օրինակ ընդհանրական ներկայով. *Լուսինն* ***ընթանայ*** *յաւուրն ԻԳ 2 . ժամ և Գ մասն Բ 2 մաս պակաս քան զԻԴ 2 ժամ աւուրն և* ***առնէ*** *յԼ 0 օրն Կ 0 մասն 2 Սա միշտ* ***շրջի*** *ընդ Արեգականն և սակաւ* ***հեռանայ*** *ի նմանէ Եւ բարձրանալովն* ***ջերմացուցանէ*** *զհիւսիս և խոնարհելովն հարաւ 270*
. ***Սովորույթի ներկան*** ցույց է տալիս կրկնվող սովորույթ դարձած գործողություններ և անվանվում է նաև կրկնության ներկա ***Ասել կոչել անվանել թարգմանել*** բայերի ներկայի երրորդ դեմքով դրված ձևերը միշտ արտահայտում են ներկա ժամանակի իմաստ անկախ շարահյուսական միջավայրից[3] Սա պայմանավորվում է նրանց բայիմաստով Օրինակներ *Առաջինն է տարրական հրոյն վերին մասն որ* ***կոչի*** *հրեղէն երկին հոմանուն առաջին երկնիցն այլ կոչի սա հրեղէն զի է ի հրոյ իսկ նա* ***կոչի*** *հրեղէն զի է որպէս հոտ 2 Չորրորդ հոգևոր բարձրութիւնքն և վարձք սրբոցն* ***կոչին*** *երկինք 2 Իսկ որ մոլորականք* ***ասեն*** *սոքա տարորոշեալ զօտիք են 2 Երկրորդ Լուսնթագն զոր Մուշթարի անուանեն Երրորդ Հրատն է զոր Մառեխ* ***ասեն*** *Չորրորդ է Արեգակն զոր Շամս* ***կոչեն***

Ներկա ժամանակի բայաձևերը գրաբարում կարող են կիրառվել ըղձական ապառնու իմաստով Այս իմաստով ներկայի բայաձևերը հանդես են գալիս պայմանի և նպատակի պարագա երկրորդական նախադասությունների կազմում Հարկ է նշել որ միևնույն նախադասության կազմում ապառնի ժամանակի իմաստով կողք կողքի հանդես են գալիս ստորադասական ապառնու և սահմանական ներկայի բայաձևերը Բերենք նման կիրառությամբ օրինակներ. Եւ եթէ մոլորութեամբ ***խոնարհի*** *յաստիճանաց հաւատոյն նա* ***մերձենայ*** *յերկիր և անկանի դժոխս 27 Զի* ***ա***

[2] Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Յուզբաշյան** Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործառական հետագա զարգացումը Ե. 2000 էջ 22 2

[3] Տե՛ս նույն տեղում էջ 2

զատէ *ի հոգոց զոր* ***ունիմք*** *ի բազմաբեր կրից ցաւալից մարմնոց և* ***հանգստացէ*** *ի հանգիստ անհոգութեան 20 Զի թէպէտ Լուսնի լրումն յորժամ զհանապազորդն ԽՁ* ***կալնումք*** *և արտաքոյ հասարակածին* ***հանեմք*** *զլրումն Զատկին սակայն դեռևս այլ Երկիւղ* ***կայ*** *2 2 7 Զի եթէ փոքր և չնչին գունդ Արեգական վասն ա բաց սլացութեան այնքան ահագին ճայթմունք* ***արձակէ*** *մինչ զի մերձակայ աշ խարհն այն պղինձս* ***հարկանեն...*** *27*

Ներկա ժամանակի բայաձևերը գրաբարում գործածվել են նաև պայմանական ե ղանակի ապառնու իմաստով որոշակի կառույցներում Նրանք հանդես են գալիս դարձյալ պայմանի պարագա երկրորդական նախադասություն ունեցող ստորադա սական նախադասության կազմում սակայն այս դեպքում արդեն նրանք գլխավոր նախադասության բայ-ստորոգյալ են Այս իմաստով Ղրիմեցու աշխատությունն ե ր ում ներկայի բայաձևերը գործածված չեն

Անցյալ անկատար. Անցյալ անկատարն արտահայտում է անցյալում անկա տար ընթացքի մեջ գտնվող գործողություն Իր հիմնական նշանակությամբ անցյալ անկատարը համապատասխանում է արդի հայերենի նույն ժամանակին Ինչպես *Ուսեալ ի հօրէն Աբել* ***պահէր*** *և նա զԵ օրեաց պահքս և ապա* ***մատուցանէր*** *զհաճոյական պատարագն Աստուծոյ 2 Եւ* ***խոնարհէր*** *իբրև զԱրեգակն յորժամ զմարդկայինս* ***նկատէր*** *զքաղց զծարաւ և զայլսն 2* ***Ճանաչէր*** *զԱրարիչն իւր և* ***բառնայր*** *ի վերայ երեսաց իւրոց 202 Եւ Յորդանան յակն աղբերն իւր* ***դառնայր*** *202 Եւ* ***ջահաւորէր*** *զծոցս երկնից և փայլուն* ***ներգործէր*** *զերեսս ծովուց և գեղեց կատեսիլ* ***յօրինէր*** *զերեսս երկրի և ցանկալիս* ***ներգործէր*** *զտեսութիւն ամենայն բուսոց և տնկոց 2*

Անցյալ անկատարը երկրորդաբար գործածվում է պատմական ժամանակի ի մաստով որը համապատասխանում է աշխարհաբարի ներկային և անցյալ կա տարյալին Իհարկե առավել գործածականը անցյալ կատարյալի իմաստն է *Օրի նակ Եւ յորժամ Լուսինն զիր ամ* ***վճարէր*** *... յայնժամ ԺԲ 2 երորդ Լուսինն որ վերջին Լուսինն է տարւոյն ԺԱ օր և նա* ***պակասեցուցանէր*** *որպէս և այժմ է 2*

Անցյալ անկատար ժամանակի բայաձևերը ստորադասական եղանակի անցյալի իմաստով կիրառվել են հինգերորդ դարի մատենագիրների երկերում

Անցյալ անկատարի բայաձևերը ըղձական և պայմանական անցյալների իմաս տով հանդես են գալիս բարդ ստորադասական նախադասության մեջ հատկապես պայմանի նպատակի և ժամանակի պարագա երկրորդականներում Օրինակներ *Ոչ միայն բանականք այլև անբան գազանքն* ***խայտային*** *և* ***խնդային*** *և ի խաղս* ***ելա նէին*** *յառաջի արքային յորժամ* ***նուագէր*** *Որփևս* ***Պահէին*** *և ամենայն անդ բանիկքն յորժամ* ***մեռանէին*** *հարքն իւրեանց 2 2 Զոր թէ Լուսինն այսպէս* ***ընթա նայր ոչ կարէի*** *ի միում կերպի պահել զլոյսն այլ երբեմն յարևելս և երբեմն յարև մուտս* ***դառնայր*** *եղջիւրք լուսոյն և թէ զբոլոր քանակն լրացեալ լուսով բոլորեալ* ***ունէր***

Անցյալ կատարյալ. Մինչ բուն ժամանակին անցնելը նշենք որ գրաբարում կատարյալի հիմքը լինում է պարզ կամ արմատական և բաղադրյալ կամ ցոյական Պարզ կամ արմատական ունեն *Ե* և *Ի* խոնարհման ածանցավոր և *Ու* խոնարհման բայերն ընդհանրապես

Ցոյական հիմք ունեն *Ե* և *Ի* խոնարհման պարզ *Ա* խոնարհման բայերն ընդհան

բապես *Ե* խոնարհման **ասել գիտել կարել մարթել մերկել** բայերի արմատին ***եաց*** վերջավորության փոխարեն ավելանում է *աց*-ը իսկ *ածել բերել հեղուսել հանել* բայերն ունեն արմատական հիմք *Ի* խոնարհման պարզ բայերից արմատական հիմք ունեն *նստիմ* և *զգածիմ* բայերը *Ա* խոնարհման *բանալ բառնալ դառնալ թանալ* բայերն ունեն *բաց բարձ դարձ թաց* հիմքերը իսկ *Ու* խոնարհման վեց բայեր էլ ունեն ցոյական հիմք **ընկենուլ ընթեռնուլ զգենուլ լնուլ խնուլ յենուլ** Բերենք տարբեր հիմքեր ունեցող բայերի օրինակներ

Արմատական հիմք.

Ե խոնարհման ածանցավոր բայեր ած 207 ել 2 եհաս 222 եմոյծ 207 եմուտ 22 եստեղծ 2 ետես 202 իջաւ 20 լուծաւ 2

Ի խոնարհման ածանցավոր անկաւ 2 7 ծնցիս 20 մեռաւ 22 սկսան 2 0

Ու խոնարհում էառ 22 ընկալան 2 յաւելաւ 22 զենաւ 2 2

Ցոյական հիմք ասասցին 2 արտաքսեաց 20 գնաց 2 գոյացան 22 գրեցին 2 երևեցաւ 20 ընթացաւ 2 7 իշխեաց 2 լուսաւորեաց 2 խոնարհեցաւ 2 կազմեցան 2 0 կոչեցան 222 հիացաւ 202 հրամայեաց 2 7 ձգեաց 22 մերկացաւ 20 մերձեցաւ 20 մնաց 2 մկրտեաց 2 յափշտակեցան 2 նայեցաւ 2 սլացաւ 20 վճարեաց 222 փոխեցաւ 22 և այլն

Հիմքակազմության ժամանակ շեղումներ ունեցող բայերի հետևյալ ձևերն են վկայված քննվող երկում. ած 207 ասաց 2 բարձաւ 20 բեր 2 7 գիտասցէ 2 դարձաւ 2 ելից 20 զգեցան 202 հանցէ 2 մարթասցուք 27 ոչ կարաց 2

Նման շեղումներ ունեցող զգածիմ զգած ընթեռնուլ ընթերց ընկենուլ ընկեց խնում խից հեղուսել հեղույս մերկել մերկաց յենուլ յեց նստիմ նիստ բայերը վկայված չեն Ղրիմեցու երկում

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանկներում բայերը խոնարհվում են ներգործաձև կրավորաձև և խառն վերջավորություններով Ներգործաձև խոնարհում ունեն

ա *Ե* խոնարհման պարզ և ածանցավոր բայերը ասացին 2 գրեցին 2 եհաս 222 եմուտ 2 եստեղծ 2 ետես 2 0 իշխեաց 2 լուսաւորեաց 2 սխալեցին 2 վճարեաց 22 ուսուցանէ 7 և այլն

բ *Ա* խոնարհման պարզ բայերը գնաց 2 7 մնաց 2

Բացառություն են կազմում չորս բայեր որոնք անցյալ կատարյալում խոնարհվում են կրավորաձև գթացաւ 2 փութալ խիթալ յուսալ վերջին երեքով օրինակներ վկայված չեն

գ *Ու* խոնարհման պարզ բայերը զենուլ 2 2

Կրավորաձև խոնարհում ունեն

ա *Ի* խոնարհման պարզ և ***ան*** սոսկածանց ունեցող բայերը անկաւ 2 7 դիպեցաւ 2 խոնարհեցաւ 2 ծնցիս 2 մեռաւ 22 սկսան 2

բ *Ա* խոնարհման ածանցավոր բայերը բաղկացաւ 22 գոյացաւ 2 0 դարձաւ 2 ընթացաւ 2 7 խոստացաւ 2 իմացաւ 2 մերձեցաւ 20

գ *ՈԻ* խոնարհման ածանցավոր բայերը առաւ 22 զգեցան 202

Առնուլ լնուլ խնուլ և ընկենուլ բայերն ունեն և՛ ներգործաձև և՛ կրավորաձև խոնարհում Նման ձևով են խոնարհվում նաև բանալ բառնալ թանալ լուանալ մերկանալ բայերը

Խառն խոնարհում ունեն

ա *Ի* խոնարհման **չ** և **նչ** սոսկածանց ունեցող բայերը Քննվող երկում հանդիպել ենք միայն ***երկեան*** ձևը մեկ անգամ

բ *ՈՒ* խոնարհման ***նում-չիմ*** փոխանցումով ածանցավոր բայերը Նման բայերի քննության ընթացքում չենք հանդիպել Սա պայմանավորված է երկի բովանդակությամբ Հակոբ Ղրիմեցին քննում է գիտական հարցեր և գործածում հիմնականում իր նյութի հետ առնչվող յուրահատուկ բայեր Բերենք անցյալ կատարյալ ժամանակով գործածված բնագրային օրինակներ. *Եւ ինքն իր տեղին իւր* ***մերկացաւ*** *ի լուսոյն և* ***խաւարեցաւ*** *20 Եւ խաւարեալ կերպարանովն յական թօթափելն* ***սլացաւ հասաւ մերձեցաւ կցեցաւ*** *և* ***ժողովեցաւ*** *առ արեգակն և* ***գնաց*** *ընդ նմա զերեք ժամս խաւարեալ Զի յԵրկաւորէն զառիվեր* ***ընթացաւ*** *ի Խեցգետինն և ի Խեցգետնէն* ***դարձաւ*** *զառ ի վայր և գայ յԱռիւծն վասն որոյ կենդանակերպն այն Խեցգետին* ***անուանեցաւ*** *վասն յետ և յառաջ ընթացից Արեգականն 2*

Հարկ է նշել որ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում ներգործական վերջավորություններով խոնարհվող ներգործական սեռի բայերը կարող են խոնարհվել նաև կրավորական ստանալով կրավորական սեռի նշանակություն[4] ինչպես *Արդ Լուսինն երբ* ***ստեղծաւ*** *յարևելս եդաւ 2 Եւ լուսաւոր անօթքն ի չորրորդումն աւուրն* ***կազմեցան*** *յօդոյ... 2 0 Եւ վասն յառաջ մշտաշարժութեանս «Առաջաւոր* ***անուանեցաւ*** *ըստ տումարական արհեստին 2 Թէպէտ յաւուր ուրբաթուն Խաչն* ***ներկեցաւ*** *աստուածային արեամբն 2 Եւ ի դնել թուականին Հռոմոց Ռ 000 ամ* ***լցաւ*** *ի շինութենէ քաղաքին Հռոմոյ Պահեաց և Աբրահամ յորժամ* ***ապրեցաւ*** *ի Սահակի զենմանէն 2 2*

Ներգործական սեռի այն բայերը որոնք խոնարհվում են միայն կրավորաձև դիցուք *ի* խոնարհման բայերը նույն վերջավորություններով կարող են արտահայտել թե՛ ներգործական թե՛ կրավորական սեռի իմաստ Այս կարգի բայերի ներգործական և կրավորական սեռի նշանակությունները որոշվում են նախադասության արտահայտած իմաստով Օրինակ *Իսկ ի ժամանակս ամբարիշտ թագաւորին Յուստինիանոսի եղև լրումն Մ 200 ամի կարգաց Անդրէասու և* ***սկսան*** *շփոթիլ լրմունք Զատկաց 2 0 Եւ նմա ասացաւ տրտմութեամբ և ցաւոք* ***ծնեցաւ*** *զորդիս 20 Եւ թէ Աստուած յերկնից* ***նայեցաւ*** *յամենայն որդիս մարդկան 2 7*

Առաջին և երկրորդ ապառնիներ. Առաջին ապառնին գրաբարում կազմվում է ներկայի հիմքից սակայն *ց* ածանցով Առաջին ապառնու կազմության և նրա վերջավորությունների առաջացման հարցով զբաղվել են շատ լեզվաբաններ[5] Ներկա աշխատանքում մենք այս հարցը չենք քննարկի քանի որ մեր նպատակից դուրս է Առաջին ապառնու ըղձական պայմանական և հարկադրական ապառնիների իմաստն արտահայտվում է *յ* և *ց յց ից* ածանցներով և նրանցից որևէ մեկի բացակայությունը բավական է որ բայը զրկվի իր այդ իմաստից[6]

Երկրորդ ապառնին իր կազմությամբ տարբերվում է առաջին ապառնուց սակայն արտահայտած իմաստներով նույնանում է նրա հետ միայն այն տարբերությամբ որ երկրորդ ապառնին ունի նաև սահմանական ապառնու իմաստը և արտա

---

[4] Տե՛ս **Հ. Ավետիսյան Ռ. Ղազարյան** Գրաբարի ձեռնարկ Ե. 2 էջ 2

[5] Տե՛ս **Ս. Ղազարյան** Հայոց գրական լեզվի պատմություն հ. Ա Ե. էջ

[6] Տե՛ս նույն տեղում էջ

հայտում է ավարտուն գործողություն Առաջին ապառնին ավելի շատ տևական ապառնու իմաստ ունի այսինքն պահպանել է ներկայի հիմքից կազմված ժամանակների տևողության պրոցեսի մեջ լինելու նշանակությունը [7]

Ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիները հաճախ միևնույն նախադասության մեջ կարող են փոխարինել միմյանց արտահայտելով արդի հայերենի ըղձական պայմանական և հարկադրական ապառնիների իմաստը Օրինակ *Ըստ ավետարանչին Ղուկասայ Լ 0 ամեայ գալ ի Մկրտութիւն Քրիստոսի զաւուրցն պատկեր ըստ կարգի անսխալ բերիցեմք և զՀշտութիւն պատկեր աւուրցն յայտնի կացուցանիցեմք 2 Եւ վասն այն յատկական անուանքս ի վերայ եդան զի տարորոշեսցին ի միմեանց և ճանաչիցին 2*

Սակայն պետք է նկատել որ առանձին դեպքերում առաջին և երկրորդ ապառնիներն ունեն գործածության տարբեր դրսևորումներ Այսպես

ա Հարցական նախադասություններում բայը մեծ մասամբ դրվում է առաջին ապառնիով ինչպես *Եւ թէ վասն է՞ր առնէ ասեմք զի* ***գտանիցեմք*** *զաւուրն պատկերն 2 Եւ եթէ ոք* ***ասիցէ*** *է՞ր վասն ասեմք թէ աստ ոչ պատիւ աւուրն խնդրեմք 2 Եւ թէ ոք* ***ասիցէ*** *եթէ ներգործութեամբ զԺԶ օրն Լուսինն ոչ ունի ապա ընդ է՞ր ԽԶ կալնումք զհանապազորդն 2*

բ Հատկապես ***զի թէ եթէ ապա եթէ զի եթէ*** շաղկապներից և ***որ ուր յորժամ ուստի մինչ զի*** հարաբերական բառերից հետո գործածվող բայն ավելի հաճախ դրվում է առաջին ապառնիով և իմաստով երբեմն կարող է համապատասխանել սահմանական ներկային Օրինակներ *Ապա եթէ յօրն յորում Լուսին* ***ծնանիցի*** *ի ցես և կամ զլրումն առցէ զնոյն աւուրն կալ 2 0 Իսկ յօրագիւտն զաւուրս ամսոյն կալնումք զի ըստ կարգի անսխալ ցուցանիցէ զօրագիւտ պատկեր աւուր ամսոյն 2 Զի մի ոք ի նոցանէ* ***հանիցէ*** *խոշոր ձայն և կամ բոտոռոտ Եւ սկիզբն ա բարին քննութեան յապրիլի Դ զի գտանիցեն միւս անգամ զԱրեգակն և զԼուսինն ի ստեղծման շաւիղն 2 2*

Փաստորեն ապառնին հիմնականում գործածվում է գլխավոր նախադասության հետ կապվող պայմանի նպատակի ժամանակի և որոշչի երկրորդական նախադասություններում որոնք կարող են լինել թե՛ նախադաս և թե՛ ետադաս

գ Երկրորդ ապառնին հատկապես գործածվում է այն դեպքում երբ խոսողն արտահայտում է որևէ գործողություն կատարելու ցանկություն հակադրվելով ապառնուն կատարելի կերպամանրահամակարգով Այս իմաստով գործածվելիս ապառնին հիմնականում հոգնակի դեմքով է դրվում Օրինակներ *Եւ արդ նախ* ***խնդրեսցուք*** *թէ զինչ է թուականն 2 Զի բնութիւն բանին անմարմին է այլ ըստ արհեստին բերման զոր* ***բացատրեսցուք*** *բազում կերպիւ 2 Բայց նախ* ***ասասցուք*** *զհասարակաբարն և ապա զյատկաբարն 2 Եւ զայս օրինակաւ* ***բացայայտեսցուք*** *քանզի թուականն իմաստասէրն ի մատուցան և կամ դրոշմեալ ի քարտի*

Երրորդ դեմքով գործածվելիս ապառնին դրվում է նպատակի և պայմանի պարագա երկրորդական նախադասություններում և աշխարհաբար թարգմանվում ըղձական կամ պայմանական եղանակների ապառնիներով և *թող* վերաբերականով ապառնին սակավ գործածությամբ հանդիպում է երկրորդ դեմքով և դրվում է

[7] Նույն տեղում էջ 7

հատկապես պայմանի պարագա երկրորդական նախադասություններում Օրի նակներ *Եւ թէ բիւր-բիւր ամաց* ***տացես*** *զմի-մի թիւ մինչ ամենայն* ***սպառեսցի*** *սա կայն և այնպէս* ***ոչ կարասցես*** *գտանել զսկիզբն հեռաւորութեան 220 Այլ զգալի օ րինակի կարօտանայ զի* ***տեսցէ*** *աչօք և ապա մտօքն իմանալ կարասցէ 22 Մեր կացուցին զինքեանս ի լուսոյն իւրեանց զի* ***ծածկեսցեն*** *զմերկութիւն Արարչին իւ րեանց 20 Հինգերորդ զի* ***տեսցուք*** *և* ***իմասցուք*** *թէ արտաքին սրահն երկնից այսպէս է զարդարուն 2*

Իբրև արգելական ապառնի ժխտական ըղձականի իմաստով գործածական են և՛ և՛ ապառնիները Ինչպես *Զի եղիցի ի սպասաւորութիւն իւր պատշաճաւոր և* ***մի գտցի*** *ի գործ սպասաւորութեան 2 ... Նոյնպէս և ի վախճան կատարածի աշխարհիս բոլոր և կատարեալ եղիցի և այլ* ***մի նուազեսցի*** *2*

Բուն և հորդորական հրամայականները սույն աշխատանքում չենք քննում ո րովհետև դրանք երկրորդական կիրառություններով իբրև այլ ժամանակի արտա հայտիչներ հանդես չեն գալիս Ղրիմեցու Ի խնդիրս հասարակաց օգտի և Մեկ նութիւն տումարի աշխատանքներում սակավ են հորդորական հրամայականով բայաձևերը Ասենք որ առաջին աշխատանքը կառուցված է հարց ու պատասխանի տեսքով իսկ երկրորդ աշխատանքը նվիրված է տոմարի տեսության հարցերին

Թեև Հակոբ Ղրիմեցին փորձել է պահպանել գրաբարի բայական համակարգը սակայն նրա Մեկնութիւն տումարի երկում կան ***կու*** և ***պիտի*** մասնիկներով սահ մանական և հարկադրական եղանակների բայաձևեր Ինչպես՝ *Եւ այս թիւ մի աւելի* ***կուգայ*** *և թէ վասն է՞ր 22 Վասն այն յորժամ* ***կուչորեքպատկեմք*** *յարաց Լ. էն մինչև ի Յայտնութիւն նա զնահանջն ի ՊԿԴ.* ***կուցուցանէ*** *և թուականս ՊԿԵ. է 22 ...Զի կրկնակն երբ երկու լինի որպէս հոռի և եօթներեակն՝ մէկ նա՝ հոռի որ ի չորեքշաբթի* ***պիտի մտանէ*** *նա ի երկուշաբթի* ***պիտի գայ*** *2 Եւ ի ՉԽԹ. թուէն ի վեր ՌՆԿ. ամնահանջն ի ֆարտ թիւն* ***պիտի գայ*** *և նահանջի առաջին ամն ի զոյգն 22*

Հանդիպել ենք վաղակատար ներկայի կիրառության մեկ օրինակի. *Զայս երկու մտօք իմաԲ. մէկ՝ ըստ արարչութեան Զատկին և երկու՝ ըստ մեր թուականիս որ ի հինգշաբթի օր* ***են դրել*** *22*

Ժամանակի գրական լեզվի ազդեցությամբ բուն հրամայականի ձևում բառավեր ջի ձայնավորից հետո ավելանում է *յ* Այսպիսի մեկ օրինակ կա. *...Նա ի կիրակի* ***պիտի գայ*** *և զայլն ըստ կարգի առաւելութեան կրկնակացն* ***իմա՛յ*** *22*

Ինչպես նկատում ենք դդ. գրաբարի համակարգում բայական ձևերի փոփոխությունները թեև Ղրիմեցու երկում դրանք սակավաթիվ են հին գրական հայերենի զարգացման ընթացքում նկատվող ձևաբանական տեղաշարժերի արդ յունք են

ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՔԱՋՈՒԹՅԱՆ ՍԻՐՈ ԵՎ ՆՎԻՐՈՒՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

0 դդ դարերը նշանավորվեցին հայ գրականության մասնավորապես բանաստեղծության բուռն զարգացմամբ

Սկսվում է վերածնությունը որն անշուշտ ենթադրում է գրականության և արվեստի հետագա ծաղկում Սակայն այդ գործընթացը դդ դարերում դադարում է որին հետևում է կտրուկ անկումը. պատճառը օտարերկրյա նվաճողներն են Հայաստան աշխարհն իրար հետևից ասպատակում են թուրքական ցեղերը թաթարները մոնղոլները

Հայ ժողովրդի գաղթական զավակները հայրենիքից շատ հեռու օտարության մեջ կարողանում են ոչ միայն գոյատևել այլև պահպանում են իրենց ազգային ոգին Նրանք գաղթավայրերում զբաղվում են արհեստագործությամբ առևտրով հիմնում են եկեղեցիներ և դպրոցներ

Կաֆայում Թոխաթում Ուկրաինայում Մոլդովայում հաստատված հայերը 7 դդ դարերում արդեն իրենց ուրույն տեղն ունեին տվյալ երկրամասի տնտեսական քաղաքական ու մշակութային կյանքում Բազմաթիվ տեղեկություններ կան հիշյալ գաղթօջախների հայ վաճառականների ու արհեստավորների մասին որոնք մեծ դեր էին խաղում միջազգային առևտրի ճանապարհին[1] Նրանք սակայն ձգտում էին պահպանել հայրենի երկրի սովորույթներն ու նախնիների ավանդները

Դեռևս դդ դարում Երզնկայում և այլ հայկական մեծ քաղաքներում ստեղծվում էին կտրիճվորաց եղբայրություններ որոնց անդամները առևտրաարհեստավորական խավի չամուսնացած երիտասարդներ էին Այդ կտրիճները ուղեկցում էին առևտրական քարավաններին՝ մի քաղաքից մյուսը ապահով տեղափոխվելու համար Իսկ թշնամիների հարձակումների դեպքում եղբայրությունները դառնում էին զինվորական ինքապաշտպանական միավորումներ Նման եղբայրություններ գոյություն են ունենեցել ողջ միջնադարում

«Կտրիճվորաց միություններ կազմավորվել են նաև հայ գաղթավայրերում Հայ վաճառականներին ու արհեստավորներին առավել մեծ վտանգ էր սպառնում հատկապես օտար երկրներում Եվ նրանք հետևելով անցյալի օրինակին ստեղծում են «կտրիճվորաց եղբայրություններ որպեսզի կարողանան վտանգի դեպքում պաշտպանել իրենց ունեցվածքը և ապահովել հարազատների անվտանգությունը

Բավականին տեղեկություններ կան լեհահայ և ուկրաինահայ գաղթօջախներում հայ ամուրի երիտասարդների ստեղծած կազմակերպությունների մասին Պահպանվել է Յազլովեց քաղաքի կտրիճվորաց եղբայրության կանոնադրությունը

---

[1] Տե՛ս **Լևոն Խաչիկյան** Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում դարերում Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր էջ 0

որը շատ նման է Երզնկայի Սահմանք և կանոնքին [2] Առանձնակի ուշադրության է արժանի Մոլդովայի Պատուշան Ուրմանի և Յաշ քաղաքների Կտրիճվորաց եղ բայրության կանոնադրությունը որը 7 րդ դարում հաստատել է Եղիազար Կա թողիկոսը իսկ մեկ դար հետո վերահաստատել է Հովսեփ արքեպիսկոպոս Ար ղությանը[3]

Այն հանգամանքը որ նման եղբայրությունների գործունեությունը համակարգ վում էր Եկեղեցու կողմից հայագետներին գցել է այն թյուրիմացության մեջ թե այդ եղբայրությունները եկեղեցական կառույցներ են եղել իսկ անդամները՝ կրոնավոր ներ Ուրիշ հայագետներ էլ երիտասարդական այդ միավորումներին անդրադառ նալիս անտեսում էին դրանց ռազմական կառույց լինելու փաստը. Մոլդաւիոյ հայ պատանեկաց կանոնադրութիւնը յիշեցնում է մեզ հին Սպարտացւոց կանոնները որոնց պատանիները որոշեալ հասակն առնելից յետ պատկանում էին հասարա կութեան և դաստիարակւում էին հասարակական հաստատութեանց մէջ բոլորո վին ազատ ծնողաց իշխանութիւնից և ազդեցութիւնից Զանազանութիւնը նրա նումն է որ Սպարտացին ստանում էր զինուորական դաստիարակութիւն և դառ նում էր հայրենեաց քաջ զինուոր իսկ մոլդաւացի հայ պատանեակը կրօնական հասարակական դաստիարակութիւն էր ստանում՝ հասարակութեան ապագայ ըն տիր անդամ և լաւ քրիստոնեայ լինելու համար [4]

Սակայն իրականում ինչպես Պատուշանի այնպես էլ հայկական մյուս գաղթօ ջախներում ստեղծված Կտրիճվորաց եղբայրությունները Երզնկայի եղբայրութ յան նման հետապնդում էին ինքնապաշտպանական նպատակներ

Պատուշանի եղբայրության կանոնադրությունից պարզ է դառնում որ նրա երի տասարդ անդամները արհեստավորներ ու առևտրականներ են եղել. Յորմէ Աս տուածային ամենառատ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն հանդերձ ստուգիւ սիրով Սուրբ Հոգւոյն ճշմարտի ծաւալեսցի և հանգիցէ ի վերայ համայնից հայկասէր օրհնեալ ժողովրդոյդ որք ի յԱստուածախնամ քաղաքս Փօթիշան կայք զե տեղեալ՝ վաճառականաց արհեստաւորաց և առհասարակ օրհնեալ ժողովրդոցդ ամենից [5]

Այս եղբայրության անդամները գրեթե նույն պատվիրանները պիտի կատարեին ինչ որ պահանջվում էր Երզնկայի կտրիճներից՝ օգնել նեղն ընկածին ամուր պահել քրիստոնեական հավատը սիրել ծնողներին և նրանց հնազանդ լինել Այստեղ նաև կտրիճներին կոչ էր արվում նախնիների պես հնազանդ լինել եղբայրության կա նոններին. Ուրեմն՝ և դուք սիրելի որդիք մեր համօրէն պատանեակք Աստուա ծախնամ քաղաքիս Փօթիշանու պարտիք զինազանդութիւն և զսահմանադրու թիւնս անխափան կատարել որպէս ի նախնեաց հետէ ունիք ի ձեզ հաստատեալ. որք և պարտիք զժողովդ ձեր յորդւոց յորդիս և մինչև ի յաւիտեանս ժամանակաց հաստատուն պահել ի յԱստուածախնամ քաղաքս [6]

---

[2] Տե՛ս **Լևոն Խաչիկյան** Երզնկայի Եղբարց միաբանության կանոնադրությունը Տեղեկագիր 2 թիվ էջ 7

[3] Տե՛ս Արարատ ամսագիր թիվ Ե էջ 7 0

[4] Նույն տեղում էջ 7

[5] Տե՛ս Արարատ ամսագիր թիվ Ե էջ

[6] Նույն տեղում էջ 7

Ուրեմն հայ գաղթօջախներում հայրենի նախնիների օրինակով ստեղծվում էին «կտրիճվորաց եղբայրություններ որոնց հիմնական նպատակը իրենց ունեցվածքը պաշտպանելն ու թշնամիներին դիմագրավելն էր Հայտնի է որ հայկական գաղթօջախների զինվորական կազմավորումները իրենցից մեծ ուժ էին ներկայացնում և տվյալ երկրի իշխանները հաճախ էին դիմում նրանց օգնությանը

Տեղեկություններ են պահպանվել հայկական աշխարհազորային ուժերի մասին որոնք ռուսական և ուկրաինական զորքերի հետ համատեղ կռիվ են մղել թուրքական ու թաթարական հրոսակների դեմ Այդ միավորումները հնում կոչվել են Կույս Մարիամի ասպետներ рыцари Девы Мари [7]

Լևոն Խաչիկյանը սերտ կապ է տեսնում այդ աշխարհազորային միավորումների և հայ գաղթավայրերում հիշվող կտրիճվորաց եղբայրությունների միջև[8]

Հայ գաղթավայրերում առևտրի և արհեստների զարգացման հետ միասին սկսում էր ձևավորվել նաև գրական միջավայր Ի հայտ էին գալիս հայրենի բանաստեղծական ավանդները շարունակող տաղասացներ որոնցից շատերը կատարում էին կտրիճների գրական պատվերները ինչպես Հովհաննես Պլուզը և Կոստանդին Երզնկացին էին բանաստեղծում Երզնկայի մանկտավագ-մանկտիների պատվերներով

Բանաստեղծության մեջ կրոնականի կողքին զարգանում են պանդխտության սիրո և հայրենասիրական թեմաները

Ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակի հետ է կապվում աշխարհասփյուռ հայության երգը՝ պանդխտության թեմաներով բանաստեղծությունները Սա ժողովրդին հուզող ընդհանրական նյութն էր միջնադարում. այս մասին գրել են և՛ բանաստեղծները և՛ ժողովրդական երգիչները

Կապված լինելով հայության կյանքի ծանր վիճակի հետ՝ պանդխտության երգերը աճում ու զարգանում են դդ դարերում Այդ երգերի գրավոր առաջին օրինակները հայ գրականության մեջ կապվում են Մկրտիչ Նաղաշի անվան հետ որի ստեղծագործությունները լայն տարածում են գտնում և նույնիսկ տեղ գրավում եկեղեցական կանոնական ժողովածուների մեջ

Այսպես՝ Մկրտիչ Նաղաշը հնչեցնում է պանդուխտի հոգու թախիծն ու ցավը Նա վշտով ու խղճահարությամբ է նկարագրում տարագիր հայի վիճակը օտար ափերում ուր չկա ո՛չ եղբայր ո՛չ սիրելի ո՛չ ազգական Տաղերգուն ապրված զգացումով է պատկերում պանդուխտի թշվառությունը օտար անսիրտ միջավայրը և իբրև մխիթարություն իր երիտասարդ ունկնդիրներին՝ մանուկ-եղբայրներին հիշեցնում է կյանքի վաղանցիկությունը՝ կարևորագույնը համարելով հավիտենականի հույսը.

Ամենքս ենք դարիպ եղբա՛յրք հայրենի մարդ իսկի չունի
Հաւասար գնալու ենք մենք զի այն կեանքն է մեզ հայրենի.
Աստէնս քեզ ճար արա՛ որ անտէն հոգիդ չի տանջի
զՍուրբքն քեզ եղբայր շինէ ու զիրեշտակքըն արա սիրելի[9]

Բանաստեղծներից շատերի մոտ պանդխտության երգերը դարձան անհատա

---

[7] **Լևոն Խաչիկյան** Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում դարերում էջ 2

[8] Տե՛ս նույն տեղում էջ 2

[9] Մարգարիտներ հայ քնարերգության Երևան 7 էջ

կան հույզերի ու ապրումների արտահայտություններ՝ անձնական տառապանքը ներկայացնելով իր ողջ պարզությամբ ու անմիջականությամբ

Հայ գաղթօջախներում ստեղծագործած տաղերգուներից առանձնակի ուշադրության են արժանի Ստեփանոս Թոխաթցին Մեծպարոնը Մարտիրոս Խարասարցին Վարդան Կաֆացին Խաչատուր Կաֆացին Խաչգռուզը և ուրիշներ որոնք ոչ միայն սերտ կապեր են ունեցել կտրիճվորաց եղբայրությունների հետ այլև տաղեր են գրել կտրիճների պատվերներով

Մենք կանդրադառնանք այն գործերին որոնք առնչվում են վաճառականների ու արհեստավորների կտրիճների կյանքին ու գործերին նրանց ապրած ժամանակին

Ժամանակի պատմաքաղաքական հարաբերությունների ինչպես նաև Ստեփանոս Թոխաթցու աշխարհայացքի մի քանի գծերի բացահայտման տեսակետից ուշագրավ ստեղծագործություն է Ոտանաւորաբար ասացեալ ի Ստեփանոս Թոխաթցի իրիցուէ ի վերայ վաղամեռիկ եղբոր և հարազատին իւրոյ տէր Յակոբ սրբասընունդ քարտուղար և բանիբուն քահանայի տարաժամ վախճանելոց ի տիս մանկութեան սգո երգը[10]

Այստեղ հետաքրքիրն այն է թե Թոխաթցին ինչի համար է գովաբանում եղբորը ինչն է ամենից շատ գնահատում նրանում Հանձին Հակոբի նա առաջին հերթին արժեվորում է հայ դպրության անխոնջ մշակին

Ապա բանաստեղծը շեշտում է եղբոր եկեղեցասիրությունը այն որ նա որպես «բարի հովիվ սատար է եղել պանդուխտներին այրիներին որբերին եղել է խոնարհ ու հեզ միաժամանակ ժիր ու արի

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Ստեփանոս Թոխաթցու երկու բանաստեղծությունները՝ գրված վաճառականներ Կարապետի և Ախիճանի մահվան առթիվ[11] Սրանք ևս ըստ հեղինակի սիրելի են ամեն մարդկանց աստուածասէր են մարդասեր ծնողասեր գրասեր և այլն

Իրենց գործունեության ընթացքում զոհվում են այս երկու կտրիճները մեծ ցավ պատճառելով հարազատներին ընկերներին ճանաչողներին

Բանաստեղծը մեծ ցավով ու ափսոսանքով է հիշում վաճառական Կարապետի մահը.

Ո՛վ Կարապետ դու գրկարդաց
Անուանի մէջ կտրճւորաց
Արդ կապեցաւ ճարտար լեզուդ
Գրքերդ ամէն անտէր մնաց[12]

Եղերական էր նաև իմաստուն վաճառական Ախիճանի մահը Նա որ սիրելի էր հայրապետների վարդապետերի ծերերի կանանց փոքրերի առհասարակ բոլորի համար զոհվում է ծովահենների հարձակումների ժամանակ

---

[10] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Ա աշխատասիրությամբ Հ. Սահակյանի Երևան էջ 0

[11] Տե՛ս նույն տեղում էջ 2

[12] Նույն տեղում էջ 20

Պատմական առումով այս բանաստեղծությունների մեջ առավել հետաքրքիր են այն տեղեկությունները որ Թոխաթցին տալիս է Կաֆայի վաճառականների գործունեության ու դրա հետ կապված վտանգների մասին Ոտանավորներից տեղեկանում ենք որ Կարապետն ու Ախիճանը եղել են կտրիճվորաց եղբայրությունների անդամներ Մօրւօքն թուխ այս կտրիճները զոհվում են օտար ափերում՝ զեղ բարքս ամէն ի լաց թողնելով

Այս երկու ոտանավորները լավագույնս արտացոլում են հայ գաղթօջախներում ստեղծված կտրիճվորաց եղբայրությունների գործունեության կտրիճների կյանքի պատկերները

Խտրշա մանկան նահատակության պատմությունն ամփոփված է դդ դարի բանաստեղծ Մեծպարոնի մի ոտանավորի մեջ՝ Տաղ Խտրշայ մանկան որ Մարզուան քաղաքն է նահատակեալ [13] Այս բանաստեղծի մասին քիչ տեղեկություններ են հայտնի

Կարծիքներ կան որ Խտրշայի նահատակությունը տեղի է ունեցել թ. իսկ հեղինակն էլ այն ներկայացնում է որպես ժամանակակից[14]

Մեծպարոնը իր տաղում նկարագրում է հայ ազգի վիճակը այն ողբերգական ժամանակներում երբ մենք թագաւոր չունիմք օծած ոչ առաջնորդ ի վերայ խելաց երբ տաճիկները ամեն կողմից խոցում էին ինչպես թիւնաւոր օձ դառնացած Այդ ժամանակ հայտնվում է բոլորի հույս ու ապավեն Խտրշա մանուկը.

Այս Խտրշան մանուկ գոված
Աղէկ կտրիճ անուն ելած
Ոնց որ մտաւ ի Մարզուան
Շուն չի մնաց որ զնա չի խած[15]

Նա հայտնվում է իբրև մի լույս խավարի մեջ և նահատակվում հանուն հավատի անձնուրացության և քաջության ոգի արթնացնելով հայոց ազգի մեջ Այս հերոսի մեջ միաժամանակ տեսնում ենք հեթանոսական կտրիճ-մանուկին և քրիստոնյա նահատակին Այսինքն հավատի համար զոհվողը իր կյանքը պիտի զոհի նաև հայրենիքի համար ինչպես Սուրբ Կարապետը՝ Վահագնի քաջությամբ ու հզորությամբ օժտված

Բազմաթիվ են ուշ միջնադարի այն բանաստեղծները որոնց տաղերում հանդիպում են մանուկ-կտրիճ քնարական հերոսը և ընթերցող եղբայրները Հիշյալ տաղերում գովերգում են անձնազոհությունն ու քաջությունը ազնվությունն ու խիղճը

Հայրենասեր տաղերգուները գիտակցում են որ տարագիր հայությունը նախ պիտի ճանաչի իր գիրն ու գրականությունը իմանա նախնիների պատմությունը որպեսզի կարողանա դիմանալ ամեն տեսակ փորձության

7 դդ դարերի հայ բանաստեղծությունը իր վրա կրում է ինչպես տաղերգության այնպես էլ ժողովրդական բանահյուսության ազդեցությունը Սիրո բնության և ուրախության թեմաները նոր որակ են ստանում ուշ միջնադարի հայ բանաստեղծ

[13] Նույն տեղում էջ 2 27
[14] Նույն տեղում էջ 0
[15] Նույն տեղում էջ 2 7

ների ստեղծագործություններում

րդ դարի բանաստեղծ Մարտիրոս Խարասարցու սիրո և ուրախության երգե ը բավականին մոտ են տաղերգության լավագույն նմուշներին Երգչի սիրո պատ մությունը շատ տխուր է ու թախծալի նրա սիրտն անհամբեր է դարձել իսկ սիրու հին տանջում է՝ թողնելով աչերս ի լաց Բանաստեղծը դառնացած գրում է.

Ջանացի պաքնել զնա
Նա իւր շներն զիս ի խած[16]

Այս տողերը հիշեցնում են Քուչակի հետևյալ հայրենը.

Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինիմ
Կամ թէ ի՞նչ ունիմ կատարած
Հա՜յ վա՜հ իմ սիրած եարն
Ջէտ կատղած շուն զիս է խած...[17]

Մարտիրոս Խարասարցին սիրո բանաստեղծություններից բացի ունի գինու և ուրախության հրաշալի երգեր որոնց մեջ դիմում է մարդկանց՝ բարեկամներին ա լևորներին Մանուկ-կտրիճներին և այլոց որ նրանք վայելեն անապական գինին.

Ճերմակ մօրուք շատ ալևոր
Մանուկ ընտիր և ձիաւոր
Յայնժամ ամէն սէր միաւոր.
Անուշ խմենք քաղցր և յորդոր[18]

Բանաստեղծը խրախճանքի սեղանին հավաքված մտրուպ-գուսանին ունկնդ րող եղբայրքին խորհուրդ է տալիս. Սիրով խմելն եղբայրք լաւ է [19]

րդ դարի մի այլ բանաստեղծ Ստեփաննոս Կեղեցին իր Ոտանաւոր վասն կանանց խաբէութեան ամենայն մարդոյ օգուտ [20] երգի մեջ մանուկ-կտրիճներին հորդորում է հեռու մնալ զաչերն ծարուրած կանանցից նրանց հետ մտերմությու նը համարում է վտանգավոր.

...Մանուկ որ ի նա հայի
կու լինայ քան զխելագարած
Աչօք և ունօք կանեն
կու հանեն զմանկտիքն ի խելաց[21]

Ինչպես տեսնում ենք 7 րդ դարերի հայ բանաստեղծությունն իր վրա կրում է ժողովրդական մտածողության կնիքը Գրեթե բոլոր բանաստեղծները իրենց սիրո

[16] Նույն տեղում էջ 7
[17] Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը Երևան 200 էջ
[18] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Ա էջ
[19] Նույն տեղում էջ 7:
[20] Նույն տեղում էջ 7
[21] Նույն տեղում էջ 7

գինու և խրախճանքի երգերը հորինելիս օգտագործել են հայրենների և միջնադարյան ժողովրդական երգերի բանաստեղծական հնարանքները

Ժողովրդի մարդ է Մարզվանցին և նրան ևս հարազատ են ժողովրդական բանահյուսական մտապատկերները Բանաստեղծը Տաղ սիրոյ Մարզուանցի ոմն ասացեալ ի մեջ հյուսում է իր տառապագին սիրո պատմությունը Երգչի հառաչանքի ու տառապանքի պատճառը Մենենտ խաթունի սերն է Մարզվանցին իր չքնաղ սիրուհուն համեմատում է վարդի թերթիկի աշնան նոր լուսնկայի հետ և որ մինչև ի մահ ի դատաստան չի հրաժարվի նրանից Հեքիաթների հերոսների նման նա պատրաստ է նույնիսկ գոտեմարտելու սիրածի երկրպագուների հետ նրա սերը նվաճելու համար.

Զքեզ այլ ինձմէ զատ ո՞ւմ կուտան
Ես՝ Մարզվանցիս քո ծառան
Թող զանք՝ դպչինք զէտ քաջունանք
Տեսնունք թէ որս ենք փէհլիւան[22]

Մարզվանցին միջնադարի մեծ սիրերգու Հովհաննես Թլկուրանցու նման իրեն «խև է անվանում Նրա՝ սիրուհուն բնութագրող մի քանի տողերը Ի քո սիրուն կրակն անկայ Զձեռքդ ու ոտքդ դնես հինայ հիշեցնում են հանճարեղ նախորդի «Տաղ Յովհաննէսի վասն սիրոյ [23] բանաստեղծության անզուգական պատկերները

Մարզվանցին Մենենտ խաթունի և իր սիրո պատմությունը համեմատում է «Յովհաննէսի և Աշայի ժողովրդական սիրավեպի հետ.

Մարզվանցիս է քեզ ծառա
Քան զՅովհաննէսն այլ խև եղայ
Քան զԱշային սէրն այլ առակ
Ի քո սիրուն կրակն անկայ[24]

Տաղերգության ազդեցությունն ավելի զգալի է դդ դարի բանաստեղծ Մինասի ստեղծագործությունների վրա Զանազան աղբյուրներից այդ հնարանքները նրա գրչի տակ հանդես են գալիս նոր համադրություններով և մի առանձին հմայք հաղորդում ոտանավորներին Օրինակ՝ Մինասի Տաղ գեղեցիկ ուրախութեան [25] բանաստեղծության մեջ սիրուհու ունքերը կամար են աչքերը՝ ծով-ծով Այդ գեղեցկության հմայքին չի դիմանում խև երգիչը.

Ուներդ է կամար
Ես խև ու խումար
Քու ծով ծով աչերուդ համար.
Այլ չեմ դիմանար

[22] Նույն տեղում էջ
[23] Տե՛ս **Հովհաննես Թլկուրանցի** Տաղեր Երևան 0 էջ 2 7
[24] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Ա էջ 0
[25] Նույն տեղում էջ 0

Քու սիրուդ համար
Բարակ նայելուդ համար[26]

Այստեղ թերևս տեսնում ենք հայրենների և Թլկուրանցու ստեղծագործության հեռավոր արձագանքները

Մինասը երբեմն զարմանալի ճաշակ է հանդես բերում պատկերավոր խոսքի մեջ Վերոհիշյալ բանաստեղծության մեջ նա կերտում է իր սիրուհու հրաշք կերպարը՝ հասակը համեմատելով սալվի ծառի քայլքը՝ կաքավի հետ.

Երեսդ է պայծառ
Պօյդ է ֆիդան
Ծառ ծօցիդ միջի անճաղ թակնար[27]

Նույն ձևով է սիրուհուն գովաբանում այդ դարաշրջանի մի անհայտ բանաստեղծ «Տաղ սիրոյ առ սիրելին ոտանավորի մեջ.

Առաւօտուն կանուխ կանուխ
Եարս ի պաղչան քաղէր անուխ
Ինքն սպիտակ աչվին է թուխ
Իմ տուն խօրօտիկ պապու տուն[28]

Այստեղ տեսնում ենք թուխմանուկյան որոշ արձագանքներ Արդեն նկատել ենք որ հայրեններում քնարական հերոսը պատկերվում է թուխ աչքերով թուխ մազերով թուխ ունքերով կամ անվանվում է Թուխ մանուկ Թուխ կտրիճ կամ պարզապես Թուխ և առնչվում է նախաքրիստոնեական Թուխ Մանուկի պաշտամունքի հետ

Այս առումով ուշադրության է արժանի մեկ այլ անհայտ սիրո երգչի բանաստեղծությունը՝ Տաղ սիրոյ վերնագրով որը տարբերվում է նույն ժամանակաշրջանի մյուս երգերից Այս երգի քնարական հերոսը օտար երկրից եկած կտրիճն է որի հոգին այրվում է սիրուց

Բանաստեղծը նրբորեն բացում է Ղարիպ կտրիճի սրտի գաղտնարանը. սիրածի սերն ու կարոտն են նրան հանել քաղաքից.

Յիս անճայ խեղճ բաներ եղեր է
Խեղճ այն է որ լալով քաղքէն ելեր է
Անճայ ղարիպ կտրիճ հասրաթ մեռեր է
Հոգիս կու ցաւի՝ ղարիպ մի ասեր է[29]

Այս վերջին տողը զարմանք է հարուցում իր հուզականությամբ այն արտահայ

[26] Նույն տեղում էջ 0
[27] Նույն տեղում էջ
[28] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Բ աշխտ. Հ. Սահակյանի Երևան 7 էջ
[29] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Ա էջ

տում է երգչի վերաբերմունքը պանդխտության նկատմամբ

Բանաստեղծը զարմանալի նրբությամբ է պատկերում սիրահար կտրիճի սիրո տագնապները Սիրով է բռնկված նրա հոգին Սիրուհու ամեն մի խոսք խոցում է «դարիպուկ կտրիճի սիրտը աչքերի ունքերի խաղը տարել է նրա խելքն ու միտքը Սիրահարի արյունով են ներկված լեռները կրակ է ընկել նրա ներսը և այրում է հոգին Նա հուսահատ դիմում է սիրած կնոջը.

Զքո արածն չէ արեր հարամի
Աչըընին կու խաղա կասեր հալամի
Կրակն անկեր կերի մէկ մահալամի
Բայց ան մէկին հառաչն անանց ալամի[30]

Միակ հանգստությունը որ բերում են կտրիճի սիրահար սրտին Թլկուրանցու տաղերն ու Խաթայի խաղերն են.

Մէկ Ղարիպուկ կտրիճ եղեր սավտայի
Նայ կասէր թէ՝ գիտեմ և ես չավտայի
Տաղեր Թուրկուրանցի խաղեր Խաթայի
Ասող էր ու գրող նման Յովբալի[31]

Բանաստեղծի ակնարկը հուշում է որ Թլկուրանցու տաղերը ոչ միայն սիրված են եղել միջնադարում այլև սիրահարների շուրթերին իբրև աղոթք են հնչել

Սալաձորցին ևս ունի իր սիրո պատմությունը ինչը մեզ տեղեկություններ է տալիս նրա սիրուհու և իր սիրո թաքուն հրապույրների մասին Հիշյալ բանաստեղծություններում երգիչը կարծես սրտաբաց զրուցում է սիրուհու հետ նրան է պատմում իր սիրո պատճառած ուրախություններն ու վշտերը կարոտն ու երազանքը Ոչ թե ուրիշների մոտ է գովաբանում նրան այլ հենց իրեն է ասում թե որքան խելացի է ու գեղեցիկ Այս մտերմիկ տոնը բնորոշ է առհասարակ ժողովրդական ստեղծագործություններին. Սալաձորցին կարողանում է հմտությամբ օգտվել հայրենների բանաստեղծական հնարանքներից Նա պատկերում է իր սիրուհու արտաքինը. ուները համեմատում է աղեղի կամ կամարի հետ հասակը սալվի ծառի հետ

Հիշյալ սիրո երգերում հանդիպում ենք մուրազատու Սուրբ Կարապետին որից սիրուհու սիրտը նվաճելու կամք է հայցում բանաստեղծը.

Ալի փէտայ եղաւ դարդ մը
Ազգուլն այսօր տեսայ եղայ դիւանայ
Սուրբ Կարապետ դու ինձի երատում արա
Ուղիղ սրտով կանչէ ի նա յիմանայ[32]

---

[30] Նույն տեղում էջ 7
[31] Նույն տեղում էջ
[32] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Բ էջ

Քննարկված սիրային երգերից տարբերվում են Երեմիա Քյոմուրճյանի ստեղծագործությունները Այս բանաստեղծից մեզ հասել են մի քանի երգեր որոնցից երկուսը սիրային են Երգ սիրոյ և Ի վերա սիրո և ուրախութեան [33] Քյոմուրճյանն Ի վերայ սիրո և ուրախութեան ի մեջ քիչ է դիմում սիրուհու արտաքինի նկարագրությանը և ավելի ջերմ տողերով խոսում է սիրո վայելքի մասին իսկ Երգ սիրո բանաստեղծության մեջ նա ավելի շատ սիրած կնոջ գեղեցիկ արտաքինն է նկարագրում

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Երեմիա Քյոմուրճյանի Ի վերայ ջրոյ միևնույն խորագրով երեք բանաստեղծությունները Դրանք Տաղ ջրի վրա է ասացեալ ժողովրդական երգի մշակումներ են Այդ մասին վկայում է Ասատուր Մնացականյանը. Ծանոթագրվող երգը դեռևս դ դարում բանաստեղծ Երեմիա Քյոմուրճյանի Երեմիա Չելեպի կողմից ենթարկվել է մշակման՝ հիմք դառնալով երեք գողտրիկ նոր ու թարմ բանաստեղծների [34]

Թե՛ Քյոմուրճյանի մշակումներում և թե՛ ժողովրդական տարբերակներում հիմնական գաղափարն այն է որ ջուրն անգնահատելի բարիք է մարդու համար նա է շունչ ու կենդանություն տալիս աշխարհին գեղեցկացնում կյանքը Ժողովրդական տարբերակներում այս գաղափարն արտահայտվում է ջրի և մարդու միջև իբրև տեղի ունեցած երկխոսությունների միջոցով Քյոմուրճյանի բանաստեղծություններից միայն մեկում է պահպանված այս հնարանքը Մյուս երկուսում հեղինակն իր անունից է փառաբանում ջուրը գովերգում նրա կենարար ուժը սակայն այն տպավորությունն է ստեղծվում թե երգիչը դիմում է բանական էակի.

Թէ զայլք չես խղճար շատ ցաւ քո նիզան
Խեղճ նազենի վարդն իմ պատուական
Որ եղեր եմ ես տէրտէն սէրկէրտան
Դու իսթիզայով քալես մանէման[35]

Այս և նման ուրիշ հատվածներ առանձին վերցրած սիրո երգն են հիշեցնում ուր սիրահարը դիմում է ծիծաղման ծփացող ջրին՝ իր՝ նորատունկ վարդի պես ֆիդան սիրուհուց լուր ստանալու.

Ես քո խապարիդ եմ լաց ւ ի ֆիդան
Դու ծիծաղելով ճեմես ծածանման
Ես կու հարցանեմ զվարդն իմ սիրական
Դու իսթիզայով ծփիս ծիծաղման[36]

Ինչպես հայրենների մեջ այնպես էլ այստեղ նկատելի են նախաքրիստոնեական «Թուխ Մանուկ աստվածության և ջրի պաշտամունքի հեռավոր արձագանքները Հասմիկ Սահակյանը հետևյալ կարծիքն է հայտնում այս առիթով. Կառուցվածքով ժողովրդականին ավելի մոտիկ է երրորդ երգը Հեղինակն այստեղ հանդես է գալիս

[33] Տե՛ս նույն տեղում էջ :
[34] **Ա. Մնացականյան** Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր Երևան էջ :
[35] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Բ էջ :
[36] Նույն տեղում

ժողովրդական երգի Թուխ Մանուկի դերում և զրուցում ջրի հետ Այստեղ ևս շեշտվում է ջրի կենարար ուժը սակայն Քյոմուրճյանը երկխոսության հնարանքն օգտագործում է նաև կյանքի ու շրջապատի նկատմամբ իր հույզն արտահայտելու համար Ջուրն այս երգում սուրհանդակ է որին բանաստեղծն առաքում է հարա զատներին սիրեցյալներին ողջ աշխարհին իր ցնծությունն ու ողջույնը հաղորդե լու [37]

Խնջույքների ժամանակ հայ կտրիճ-մանկտիները հաճույքով են ունկնդրել երգիչ Աստվածատուրի՝ այգու խաղողի և գինու մասին բանաստեղծություն-ձոնը Երգիչն իր Տաղ և գովասանք... ի մեջ պատկերում է այգու տնկումն ու ծաղկումը պտղա բերումը երբ ճուղք արձակէր մանր ու բար խաղողն ի կախ թուխ սպիտակ ա պա տեսնում ենք պտուղն ի վառ դէմ արևուն իսկ երբ մոտենում է աշունը այգե գործները հնձաններում հավաքում են խաղողի բերքը լցնում են ամանները ապա.

Մանկտիք խմեն քեզ համարձակ.
... Ա՛յ լից ու տուր ա՛յ լից ու տուր
Զանուշ գինին անապական[38]

Ուշագրավ է որ նման նկարագրությունների հանդիպում ենք նաև ժողովրդա կան երգերի մշակումներում.

Ողկոյզ հաւողն հասեալ է
Թուխ և սպիտակ կախեալ է
Կարաս գինով լցեալ է...[39]

Գրականության և արվեստի զարգացման հայ կյանքի բարելավման հետ միա սին հայ գաղթօջախներում մշակվում են ծրագրեր Հայաստանի ազատագրության և հայկական անկախ պետականության ստեղծման համար Հատկապես պետք է հի շենք Հնդկաստանի Մադրաս քաղաքում Շահամիրյանների ազգանվեր գործու նեության մասին

772 թ. Մադրասում Հակոբ Շահամիրյանի ջանքերով տպագրվում է Մովսես Բաղրամյանի Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ աշխատությունը որտեղ հայ բնաշխարհը և պատմական անցյալը ճանաչելու հիմքի վրա բարձրացված են համայն հայության միասնականության նրա քաղաքական արթնացման և ազգա յին-ազատագրական պայքարի կազմակերպման խնդիրները Նոր տետրակի մեջ արտահայտված գաղափարները համահունչ են միջնադարյան կտրիճվորաց միությունների ծրագրերին

Այսինքն՝ բոլորի մոտ նպատակը մեկն է. կտրիճ երիտասարդներին սթափեցնել «վեհերոտ և անհոգ թմրությունից ոգևորել նախնիների քաջագործություններով և հպարտությամբ և որ ամենակարևորն է՝ նախապատրաստել անհուն պատվախնդ ությամբ ու սիրով պաշտպան կանգնելու հարազատ երկրին ու ժողովրդին Նոր

[37] **Հ. Սահակյան** Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը էջ 2 :
[38] Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը հտ. Ա էջ 7
[39] **Ա. Մնացականյան** Հայ միջնադարյան ժողովրդական երգեր էջ 7

տետրակում հեղինակը դիմում է կտրիճներին.

Ծաղկափթիթ նորաբողբոջ ո՛վ կտրիճներ պատրաստ եղեք
որ մեր Տիրոջ օգնությամբ ձեզ փրկագործեք
Ու մուտք գործեք զվարճալի և բերկրալի Արարատյան
դրախտը մեր եդեմակերպ
Քանզի շատերն են վկայում որ դրախտը աստվածային
եղել է մեր հայրենիքում
Որովհետև ինչպես ասվեց դեռ վերևում Եփրատը և ուրիշ գետեր
այստեղից են ակունք առնում[40]

Ապա կտրիճներին կոչ է արվում՝ գնալ հետքով մեր հայրերի նախնիների ո
րոնք հանուն ազգի զենք են վերցրել և վրեժխնդիր եղել իրենց ոսոխներից
Հետաքրքիրն այն է որ այստեղ կտրիճն ու նահատակը նույն կերպ են ընկալ
վում.

Եվ միգուցե այդ տեսնելով՝ պատկառեին իմ որդիներն հուսակտուր
Գիտակցեին թե այդ ինչքան անբավ արյուն թափվեց քանիսը
հանուն ինձ դարձան խիզախ նահատակներ
Խուսափում եմ այստեղ հիշել անունն ուրիշ կտրիճների
որոնց հանգույն հիմա չունեմ...[41]

«Նոր տետրակում այն միտքն է արտահայտվում որ հայրենիքը պետք է սիրել
արյունով սրտով և պատրաստ լինել նրա համար անգամ նահատակվելու. Երանի
թե ազգը մեր մի օր խորհեր նահատակի նման զոհվել արիաբար... [42]
«Նոր տետրակի հեղինակը մեծ հայրենասերի ոգով արիության կոչ է անում ե
րիտասարդ կտրիճներին՝ մատնանշելով պատվաբեր այն ուղին որ ավանդված է
անձնազոհ քաջ նախնիներից.

Ահա ինչու քաջամարտիկ և աննկուն տղամարդիկ նախընտրում են
միանգամից զոհվել որպես նահատակներ
Քան ամեն օր հազար անգամ մահը տեսնել թշնամական
արհավիրքից անել վշտից
Որովհետև մտածում են նրանք այսպես. Այսօր թե վաղը
բոլորս էլ մեռնելու ենք ինչպես որ կարգն է բնական
Ապա ուրեմն ավելի լավ է քաջաբար մեկից մեռնել
քան այսպիսի թշվառությամբ մի կերպ ապրել [43]

Այս տողերը բնութագրական են ընդհանրապես հայ քնարեգության մեջ հանդի
պող կտրիճ-մանուկ-ֆետայ քնարական հերոսին

---

[40] **Մովսես Բաղրամյան** Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ Երևան էջ 2
[41] Նույն տեղում էջ
[42] Նույն տեղում էջ
[43] **Մովսես Բաղրամյան** Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ էջ

Բանահյուսությունից և քնարերգությունից ավանդված քաջության անձնազոհության պատվախնդրության ու նահատակության ոգին մեր ժողովրդի մեջ անցել է սերնդեսերունդ և պարտավորեցնում է ապրել պատվով ու արյան կանչին հավատարիմ

Ինչպես տեսանք ուշ միջնադարյան հայ բանաստեղծության մեջ ևս հանդիպում է կտրիճ-մանուկը՝ անձնազոհ երիտասարդը որը ճշմարիտ հայրենասիրության քաջության նվիրումի ու սիրո ինչպես նաև սուրբ գործի համար նահատակվողի խորհրդանիշն է

Ինչպես նշեցինք հայ գաղթավայրերում ստեղծվում էին կտիճվորաց եղբայրություններ որոնք Երզնկայի և ուրիշ եղբայրությունների նման ունեին իրենց ծրագիրն ու կանոնադրությունը Ուրեմն չնայած հայ ժողովրդի դաժան ճակատագրին Հայաստանից դուրս հեռավոր գաղթավայրերում շարունակում էր ապրել հայ ոգին և հայ բանաստեղծությունը հնչում էր իբրև կարոտի սիրո ու հայրենասիրության երգ

ԷԼԵՈՆՈՐԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ
ԵՊՀ Հայագիտական
հետազոտությունների կենտրոն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱԳԵՏ ԼԸՎԱՅԱՆ ԴԸ ՖԼՈՐԻՎԱԼԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ

րդ դարի ֆրանսիացի հայագետ Պոլ-Էմիլ Լբվայան դը Ֆլորիվալը 00 2 Փարիզի ասիական ընկերության հիմնադիրներից մեկն էր Պատվո լեգեոնի շքան շանի ասպետ պրոֆեսոր Փարիզի արևելյան կենդանի լեզուների արքայական հա տուկ դպրոցի հայոց լեզվի դասախոս և Վենետիկի Մխիթարյան միաբանության հայագիտական կաճառի անդամ Նա պատկանում է ֆրանսիական գիտնականնե րի այն դպրոցին որը հսկայական ավանդ ունի Հայաստանի պատմական ուղին և հնադարյան մշակույթն ուսումնասիրելու և լուսաբանելու գործում

Քաղաքական և առևտրա-տնտեսական կապերի ընդլայնման դարաշրջանում Ա րևելքի այդ թվում և Հայաստանի նրա պատմական և մշակութային ժառանգութ յան հանդեպ աճող հետաքրքրությունը հանգեցնում են Ֆրանսիայում փայլուն հա յագետների մի ամբողջ համաստեղության երևան գալուն Նրանցից շատերը Փարի զի կենդանի արևելյան լեզուների վարժարանում հաջողությամբ զուգակցում էին հետազոտողների ստեղծագործական որոնումները մանկավարժական գործու նեությանը Այստեղ 02 թ. բացվեց հայոց լեզվի բաժանմունք Այդ վարժարանի սանն էր Սեն-Մարտենի[1] և այլ հայտնի հայագետների նման նաև Ֆլորիվալը որն այնուհետև փոխարինեց Հակոբ Զրպետյանին հայոց լեզվի դասախոսի պաշտոնում (քերականություն ընթերցանություն գիր խոսակցական լեզու հայ հեղինակների երկերի բացատրություն Երկար տարիներ մինչև մահը Ֆլորիվալը մշտապես հա յոց լեզվի ամբիոնի վարիչն էր Եվ արդեն 0 ական թվականների սկզբում գիտա կան ամսագրերում լույս են տեսնում երիտասարդ գիտնականի հոդվածները կապված Հայաստանի հին պատմության և մշակույթի տարբեր հարցերի հետ ո րոնց ուսումնասիրությունն ու դասավանդումն իր կյանքի գործն է դառնում

Երազելով Հայաստան ճանապարհորդություն կատարել թվականին Ֆլո րիվալը արձակուրդ է վերցնում բայց նրան հաջողվում է միայն Ս. Ղազարի կղզի Մխիթարյանների մոտ մեկնել որտեղ նա կատարելագործում է հայոց լեզվի և պատմության իր գիտելիքները Առաջին անգամ Ֆլորիվալը Մխիթարյաններին է այցելել 2 թվականին հետագայում հաճախ այնտեղ վերադարձել և հիացմուն քով գրել գիտուն հայրերով ու տպարանով հայտնի հայոց վանքի մասին ուր լորդ Բայրոնը Վենետիկում մնալու ժամանակ սիրում էր առաքինության խաղաղ օթևա նում հանգստանալ տանջալից կրքերից խոնջացած հոգով հաղթահարելով գրա բարի դժվարությունները [2]

---

[1] Անտուան-Ժան Սեն-Մարտեն 7 2 խոշոր գիտնական-հայագետ րդ դարի 20 ական թթ. արևելագետների ղեկավարներից մեկը Պատմական և աշխարհագրական հիշատակներ Հայաստանի մասին նշանավոր երկի հեղինակ

[2] Chodjentz, Marc-Zachari, La rose et le rossignol, alle'gorie orientale… contenant quelques lettres de Byron relatives a la langue arme'nienne… Trad. par. Le V. De Florival. 9., 1833.

Մխիթարյան միաբանության և նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացու 7 7 գործունեությունը արտացոլված է այն ակնարկում որը Ֆլորիվալը ձոնել է միաբանության՝ ժամանակի աբբահայր Հ. Սուքիաս Սոմալյանին Սեբաստացու մասին կենսագրական ակնարկում հեղինակը նկարագրում է Մխիթար աբբահոր կյանքի դժվարին ուղին Ֆլորիվալը այնուհետև գրում է Միաբանության դժվար պատմության և հետագայում յուրատեսակ ակադեմիայի վերածվելու մասին (պահպանելով վանական կարգավիճակը

Միաբանությունը միանգամայն արժանի էր այդ տիտղոսին քանի որ բացառիկ դեր ուներ բազմաթիվ հիրավի ակադեմիական երկերի հրատարակման հայ գրականության մոռացված դասական ավանդույթների վերականգնման դրանց հետագա զարգացման ինչպես նաև եվրոպական գրական մտքի նվաճումների տարածման գործում Մխիթարյան վանական գիտնականները անձնվիրաբար հավաքում վերականգնում և հրատարակում էին անցած դարերի անգին ձեռագիր գանձերը ստեղծում պատմական կրոնա-խրատական և փիլիսոփայական երկեր քերականական ձեռնարկներ ու բառարաններ կազմում նաև զբաղվում այլ ժողովուրդների գիտական երկերի ու գրական գլուխգործոցների թարգմանությամբ Նրանց բազմաթիվ հրատարակությունները կարևոր ներդրում հանդիսացան համաշխարհային մշակույթի գանձարանում Դրանց թվում Ֆլորիվալը հիշատակում է Փիլոնի[3] երկերը ինչպես նաև Եվսեբիոս Կեսարացու հայտնի Քրոնիկոնը որը գիտական հասարակությանը հայտնի էր դարձել դ դարի հայերեն թարգմանության շնորհիվ քանի որ հունական բնագիրը կորած էր[4]

Միաբանության գործունեությունը սակայն միայն չէր սահմանափակվում գիտա-հրատարակչական ոլորտով Մխիթարյանները ծավալել էին և անձնազոհաբար կատարում էին կրթա-լուսավորչական գործունեություն թե՛ Եվրոպայի տարբեր քաղաքներում և թե՛ Ս. Ղազարում Բարձր գնահատելով Միաբանության գործունեությունը Ֆլորիվալը բերում է նաև Եվրոպայի տարբեր գիտնականների և նշանավոր անձանց հիացական գնահատականները լուսավորության այդ կենտրոնի մասին Հատուկ երախտագիտությամբ նա գրում է Մխիթարյանների հետ իր գործակցության մասին և մեծ պատիվ համարում միջնադարյան հայ հեղինակների թարգմանության նրանց աշխատանքներին մասնակից դառնալը

Հայոց լեզուն և մշակույթը դասավանդելու և ամեն կերպ տարածելուն զուգընթաց թարգմանությունները նրա գործունեության հիմնական ուղղությունն են կազմում Նրա գրչին է պատկանում նաև Մովսես Խորենացու Հայոց պատմության հայտնի թարգմանությունը Այդ երկով գիտնականը հետաքրքրվել էր դեռևս 0 ական թվականների սկզբին թ. Փարիզում լույս տեսավ Ֆլորիվալի թարգմանությամբ Խորենացու Հայոց պատմության առաջին հրատարակությունը սակայն ոչ ամբողջական որն այնուհետև նա հանեց վաճառքից Երկրորդ թարգմանությունը որը Ֆլորիվալը կատարեց Մխիթարյանների և հատկապես Գաբրիել Այվազովսկու աջակցությամբ լույս տեսավ թ. Վենետիկում հայերեն բնագրի հետ միա

[3] Փիլոն Ալեքսանդրացի Եբրայեցի Ն. Ք. դ. եբր. հուն. փիլիսոփա Հայերեն թարգմանված նրա երկերից 7 ը պահպանվել են միայն հայերենով շնորհիվ որի դարձել են դասական բանասիրության և փիլիսոփայության ուսումնասիրության առարկա

[4] Եվսեբիոս Կեսարացի մոտ 2 0 հույն պատմագիր պաղեստինյան Կեսարիայի եպիսկոպոս «Քրոնիկոն պատմագրական երկի հեղինակ Գիրքը լույս է տեսել Վենետիկում թ. ուր հայերեն բնագրի հետ միասին տրված էին լատիներեն և հունարեն թարգմանությունները

սին Իր աշխատությունը Ֆլորիվալը նվիրեց Ռուսաստանի թագավոր Նիկոլայ Ա ռաջինին և ոսկե մեդալ ստացավ Հարկ է նշել որ դա Մովսես Խորենացու ամե նաառաջին թարգմանություններից մեկն էր Ինքը գիտնականը գիտակցում էր որ չնայած բոլոր ջանքերին և բազում համեմատություններին թարգմանության մեջ անհնար էր խուսափել որոշ սխալներից քանի որ դրանք բխում էին տարբեր հատ վածների ոչ հստակությունից որոնք կարելի էր տարբեր մեկնաբանություններով ներկայացնել Բացի այդ ֆրանսերենը իր ոգով դժվարությամբ է ներդաշնակվում հայերենի հակիրճ և ամփոփ ձևերի հետ Այստեղից էլ որոշ երկարաբանություն ներ և անկատարելիություն հայերենում մեկ բարդ բառով ներկայացված միտքը հաղորդելիս Այնուհանդերձ ամբողջությամբ վերցրած Խորենացու Հայոց պատ մության առաջին այդ ֆրանսերեն թարգմանությունը կարևոր և նշանակալից ե րևույթ էր մանավանդ որ ավելի քան հարյուր տարի դրանից առաջ Վինստոն եղ բայրների թարգմանությունը ամբողջական չէր և կատարված էր լատիներենով

Թարգմանության առաջաբանում Խորենացուն բարձրագույն գնահատական է տրվում և արտահայտվում են Ֆլորիվալի հայացքները հայոց պատմության բազ մադարյան գրականության և լեզվի հարցերի վերաբերյալ Ֆլորիվալի խոսքերով հայերենով հիանալու համար բավական է այն իմանալ Նրա գնահատմամբ հայե րենը ներկայանում է որպես հնադարում իր հավասարը չունեցող արմատական հիմք-լեզու որի բազմաթիվ բառերից նույն նշանակությամբ լատինական բառեր են ծագել Բերվող տարբեր օրինակներով շեշտվում է հայերենի ուսումնասիրության կարևորությունը ոչ միայն լեզվաբանության այլև ընդհանրապես պատմության և բանասիրության համար Այսպես շնորհիվ հայերենի հեշտությամբ ստուգաբան վում է Սալյուստինոսից[5] մի հատված միդացիներից մավրերի և նրանց ցեղանվան ծագման մասին քանի որ հայերենում միդացին կոչվում է մար իսկ մարից մինչև մավրը մի քայլ է Նույնը վերաբերում է նաև բրետոնացիների և կելտերի ծագման հարցին որի շուրջ բավական շատ բանավեճեր էին ծավալվել թեև հայե րենը այդ վեճերի լուծման բանալի է տալիս և արժանի է պատմական հետազո տություններով զբաղվողների ուշադրությանը

Ֆլորիվալը ակնածանքով էր վերաբերվում հայերենին որն իր համոզմամբ մյուս բոլոր լեզուներից ավելի է ուսումնասիրության և համընդհանուր ուշադրութ յան արժանի Նա համարում էր որ Հայերենը կմրցակցեր հունարենի հետ եթե նրա նման կարողանար ներկայացնել մեր հիացած հայացքին բազմաթիվ հռչակա վոր գրողներին կամ եթե մեզ հասնեին հայերենով գրող հեղինակների բոլոր երկե րը [6]

Ֆլորիվալը չի կասկածում որ Նոյից սկիզբ առած ժողովուրդը մեզ հայտնի երկե րից շատ ավելի վաղ այսինքն Խորենացու դարաշրջանից շատ առաջ գրված հու շարձաններ է ունեցել Հայ գրականության ակունքները գնում են հազարամյակնե րի խորքը որի վկայություններն էլ ոսկեդարից հասած նրա բեկորներն են Հնա գույն Հայ հին գրականության գրավոր վկայմամբ չպահպանվելը ինչպես և հետա գա դարերի գրական հուշարձանների սակավաթվությունը բացատրվում են ինչպես հին արխիվների ոչնչացմամբ ասորական արքա Նինոսի կողմից ըստ Խորենացու

---

[5] Սալյուստինոս Գայ Ն. Ք. դ. հռոմեական պատմաբան Պատմությունների Կատիլինայի դավադրության պետության բարեփոխման մասին Կեսարին ուղղված նամակների հեղինակ

[6] . այստեղ և այնուհետև բոլոր մեջբե ռումները եթե աղբյուրը նշված չէ այստեղից են հոդվածի հեղինակի թարգմանությամբ

այնպես էլ այն ավերածություններով որոնց ենթարկվեց Հայաստանը

Գիտնականի կարծիքով որ Հայաստանում գրականությունը շատ ավելի հին ա կունքներ ունի քան այն բեկորները որոնք մեզ են հասել հավաստվում է այդ օրի նակների գրական-գեղարվեստական բարձրարժեքությամբ Եվ այդ եզրակացութ յունը դժվար է վիճարկել Իրոք ոչ մի ժողովրդի գրականությունը մեծ և կատարյալ չի ծնվում Սովորաբար առաջին գրական օրինակներն անձև փորձեր են և ոչ թե գլուխգործոցներ Անշուշտ հայ գրականության բուռն զարգացումը կապված է դդ դարում գրերի գյուտի հետ Սակայն հայ գրականության առկայությունը Քրիստոսի ծննդից շատ առաջ Ֆլորիվալի համար անտարակուսելի է ինչպես և այն որ հա ռուստ հոգևոր ժանրի վեհասքանչ օրինակներով առատ հայ գրականությունը նաև պատմական լուրջ երկեր ունի

Գիտնականն անդրադառնում է հայագիտության և ընդհանրապես արևելագի տության համար հայ պատմագրության հուշարձանների ունեցած բացառիկ արժե քին քանի որ դրանցում արտացոլված է ինչպես Հայաստանի այնպես էլ սահմա նակից շատ երկրների պատմությունը Ֆլորիվալի խոսքերով ասած հայկական աղբյուրները հարկ է ուսումնասիրել ասորիների միդացիների պարսիկների հույների և հռոմեացիների մասին մեր տեղեկությունները լրացնելու ճշտելու և ուղ ղելու համար

Մովսես Խորենացու Հայոց պատմությունն այլ պատմական գործերի շարքում Ֆլորիվալի գնահատմամբ ներկայանում է որպես հիմնորոշ աշխատություն որի վրա իրենց իսկ խոստովանությամբ հենվում են հետագա բոլոր հայ պատմիչները Գիտնականը իր հիացմունքն է արտահայտում Պատմահոր հանդեպ ով կարևորա գույն տեղեկություններ է հաղորդում ինչպես հայ հին քաղաքակրթության սկսած ակունքներից մինչև իր ժամանակը դդ դարը այնպես էլ այլ երկրների պատմա կան տարեգրության վերաբերյալ Հայաստանի հետ նրանց կապերի ամբողջ բազ մազանությամբ հանդերձ

Անցնելով Հայոց պատմության կոնկրետ վերլուծությանը Ֆլորիվալը բնակա նաբար անդրադառնում է Խորենացու աղբյուրների հարցին Անմիջապես նշենք որ պատմագիտության զարգացման եվրոպական հայագիտության և Խորենացու երկի յուրացման այդ շրջանում ճիշտ չէր լինի սպասել Ֆլորիվալից Հայոց պատ մության բնագրի խորացված մանրամասն ուսումնասիրություն բոլոր այն հար ցադրումներով որոնց լուծումը հետագայում փորձեցին տալ այս կամ այն հաջո ղությամբ տարբեր սերունդների հետազոտողները Այնուամենայնիվ Ֆլորիվալը չի շրջանցում պատմիչի օգտագործած աղբյուրների կարևորության հարցը Ափսո սանք հայտնելով աղբյուրների զգալի մասի կորստի առթիվ նա ամենևին չի կաս կածում Մար Աբաս Կատինայի աղբյուրների վավերականության և Հայաստանի հնագույն պատմության մասին Խորենացու պատմածների ճշմարտացիությանը Ե թե շատ հեղինակների երկերը որոնց մասին հիշատակում է Պատմահայրը մեզ չեն հասել դա չի նշանակում ինչպես իրավացիորեն նկատում է Ֆլորիվալը որ դրանք երևակայության արդյունք են Ընդհակառակը Հայոց պատմության մեջ շարադրված տեղեկությունների ճշմարտացիությունն ու արժանահավատությունը նրա համար անվիճելի են Հեղինակի գովասանքները ուղղված Սահակ Բագրա տունուն որի խնդրանքով իսկ գրվել էր Հայոց պատմությունը ըստ Ֆլորիվալի ոչ ավելի քան անխուսափելի տուրք է ժամանակին Նա շեշտում է որ հեռու լինելով շողոքորթության լեզվին հետևելուց Խորենացին որպես ճշմարտության ջատագով

երբեք այն չի աղավաղում՝ առավել լավ ներկայացնելու համար իր ժամանակը

Խիզախ և ուղղամիտ պատմիչի կերպարը ներկայանում է այստեղ իր հպարտ պարզությամբ և արժանապատվությամբ Այն վկայում է որ պատմիչը անկեղծ ու շիտակ է նաև այն ժամանակ երբ դրվատում է հայերի առաքինությունները Եվ թե պետ Հայոց պատմության հեղինակը երբեմն թույլ է տալիս ժամանակագրական անճշտություններ կամ ոչ միշտ է հետևում շարադրանքի խիստ հաջորդական կարգին ընդհատելով պատմության թելը և վերսկսելով ու ավարտելով այն մի ուրիշ տեղում սակայն դա վկայում է միայն որ կյանքի վաղանցիկությունը գիտակցող ծեր պատմիչը ձգտում է հնարավորինս շուտ ավարտել իր շարադրանքը

Խորենացուն դյուրահավատության և հեքիաթայնության մեջ մեղադրելու փորձերը Ֆլորիվալը վճռականապես մերժում է որպես անհիմն քանի որ այն ամենը ինչ անհավատալի է թվում պատմիչը հաղորդում է կասկածի ձևով և պահպանում պատմությանը վայել ըստ իր հասկացողության վավերականությունն ու արժանապատվությունը Որպես ապացույց գիտնականը բերում է հին պատմական դեմքերի Նինվեի արքա Նինոսի Շամիրամի մեդացիների թագավոր Աժդահակի և այլն միանգամայն ճշմարտանման բնական նկարագրության օրինակներ մինչդեռ այլ պատմիչներ Հերոդոտոսը[7] Քսենոփոնը[8] և մյուսները դրանց մասին պատմում են հեքիաթային ձևով Ի տարբերություն որևէ աստվածից ծագելու հին ժողովուրդների ընդունված հավատալիքի Խորենացու մոտ անգամ Հայկը հայերի նախահայրը ներկայանում է որպես մեծ ու զորեղ հերոս բայց նրանում չկա ոչ մի գերբնական ուժեղ մարդու հնարավորությունները գերազանցող ուժ

Անշուշտ Ֆլորիվալը մեծ ավանդ ունի նաև դարերի ու հազարամյակների խորքից եկող ժողովրդական ավանդությունների և զրույցների իմաստավորման ու գնահատման գործում Հնադարյան ավանդազրույցները առասպելները և վիպական երգերը որոնք Խորենացին խնամքով բերում է գիտնականի համոզմամբ ինքնօրինակ ազգային մշակույթի ժողովրդի ավանդույթների հավատալիքների և ոգու արտացոլումն են Դրանցում դրոշմված է հայության անցած պատմական ուղին մտքերի զգացմունքների և ակնկալիքների վառ պատկերը Եվ հարկ է միայն ողջունել այնժամ դեռ անհայտ աշխարհ բացահայտելու մի հին ժողովրդի պատմիչի ջանքերով պահպանված առասպելներն ու զրույցներն իմանալու այսինքն նրա հոգին և սիրտը ճանաչելու հնարավորությունը

Փաստականի ու անհերքելիի կողմնակիցների համար իրենց ժամանակի պատկերացումների համաձայն պատմությունը ներկայացնում է ոչ այլ բան քան խիստ համապատասխանություն իրերի բնականոն ընթացքին և վավերականությանը ըստ ժամանակակից ըմբռնման Հակադրվելով նրանց քննադատությանը Ֆլորիվալը դրանք համեմատում է խնամքով պահպանված ֆրանսիական պատմազրույցների և առասպելների ոչնչացման կոչի հետ. Ուրեմն թո՛ղ նրանք պատռեն եթե հանդգնեն մեր միջնադարյան ձեռագրերը մեր նախնիների անկեղծության միամիտ հավատալիքների այդ անգին վկայությունները Թո՛ղ ոչնչացվեն հուզիչ և բարեպաշտ ավանդազրույցներն ու առասպելները որոնք մենք հանում ենք մոռացության փոշուց և նոր կյանքի վերակոչում Թո՛ղ պատառոտեն մեր ժամանակագ

---

[7] Հերոդոտոս հույն պատմիչ Ն. Ք. մոտ Ն. Ք. մոտ 2 Պատմություն հայտնի երկի հեղինակ

[8] Քսենոփոն Աթենացի հին հույն գրող պատմիչ Ն. Ք. մոտ 0 . փիլիսոփա Սոկրատեսի աշակերտը Անաբասիս երկում արժեքավոր տեղեկություններ կան Ն. Ք. դդ. Հայաստանի վերաբերյալ

րությունները ոչնչացնեն մեր պատմությունը իրենց սեփական պատմությունը Եվ թե դա բավական չէ թո՛ղ նոր այսօրվա ժողովուրդ դառնան քանզի անգամ երեկ վա ժողովրդի միօրյա տարեգրության մեջ էլ հրաշքների համար տեղ կգտնվի

Ֆլորիվալի գնահատականների անկողմնակալության մասին վկայում է նրա մո տեցումը պատմիչների ձգտմանը այն է վերագրել իրենց հերոսներին պատմական այլ անձերի հաղթանակները օրինակ Խորենացու մոտ Արամը Դիոդորոս Սիկի լիացու[9] Նինոսը Խորենացու Արտաշես ը Քսենոփոնի Կյուրոսը[10] և այլն Պատմական տարեգրություններում բավական հաճախ հանդիպող այդ երևույթը Ֆլորիվալը բնական է համարում Նա գիտնականների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա որ Խորենացու տեղեկությունները Նինվեի արքա Նինոսի մասին ավելի ճշմարտանման են քան այն ամենը ինչ հաղորդում են մյուս պատմիչները Եթե Խորենացու մոտ Արամ թագավորն է կատարում այն սխրանքները որոնք Դիո դորոս Սիկիլիացին վերագրում է Նինոսին Ֆլորիվալի համոզմամբ փաստերի ամ բողջությունը կարող է դա լրիվ արդարացնել Իսկ եթե հաշվի առնենք որ անցյա լում հզոր Հայաստանը անվերջ պատերազմների դաշտ դառնալով և կորցնելով ա զատությունը օտար նվաճողների պատճառով ի զորու չէր վերականգնելու իր եր բեմնի փառքը ապա զարմանալի չէ պատմիչի ձգտումը հիշեցնել ազգային հերոս ների անցած-գնացած հաղթանակների դափնիները՝ անցյալի փառքը հակադրելով իր ապրած ժամանակին

Հայտնի է որ հաղթողների պատմությունը սերտորեն կապված է պարտվողների պատմության հետ և Ֆլորիվալը հատուկ նշում է բազմաթիվ հին ժողովուրդների պատմությանը վերաբերող Խորենացու հաղորդած տեղեկությունների արժեքը հաճախ բացառիկ հազվագյուտ տեղեկությունների որ լրացնում են հին աշխարհի պատմության բացերը Ժամանակի կործանարար ազդեցությանը ենթարկվում է ա մեն ինչ և պահպանել մեզ հասցնել դարերի մշուշում թաքնված իրադարձություն ներն ու երևույթները կարող է միայն պատմությունը անցյալի ամենահուսալի վկան

Հայաստանը Հունաստանի նման մարդկային գործերի անցողիկության բնորոշ օրինակ է Անցան դարեր և հնադարյան Հայաստանի ինչպես նաև հին աշխարհի մյուս մեծ պետությունների թագավորներից իշխաններից անվանի դեմքերից վե հասքանչ քաղաքներից և արքայական նստավայրերից ոչինչ կամ գրեթե ոչինչ չի մնացել Առանց Խորենացու անգամ հիշողություն չէր մնա գրում է Ֆլորիվալը բայց պատմիչը վկայում է նրանց շքեղության մասին ինչի շնորհիվ դեռ կարելի է գտնել այդ ամենի ավերակները Բազում հին ժողովուրդների պատմությունը եթե թաքնված է մնում հազարամյակների խորքում ապա հայերի պատմությունը եր կար ժամանակ նրանցից քչերին հայտնի Խորենացու Պատմության թարգմա նությունների շնորհիվ Ֆլորիվալի համոզմամբ արդեն մատչելի է դառնում նաև եվրոպացիներին Թախանձագին և անկեղծ է հնչում գիտնականի կոչը հայոց պատմության հիմքերն իմանալու համար կարդալ նորից ու նորից ուշադիր վերընթերցել Խորենացու երկի ամեն մի էջը երկ որը հայ հին գրականության հարս տությունն ու փառքն է կազմում

---

[9] Դիոդորոս Սիկիլիացի Ն. Ք. մոտ 0 Ն. Ք. 2 հույն պատմիչ 0 գրքից բաղկացած Պատմական գրադարան երկի հեղինակ որտեղ շարադրել է Հունաստանի Հռոմի Հին Արևելքի պատմությունը և աշ խարհագրությունը

[10] Կյուրոս Մեծ պարսից թագավոր Ն. Ք. 0 ից Աքեմենյանների դինաստիայի հիմնադիր

Ամփոփելով ասածը Ֆլորիվալը եզրակացնում է. Հայոց պատմության հեղի նակը հայ պատմիչներից լավագույնն է Հայոց պատմահայրը որը մեծ սխրագոր ծություն է կատարել դարերին թողնելով առասպելական ժամանակների և Հին Հայաստանի պատմական ճակատագրի տարեգրությունը Խորենացու նշանակութ յունը սակայն չի սպառվում Հայաստանի պատմության համար իր բացառիկ կա րևորությամբ Գիտնականի գնահատմամբ մեծ պատմիչի գիրքը պատմական տե ղեկությունների կարևոր աղբյուր է հանդիսանում բազմաթիվ հին ժողովուրդների և երկրների մասին որոնց ճակատագրերը այսպես թե այնպես առնչվում էին Հա յաստանի հետ Ամբողջությամբ վերցրած այդ ամենը կանխորոշում է Խորենացու եր կի արժեքը համաշխարհային պատմության տեսանկյունից

Նշանակալի է որ թեև Հայոց պատմության թարգմանության աշխատանքնե րից 70 տարի է անցել և այդ ժամանակամիջոցում նրա որոշ հարցերի շուրջ տար բեր բանավեճեր են ծագել Խորենացուն տրված Ֆլորիվալի գնահատությունը ընդ հանուր առմամբ միանգամայն համահունչ է ժամանակակից պատմագիտության գնահատականներին

Մի քանի տարի անց Ֆլորիվալը առանձին գրքով հրատարակում է Խորենացու երկի իր թարգմանության ամբողջական վերնագրում նշված պատմա-աշխարհագ րական մեկնաբանությունները[11] Հրատարակությունը զուգադիպեցված էր Փարի զում Սամուել Մուրադի հայկական ուսումնարանի բացմանը Հեղինակը ձգտում էր ուրվագծել հայոց պատմության հիմնական փաստերը հիշեցնել նաև հայերի ու ֆրանսիացիների ազգակցական և բարեկամական կապերը միջնադարում և խա չակրաց արշավանքների շրջանում երբ նրանք համատեղ էին գործում

Պատմա-աշխարհագրական ակնարկի հետ միասին ներկայացվում է հայ գրա կանության համառոտ ուրվագիծը[12] գրականություն որը հիացնում է Ֆլորիվալին իր գեղեցկությամբ և կատարելությամբ Նշելով հայ մշակույթի գործիչների անուն ներն ու երկերը անկանխակալ հայացքով նա դարեդար քննում է գրականության հիմնական փուլանիշերը Ամփոփման վերջում տրվում է եվրոպական հայագետնե րի գործերի մատենագիտությունը

Ֆլորիվալի թարգմանած մոնումենտալ երկերի թվին է պատկանում Եզնիկ Կող բացու Եղծ աղանդոցը Ըստ Ֆլորիվալի արտացոլելով իր դարաշրջանի հավա տալիքներն ու գիտելիքները հայ փիլիսոփայի գործը շատ օգտակար և արժեքավոր է հոգևորականների հռետորների փիլիսոփաների և ամենատարբեր բնագավառ ների և ուղղությունների գիտնականների համար որոնց անշուշտ կհիացնեն նրա բազմաթիվ արժանիքները Դրանց շարքին Ֆլորիվալը դասում է կուռ տրամաբա նությամբ բոլոր կանոններին համապատասխանող դատողությունները ճարտա սանական բարձր ոճը հետաքրքիր տեղեկությունները հին պաշտամունքների և կրոնների այդ դարաշրջանում Արևելքում ֆիզիկա-աստղագիտական գիտելիքների շատ հարցերի վերաբերյալ Բացի այդ այսօր բնական և մաթեմատիկական գի տությունների առաջընթացի պայմաններում օգտակար է իմանալ անգամ անցյալի սխալները թեկուզ իսկ մարդկային բանականության զարգացման ուղիներն ըմբռ նելու և հասկանալու համար [13]

---

[11] Le Vailliant de Florival, Coup d'oeil sur l'Arme'nie ou ge'ographie sommaire. Pre'cis de l'histoire d'Arme'nie. P. 1846.

[12] Սուքիաս Սոմալյանի . . . . . գործի հիման վրա

[13], [14] Eznik de Kolb, Re'futation des diffe'rentes sectes… Introduction, P., 1853

Չնայած հեղինակի մեծ ոգևորությանը նոր այն ժամանակվա համար և խոր մտքերը արտահայտված նույնպիսի յուրօրինակ և վսեմ ոճով Եզնիկի գիրքը թարգմանության համար ներկայացնում էր մեծ դժվարություններ ուստի երկար ժամանակ այն չէր թարգմանվել և ծանոթ չէր եվրոպացի ընթերցողին Ինքը Ֆլորի վալը խոստովանում է որ թարգմանչի արտաքուստ համեստ կոչումը հաճախ ա վելի դժվար է վաստակել քան հեղինակինը եթե թարգմանիչը լրջորեն ձգտում է ամբողջությամբ ներկայացնել հեղինակին և պայքարում է բնագրի դժվարություն ների դեմ չենթարկվելով հեշտ ազատ բայց բնագրից ավելի հեռու թարգմանութ յան գայթակղությանը Միաժամանակ իրավացիորեն գիտակցելով որ Եզնիկին թարգմանելիս բնագրին ստրկաբար հետևելը չի կարող պատկերացում տալ նրա պարզ նրբագեղ և պերճախոս ոճի մասին Ֆլորիվալը կարծես թե ընկնում է Սկի լայի ու Խարիբդայի միջև Եվ թեպետ առաջին հերթին նա ձգտում է ավելի ստույգ վերարտադրել հեղինակի մտքերը նրա գաղափարների և դատողությունների հա մակարգը դա նրան միշտ չէ որ հաջողվում է նշված բարդությունների և բնագրի հակիրճության պատճառով

Կարդալով Խորենացու և Եզնիկի երկերը որոնք Ֆլորիվալը վաղ միջնադարի հայ պատմաբանական և փիլիսոփայական մտքի փայլուն օրինակներ է համարում նա մի անգամ ևս համոզվում է դդ դարի հայագետ-հոգևորական Վիլֆրուայի խոսքերի ճշտության մեջ որ Հայաստանը հնադարյան ապշեցուցիչ գանձերով լի Ա րևելքի դռների բանալին է իսկ հայկական ձեռագրերը գիտական հետազոտողնե րին բացառիկ գիտելիքներ և հնարավորություններ են տալիս այդ լուսավորյալ ժո ղովրդի և նրա հարևանների պատմության հետագա լուսաբանման համար

Ինչ վերաբերում է իրեն Ֆլորիվալին ամփոփելով և արժեվորելով նրա գործու նեությունը անհրաժեշտ է նշել գիտնականի եռանդը ոգևորվածությունն ու նվիր վածությունն իր գործին Շեշտը դնելով հայագիտության հիմքերի դասավանդման հայ ժողովրդի հոգևոր ժառանգության թարգմանության վրա Ֆլորիվալը մինչև վերջ հավատարիմ մնաց իր նվիրյալ գործունեությանը

ԱՍՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ
Քիմիական գիտությունների թեկնածու

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում Մխիթարյան միաբանությունը իր երկու Վենետիկի և Վիեննայի ճյուղերով շուրջ երեք դար է ինչ իր կարևոր նպաստն է բերում հայագիտությանը և հայ մշակույթին

Արժեվորելով Մխիթարյանների գիտակրթական գործունեությունը Ռաֆֆին գրում է. Մխիթարյանները ոչ միայն ազատեցին մեր հին մատենագրությունը Հայաստանի վանքերի խորշերում փտելուց այլև ընծայեցին մեզ թվով շատ ինքնուրույն և թարգմանական հեղինակություններ Նոքա մի կողմից տարածեցին մեր հասարակության մեջ ընթերցասիրություն ծանոթացրին եվրոպական գրականության հետ մյուս կողմից հաստատեցին յուրյանց վանքը մշակույթով [1]

Մխիթարյան միաբանությունը հիմնադրումից շատ կարճ ժամանակ անց եղավ ավելին քան կարող էր լինել Ադրիատիկ ծովի փոքր կղզում հաստատված եկեղեցական գործիչների մի միաբանություն Կարճ ժամանակ անց այդ միաբանությունը դարձավ հայկական առաջին Ակադեմիան Մեր ասածի լավագույն առհավատչյան Ստեփանոս Նազարյանի խոսքերն են. Մխիթարյանների Ակադեմիայի երևան գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանավոր դեպքն է Հայ ժողովուրդը մինչև այդ ընկղմված էր խորին տգիտության մեջ իսկ նրա լեզուն կատարյալ բարբարոսական դրության մեջ Մխիթարը որ իրավացի կերպով անվանվում է հայերի նոր լուսավորիչ և երկրորդ Մաշտոց իր միաբանության հիմնադրմամբ մի անխորտակելի պատվար կանգնեցրեց գրական խանգարման սաստիկ հեղեղումների դեմ [2]

Իրապես զարմանահրաշ ու բացառիկ երևույթ է հիշյալ միաբանության թողած գիտական ու գրական ժառանգությունը

Մխիթարյան միաբանության գիտակրթական գործունեությունը համեմատելով Հայաստանի և հայ գաղթօջախների մյուս նմանատիպ հաստատությունների հետ Հր. Աճառյանը նշել է. Բաղեշի Տաթևի Էջմիածնի և Նոր Ջուղայի դպրոցները տևական չէին եղել Նոքա շատ կարճ կյանք են ունեցել և մի փոքր ժամանակ փայլելուց հետո հանգել էին Մխիթարը այնպիսի հիմքերի վրա է դնում գործը որ նա օրից օր զարգանում է և իբրև մի լուսավոր աստղ փայլում է հայկական հորիզոնի վրա [3]

Մխիթարյան միաբանության Եվրոպայում հիմնադրվելուն մեծապես նպաստել է աշխարհագրական տեսանկյունից հաջող ընտրված տեղը Վենետիկը որին ժամանակակիցները շատ դիպուկ տվել են Ադրիատիկի թագուհի Քաղաք-հրաշք «Քաղաք-գեղեցկուհի անվանումները Հավելենք նաև որ Վենետիկի Մխիթարյան

---

[1] **Ռաֆֆի** Երկերի ժողովածու հտ. Երևան 7 էջ

[2] **Ս. Назарян** Обозрение истории Гайканской письменности в новейшие времена Казань стр. 7 .

[3] **Հր. Աճառյան** Պատմություն հայոց նոր գրականության Վաղարշապատ 0 էջ

ները միշտ կարողացել են հնարամտորեն և նվազագույն կորուստներով խուսանա
վել Վենետիկի գլխով անցած մի շարք փոթորիկներից Նապոլեոն Բոնապարտի
00 թ. արշավանքը թվականների Վենետիկի հեղափոխությունը կար
բոնարիների ապստամբությունը Այս առումով միանգամայն իրավացի է Ս. Էջ
միածնի միաբանության բազմաշխատ անդամներից Արտակ եպիսկոպոս Սմբատ
յանցի արտահայտած կարծիքը Վենետիկի Մխիթարյանների մասին. Վենետիկի
Մխիթարյան հայրերը կազմել և հաստատել են իրենց եղբայրությունը մի որոշ
նպատակով այն է պարապել միայն և միայն գիտությամբ և նրանք հաստատվելով
Եվրոպայում և որ գլխավորն է ապահովելով իրենց տնտեսապես և քաղաքականա
պես նվիրվել են միմիայն գիտության օգտվելով Եվրոպայի մտավոր առաջադի
մությունից հեռու և ազատ մնալով Ասիայի բարբարոս ցեղերի ասպատակություն
ներից և կոտորածներից [4]

Մխիթարյան միաբանության որպես Եվրոպայի երկու խոշոր քաղաքներում
Վենետիկում և Վիեննայում գործող գիտահետազոտական և կրթական կենտրոնի
հեղինակությունը մեծապես բարձրացավ երբ 0 թվականի օգոստոսի 7 ին Նա
պոլեոն Բոնապարտը իր կայսերական հրամանագրով անձեռնմխելի համարեց
Մխիթարյան միաբանությունը որպես Ակադեմիական հաստատություն[5]

Վենետիկի Մխիթարյան հայրերի գիտական հրատարակությունները լատինե
րենից հունարենից իտալերենից ֆրանսերենից անգլերենից գերմաներենից և
ռուսերենից նրանց կատարած բարձրարժեք թարգմանությունները եվրոպական
գիտական կենտրոններում կարդացած զեկուցումները ինչպես նաև Եվրոպայի և
այլ վայրերի խոշորագույն քաղաքներում Մխիթարյանների հիմնադրած կրթօջախ
ները չեն վրիպել Եվրոպական ակադեմիաների և գիտական այլ հաստատություն
ների մասնագետների ուշադրությունից

Մխիթարյան հայրերից ժառանգված գիտական վիթխարածավալ տպագիր և ան
տիպ ուսումնասիրությունները թվականից մինչ այժմ տպագրվող Բազմա
վէպ ի և Հանդէս ամսօրեայի էջերում ամբարված հսկայածավալ գիտական տե
ղեկատվությունը հայ մշակույթը օտարներին ներկայացնելու նրանց ազնիվ ձգտու
մը վեր է ամեն մի գնահատանքից Այս ամենը մեկ անգամ ևս հավաստում է պատ
մական այն իրողությունը որ Մխիթարյան միաբանությունը հիմնադրման առաջին
իսկ օրվանից դարձավ յուրօրինակ մի ոսպնյակ որում բեկվեց եվրոպական գի
տության լույսը իր անդրադարձները ուղղելով դեպի Հայաստան և հայկական
գաղթօջախներ

Ստորև ժամանակագրական կարգով ներկայացնում ենք Վենետիկի Մխիթար
յան միաբանության այն երևելի հայրերի համառոտ կենսագրությունները ովքեր
րդ դարում արժանացել են եվրոպական ակադեմիաների և գիտական կենտրոն
ների պատվավոր տիտղոսներին

Հ. Գաբրիել Ավետիքյան 7 27 . Լեզվաբան քերական բառարանագիր
բանասեր աստվածաբան Ծնվել է Կ. Պոլսում Մխիթարյան միաբանության ան
դամ է 77 թվականից 2 ին հիվանդության պատճառով հրաժարվել է վանա

---

[4] **Արտակ եպիսկոպոս Սմբատյանց** Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունե
ությունը և Մայր Աթոռի տպարանը Մայր Աթոռ Ս. Էջմիածին 7 էջ

[5] **Ա. Բախչինյան** Նապոլեոնը և հայերը Երևան 200 էջ 0

կան պաշտոններից Տիրապետել է հունարենին լատիներենին իտալերենին թուր քերենին Թողել է գիտական վիթխարածավալ ժառանգություն Նոր հայկազյան բառարան ի հեղինակներից է Բացառիկ արժեք ունի Գրիգոր Նարեկացու Մա տեան ողբերգութեան երկի Գ. Ավետիքյանի տված մեկնությունը որը Նարեկլուծ վերնագրով 0 ին լույս է տեսել Վենետիկում Քերականութիւն թօսքանեան լե զուի գործում ներկայացրել է իտալերենի քերականությունը 07 ին ընտրվել է Հռոմի Սապիենզա ակադեմիայի անդամ[6]

Հ. Մկրտիչ Ավգերյան 7 2 . Լեզվաբան բառարանագիր թարգմանիչ աստվածաբան Ծնվել է Անկյուրայում այժմ Թուրքիայի մայրաքաղաք Անկարա Մխիթարյան միաբանության անդամ է 7 թվականից Եղբայրն է Ջորջ Բայրոնի հայոց լեզվի ուսուցիչ Հարություն Ավգերյանի 77 Առավել հայտնի է Մ. Ավ գերյանի 2 հատորանոց Լիակատար վարք և վկայաբանութիւն Սրբոց աշխա տությունը Վենետիկ 0 Ի տարբերություն Մխիթարյանների հրատարա կած կրոնա-դավաբանական բնույթի շատ ու շատ գործերի Մ. Ավգերյանի հիշյալ բազմահատորյակը շուրջ հազար տպագիր էջ իր բնույթով և ընդգրկված հարցե րի խորության ու բազմազանության շնորհիվ դուրս է եկել կրոնական նեղ շրջա նակներից Նոր հայկազյան բառարան ի հեղինակներից է Մկրտիչ Ավգերյանը ին Վենետիկում հրատարակել է նաև Առձեռն բառարան հայկազեան լեզուի բառարանը Կատարել է թարգմանություններ լատիներենից գրաբար և գրաբարից լատիներեն

Հռոմի Հնագիտության և Վենետիկի Աթենական ակադեմիաների անդամ է դարձել 2 և 27 թվականներից[7]

Հ. Իգնատիոս Փափազյան 7 2 . Մատենագիր բնագետ Ծնվել է Կ. Պոլ սում 7 ից Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Կազմել է ից մինչև 00 թվականը տպագրված հայերեն գրքերի մի ցուցակ որը ըստ էության հայ տպագիր գրքի ամբողջական մատենագիտություն կազմելու առաջին փորձն է Հիշյալ աշխատությունը անտիպ է սակայն իր օգտակար դերն է կատարել դառ նալով ականավոր մատենագետ Գարեգին Զարբհանալյանի 27 0 թվա կանին Վենետիկում լույս տեսած Հայկական մատենագիտություն հիմնարար աշ խատության հիմքը Հեղինակ է մաթեմատիկային մանրանկարչության արվեստին և քրիստոնեական Եկեղեցու պատմությանը և տնտեսագիտությանը նվիրված մի շարք մենագրությունների

Առավել հետաքրքիր է Ի. Փափազյանի թվականին Վենետիկում լույս տե սած Մանրանկարք որ է Մինիաթուռա աշխատությունը ուր ներկայացվում են մանրանկարչության արվեստի տարրերը մանրանկարչության տեխնիկան կի րառվող ներկերը դրանց պատրաստման տեխնոլոգիան

Հայատառ բնագիտական տպագիր աշխատություններում Ի. Փափազյանի հիշ յալ ուսումնասիրությունը առաջինն է որտեղ տրված է քիմիական ռեակցիայի ըն թացքի նկարագրությունը փոխազդող նյութերի քանակական հարաբերություններ ը Գրքի 2 րդ էջում հանդիպեցինք քիմիա բառին որը րդ դարում հայերենով

---

[6] **Բ. Սարգիսեան** Երկհարիւամեայ գրականական գործունէութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան Վենետիկ 0 էջ 0

[7] **Բ. Սարգիսեան** նշվ. աշխ. էջ :

տպագրված բնագիտական ուսումնասիրություններում առաջինն է

Իգնատիոս Փափազյանը եղել է Հռոմի Գեղարվեստական ակադեմիայի անդամ[8]

Հ. Մեսրոպ Աղաչրաղյան 7 . Բնագետ մանկավարժ թարգմանիչ Ծնվել է Կ. Պոլսում Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյան վանքի դպրոցում 7 թվականից հիշյալ միաբանության անդամ Ծննդավայրում ստեղծել է քիմիական լաբորատորիա դասավանդել բնական գիտություններ Բնական օրենք Վենետիկ երկում պաշտպանել է բնական իրավունքի և հասարակական դաշինքի տեսությունները քննարկել մարդու բարոյական դաստիարակության հարցեր հասարակության զարգացումը պայմանավորել մարդու բնական և բարոյական կատարելագործմամբ Մ. Աղաչրաղյանը առավել հայտնի է 0 ին Վենետիկում աշխարհաբարով լույս տեսած Համառոտ արուեստաբանութիւն կամ նորանոր հնարք աշխատությամբ ուր քննարկված են գործնական քիմիային և գյուղատնտեսությանն առնչվող տարաբնույթ խնդիրներ Ֆրանսերենից հայերեն է թարգմանել ֆրանսիացի փիլիսոփա և տրամաբան Դ. Մարսելի Համառոտ տրամաբանութիւն գիրքը Վենետիկ

Մեսրոպ Աղաչրաղյանը Ֆրանսիայի հանքաբանության կայսերական խորհրդի անդամ է դարձել 0 թվականից[9]

Հ. Սուքիաս Սոմալյան 77 . Բանասեր բառարանագիր թարգմանիչ Ծնվել է Կ. Պոլսում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 0 ից 2 ից աբբահայր Այդ տարիներին էր որ հնդկահայ բարերարներ Ռաֆայել Ղարամյանի և Սամվել Մուրադյանի նվիրատվությամբ բացվեցին Մուրադյան վարժարանը Իտալիայի Պադուա քաղաքում ին և Ռաֆայելյանը Վենետիկում ին Կազմել է բառարաններ հայերեն-անգլերեն-տաճկերեն անգլերեն-հայերեն տաճկերեն և տաճկերեն-հայերեն-անգլերեն 27 ին ընտրվել է Վենետիկի Աթենական ակադեմիայի պատվավոր անդամ[10]

Հ. Եղիա Թովմաճյան 777 . Բանաստեղծ հայագետ թարգմանիչ հունարենից իտալերենից լատիներենից հայերեն Ծնվել է Կ. Պոլսում Սովորել է Վենետիկի Մխիթարյանների դպրոցում 7 ից միաբանության անդամ Հունարենից հայերեն է թարգմանել Հովհան Ոսկեբերանի ճառերը հ. 2 Վենետիկ Պլուտարքոսի Զուգակշիռք երևելի արանց հ. Վենետիկ 2 աշխատությունները Հոմերոսի Իլիականը և Ոդիսականը Վենետիկ Հեղինակ է նաև այլ աշխատությունների Ընտրվել է Հռոմի Հնագիտական ակադեմիայի անդամ[11]

Հ. Քերովբե Ազնավուրյան 7 . Թարգմանիչ Ծնվել է Կ. Պոլսում Սուրբ Ղազարի վանքում աշակերտել է Մկրտիչ Ավգերյանին ից Մխիթարյան միաբանության անդամ Թարգմանություններ է կատարել լատիներենից ֆրանսերենից Հայերենից իտալերեն է թարգմանել Ղուկաս Ինճիճյանի Ամարանց բյուզանդյան չափածո աշխատությունը Հռոմի Հնագիտական ակադեմիայի անդամ է ընտրվել

---

[8] **Հ. Դավթյան** Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 0 թվականը Երևան էջ 20

[9] **Բ. Սարգիսեան** նշվ. աշխ. էջ

[10] Նշվ. աշխ. էջ 0

[11] Նշվ. աշխ. էջ 0:

2 թվականին[12]

Հ. Ղևոնդ Ալիշան 20 0 . Բանաստեղծ բանասեր մանկավարժ պատմաբան աշխարհագրագետ թարգմանիչ Ծնվել է Կ. Պոլսում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ ից Ծավալել է վիթխարածավալ գիտամանկավարժական գործունեություն Մեծ թվով մենագրությունների հեղինակ է Տիրապետել է բազմաթիվ լեզուների Բնագրից թարգմանել է Ջ. Միլտոնի Ջ. Բայրոնի Ֆ. Շիլլերի Հ. Լոնգֆելլոյի գործերից

Ալիշանը հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում հայրենիքի գաղափարի խորհրդանիշ է դդ դարի կեսերից և շարունակում է մնալ այդպիսին

Եղել է Ֆրանսիայի ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր թ. Իտալիայի Ասիական ընկերության 7 Մոսկվայի Հնագիտական ընկերության Վենետիկի Ակադեմիայի Պետերբուրգի Հնագիտական ընկերության և Եվրոպայի Փիլիսոփայության ակադեմիայի 7 պատվավոր անդամ[13]

Հ. Քերովբե Քուշներյան . Ծնվել է Ղրիմի Ղարասուբազար քաղաքում այժմ ք. Բելոգորսկ Նախնական կրթությունը ծննդավայրում ստանալուց հետո ին եղբոր հետ ուղարկվել է Վենետիկի Սուրբ Ղազար կղզի Մխիթարյանների վանքում ուսումը շարունակելու համար Աշակերտել է Ղևոնդ Ալիշանին ից Մխիթարյան միաբանության անդամ 7 ին Ղրիմի Թեոդոսիա քաղաքում վարել է Հայ-Կաթոլիկ ժողովրդյան ժողովապետի պաշտոնը Շուրջ քսան տարի թղթակցել է Բազմավէպ ամսագրին Զբաղվել է Ղրիմի Մոլդովայի և Լեհաստանի հայերի պատմության ու մշակույթի տարաբնույթ հարցերով 7 և 0 թվականներին երեք հրատարակություններով Վենետիկում լույս են տեսել Ք. Քուշներյանի Առակք ժողովածուն 77 ին լույս է ընծայել Տավրիկյան թերակղզու հայկական հնությունները մենագրությունը Ռուսերենով լույս է ընծայել Սուդակի հովիտը և Ճենովական հին մատուռը ուսումնասիրությունը

Հիմնարար աշխատություն է Պատմություն գաղթականության Խրիմու հայոցը որը հրատարակվել է հետմահու թվականին Վենետիկում Ռուսերենից հայերեն է թարգմանել Պուշկինի Լերմոնտովի և Շևչենկոյի ստեղծագործություններից ին Վենետիկում Քուշներյանի թարգմանությամբ լույս է տեսել ռուս-ուկրաինական գրող և պատմաբան Դանիել Մորդովցևի 0 0 Ուղևորություն Արարատ գիրքը Նշենք որ Դ. Մորդովցևը 2 թվականի ամռանը Արարատի գագաթը բարձրանալու մտադրությամբ եկել էր Հայաստան Վերելքի ժամանակ անսպասելիորեն վատացել է նրա առողջությունը և չի հաղթահարել մինչև Արարատի գագաթը մնացած չնչին տարածությունը Թարգմանությունը կատարված է ռուսերեն բնագրից Այս իմաստով հիշյալ թարգմանությունը Մխիթարյանների բնագիտական թարգմանություններում ուրույն արժեք ունի

Ք. Քուշներյանը ընտրվել է Օդեսայի Պատմության և հնությունների ընկերության անդամ[14]

---

[12] **Բ. Սարգիսեան** նշվ. աշխ. էջ 0

[13] **Ս. Երեմյան** Կենսագրություն Ղ. Ալիշանի Վենետիկ 02 էջ 7

[14] **Ք. Քուշներյան** Առակք Վենետիկ 0 էջ Տե՛ս նաև **Ա. Փաշայան** Տիտղոսակիր հայեր Երևան 200 էջ 2

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒԶԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում նշանավոր հայագետ Նորայր Բյուզանդացու թթ. անտիպ նամակները ուղղված մեծանուն հոգևորականի Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին թթ.

Նամակները բովանդակում են ինչպես հայագիտական այնպես էլ Ն. Բյուզանդացու կենսագրությանը վերաբերող կարևոր նյութեր

Բնագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի Ն. Բյուզանդացու համանուն ֆոնդում

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 յուլիս 7

Լուր առի ի Կ. Պոլսէ թէ ի մօտոյ աւուրս ունիք դառնալ ի մայրաքաղաքն փութացայ գրել առ Ձեզ զհամառօտս եւ շնորհաւորել սրտագին նախ զՁեր օծումն Եպիսկոպոսութեան զոր կարի անագան տեղեկացայ ըստ պատահման ի լրագրաց եւ երկրորդ զկոչիլ Ձեր յուսուցչութիւն Աստուածաբանութեան ի Գէորգեան Ճեմարանի։ Մեծ է իմ ուրախութիւն զի պատիւք զհետ Ձեր ընթանան եւ ըղձիւք կը խնդրեմ որ հասնիք ի բարձրագոյն աստիճանս զի քաջ գիտեմ եթէ քանի օգուտք մնան մեր սիրելի Ազգին ի Ձերոյ բազմերախտ վաստակասիրութենէ։

Աղաչեմ զԳերապատիւ Տէրդ ընդունել ներողամտաբար զԱռաջին Պրակ Քննասիրի հրատարակելոյ ի Ստոքհոլմ։ Ի յիշատակ երախտեացդ յորս վայելեցի ի Կ. Պոլիս ութ ամօք յառաջ համարձակեցայ նուիրել Ձեզ եւ օրինակ մի յիմ Գաղիերէն Հայերէն բառարանէ։

Տացէ Տէր զի տեսից զՁեզ յէջմիածին ուր մաղթեմ հասանել Ձեզ ողջամբ

Մնամ խորին մեծարանօք
Գերապատիւ Տեառնդ անձնանուէր
Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 սեպտեմբեր 7

Ընկալայ զՁեր օգոստոս 27 ի շնորհալից նամակն հանդերձ ընծայիւդ Արոս Հայաստանեայց զորմէ շնորհակալ եմ մեծապէս Ընթերցայ զայն ախորժելով եւ յոյժ խնդացի տեսանելով զՁեր նախանձայուզութիւն պաշտպանելոյ զհայրենի Եկեղեցին Որչափ անհեթեթ զրպարտութիւնքս եւ ամբաստանութիւնքս գրած են զԵկե

ղեցւոյն Հայոց ազգուրաց Հայ եկեղեցականներ եւ կրիւք նախապաշարեալ առաւել կամ նուազ որպէս օտարազգիներ. ահա այժմ գեղեցիկ պատեհ կը ներկայանայ Ձեզ զստութիւնս կշտամբելոյ եւ զճշմարտութիւնն հանդիսացնելոյ Էջմիածնի մատենադարանն անշուշտ կը պարունակէ բազում պատուական գրուածներ որոց օգնութեամբ կարող էք կատարեալ Պատմութիւն մի հրատարակել Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ անգին ծառայութիւն մի մատուցանել Ազգին Կը մաղթեմ Ձեզ զօրութիւն եւ երկայն աւուրս

Ամենայն յօժարութեամբ պատրաստ եմ հաղորդել Ձեզ զիմ կարծիս զերկբայական ընթերցուածոց նախնեաց մատենագրութեանց. որչափ յաճախ հարցանէք զիս այնչափ աւելի պատիւ կ՚ընէք ինձ

Չգիտեմ թէ Էջմիածնի վանաց մատենադարանին ձեռագիրներն ընդօրինակել եւ օտարաց հաղորդելու արգելք կայ թէ ոչ Եթէ չկայ այսպիսի արգելք կը փափագէի ունենալ զօրինակ Գաղիանոսի բառերուն հնագոյն գրչագրին. ես պիտի հրատարակեմ զայդ բառս ի Քննասիրի հանդերձ ընդարձակ ուսումնասիրութեամբ բայց լաւագոյն օրինակներու կը կարօտեմ Ես ունեմ երկու օրինակ մին է Պարիսի Ռ . . ի ձեռագրին թիւ գրչութեանն ՉԼԱ ՔՍ ի 2 2 միւսն է Ս. Ղազարուն ձեռագրին թիւ գրչութեանն ՉԾԶ Քս ի 07 . եթէ կայ յէջմիածին հնագոյն օրինակ եւ եթէ կարելի է որ ինձ համար ընդօրինակել տաք Ձեր յառաջադէմ աշակերտներէն միայն յոյժ երախտապարտ կը մնամ Ձեզ Գիտէք որ Գաղիանոսի բառերն այբուբենական կարգաւ են.

Աթխար. Վաղամեռուկ

Ակրկարիա. Քողի տակ

Արիստոզոքիա. Աղանդն եւ այլն եւ այլն

Քննասիրի զերկրորդ Պրակն կը պատրաստեմ այժմ որոյ նիւթն է Տեսութիւն քննական քերականութեան Հ. Արսենի Այտընեան. Աշխարհաբար Հայերէն ի հինգերորդ դարու Պիտի յղեմ ձեզ զամենայն Պրակս. միայն շնորհ ըրէք նշանակել ինձ ճշտիւ զՁեր հասցէն եւ ըսէք կ՚աղաչեմ թէ պետք է որ միշտ . ռ յղեմ Ձեզ զգրութիւնքս

Ներողամիտ եղէք Գերապատիւ Տէր զլծակցիս եւ զիմ լուսանկարս թղթոյս հետ Ձեզի չյղելուս. հազիւ 0 օրէն կրնան պատրաստուիլ և յուղարկուիլ Ձեզ Խնդրեմ հաճեք յղել ինձ փոխարէն զՁեր կենդանագիրն զոր կը փափագիմ դնել յիմ դահլճի առ իրի Ներսէս Պատրիարքի Յարգանաց ողջոյններ կը մատուցանէ Ձեզ իմ կինս եւ կը խնդրէ որ Էջմիածնի վանաց քանի մի լուսանկարներ եթէ կան շնորհ ընէք յղել մեզ

Մատուցանելով Գերապատիւ Տեառնդ զիմ խորին մեծարանս

մնամ անձնանուէր ծառայ

Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան
Էջմիածին

նոյեմբեր 7

Ընկալայ ի ամսոյս զշնորհեալդ ի 22 հոկտեմբերի. օր յէջմիածնէ ի Ստոք հոլմ մինչդեռ օրուան մէջ կ'ընդունինք հոս նամակ ի Նոր-Եորքէ Առ այժմ միայն փոքր ու պարզ լուսանկար մը կը յղեմ կը գրէք ի նամակիդ. այդ լուսանկարն չէ հաս յիմ ձեռս. իսկ Դուք յուսամ ընդունեցաք ի ժամանակին զկնոջս և զիմ մեծադիր լուսանկարս զորս յղեցի Ձեզ . ռ յ 2 հոկտեմբերի

Եթէ նախնեաց գրուածոց հրատարակութիւնն շահուց աղբիւր ըլլար ինձ համար անշուշտ դրամ կը ծախսէի առ ի գաղափարել տալ զձեռագիրս Ըստ Ձեր ակնարկութեան ահա կը նուիրեմ օրինակ յիմ Բառագրոց զմին Աստուածապատիւ Կաթողիկոսին զմիւսն Էջմիածնի Միաբանութեան եւ զերրորդն Գէորգեան Ճեմարանի Լաւագոյն էր թերեւս առաձինն առանձինն նամակաւ ընծայագրել զայդ Բառագիրս. բայց ես որովհետեւ բնաւ անծանօթ եմ այդր եւ կ'անգիտանամ թէ ինչ ոճով պէտք է գրել զնամակսն համարձակեցայ Գերապատիւ Տեառնդ միջնորդութեամբ ներկայացնել զիմ դոյզն նուէրս եւ վասն այսորիկ զատ թուղթ գրեցի Ձեզ զոր ի սմին կը ծրարեմ Խնդրեմ գրուի Էջմիածնի Միաբանութեան կողմանէ առ գործակալ վանացդ ի Կ. Պոլիս եւ գործակալդ ներկայանայ առ իմ գրավաճառ Տ. Յոհան նէս Գոնտայեան ի Պայպըլլ Հաուզ յորմէ ընդունելով զերիս Բառարանսն կը յղէ առ Ձեզ Երբ ի մօտոյ որպէս յուսամ հրատարակուի Քննասիրի Բ Պրակն սիրով կը յղեմ եւ Գէորգեան Ճեմարանի ընդ Ա Պրակին . ռ զայն եւս բարեհաճիք մատուցանել յիմմէ կողմանէ

Երախտապարտ կը մնամ Աստուծապատիւ Կաթողիկոսին եւ Ճեմարանի Ուսուցչաց եթէ պիտանի համարին զմուտ Բառարանիս ի դպրոցս Կովկասու Այդու քաջալերութիւն մեծ պիտի զգենում առ ի հրատարակել զերկրորդ տպագրութիւնն ընդարձակագոյն քան զառաջինն եւ ճոխագոյն ըստ բազում մասանց մանաւանդ եթէ բախտ ունենամ ուսումնասիրել պարապով զգրչագիրս Էջմիածնի

Եւ Դուք Գերապատիւ Տէր խնդրեմ պահէք միշտ առ իս զբարեկամութիւնդ որ այնչափ պատուական եւ ցանկալի է ինձ Մեծամեծ խորհուրդս ունիմ ի մտի այլ կարօտ եմ ձեռին օգնականութեան մանաւանդ այնպիսի անձանց որ իբրեւ զՁեզ սիրելի եւ մեծարոյ են համայն Ազգին Բազում դռներ փակուած են իմ առաջի և զպատճառսն կարծեմ գիտէք փոքր ի շատէ. եթէ Ձեր եւ Ձեզ հանգոյն աննախանձ եւ ազնուախոհ ազգայնոց շնորհիւ բացուին ինձ այլ դռներ ուրախութեամբ կը թողում զայս աշխարհ երբ հասնի ժամ վախճանի զի կը չուեմ թողլով աշխատութիւններ որ թերեւս նկատուին իբր ոչ բոլորովին անշահ եւ անպէտ

Մաղթելով Գերապատիւ Տեառնդ քաջառողջ կեանս եւ խնդրելով որ ընդունէք զիմ անկեղծ մեծարանաց հաւաստիս

մնամ խոնարհ ծառայ

Նորայր Ն. Բիւզանդացի

Կինս սրտագին շնորհակալութեամբք Ձեր ողջունին կը մատուցանէ Ձեզ զիւր խորին յարգանս

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

նոյեմբեր 7

Աղաչեմ գրել առ գործակալ Միաբանութեանն Էջմիածնի ի Կ.Պոլիս զի ընկալցի յիմմէ գրավաճառէ ի Տ. Յոհաննեսէ Գոնտայեան ի Պայպլլ Հաուզ երիս օրինակս յիմ Գաղիերէն-Հայերէն Բառագրոց եւ յղեսցէ այդր առ Ձեզ. եւ Գերապատիւ Տէրդ հաճեսցի մատուցանել յինէն հանդերձ խոնարհական մեծարանօքս օրինակ մի առ Աստուածապատիւ Հոգեւոր Տէրն Մակար Կաթողիկոս օրինակ մի առ Մեծապատիւ Միաբանութեանն Էջմիածնի օրինակ մի առ Գէորգեան Ճեմարանն

Ողջունիւ խորին յարգանաց մնամ Գերապատիւ Տեառնդ
խոնարհ ծառայ
Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

յունուար

Ընկալայ ձեռանդ զթուղթ Սիրելութեանդ գրեալ յ 2 դեկտեմբերի զոր յղած էիք յանձնարարեալ Գտի ի նմին զլուսանկար Ձեր եւ զՅայտարարութիւն Արարատ ամսագրի Շնորհակալ ենք նուիրի լուսանկարիդ. այն ինչ ետես զայն կինս Եպիսկոպոսն ինչ բարի դէմք ունի ըսաւ Ոհ արդարեւ բարի եւ յոյժ բարի. վասն որոյ եւ ինձ սիրելի Ձեր բարութիւնն է որ շարժած է զՁեզ պաշտպանել եւ արդարացնել զիս առ Կաթողիկոսին. անմարթ էր ինձ քան զՁեզ լաւագոյն փաստաբան ունենալ եւ չգիտեմ թէ ինչպէս շնորհակալ ըլլամ Ձեզ Վանական եւ քահանայական վիճակն սուրբ վիճակ է. ես ոչ միոյն եւ ոչ միւսոյն կոչում ունեցած եմ եւ բռնադատութեամբ ստանձնած եմ լուծ մի զորոյ քաղցրութիւնն զգալոյ զշնորհն զլացած է ինձ Տէր ի մատաղ հասակէս Եթէ Ս. Ղազարու վանքն փոխանակ Վենետկոյ խորշին մէջ ծովածիր կղզեակ ըլլալու Վիէննայի Մխիթարեանց կամ Անտոնեանց վանատանց նման շէնք մի ըլլար ի սահմանին Կ. Պոլսոյ անշուշտ փախած էի կամ դռներն խորտակելով կամ որմերու եւ խրամներու վրայէն ցատքելով Իմ հոգեւոր հարքս յետ ընկենլոյ զիս ի ծուղակ կրնային շահել զիս. բայց չուզեցին կամ չկրցան. եթէ մեղս գործեցի դառնալով յաշխարհ այն մեղքն ի նոցա պարանոցն Ես միայն չէի յիմ դասակցած բռնադատութեամբ քահանայացեալ. իմ հէք ընկերներէս երկուքն Հ. Սա

հակ Հեքիմեան եւ Հ. Սերովբէ Քուշներեան՝ որ իբրեւ զիս յաշխարհ դառնալ փափագած էին՝ ի ծաղիկ տիս իջան ի գերեզման՝ Յոր աստուածային գիրս գրեալ է թէ երկնից հաճոյ է զանփորձ երիտասարդս հիւծելով ծիւրելով սպանանել

Ընկալայ ի 2 նոյեմբերի զլուսանկար Էջմիածնի Եկեղեցւոյն՝ զոր յղած էիք յանձ նարարեալ՝ եւ շնորհակալ եմ մեծապէս՝ Երբ պիտի գայ այն օրհնեալ օրն՝ որ Հայաստանի հողը կոխեմ եւ աչաւք տեսնեմ զիմ նախահարց բնակավայրն

Յ 7 դեկտեմբերի յղեցի Ձեզ յանձնարարեալ ծրար մի՝ յորում կային Ա եւ Բ Պրակք Քննասիրի Գէորգեան Ճեմարանի եւ միւս եւս Բ Պրակ Ձեզ համար՝ Կը փափագիմ՝ որ յայտնէք ինձ զՁեր եւ զայլոց կարծիս՝ նկատմամբ Քննասիրի յօդուածնեռուն՝ Շատ ուրախ կ՚ըլլամ եթէ Արարատայ խմբագիրք արժանի համարին զբաղիլ Ա եւ Բ Պրակաց բովանդակութեամբ եւ լուսաւորեն զիս կամ ուղղելով կամ հաստատելով զիմ գրածներս՝ Յղեցի եւ ի Կ. Պոլիս՝ այլ տակաւին չընկալայ պատասխանի. չգիտեմ թէ այս անգամ եւս դժուարութիւն յարուցած է թուրք գրաքննութիւնն՝ Եթէ գրաքննութիւնն յուսահատեցնէ զիս՝ յայնժամ կը դադրեցնեմ թերեւս զհրատարակութիւնն եւ կը յղեմ զյօդուածքս առ Արարատ՝ Այժմ կը պատրաստեմ զԿորիւն՝ որ պիտի հրատարակուի ի Պետրբուրգ՝ Բայց յօդուածոց գրութիւնն երկրորդական գործ է ինձ համար՝ զի բուն զթաղանձս է պատրաստել զՀայերէն-Գաղիերէն բառագիրս

Խնդրեմ ըսէք ինձ թէ Արարատայ գինն Եւրոպայի համար՝ ռուբլի՝ արծաթ դրամ է՝ թէ թուղթ՝ Որչափ գոհ կ՚ըլլայի եթէ ստէպ ստէպ հրատարակուէին յամսագրիդ անտիպ մատենագրութիւնք նախնեաց՝ փոխանակ արդեաց քարոզներու եւ թարգմանական յօդուածոց՝ Բազմավէպն եթէ յիմ ձեռս ըլլար՝ ոչ Տանդէի եւ ոչ Շէքսբիրի թարգմանութիւնք կը լեցնէի զայն. մեր Ոսկեփորիկներն անհամեմատ ընտրելի են ինձ՝ եւ բազում հետաքրքրական նիւթեր կան յայնս՝ որք՝ կը ցաւիմ ըսել՝ անարգ եւ անպէտ կը համարուին

Աստուածապատիւ Կաթողիկոսին օրհնութիւնն՝ զոր ընկալայ Ձերով միջնորդութեամբ ինձ եւ ամուսնոյս համար՝ անհուն բերկրութեամբ լցոյց զիս. յայսմ եւս շնորհակալ եմ Սիրելութեանդ՝ Ահա կը ներփակեմ թուղթ մի առ Հոգեւոր Տէրն՝ զոր խնդրեմ բարեհաճիք մատուցանել առ նա

Կինս մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Ձեզ փոխանակ այն բարութեան՝ զոր միշտ ցուցած էք առ իս եւ այժմ իսկ կը ցուցանէք. փոխադարձ բարեմաղթութիւններ կը յղէ Ձեզ հանդերձ իւր խորին մեծարանօք՝ Ընդ նմին եւ ես կ՚ողջունեմ սիրով եւ յարգութեամբ զԳերապատիւ Տէրդ՝ եւ մաղթելով Ձեզ շնորհաւոր տարի ներկայիս համար եւ շարս երկայն տարիներու ապագային համար

մնամ խոնարհաբար Ձերդ

Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր

Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 ապրիլ

Ընկալայ ի 2 փետրուարի զպատուական նամակդ յունուար 2 փետրուար թուականաւ Ընկալայ նոյնպէս զյունուարի եւ զփետրուարի թիւս Արարատայ եւ կը խնդրեմ որ բարեհաճիք մատուցանել զիմ շնորհակալութիւնս ամսագրիդ Մեծա պատիւ խմբագրութեան Այլ ինչ չընկալայ յէջմիածնէ

Խնդրեմ շնորհաւորէք յինէն զորամիտ Միաբանն յօդուածագիր Ներսիսեան ծածկագրին հիանալի է իւր մտաց արթնութիւնն Տամ իրեն փոքրիկ տեղեկութիւն մի եւս. Ճանճոտն մեր սուրբ աջդ համբուրէ եւ ասէ. Մեռաք պոսէպոս տալով . ե րես Պոսէպոս տալ այն ժամանակուայ լեզուով նշանակում էր պատերի տակ կուչ եկած ման գալ . երես 7 Խաչատուր Կեչառեցւոց ԺԴ դար Մեծին Ալեքսանդ րի Ոտանաւոր Պատմութեան մէջ Պոսիպոս բառ մի կայ երկու անգամ գործածո ւած.

Ով վատշըւէր Նիգտանիբոս
Որ Թագաւոր իր յԵգիպտոս իմա էիր
Ոչ թէ հրզօր ձեռամբ հարոս իմա հարուս
Այլ լականովրդ պոսիպոս

Եւ դարձեալ

Այս քեզ խրրատ Աղեքսանդրոս
Որ չրխաղաս այլ պոսիպոս.
Զձիդ կորուսեր այսօր ափսոս
Զքաջանց նրմանդ ահեղահրոս

Կայ եւ ի Նոր Հայկազեան Բառարանին Պօսպօսող բառ յՈսկեփորիկէ. Կին չար կաքաւ երկմիտ կատու խփրնկէց աղուէս պաւսպաւսող . եւ կը մեկնուի բառ ռամկօրէն որպէս կեղծաւոր խաբեբայ շողոքորթ Եթէ Միաբանն ապահով է Պո սէպոս տալոյ նշանակութեանն բարի է. իսկ եթէ ապահով չէ կը փափագիմ գիտ նալ թէ Պոսիպոս եւ Պօսպօսող բառերուն վկայութեամբք կարելի է ուրիշ մեկնու թիւն տալ Պոսէպոս տալոյ Ինձ թուի թէ Պոսիպոս եւ Պօսպօսող խաղալու վերաբերեալ բան մի կը նշանակեն

Յէջմիածին հրատարակեալ նախնեաց գրոց ունիմ միայն զՈւխտանէս. ունիմ նաեւ զՁաքարիայ Սարկաւագի Պատմութիւնն Կը փափագիմ գնել զամենայն մա տենագրութիւնս նախնեաց որ հրատարակեալ են այդր Կը խնդրեմ որ յղէք ինձ անմիջապէս զհետեւեալ գիրս թղթակազմ . Մխիթար Գոշի Դատաստանագիրք հրատարակութիւն Բաստամեանց Սիմէոն Ապարանեցւոյ Վիպասանութիւն Պահ լաւունեաց եւ Մամիկոնեանց Առաքել Դավրիժեցւոյ Պատմութիւն Աբրահամ Կրի տացւոյ Պատմութիւն զՄայր Յուցակ մատենադարանի Էջմիածնի զԳրացուցակ տպարանի վանացդ Հաճեցէք ծանուցանել եւ զգինսն զոր կը յղեմ Ձեզ անյապաղ Միայն կը խնդրեմ որ ստուար թղթով պատել տաք զգիրսդ որպէսզի ծրարն անվ թար հասնի առ իս Զնոյն պիտի խնդրեմ նաեւ Արարատայ զօտւոյն համար զի բա րակ է թուղթն եւ աւուր ուղեւորութեան չի դիմանար. փետրուարի թուոյն զոտին պատառեալ էր եւ զարմացայ որ եհաս անկորուստ

Քննասէրն ինչպէս գրած եմ յ'Բ Պրակիս կանոնաւորապէս չի կրնար հրատարա կուիլ վասն այնորիկ բաժանագրութիւնն անհնար է Կը սպասեմ նամակի ի Պետր բուրգէ Ռուսաստանի մէջ իմ հրատարակութեանցս վաճառման նկատմամբ Իմ գլխաւոր ակնկալութիւնս Կ. Պոլիս էր բայց ամսոյ մէջ տակաւին 0 օրինակք ան

գամ վաճառեալ չեն. այսպիսի պայմանաւ Քննասէրն չեմ կարծեր որ շարունակուի զի կը պակասէ ինձ աւելորդ դրամ

Յ 70 երես Արարատայ Նուիրակութեան վերայ կը խօսիք Արդեօք մերձաւոր ժամանակի մէջ պիտի ուղեւորիք իբր Նուիրակ ի Մոսկուա ի Պետրբուրգ... եւ ի Ստոք հոլմ Յամենայն սրտէ կը բաղձամ Նուիրակութեանդ

Մաղթելով Գերապատիւ Տեառնդ քաջառողջ կեանս
մնամ խորին մեծարանօք
Ձերդ Նորայր Ն. Բիւզանդացի

Կինս կը մատուցանէ Ձեզ զիւր յարգանաց ողջոյնս

Գերապատիւ Տէր
Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

օգոստոս

Հետզհետէ ընկալայ ի Ձէնջ զՄխիթար Գոշ Բաստամեանցի զԱռաքել Դաւրիժեցի զՍիմէոն Ապարանեցի զԱբրահամ Կրիտացի եւ զպատուական թուղթդ թուահամարով գրեալ ի յունիսի Իսկ զՄայր Յուցակն ընկալայ ի Տփղեաց ի 0 ամսոյս որոյ ծրարին վերայ գրեալ էր գերմաներէն. . . . . Եթէ նշանակեալ ըլլար գին Մայր Յուցակի զամենայն զիմ պարտս միանգամայն պիտի հատուցանեի Ձեզ այսօրեան թղթատարաւ Գրեցէք ինձ կ՝աղաչեմ թէ զինչ է գին Մայր Յուցակի. եւ որովհետեւ Շուեդական եւ Ռուսական թղթատունք դրամական յարաբերութիւն չունին եւ փոքրիկ գումարի համար չեմ կարծեր որ փոխանակիր ստանամ ի սեղանաւորաց քաղաքիս կը մտածեմ հասուցանել Ձեզ զդրամ վերոյ գրեալ մատենից ձեռամբ Մեծ. Մխիթարեանց Վիեննայ որք ի յարաբերութեան են ընդ իս եւ ընդ Տփղիս Կրնամ նաեւ հատուցանել Ձեզ զդրամն ի Կ. Պոլիս ձեռամբ իմ գրավաճառիս եթէ ունիք դրամական փոխանակութիւնս ընդ Կ. Պոլսի Ըսէք խնդրեմ թէ որ ճանապարհաւ կը փափագիք ստանալ զիմ պարտս եւ ես ըստ այնմ կը գործեմ Լաւագոյն կը համարիմ զփոխանակիրն եթէ տրուի ինձ ի Ստոքհոլմ

Յոյժ շնորհակալ եմ Գերապատիւ Տեառնդ գրոց առաքմանն համար Ի հնգից աստի պատուականագոյնն պիտի ըլլար ինձ Մայր Յուցակն եթէ աւելի հմտութեամբ եւ աւելի մանրամասնութեամբք խմբագրեալ ըլլար. բայց լաւագոյն է գործն ինչ քան զոչինչ Երանի թէ նոր Յուցակ մի հրատարակուէր Էջմիածնի մատենադարանին Գանձք բազումք կան այդր այլ թաղեալք եւ սուզեալք. այժմու ընթացիւք կարծեմ դարեր պէտք են որ բովանդակ ճոխութիւնք թանգարանիդ ի լոյս ելնին Աբրահամ Կրետացին ըստ եւ կրնար դեռ եւս քնանալ ի խորշս մատենադարանին. կարեւորագոյն հրատարակելիս տեսի շատ եւ շատ ի Մայր Յուցակին Մխիթար Գոշի տպագրութիւնն խեղճ է. կան երեսներ բոլորովին անընթեռնելի առ յոսութեան թղթոյն. հանգուցեալ Բաստամեանցի լեզուագիտականն ալ նուազ է քան զիրաւագիտականն Սիմէոն Ապարանեցւոյ հմտագոյն հրատարակութիւն կրնար ըլլալ բաղդատութեամբ ընդ Պատմութեան Սեբէոսի զի գլխաւորապէս Սեբէոսի համառոտութիւն է Ապարանեցւոյն Վիպասանութիւնն. թերի է օրինակն Էջմիածնի եւ խառնակ Առաքել Դաւրիժեցի նոյնպէս ունի քանի մի թերութիւններ Մի անգամ կարդացած եմ սարսափմամբ զՈսկանեան տպագրութիւնն Առաքելի եւ յայժմու

յերկրորդ ընթերցմանս նոյն սարսափումս նորոգուեցաւ. ինչ քստմնելի դիպաց Պատմութիւն Տէր Աստուած. արիւնս եռաց Պատմական գրուածոց համար անհրա ժեշտ կարեւոր է յատուկ անուանց ցանկ. ցաւալի է որ չիք այդ ցանկն եւ ոչ ի միում ի մատենից տպագրելոց ի Վաղարշապատ

Խնդրեցի ի Վսեմ. Տ. Եզեանցէ որ յորդորէ զտպագրութիւն Պատմութեան Յոհան նու Տարոնեցւոյ որ անշուշտ Կորեան է Մայր Ցուցակ թիւ 7 . զնոյն խնդիր կը կրկնեմ եւ առ Ձեզ Երեսներ կը լեցուէին եթէ նշանակէի մի ըստ միոջէ թէ որպիսի գրուածոց հրատարակութինն բաղձալի է իբրեւ զիս հետախուզից ի գրադարանէ Էջմիածնի Կը նմանիմ այն չքավորին որ մինչդեռ այլք ի բազմախորտիկ սեղանոյ կը վայելեն ինք կերակրոց ցուցական միայն կը մխիթարուի. դատարկ որովայնի սին մխիթարանք

Արարատայ երեսն Պատմութիւն Անի քաղաքի արդէն իսկ հրատարակեալ է յէջմիածին յամին 70 ընդ Պատմութեան Աբրահամու Կրետացւոյ Նոյնպէս յերես 7 Յիշատակարան Հեթում Բ թագաւորի արդէն իսկ հրատարակեալ է ի ձեռն Տ. Ք. Պատկանեանի ի Նշխարք մատենագրութեան Հայոց երես 2 Կը հա մարձակիմ խնդրել ի Ձէնջ որ հրատարակել տայք յԱրարատ Վասն կառաց Եզե կիէլի ի Վարդանայ Մայր Ցուցակ թիւ 0 . Վարդանդ այդ Անեցին է. կայ օրի նակ մի ի Ս. Ղազար գաղափարեալ ի Կ. Պոլիս ի Հ. Ղուկայ Ինճիճեան որչափ յի շեմ . յաշակերտութեանս Հ. Ղ. Ալիշան յանձնեց ինձ նոր օրինակ մի հանել զոր եւ արարի ըստ այն ժամու կարողութեանս ուղղելով զկետադրութիւնն եւ քանի մի ըն թերցուածներ Յետ ամաց երբ անցողակի հանդիպեցայ ի Ս. Ղազար խնդրեցի ի Հ. Ղ. Ալիշանէ որ շնորհէ զիմ երիտասարդութեան գրածն որպէս զի օրինակ մի հա նեմ յիմ պէտս. բայց նա զլացաւ. վասն այսորիկ կը խնդրեմ ի Ձէնջ զհրատարակու թիւն Վարդանայ Անեցւոյ որ . բանաստեղծութիւն մի է Ի Շնորհալի եւ Պա ռագայ իւր հրատարակեալ են միայն տունք երես 2 0

Ի Մայր Ցուցակի երկուս օրինակս տեսի Գաղիանոսի բառից. թիւ 7 եւ 770 Մասնաւորապէս կաղաչեմ զԳերապատիւ Տէրդ որ եթէ յաջողի գաղափարել տալոյ գործն յստակագիր գրչի յանձնէք վասն զի արդէն իսկ բաւական աղաւաղեալ են ի ձեռագիրս Գաղիանոսի բառից հաւաքմունք եւ կուտակեալ մարգարէական ոգւոյ պէտք են առ ի գուշակել զբանսն

Արարատայ զօտին այժմ ի թանձրագոյն քարտեսէ է. շնորհակալ եմ Գերապա տիւ Տեառնդ

Մեծապէս կը փափագիմ Ձեր այցելութիւնն ի Ստոքհոլմ զի ինձ առ ժամս անհ նարին է խախտել ի տեղւոյս Բազում ինչ ունիմ ասել Ձեզ եւ բազում ինչ ցանկամ լսել առ ի Ձէնջ. Տէր յաջողէ զճանապարհ Ձեր եւ կատարէ զիմ այս ցանկութիւն սրտի

Մաղթելով Գերապատիւ Տեառնդ քաջողջութիւն եւ զօրութիւն մնամ խոնարհա բար եւ ամենայն մեծարանօք

Նորայր Ն. Բիւզանդացի

Կինս կը մատուցանէ Գերապատիւ Տեառնդ զիւր խորին յարգութիւնս

Գերապատիւ Տէր
Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

սեպտեմբեր

Յուսամ ընկալայք զիմ նամակ օգոստոսի թուականաւ

Երէկ ստացայ զյուլիսի Արարատն Ի կողսն տեսի զՅուցակ գրոց տպագրելոց ի Վաղարշապատ յորոց կը փափագիմ ունենալ զհետեւեալսն.

ա. Կոչումն ընծայութեան ռուբլի. եթէ Կիւրղի Երուսաղեմացւոյ է եւ նոր տպագրութիւն էջմիածնի Եթէ ոչ է Կիւրղի կամ եթէ հին տպագրութիւն է Կ. Պոլսի չեմ ուզեր

բ. Կիւրեղ Աղեքսանդրացի Գիրք Պարապմանց ռուբլի. Եթէ նոր տպագրութիւն է էջմիածնի իսկ եթէ հինն է հրատարակեալ ի Կ. Պոլիս չեմ ուզեր

գ. Սեբէոս Պատմութիւն 0 կոպէկ. եթէ Կ. Պոլսի կամ Պետրբուրգի տպագրութիւնքն են չեմ ուզեր

դ. Յովհաննէս Արճիշեցի Մեկնութիւն Պատարագի 0 կոպէկ.

ե. Վիպասանութիւն երկնային մարմնոց 0 կոպեկ. եթէ նախնեաց գործ է Յովհաննու Երզնկացւոյ եթէ նախնեաց գործ չէ չեմ ուզեր

զ. Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ 20 կոպէկ.

է. Սկզբունք Բուսաբանութեան կոպէկ

Զայս ամենայն ի միում ծրարի . ռ կը խնդրեմ որ բարեհաճիք յղել տալ առ իս առասանով ամրացնելով զծրարն Զգինսն կը հատուցանեմ ընդ նախ ստացած գրոցս երբ նշանակէք ինձ եւ զգինս Մայր Յուցակի

Խնդրելով ի Գերապատիւ Տեառնէդ ներողութիւն այսչափ ձանձրութեանց մնամ խոնարհաբար ամենայն մեծարանօք նուաստ

Նորայր Ն. Բիւուզանդացի

Գերապատիւ Տէր
Տէր Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

7 սեպտեմբեր

Լսեցի որ ի Կ. Պոլիս էք

Հարկ համարեցայ փութալ գրել Զեզ առ ի ծանուցանել թէ երկու թուղթս ուղղեցի Զեզ յէջմիածին առաջին յ օգոստոսի երկրորդն ի ամսոյս Յուսամ կ'ընդունիք զայնս յէջմիածնէ Երկրորդ նամակիս մէջ քանի մի գիրս եւս խնդրած եմ ի Զէնջ զորս աղաչեմ յղել ինձ երբ վերադառնայք յէջմիածին որպէս զի եւ ես հատուցանեմ զիմ պարտս միանգամայն Ստացած եմ ի ժամանակին զՁեր յունիսի նամակն եւ զամենայն մատեանս զորս խնդրած էի

Մաղթելով Գերապատիւ Տեառնդ քաջողջութիւն մնամ ամենայն մեծարանօք

Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր

Տէր Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

յունուար

Այսօր ընկալայ զՁեր նամակն 2 դեկտեմբերի եւ կը փութամ մատուցանել Ձեզ զիմ ջերմ շնորհակալիս փոխանակ ազնիւ բարեմաղթութեանցդ Ես եւս ի սրտէ կը փափագիմ որ տարիս բարելից տարի մի ըլլայ Ձեզ եւ ունենաք ընդարձակ ասպարէզ գործոյ արժանի Ձեր բազմաքանքար կարողութեան եւ մշտավառ եռան դեան

Ոչինչ գիտեմ ի լրոցն յորս կ'ակնարկէք. չեմ ընդունիր զայն լրագիր զոր կ՚անուա նէք Կան մարդիկ որոց կանոնն է շահ անձին. այսօր յերկինս կը հանին զոք վաղիւ յանդունդս կ'իջեցնեն այսօր կը ծաղրեն կը խայտառակեն վաղիւ մեծագոյն պա տուոյ եւ փառաց արժանի կը համարին Ես հեռի կը կենամ յայդպիսեաց զի անվր դով պահել կ'ուզեմ զիմ սրտիս խաղաղութիւն որ ինձ համար կարեւորագոյնն է

Գրեցի այսօր առ Տ. Յոհաննէս Գոնտայեան յԱմերիկեան գրատուն որ հատու ցանէ Գերապատիւ Տեառնդ 0 տասն ռուբլի թղթադրամ եւ 2 կոպէկ դահեկանի հաշուով գին հետեւալ գրոց հանդերձ ճանապարհի ծախուք. Մխիթար Գոշի Դատաստանագիրք Առաքել Դաւրիժեցի Աբրահամ Կրետացի Սիմէոն Ապարա նեցի Մայր Ցուցակ Այսու առթիւ կը կրկնեմ Ձեզ զիմ շնորհակալութիւնս եւ կը յու սամ որ ի մօտոյ կ'ընդունիմ յէջմիածնէ զմիւս գիրսն զոր խնդրած էի

Գիտէի որ ես ոչինչ մարդ մի եմ իմ ժամանակակցայցս համար վասն որոյ բնաւ չզարմացայ տեսնելով որ ոչ ոք յերից արժանի համարեցան բարի խօսք մի գրել ինձ գոնէ ծանուցանել թէ ընդունած են զիմ չնչին մատեանն. եւ անցեալ տարւոյ յունո ւար ի նամակս մնաց անպատասխանի Աւաղ միամտիս

Վսեմ. Տէր Կ. Եզեանց ի Պետրբուրգ հրատարակէ պիտի զիմ նոր մի փոքրիկ գրութիւնն Ստեփանոս Ասողկայ Պատմութեան վերայ Կը փափագէի յղել Ձեզ օրի նակ մի բայց կը վախեմ. ինչ որ անվտանգ կրնայ կարդացուիլ ի Ռուսաստան Կ. Պոլսոյ համար վտանգաւոր կրնայ դատուիլ

Ի 7 երես Մայր Ցուցակի թիւ 20 կայ այսպիսի ինչ. Համառօտ Պատմութիւն վասն ամբարշտութեանց Բարծումա եպիսկոպոսի Ասորւոյ ի Թովմաս վարդապե տէ Թովմասդ անշուշդ Արծրունին է. ի սորա Պատմութիւն հայտնապէս թերի է Բարծումայի վերայ գրուածն. արդեօք Էջմիածնի ձեռագիրդ լրումն է բանիցն Թով մայ Արծրունոց Կը փափագէի որ եւ այս հրատարակուէր յԱրարատ

Ընդունեցէք կ'աղաչեմ Գերապատիւ Տէր զիմ խորին մեծարանաց հաւաստիս

Նորայր Ն. Բիւզանդացի

Յ. Գ. Կինս մասնաւոր շնորհակալութիւն կը մատուցանէ Ձեր մաղթանաց եւ յարգութեամբ կ'ողջունէ զՁեզ

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

յունիսի

Ընկալայ ի ժամանակին զՁեր յանձնարարեալ նամակն մարտ ի թուականաւ եւ յոյժ շնորհակալ եմ մեծադիր լուսանկարիդ համար Վաղագոյն արժան էր գրել Ձեզ. այլ սպասեցի գրեանցն մինչեւ ցարդ ոչ ինչ

Կը մաղթեմ որ բարձրագոյն Հոգեւոր դպրոցի հաստատութինն յաջողի Կը փա փագիմ որ ազգային հին մատենագրութեան սէր եւ յարգանք ներշնչէք Ձեր աշակեր տաց Կը ցաւիմ որ Արարատն հետզհետէ զուտ կրօնական հադիսի կերպարանք կ՚առնու իբր ընթերցարան քառասնորդական պահոց գոնէ նախնեաց կրօնական գրուածս հրատարակէին եւ ոչ թարգմանութիւնս եւ միշտ թարգմանութիւնս Այժմ տարի նախնեաց ճառք հրատարակեցան. հաշիւ ըրի որ այդու ընթացիւք 000 տարուան մէջ կրնային հրատարակիլ Էջմիածնի մատենադարանին ամենայն ձե ռագիրք. բայց այս տարուան Արարատն երկիւղ կ՚ազդէ ինձ որ 000 տարին ալ ան բաւական է Ինչ յուսահատութիւն

Լսեցի որ իմ գրութիւնն զԱսողկայ պիտի հրատարակուի Մոսկուայի մի նոր հանդիսի մէջ. երբ չգիտեմ

Արեւելագիտաց Ութերորդ ժողովն պիտի գումարուի այս տարի ի Ստոքհոլմ եւ ի Քրիստիանիա սեպտեմբերի 7 ի Ստոքհոլմ սեպտեմբերի 2 ի Քրիստիանիա Ըսուեցաւ ինձ որ մեծամեծ պատրաստութիւնք եղած են ամենայն շքեղութեամբ ըն դունելոյ համար զ 00 00 Արեւելեացս եւ Արեւելագէտս որ աշխարհիս ամէն կող մէն պիտի գումարին ի Ստոքհոլմ Յայտարարութիւնն շատ գեղեցիկ հանդէսներ կը խոստանայ Բախտովին արտաքոյ կարգի զուարճալի ամառ մի ունինք այս տարի.

Հէն ի վեր այսպիսի ջերմութիւն չէի վայելած. ինքզինքս Պօլիս կը կարծեմ բայց Պօլիս մի խաղաղ հանդարտ բարեկարգ հաճոյական ուր ամենայն ինչ սիրելի է թէ անձինք եւ թէ իրք

Մաղթելով առողջութիւն Գերապատիւ Տեառնդ մնամ խորին մեծարանօք

խոնարհ ծառայ Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Տէր Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 օգոստոս

Ընդունած էի զՁեր պատուական թուղթն յուլիս թուականաւ Այս առաւօտ ընկալայ եւ զՁեր յանձնարարեալ թուղթն օգոստոս թուականաւ եւ կը փութամ հատուցանել զպատասխանին

Յոյժ շնորհակալ եմ Աստուածապատիւ Հոգեւոր Տեառնն որ իբրեւ զիս տկարի

յանձնել կը բարեհաճի զդասախօսութիւն Հայերէն եւ Գաղիերէն լեզուաց ի Գէոր գեան Ճեմարանի Յոյժ շնորհակալ եմ եւ Գերապատիւ Տեառնդ որ աշխատութիւն յանձն առիք գրել ինձ զայսմանէ եւ թերեւս Ձեր բարի վկայութեանց արդիւնք է որո շումնն Վեհին. յոր սակս առաւել քան զառաւել շհորհակալ եմ Ձեզ

Թէ ինչ է դասախօսութիւնն քաջ գիտեմ զայն ի Ռափաելեան վարժարանէ եւ ի Մխիթարեան վարժարանէ Քաղկեդոնի վասն որոյ բնաւ չունիմ յօժարութիւն ըս տանձնել գործ մի որ ի վեր է քան զիմ կարողութիւն. կուրծքս հիւանդ է շունչս կարճ ձայնս աղօտ. ոչ թէ շաբաթական քսան դասուց այլ նաեւ տասն դասուց յանձնառու ըլլալ մահուան ընդ առաջ երթալ է Կ'աղաչեմ ներէ ինձ Հոգեւոր Տէրն եթէ առ իմ վատառողջութեան կը հրաժարիմ ի բարի պաշտամանէն յոր կը յօժարի կոչել զնուաստս

Կը գրէք թէ կը յուսան յէջմիածին որ պիտի հաւանիմ Ազգին օգնել Ես ազա տաբերան կը համարձակիմ վկայել զանձնէ որ մինչեւ յայս ժամ կենացս չեմ ունե ցած այլ դիտաւորութիւն եւ այլ փափագ բայց եթէ ծառայել իմ Ազգիս զոր կը սիրեմ ի վեր քան զամենայն Ազգին ծառայել կարելի է բազմապատիկ եղանակաւ ինչպէս յայտ է

Յիրաւի կամ յանիրաւի ինձ այնպէս թուի որ հարկ կայ եւ ստիպողական հարկ հրատարակելոյ զբովանդակ մատենագրութիւնս եւ թարգմանութիւնս նախնեաց կրկին տպագրելով զ'արդէն տպագրեալսն բայց խնամով մանր քննութեամբք եւ խորագոյն քննադատութեամբ Թերի են ըստ բազում մասանց եւ սխալաւոր թէ Աս տուածաշունչն թէ Եզնիկ թէ Խորենացի այլովքն հանդերձ. յերկերիւր ամաց հետէ կը տպուին եւ դարձեալ կը տպուին մատեանք նախնեաց բայց նոյն վրիպակներով նոյն չհասկացողութեամբք նոյն խառնակութեամբք. Խորենացի ստախօս կը հռչակուի բայց ով է որ կատարելապէս կը հասկանայ զԽորենացի. մեր պատմչաց բազում կարեւոր տեղիքն խանգարեալ ի լոյս կ'ընծայուին եւ թերահմուտ հրատա րակիչք կամ թարգմանիչք յաղթանակաւ կը գոչին. այս ինչ սխալ է. այն ինչ սուտ է ուր ոչ սխալ կայ եւ ոչ սուտ Յիմ Նախնիք մատենի 0 000 ուղղութիւնս նշանա կած եմ մինչեւ ցարդ հրատարակեալ նախնեաց գրոց մէջ բայց կան նման տակաւին բազում խանգարմունք զորս հարկ է քննել յայլ ձեռագիրս Ես Էջմիածնի հայ գրչագրաց կարօտիւ կը հալիմ. կը բարեհաճի Վեհն յանձնել նուաստիս զմատենա դարան Էջմիածնի եւ զՏպարան. կարեւոր կը դատիմ զնորոգ հրատարակութիւն նախնեաց գրուածոց որ յուսամ թէ ոչ միայն պատուաբեր կ'ըլլայ Կաթողիկոսական Գահուն այլ եւ օգտաբեր Աւասիկ այսեւեթ է ծառայութիւնն զոր կարեմ մատուցա նել Վեհին եւ Ազգիս Եթէ Հոգեւոր Տէրն կը բարեհաճի ընդունել զիմ առաջարկու թիւն զոր խոնարհաբար կը մատուցանեմ առ իւր Սրբութիւն կրնանք մտանել ի բանագնացութիւն

Առ այժմ կարեւոր կը համարիմ տալ Գերապատիւ Տեառնդ զհետեւեալ տեղեկու թիւնսդ

ա. Ես ի չորս ամաց հետե Շուեդի քաղաքացի եմ Շուեդացի գրուելուս միակ պատճառն էր յապահովել զինչս իմ ամուսնոյս որպէս զի յետ իմոյ մահուան իմ ըն տանիքս չկարենան տիրանալ այն դրամին զոր ես կը վայելեմ բայց ոյր սեպհակա նութիւնն բոլորովին իմ կնոջս է եւ ոչ ոք յիմ ընտանեաց չունի ամենափոքր իրա ւունս իմ ժառանգութեան Եթէ Էջմիածնի մատենադարանի եւ Տպարանի տեսչու

թեանն համար հարկ է որ ի Շուետացւոյ փոխուիմ ի Ռուս պէտք է առնում զհաւա նութիւն ամուսնոյս եւ լաւ տեղեկանամ յօրէնսգէտ մարդոց որ յետ իմ մահուան ոչ ինչ իւիք իրօք ամուսինս զրկանաց կը պատահի

բ. Կինս եւ ես ուխտած ենք անբաժան ապրիլ

Գիտէք որ կինս կը զբաղի լուսանկարչութեամբ. արուեստանոցին տիրոջ հետ դաշնագիր ունի հինգ տարւոյ որ պիտի լրանայ յ 0 սեպտեմբերի 2. մինչեւ ցայդ թուական չեմ ազատ եւ չկարեմ խախտիլ ի Ստոքհոլմէ

գ. Ինչ վարձատրութիւն կրնայ տրուիլ ինձ էջմիածնի մատենադարանի եւ Տպա րանի տեսչութեան համար Դասախօսութեանց 2000 ռուբլի կը խոստացուի. չգիտեմ թէ ինչ է արժէք դրամիդ փրանկի հաշուով 000 փրանկ եւ բնաւ գաղափար չունիմ էջմիածնի նիւթական կենաց թանկութեան կամ աժանութեան բնակարան ուտելիք եւ այլն Եթէ գոհացուցիչ գումար տրուի ինձ կինս սիրով կը հրաժարի յիւր շահուց ի Ստոքհոլմ Այս էական կէտ մ'է

Վերստին կրկնելով զիմ շնորհակալիս Գերապատիւ Տեառնդ եւ մատուցանելով զմեծարանաց ողջոյնս ամոսնոյս մնամ խոնարհաբար եւ կատարեալ յարգանօք

Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 նոյեմբեր

Ընկալայ զՁեր նամակն 7 սեպտեմբերի թուականաւ Կը շնորհաւորեմ սրտա գին զտեսչութիւնդ Եկեղեցական վարժարանին Արմաշու կը խնդրեմ Ձեզ զօրու թիւն ի Տեառնէ եւ կը մաղթեմ որ Ձեզ արժանի աշակերտներ ունենաք

Արեւելագիտաց Ութերորդ ժողովն որ գումարեցաւ այս տարի ի Ստոքհոլմ եւ ի Քրիստիանիա յոյժ կարեւոր արդիւնք ունեցաւ Շուետի եւ Նորուեգիոյ համար Հան դէսք եւ հացկերոյթք արքայավայել շքեղութեամբ կատարուեցան Չկային հայերէնի ներկայացուցիչք ոչ յէջմիածնէ ոչ յԵրուսաղեմէ ոչ ի Վենետկոյ ոչ ի Վիեննայէ Ընդ ամենայն էինք հայք. Տէր Կ. Եզեանց ի Պետրբուրգէ Տէր Աբգար Յովհաննիսեան ի Տփղեաց եւ ես. երեքեանս հայ գրագէտք. մնացեալ երեքն Տ. Ամիրխանեան յՕրեն բուրգէ բողոքական երէց Չաղաթայերէն լեզուի համար Տ. Յարութիւն Նէվրուզ խան իբր առաջին քարտուղար Մոհսին խանի Կ. Պոլսի Պարսից դեսպանին Տ. Ար շակ Թոմարեանց ուսանող ի Ստոքհոլմ Միայն Տէր Կ. Եզեանց խօսեցաւ առ մի զՀայոց ի Քրիստիանիա Կը յուսայի զգալուստ Մխիթարեան վարդապետի ի Վիեն նայէ եւ քանի մի հայ տաճկագիտաց ի Կ. Պոլսէ

Հինգ աւուրբ յառաջ ընկալայ ի Կ. Պոլսէ զվերջին հրատարակութիւն Մխիթա րեանց Վենետկոյ Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց Պա տուական գործ է Կրնար ըլլար պատուականագոյն եթէ մատենագիրն աւելի տե ղեակ ըլլար հայ լեզուի աւելի արթնամիտ աւելի քննող բայց այս չափիս ալ պէտք է շնորհակալ ըլլալ զի նա միայն է յայժմու վանականաց Ս. Ղազարու որ կը զբաղի Հայերէն հին գրականութեամբ Կը յիշէ գովութեամբ եւ զիմ Քննասիրի Ա Պրակն.

այս առաջին գովութիւնն է զոր կը լսեմ յիւր բերանոյ. զի մինչեւ ցայդ կ'արհամարհէր զիս եւ յայդ արհամարհութենէն է որ զիս խայտառակել ուզեց ի Բազմավեպի 7 տարւոյն իւր սիրական Սուքրեանի ձեռամբ տես Հայկական Բառաքննութիւն երես 22 2 Բայց ես ոչ յիւր գովութենէն կը դրդուիմ եւ ոչ յիւր արհամարհութենէն եթէ այժմ իբրեւ կոճղ անպիտան ընկեցիկ կը մնամ ի Ստոքհոլմ պատճառն նա է գլխաւորապէս. իւր չարութեամբն ոչ թէ ինձ վնաս տուաւ այլ Հայերէն գրականութեան զի իմ ամենայն բարի փափագներս եւ օգտակար դիտաւորութիւնքս մնացին անգործադրելի Չյիշեր զ'Բ Պրակն Քննասիրի. կրնաք բաղդատել զիմ յօդուածն զթարգմանութեանց Խորենացւոյ իւր գրածներուն հետ յանուանսն Գրիգոր Աստուածաբան Պատմ. Աղեքսանդրի եւ Փիլոն

Չունիմ ինչ ասել նոր զիմ փոխադրութենէ յէջմիածին յիմմէ կուսէ չիք բնաւ դժուարութիւն. դրամական վարձատրութեանն համար կը խօսիմ երբ հաստատուն բանակցութիւնք սկսին Ինչ անուն կ'ուզին թող տան ինձ. ես գործել կը փափագիմ եւ ոչ այլ ինչ Գրեցի որ յաթոռոյ դասախօսել բազմութեան ունկնդրաց չկարեմ բնաւ. բայց եթէ կան յէջմիածին երկու երեք հետամուտք խնամով պարապելոյ ի գիրս նախնեաց այդպիսեանց ամենայն սիրով կը հաղորդեմ զարուեստ ընթեռնլոյ զհին գրչագիրս զի կատարեալ արուեստ մ'է որ ունի զիւր օրէնս զկանոնս այս օրինաց եւ կանոնաց անգիտութենէն է որ յաճախ գրած են Վենետկոյ Մխիթարեանք եւ յաճախագոյնս Երուսաղեմացիք օրինակ իմն ի Մատթէոս Ուռհայեցի եւ Վաղարշապատեցիք օրինակ իմն յՈւխտանէս Հ. Գարեգին Զարպհանալեան եթէ հմուտ ըլլար այս արուեստիս իւր վերջին մատենին մէջ զորմէ գրեցի ի վեր անդր յետ գրելոյ Եպիքտէթոն յերես 2 չէր գրեր Եպիկտեմոն յերես 2 7 եւ ոչ յերես Յաղագս դափնոյն որ թարգմանի մարտ եւ այլն եւ այլն

Մաղթելով Գերապատիւ Տեառնդ քաջողջութիւն

մնամ բարեկամական սերտ սիրով

Ձերդ Նորայր Ն. Բիւզանդացի

Յ. Գ. Կինս կողջունէ զՁեզ մեծարանօք

Գերապատիւ Տէր

Տէր Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

2 մարտ 0

Սաստիկ ցաւեցայ ընդ տարաժամ մահ Ձեր պատուական եղբօրն Տ. Վիկենի զոր գուժեցիք ինձ փետրուար ի ն. տ. նամակաւդ Քիչ անգամ առիթ ունեցած էի տեսնուիլ իւր հետ ի Կ. Պոլիս. բայց սիրելի էր ինձ իւր յոյժ ազնիւ բնաւորութեանն համար եւ յարգելի զի եղբայր էր ընտիր բարեկամի առ որ ունիմ մասնաւոր համակրութիւն Իբրեւ բարեկամ վշտակից եմ Ձեզ ի բոլոր սրտէ. իբրեւ հայ կ'ողբամ որ այնպիսի պիտանի եւ տաղանդաւոր անձէ զրկուեցաւ Ազգն Մխիթարել զՁեզ ի ծանր կորստեանդ եւ ի դառնակսկիծ վշտիդ կը տկարանան իմ բանք. յերկնից ե ռանդագին կը մաղթեմ Ձեզ մխիթարութիւն եւ զօրութիւն

Եթէ Տէր կամեսցի առաջիկայ յուլիս ամսեան պիտի երթամ ի Կ. Պոլիս ուր կը

յուսամ մնալ մինչեւ ի սկիզբն սեպտեմբերի Թերեւս բախտ ունենամ հանդիպել Ձեզ ի Կ. Պոլիս եւ խօսակցիլ պարապով

Կինս կ'ողջունէ զՁեզ յարգանօք Ընդ նմին եւ ես մատուցանելով Գերապատիւ Տեառնդ ողջոյն սիրոյ եւ զհաւաստիս զիմ սերտ բարեկամութեան մնամ

խոնարհ ծառայ Նորայր Ն. Բիւզանդացի

Գերապատիւ Տէր
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան

մարտ 2

Ընկալայ զՁեր թուղթն յունուար 2ի ն. տ. թուականաւ եւ շատ ուրախացայ լսելով որ ողջ եւ առողջ էք

Արդարեւ յոյժ փափագելի էր ինձ տեսանել զՁեզ ի Կ. Պոլիս յամարան 0 տարւոյն եւ բերան ի բերան եւ սրտէ ի սիրտ խօսիլ այնպիսի նիւթոց վերայ որ սիրելի են Ձեզ եւ ինձ Այս բախտիս չհանդիպեցայ Ուղեւորութեանս գլխաւոր նպատակն էր վաճառել բարեսիրտ մեծատան զմնացեալ օրինակս Գաղիերէն-Հայերէն բառարանիս եւ Հայ Պատմաբանից նոր եւ կատարեալ հրատարակութեան համար դրամական սատարութիւն փնտռել Անընկալ եղին իմ առարկութիւնքս եւ դարձայ առաւել քան զառաւել վիատեալ եմ սառնամանիս հիւսիսոյ

Փոխարէն իմ օրինակ Բառարանիս եւ Քննասիրի Ա եւ Բ Պրակաց նուէր ընկալայ յէջմիածնէ զԱրարատ ամսագրին ի յունուարէ ի մինչեւ ցդեկտեմբեր ի Ճշտիւ այն միջոցին երբ բաւական ախորժելով կը կարդայի զյօդուածս Միաբանի զԽորենացւոյ յորում կան գեղեցիկ խորհրդածութիւնք եւ տեսութիւնք խառնեալք ընդ այլեւայլ սխալ կարծիս դադարեցաւ ամսագրին առաքումն Յօժարութեամբ կը գրուէի բաժանորդ եթէ կրօնական մասնն բոլորովին ի բաց թողնուէր եւ կարեւորութիւն տրուէր Միաբանի գրածներուն նման յօդուածոց մանաւանդ նախնեաց այլեւայլ մանր գործոց հրատարակութեան Ինչ է Տէր իմ Աստուած այդ ան վերջանալի թարգմանածոյ քարոզներուն եւ խրատներուն կոյտն. միթէ Արարատայ հազարաւոր բաժանորդաց ամէնքն ալ ճգնաւոր կամ աբեղայ են որ կը զմայլին կը պարարին այդպիսի ցուրտ եւ անհամ բարոյական դասերով Եթէ Արարատայ խմբագիրներու եկեղեցականութիւնն է պատճառ ամսագրին քարոզագիրք կերպարանին ոչ ինչ նուազ եկեղեցական եւ նաեւ Բազմավեպի եւ Ամսօրեայ հանդիսի խմբագիրներն. ինչու սոքա անընդհատ կ'աշխատին Ազգային Պատմութեան Գրականութեան եւ Աշխարհագրութեան վերայ նորահայտ տեղեկութիւններ հաղորդելու իւրեանց ընթերցողաց եւ Արարատեանք որ այնչափ եւ այնպիսի ճոխ մատենադարան ունին Հայ ձեռագրաց ոչ ինչ կը հաղորդեն հասարակութեան յիւրեանց գանձերէն Մեծապէս կը զարմանամ թէ ինչու չեն բողոքեր ուժգին ընդդէմ խմբագրութեան ամսագրիդ Ռուսաստանի հայք որոց մէջ չեն պակասիր գիտուն եւ լուսաւորամիտ բանասէրք

Շնորհակալ եմ Ձեր երիցագոյն աշակերտաց ողջունին եւ կը խնդրեմ մատուցանել նոցա զիմ փոխադարձ սիրոյ ողջոյն Ուրախ եմ որ Ձեր շնորհիւ Ազգն պիտի ու

նենայ կրթեալ եւ ուսեալ եկեղեցականներ եւ կը մաղթեմ որ անշնորհակալու չմնայ նոցա բազմերախտ դաստեարակին

Մտերիմ սիրոյ ողջունիւ մնամ միշտ Ձերդ

Կինս շնորհակալ է Ձեր ողջունին եւ կը մատուցանէ զիւր մեծարանս Առ այժմ ոչ ինչ ունի պատրաստ ի Ստոքհոլմի տեսարաններէ. բայց կը յուսայ առաջիկայ ամարան մէջ հաճել զձեզ

Նորայր Ն. Բիւզանդացի

Առ Աստուածապատիւ Տէր
Տէր Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան
Պատրիարք Կ. Պոլսի

0 Աւգոստոս

Աստուածապատիւ Տէր

Հիւանդութեանս պատճառաւ չկարացի վաղագոյն պատասխանել Ձեր յունիսի 2 ի հ. տ. պատուական գրոցն որով կը բարեհաճիք ցաւակցիլ անենաթշուառիս Շնորհակալ եմ ի բոլոր սրտէ

Ներեցէք եթէ աւելի բան չեմ գրեր զի չունեմ խաղաղութիւն Լաւ է ինձ մեռանել քան զայս կեանս իմ կ՚ըսեմ եւ ես ընդ մարգարէին

Մատուցանելով Աստուածապատիւ Տեառնդ զիմ խորին մեծարանս

մնամ խոնարհ ծառայ Նորայր Ն. Բիւզադացի

Առ Ամենապատիւ Տէր
Տէր Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան
Նախկին Պատրիարք Հայոց Կ. Պոլսի

մայիս 2

Ամենապատիւ Տէր

Ընկալայ զթուղթդ ապրիլ 7ի Ուրախ եմ որ գոհ եղեր էք իմ քննութեամբ Մալխասեան Ագաթանգեղոսին եւ Ղ. Փարպեցւոյ

Մալխասեանն ուզեց որ ես ալ աջակցեմ Պատմագիրք Հայոց հրատարակութեան Պահանջեցի 2 000 ռուբլի Զլացուեցաւ ինձ գումարդ որ վարձատրութիւն պիտի ըլլար իմ 0 տարիէ աւելի ուսումնասիրութեանց նախնեաց մատենագրութեանց եւ անուսումն ու իրահամարձակ մարդիկ ի հրապարակ նետեցին զԱգաթանգեղոս 00 սխալներով եւ զՓարպեցի 00 սխալներով. Ինչպիսի անճոռնի սխալներով տեսաք զայնոսիկ ի քննութեանս

Ես բնաւ յաջողութիւն եւ բախտ ունեցած չեմ աշխատած եմ առանց քաջալերու թեանց առանց վարձուց առանց գովեստից եւ շնորհակալութեանց Չար նախան ձոտ եւ տգէտ վանականք եւ աշխարհականք ամէն ջանք թափեցին որ զիս կործա նեն. եւ երբ հրատարակեցան վերջին խայտառակ Փարպեցին եւ վերջին խայտա ռակ Ագաթանգեղոսն ուռուցիկ գովեստներ շռայլեցան յամենուստ Չէ Ամենապա տիւ Տէր եթէ ես արժանի չեմ իմ ժամանակիս Հայոց իմ ժամանակիս Հայք ալ ինձ արժանի չեն. թող վայելեն զայնպիսի Փարպեցին եւ զայնպիսի Ագաթանգեղոսն. վայելեն նաեւ զՄովսէս Խորենացի որոյ մօտ է հրատարակութիւնն եւ ո գիտէ ինչ այլանդակ բան պիտի ըլլայ

Ուրիշներն աւելի բախտաւոր եղան. տօնեցին իրենց 2 ամեակները ստացան 7 000 ական ռուբլու պարգեւներ գովութեանց երկայնատող յօդուածներ Իմ աշխա տութեանց կարեւորութիւն տուող չկայ. 0 տարիէ աւելի անդուլ անդադար ուսում նասիրութիւնքս հազիւ հազ պտղաբերեցին ինձ 2 00 փրանկ քանզի իմ պարտքս է ձրի աշխատել յանուն Հայութեան յօգուտ Հայ գրականութեան բարգաւաճման ինչպէս գրեցին ինձ վերջերս ի Տփխիսէ ի նկատի ունենալով կ՚ըսեն Ձեր մեծ հմտութիւնը Հայոց մատենագիրների քննութեանց վերաբերյալ խնդիրներում Զարմանալի մեծ հմտութիւն որ զիս հարիւր անգամ սովամահ պիտի ընէր եթէ իմ ժամանակիս Հայոց դրամին ակնկալած մնայի

Կը փափագիք որ իմ ցրիւ գրուածներուս եւ դեռ չհրատարակուածներուն մի ամփոփ քաղուածոյն առանձինն հրատարակէի յառձեռն կիրառութիւն բանասի բաց Չէք ըսեր թէ ով պիտի հատուցանե զիմ վարձս եւ զտպագրութեանն ծախս

Կը հարցնէք զիմ որպիսութենէ Հիւանդոտ եմ միշտ անոյժ եւ տկար չարաչար սրտնեղած ու մաղձոտած

Ն. Ն. Բ.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ 200

«Հայ դպրություն հասարակական կազմակերպության հովանավորությամբ լույս է տեսել Խաչատուր Աբովյան 200 հոդվածների հատընտիր ժողովածուն

200 թ. հոկտեմբերին Խ. Աբովյանի տուն-թանգարանում կազմակերպվեց գի տական նստաշրջան որին իրենց մասնակցությունը բերեցին Երևանի պետական և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանների աբովյանագետ դասա խոսները թանգարանի աշխատակիցները

Նստաշրջանը նվիրված էր մեծ լուսավորչի ծննդյան 200 ամյակին Ելույթ ունե ցողները կարևորելով նստաշրջանը նշեցին որ այն մի նոր քայլ է լինելու մեծ գրո ղի լուսավորչի մանկավարժի հասարակական-քաղաքական գործչի ծննդյան թվականի հետ կապված տարակարծությունները հարթելու ուղղությամբ Եվ իրոք գիտական զեկույցների ճնշող մեծամասնության մտահոգությունը հենց այդ խնդիրն էր հանիրավի երբեմն նաև մտացածին բարդույթների ստեղծումը որոնց պատճա ռով էլ առ այսօր վիճելի է մնում Խ. Աբովյանի ծննդյան թվականի հարցը Այս ուղ ղությամբ իր պրպտումների արդյունքները ներկայացրեց թանգարանի տնօրեն Հովի. Զատիկյանը՝ հրապարակելով վաղուց հայտնի բայց ինչ-ինչ պատճառներով ուշադրությունից դուրս թողնված այն փաստաթուղթը որի հեղինակը Խ. Աբովյանն է Մեծ հայրենասերը իր ընկերներից մեկին գրած նամակում հայտնում է որ ինքը ծնվել է 0 թ. Երևանից 7 վերստ հեռավորության վրա գտնվող Քանաքեռ գյու ղում Փաստաթուղթը դիտելով որպես ինքնակենսագրություն զեկուցողն այն միտքն արտահայտեց որ այսուհետ առանց տարակուսանքների Խ. Աբովյանի ծննդյան թվականը պետք է համարել 0 ը

Արծարծված մտքին համահունչ էր ԵՊՄՀ դասախոս պ.գ.թ. Վ. Ավետյանի զեկու ցումը Նա իր Խ. Աբովյանի ծննդյան թվականի հարցը զեկուցման մեջ հանգամա նորեն անդրադարձավ խնդրին և հույս հայտնեց որ ի վերջո պարզություն կմտցվի մեծ մտածողի ծննդյան թվականի հարցում

Բանասիրական գիտությունների դոկտոր Շ. Գրիգորյանի Որտեղի՞ց էին գաղ թել և ովքե՞ր էին Խ. Աբովյանի նախնիները զեկուցումը եկավ լրացնելու քննարկ վող հարցի շուրջ հայտնված կարծիքները

Ներկայացված և մյուս զեկույցներից հետո կարևոր համարվեց հրատարակել մի ժողովածու այստեղ ընդգրկելով ինչպես վերը նշված զեկուցումները այնպես էլ Խ. Աբովյանի ծննդյան թվականը պարզաբանող անցյալի հետազոտողներ Գ. Աբովի և Ե. Շահազիզի ուսումնասիրությունները

Ժողովածուի մեջ ընդգրկվեցին նաև բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Դոլուխանյանի Ց. Սիմոնյանի Բ. Եսաջանյանի Ա. Երզնկյանի Խ. Սարգսյանի Վ. Պողոսյանի Ա. Հակոբջանյանի զեկուցումները որոնք նվիրված էին Խ. Աբովյանի

մանկավարժական աշխարհագրագիտական բանասիրական բանահյուսական հայացքների բացահայտմանը

Հետաքրքրական էին ԵՊՀ դասախոս բ.գ.թ. Ռ. Նահապետյանի Խ. Աբովյանը որպես ազգագրագետ ԵՊՄՀ դասախոս բ.գ.թ. Լ. Հովսեփյանի Խ. Աբովյանի և Յոհան Հերդերի բանագիտական հայացքները հոդվածները

Բ.գ.դ. Կ. Չաչանիի Խ. Աբովյանը քրդագետ հոդվածը հանգամանալից անդրադարձ է մեծ մարդասերի ժողովուրդների բարեկամության ջատագովի այդ բնագավառի ուսումնասիրություններին

Ժողովածուում ընդգրկված են նաև Խ. Աբովյանը հայ և օտար նշանավոր գործիչների գնահատմամբ առանձնակի արժեք ներկայացնող Խ. Աբովյանի կյանքի տարեգրությունը բաժինները որոնք ավարտուն պատկերացում են տալիս մեծ մտածողի կյանքի և ստեղծագործության մասին

Ժողովածուն ավարտվում է Խ. Աբովյանին նվիրված հայ և օտարալեզու հեղինակների բանաստեղծություններով

Ժողովածուի առաջաբանը գրել է գլխավոր խմբագիր Հովհ. Զատիկյանը

Ժողովածուին առանձնակի արժեք է հաղորդում Խ. Աբովյանի Պատկերներ դեպի Արարատ կատարած ճանապարհորդությունից քչերին հայտնի բանաստեղծությունը որը վերստին հավաստում է որ Խ. Աբովյանը ԺԹ դարի առաջին կեսի հայ իրականության ամենախոշոր մտածողն էր գրողը բանաստեղծը լուսավորիչը մանկավարժը բանահավաքը

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Ֆրանսայի նորակազմ թեմի դիւանը ուրախութիւնն ունի յայտնելու, որ սոյն թուականի 17 փետրուարին, հրաւէրով եւ նախագահութեամբ առաջնորդական տեղապահ Բարձրաշնորհ Տ. Գիւտ արքեպս. Նազգաշեանի, Փարիզի Առաջնորդարանի Ն. Ֆրէնկեան սրահին մէջ, տեղի ունեցաւ թեմիս Պատգամաւորական անդրանիկ ժողովը, որ նախ ընտրեց իր դիւանը, յանձինս՝

Ատենապետ տիար Կարպիս Ջրբաշեանի,
Փոխատենապետ տիար Կարապետ Սայապալեանի,
Ատենադպիրներ՝ տիարք Էդուար Մարտիրոսեանի եւ Հանրի Սիրանեանի:

Ապա տեղի ունեցաւ Թեմական Խորհուրդի ընտրութիւնը, հետեւեալ կազմով.

Տէր Կոմիտաս վրդ. Յովնանեան,
Տէր Գրիգոր աբեղայ Խաչատրեան,
Տիկին Սոնա Ադամեան,
Տօքթ. Ռոպէր Ազիլազեան,
Տիար Գեղամ Թորոսեան,
Տիար Արմէն Իլպիզեան,
Տիար Կարօ Յովսէփեան,
Տիար Ժիլպէռ Տէրտէրեան,
Տիար Սուրէն Փանոսեան,
Տիար Ժագ Փանոսեան
Տիար Գրիգոր Փափազեան:

Ժողովի աւարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հրաւիրուած է Ֆրանսա մասնակցելու Հայաստանի Տարուան նուիրուած պաշտօնական հանդիսութիւններուն, իր օրհնաբեր ներկայութեամբ գնահատեց եւ շնորհաւորեց նորընտիր Պատգամաւորական ժողովի պատուարժան անդամներն ու դիւանը, ինչպէս նաեւ նորընտիր Թեմական Խորհուրդի անդամները եւ յաջողութիւն մաղթեց անոնց կատարելիք ապագայ աշխատանքներուն:

ԴԻՒԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմական Խորհուրդը սոյն թուականի փետրուար 24-ին նախագահութեամբ առաջնորդական տեղապահ Բարձրաշնորհ Տէր Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանի Մարսիլիոյ Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցւոյ մէջ գումարեց իր անդրանիկ նիստը և կազմեց իր դիւանը, յանձինս՝

Պարոն Գրիգոր Փափազեան՝ ատենապէտ,
Տոքթ. Ռոպէր Ազիլազեան՝ փոխատենապէտ,
Տէր Գրիգոր աբեղայ Խաչատրեան՝ ատենադպիր,
Պարոն Ժագ Փանոսեան՝ ատենադպիր,
Պարոն Գեղամ Թորոսեան՝ գանձապահ,
Պարոն Սուրէն Փանոսեան՝ գանձապահի օգնական:

ԴԻՒԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՑ

ՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԱՀՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՆԻՆ

Երիտասարդների համար արդեն նվիրական օր է դարձել Ս. Սարգիս զորավարի տոնը, որը նշանավորվում է որպես երիտասարդների օրհնության օր, իսկ Ս. Սարգիսը՝ որպես հովանավոր սուրբ և բարեխոս առ Աստված:

Փետրվարի 3-ին Գուգարաց թեմի Ս. Սարգսի անունը կրող բոլոր եկեղեցիներում մատուցվեց Ս. Պատարագ, որի ավարտին կատարվեց երիտասարդների օրհնություն:

Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցում երիտասարդներն ստացան թեմական առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությանը: Սրբազան Հայրը, շնորհավորելով բոլոր երիտասարդներին այս գեղեցիկ տոնի առթիվ, հորդորեց հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և հայրենի ավանդույթներին, տուրք չտալ օտարամուտ վարք ու բարքին: Երիտասարդները, Սրբազան Հորից ստանալով օրհնություն և համբուրելով Խաչը, Ս. Սարգիս եկեղեցուց ճանապարհվեցին դեպի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի: Եկեղեցու ներքնահարկ սրահում թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը երիտասարդության օրվա առթիվ կազմակերպել էր տոնական հանդիսություն, որին աջակցել էին ՀԳՄ Լոռու մարզային բաժանմունքը, Նկարիչների միությունը, ՎՊՄԻ-ի Արվեստի ամբիոնը, Գեղագիտական կենտրոնը, Գեղարվեստի դպրոցը: Հանդիսության սրահը զարդարված էր Գեղագիտական կենտրոնի երիտասարդ աշխատակիցների, Գեղարվեստի դպրոցի և ՎՊՄԻ-ի երիտասարդ նկարիչների աշխատանքներով:

Իր ողջույնի և օրհնության խոսքով բացելով հանդիսությունը՝ ՔԴԿ տնօրեն Տ. Վահան քահանա Ազարյանը շնորհակալություն հայտնեց հանդիսությանն աջակցած միություններին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, մտավորականներին ու արվեստագետներին: Գիտակցությունը, որ եկեղեցական ու արդեն ժողովրդական դարձած, երիտասարդների հովանավոր ու պաշտպան Ս. Սարգիս զորավարի տոնը միավորել է բոլորին՝ դասախոսներին, ուսանողներին, աշակերտներին, երիտասարդ արվեստագետներին ու մտավորականներին, ուրախալի է և հուսադրող: Հուսադրող, որ այլևս մեր կյանքում տեղ չեն գտնի օտարամուտ տոներն ու սովորությունները:

ԱՍՏՂԻԿ ԱՍՐՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

(Ամփոփիչ Կլոր սեղան - քննարկումը Գուգարաց թեմի Առաջնորդարանում)

Եկեղեցի-պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցության շրջանակում մարտի 22-ին Առաջնորդարանում ներկայացվեց ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի ֆինանսավորմամբ և Գուգարաց թեմի աջակցությամբ իրականացվող 77777Այսօր կերտում ենք ապագան88888 ծրագրի կատարման ընթացքը:

Ծրագրի շրջանակներում, որպես Եկեղեցի-պետություն-հասարակական կազմակերպություն համագործակցության շոշափելի արդյունք, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի կողմից Վանաձոր համայնքի խիստ կարիքավոր 5 հաշմանդամների տրամադրվել են 4 էլեկտրական և 1 մեխանիկական սայլակ՝ 2,5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, քաղաքապետ Ս. Դարբինյանի կողմից տրամադրվել է էլեկտրական սայլակի մեկ մարտկոց՝ 45000 դրամ արժողությամբ:

Թեմական առաջնորդի հովանավորությամբ այս տարի թեմապատկան 77777Ծիծեռնակ88888 ճամբարում իրենց ամառային հանգիստը կանցկացնեն համագործակցող և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների անապահով և խիստ կարիքավոր ընտանիքների թվով 50 երեխաներ:

77777Ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոն88888 ՀԿ-ի կողմից ճշտվել և թարմացվել են Վանաձորում գործող ՀԿ-ների ցանկը:

Ծրագրի շրջանակներում Ծաղկազարդի տոնին, որը Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ նաև մանուկների օրհնության օրն է, մասնակից ՀԿ-ների թվով 250 երեխաներ, ստանալով թեմական առաջնորդի օրհնությունը, կմասնակցեն Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու ներքնահարկ սրահում կազմակերպվող տոնական հանդիսությանը:

Կարևորելով Վանաձորի մշակութային կենտրոնների, հուշարձանների, հուշակոթողների և հարակից տարածքների մաքրությունը՝ քաղաքապետարանի սոցիալական ծրագրերի բաժնի առաջարկությամբ որոշվեց հանդես գալ յուրօրինակ նախաձեռնությամբ. ծառատունկերին զուգահեռ մաքրել և ներկայանալի տեսքի բերել թե՛ հուշակոթողները, թե՛ նրանց հարակից տարածքները:

77777Այսօր կերտում ենք ապագան88888 ծրագրի շրջանակներում իրականացվող ամփոփիչ այս կլոր սեղան-քննարկումը մեկնարկը դարձավ Հայ Առաքելական Մայր Եկեղեցու, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների համագործակցությանը, համայնքում գործող կազմակերպությունների շարունակական և համատեղ նոր ծրագրերի իրականացմանը՝ կարևորելով սեփական փորձի և կարողությունների օգտագործումը համայնքի զարգացման համար:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԼՈՒՐԵՐ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԵՎ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Տեառնընդառաջի տոնակատարությունը Վիրահայոց թեմի եկեղեցիներում սկսվեց փետրվարի ի նախատոնակով Երեկոյան ժամերգությունից հետո Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ Բաթումի Սուրբ Փրկիչ և Սամցխե-Ջավախքի Ախալքալաքի Սուրբ Խաչ Ախալցխայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցիների բակերում վառվեց ավանդական խարույկն ու իր շուրջը բոլորեց բազմաթիվ հայ հավատավորների

Առաջնորդարանի մշակութային բաժնի կողմից կազմակերպված տոնական միջոցառմանը մասնակցեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցուն կից Կռունկ համույթը ղեկավար՝ Էլինա Բաբայան որն իր հայրենաշունչ երգ ու պարով առավել խանդավառեց ու խորհրդավորեց Տեառնընդառաջի մայրամուտվող երեկոն Ավանդական զուռնա-դհոլը մինչև ուշ երեկո հնչեց Ջավախք լեռնաշխարհի հայոց եկեղեցիների շուրջ՝ վերածվելով ժողովրդական մեծ տոնախմբության ու պսակվելով երիտասարդների ուրախ շուրջպարով Հաջորդ օրը խուռներամ հավատացյալների անդադրուն հոսքը լցրեց վիրահայոց բոլոր տաճարները ուր մատուցվեց տոնական Ս. Պատարագ և կատարվեց նորապսակների օրհնության արարողություն Միջոցառումներին իրենց ներկայությունը բերեցին տեղական ղեկավար մարմինների ներկայացուցիչները և բազմաթիվ հավատացյալներ

Տոնական միջոցառումների աննախադեպությամբ առանձնացավ նաև Սրբոց Վարդանանցը

Փետրվարի ի առավոտյան թեմի գործող եկեղեցիներում մատուցվեց Ս. Պատարագ՝ նվիրված Սրբոց Վարդանանց տոնին որից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Վասն համօրէն ննջեցելոց ազգիս հայոց Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնի առիթով Թեմի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում արարողությունն անցավ առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ

Սրբոց Վարդանանց տոնը նշանակալից դարձավ հատկապես թբիլիսահայության համար Նախապես Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի (նախագահ՝ Կարեն Էլչյան նախաձեռնությամբ մայրաքաղաքի հայոց ութ դպրոցներում հայտարարվեց շարադրությունների մրցույթ՝ Վարդան Մամիկոնյանը և Ավարայրի ճակատամարտի պատմական նշանակությունը թեմայով Փետրվարի

ին Թբիլիսիի Իմեդի մշակույթի կենտրոնում կայացավ հաղթողների մրցանակաբաշխությունն ու տոնին նվիրված համերգը որ կազմակերպել էր առաջնորդարանի մշակույթի բաժնի ղեկավարի օգնական Լուսինե Հովհաննիսյանը Տոնական

հանդիսությունը բացվեց Վազգեն Սրբազանի օրհնության խոսքով Այնուհետև Թբիլիսիի թիվ 0 դպրոցի Փոքրիկ հայեր համույթի կատարմամբ հնչեց Ամեն հայի սրտից բխած Հայրապետական մաղթանքը որի ժամանակ լեփ-լեցուն դահլիճը ծափողջույններով ու հոտնկայս անվանակոչության տոնի առիթով իր որդիական սերն արտահայտեց առ Ամենայն Հայոց Հայրապետը

Ուրախությամբ պիտի փաստենք որ Վիրահայոց Եկեղեցին այսօր հավաքողն է դառնում այն բերքառատ հունձքի որի բարի հունդերը այս վերջին տարիների ընթացքում փորձում էր սերմանել վիրահայ երիտասարդների մեջ Այսօր Եկեղեցու շուրջ համախմբված նրանք իրենք են նախաձեռնողը դառնում եկեղեցական օրացույցի տոները առավել խանդավառելու այն ժողովրդական տոնախմբության ու ազգային դարձնելու վեհ գործի ճիշտ այդպես փետրվարի ին Վրաստանի հայերի Նոր Սերունդ համախագահ՝ Միքայել Ավագյան կազմակերպության ջանքերով և առաջնորդ Հոր օրհնությամբ Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի փոքր դահլիճում կազմակերպվել էր արցախցի երգիչ Սարիբեկ Սարգսյանի մենահամերգը՝ նվիրված Սուրբ Սարգսի տոնին որը ջերմությամբ ընդունվեց թե հայ և թե վրաց արվեստասերների կողմից

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՄԵՐՈՒԺԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Փետրվարի 22 ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի Առաջնորդարանին կից Մշակույթի հարցերով հանձնախմբի նախաձեռնությամբ և ՀՀ դեսպանատան աջակցությամբ Վրաստանի մշակութային փոխհարաբերությունների կենտրոն Կովկասյան տանը բացվեց անվանի մանրանկարիչ Մերուժան Շահումյանի Ավետարանական մանրանկարներ խորագիրը կրող անհատական ցուցահանդեսը

Մերուժան Շահումյանը ծնվել է թվականին Թբիլիսիում 0 թվականին ավարտել է Թբիլիսիի Գեղարվեստից ակադեմիան 2 թվականից նրա կտավները ցուցադրվել են տարբեր գեղարվեստական ցուցահանդեսներում Արվեստի իր ասպարեզում թերևս միակը վիրահայ իրականության մեջ նրա գործերը առաջին անգամ էին ցուցադրվում ծննդավայրում թեև արդեն անհատական ցուցահանդեսներով հանդես էր եկել Մոնրեալ և Տորոնտո քաղաքներում իսկ 200 ին՝ Ջավախքում Մերուժան Շահումյանի հեղինակությամբ առանձին աշխատանքներ ամփոփված են ԱՄՆ-ի Կանադայի Ֆրանսիայի Գերմանիայի Հայաստանի և Վրաստանի տարբեր անհատական հավաքածուներում

«Կովկասյան տանը բացված ցուցահանդեսին ներկայացված էին նախշած քարեր և ափսեներ մանրանկարներ՝ ստվարաթղթին այդ թվում՝ Խորհրդավոր ընթրիք Սուրբ Մաշտոց Սուրբ Ծնունդ Փախուստ դեպի Եգիպտոս Սուրբ Գևորգ Ավետում Արցախի պահապան Մայր Աստվածածին Նարեկացի «Շուշանիկ Սուրբ բժշկություն Դժոխքի ավերում և շուրջ 0 այլ աշխատանք

ներ Բացառիկ ու հետաքրքիր էին նաև նախշազարդ ու լաքապատ ձվաձև փայտե
րը Երեկոյին որ սովորականից ավելի բազմամարդ էր ելույթ ունեցան Վիրահայոց
թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը Վրաստանում ՀՀ ար
տակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը Կովկասյան տան տնօրեն Նաիրա
Գելաշվիլին Վրաստանի հայերի միության փոխնախագահ Վրաստանի խորհրդա
բանի պատգամավոր Վան Բայբուրթյանը վիրահայ բանաստեղծ-թարգմանիչ Գի
վի Շահնազարը Վրաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանի խորհրդա
կան Նիկոլայ Կորչմարը և այլք Բանախոսները կարևորեցին նման աշխատանքնե
րը քանի որ ինքնադրոշմ ու շեշտված անհատականությամբ մոտեցող արվեստա
գետի հզոր հավատքից ու զորեղ աղոթքից ծնված ճշմարիտ արվեստում գտնում ես
սփոփանք մխիթարություն բյուրեղանում ես... իսկ դա հաճախ խորտակում է ա
մեն մի թշնամություն չարիք...

Նշենք որ աստվածահաճո այս նախաձեռնությունը թվով երրորդն է նախորդ
երկու միջոցառումներին ցուցադրվել էին վիրահայ լուսանկարիչների և Ռոբերտ
Ներսեսովի գեղարվեստից ստուդիայի սաների ստեղծագործությունները արգա
սաբեր այն համագործակցության որը ձևավորվել է Կովկասյան տան ու Վիրահա
յոց թեմի միջև

ՄԻՋԻՆՔԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մարտի ին առանձնապես բազմամարդ էր Վիրահայոց թեմի Թբիլիսիի ա
ռաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցին ուր աննախադեպ հանդիսավորությամբ
ու խանդավառությամբ նշվում էր Միջինքը

Երեկոյան կատարվեցին Խաղաղական և Հանգստյան ժամերգությունները
որոնց ընթացքում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր
օրհնությունը բերեց հավատացյալներին և ներկայացրեց օրվա արարողությունն
ի ու Միջինքի խորհրդի բացատրությունը Հավարտ ժամերգությունների կատար
վեց թեմի առաջնորդարանի Մշակույթի բաժնի նախաձեռնությամբ պատրաստ
ված Միջինքի գաթաների օրհնությունն ու բաշխումը հավատացյալներին Ժողովր
դական ընդունված սովորույթի համաձայն գաթաներում տեղադրվել էին երջան
կաբերության խորհուրդն արտահայտող արծաթյա փոքրիկ զարդեր որոնց վրա
թբիլիսցի ճանաչված լուսանկարիչ և քանդակագործ Սարգիս Դարչինյանի կողմից
փորագրվել էին Միջինք և Վիրահայոց թեմ 2007 բառերը

Առաջնորդարանի հոգածությամբ Միջինքի ուրախ երեկոն իր շարունակությու
նը գտավ Գարրի և Ժաննա Դավթյանների տիկնիկային թատրոնում Թբիլիսիի
Հավլաբար թաղամասում գտնվող թանգարանատիպ այս տունն ու խամաճիկների
միջոցով բարին սերմանող հայկական այս հյուրընկալ ընտանիքը մեծ համբավ ու
նի ոչ միայն հայ այլև վրաց հասարակայնության շրջանում Այս անգամ էլ հաս
տատված ավանդույթի համաձայն խամաճիկներն իրենց ուրախ ու իքնատիպ ներ

կայացումով լուսավոր ու գեղեցիկ զգացումներ արթնացրեցին ներկաների հոգում Ու այդ բարի տրամադրություններով էլ ոգեշնչված ցուցադրությանը հաջորդած Պահոց ընթրիքի շուրջ ներկաները խոսեցին համայնքն է'լ ավելի աշխուժացնելու այն կուռ դարձնելու ուղիների շուրջ Նրանք գոհունակություն հայտնեցին և ողջունեցին եկեղեցու հոգևոր սպասավորների և թեմի Մշակույթի բաժնի կողմից կազմակերպվող այսօրինակ միջոցառումները որոնք քրիստոնեական ու ազգային բնույթ կրելուց բացի մեծապես նպաստում են վիրահայ համայնքային կառույցների համախմբմանն ու միասնականությանը Ջերմ ու մտերմիկ զրույցը ժամանակ առ ժամանակ ընդմիջվում էր վիրահայ մտավորականների կատարմամբ հնչող ազգային երգերով տեղի ճանաչված մարդկանց մասին հետաքրքիր պատմություններով և ասմունքով այդ թվում՝ հեղինակային ստեղծագործություններից

Միջինքի երեկոյին մասնակցելու նպատակով այս անգամ հրավիրվել էին «Վրաստան հայալեզու շաբաթաթերթի հայկական Մթավարի հեռուստահաղորդումների և Վրաստանի հայ գրողների Վերնատուն միության անդամները այս տեղ էին նաև տեղի հոգևոր դասը առաջնորդարանին կից Մշակույթի հարցերով հանձնախմբի անդամները Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը Վրաստանի հայ խորհրդարանականներ Համլետ Մովսիսյանը և Վան Բայբուրթյանը

ԴԻՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԸ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ

Փետրվարի ին՝ Սրբոց Վարդանանց տոնին Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցում սկսվեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի տարեկան ենորյա քահանայից ժողովը Ռուսաստանի Դաշնության հյուսիսային մայրաքաղաքում էին հավաքվել թեմի բոլոր հոգևորականները՝ թեմակալ առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի հրավերով ու առաջնորդությամբ Աննկարագրելի էր տեղի հավատացյալ հայորդյաց հոգևոր այն ուրախությունը երբ թեմի քահանայից դասն առաջնորդ Սրբազան Հոր հետ մուտք գործեցին պատմական Ս. Կատարինե եկեղեցի՝ կատարելու առավոտյան հանդիսավոր ժամերգություն

Առավոտյան հավաքական այս աղոթքին հաջորդեց Սրբազան Պատարագը որ մատուցեց Ռուսահայոց թեմի Դոնի Ռոստովի մարզում առաջնորդական Փոխանորդ Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի ոգեշունչ քարոզ խոսեց՝ ներկայացնելով Վարդանանց հերոսամարտի պատմությունը հաղթական ընթացքը և Վարդանանց խորհրդից եկող այսօրվա պատգամը մեր ժողովրդի զավակներին՝ մասնավորապես ասելով. 77777Վարդանանց հերոսամարտը անկեղծ հավատքի ու ազատ Հայրենյաց համար մղված արդար այն պատերազմն էր որ Տղմուտ գետի ափերին մարեց չարի ու անաստվածության կրակը Մարտիրոսության փառաց պսակին արժանացած մեր նախնիք մեզ թողեցին անմահության խիզախ հայի անպարտ հոգու հերոսական մի օրինակ որ դարեր ի վեր շարունակում է Վարդանանց անանց հերոսության նկարագրով ոգևորել մեր ազգի զավակներին՝ ապահովելով նորանոր հաղթանակներ

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք որից հետո 77777Էջ Միածինն ի Հօրէ քաղցրալուր շարականի հնչյունների ներքո Ս. Սեղանից ընթերցվեցին Ամենայն Հայոց Հայրապետի Օրհնության գրերը որոնցով Տիրախնամ Ռուսահայոց թեմի երեք սպասավոր քահանաներ արժանացան քահանայական լանջախաչ կրելու բարձր պատվի Տ. Շահան քհն. Մովսիսյան Կրասնոյարսկ քաղաքի հոգևոր հովիվ Տ. Սեբեոս քհն. Ղալաչյան Աստրախան քաղաքի հոգևոր հովիվ և Տ. Մաշտոց քհն. Հակոբյան Բառնաուլ քաղաքի հոգևոր հովիվ

Թեմակալ առաջնորդն այնուհետև իր օրհնության և բարեմաղթանքի խոսքն ուղղեց հավաքված ներկաներին մասնավորապես ասելով. 77777Նվիրական այս օրը երբ Ռուսահայոց թեմի ողջ հոգևորականաց դասը Պետերբուրգի բարեպաշտ հավատացյալների հետ հավաքվել է ոգեկոչելու Վարդանանց հերոսամարտի քաջերին չեմ կարող գոհություն ու փառաբանություն չվերառաքել առ Աստված որ պարգևեց մեզ ապրելու հիշարժան այս օրը Ղևոնդյանց հավատքն առ Աստված և Վարդանանց սերն առ Հայրենին տարավ մեր ժողովրդին դեպ հերոսամարտ՝ նահատակությամբ անմահանալու Վարդանանց հերոսական ոգին որ հավաքել է մեզ այստեղ անմահ է քանզի ապրում է հայ ժողովուրդը իր ազգային արժանապատվության և ինքնաճանաչողության հստակ գիտակցությամբ հայրենի հողի վրա ազատ ապրելու և հայրերի Աստծուն ազատ դավանելու արդար իրավունքով

Ապա եկեղեցուց դուրս գալով՝ հոգևորականաց թափորն առաջնորդվեց Լազարյանների անվան 77777Հայեցի Դաստիարակության կենտրոն ուր տեղի ունեցավ քահանայից հավաքի առաջին նիստը Հավաքը սկսվեց Տերունական 77777Հայր մեր աղոթքով որից հետո առաջնորդ Սրբազանն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին՝ հայցելով Տիրոջ օրհնությունը և զորակցությունը եկե

ղեցաշահ այս հավաքին Նիստի ընթացքում հերթով խոսք ասաց թեմի յուրքանչյուր հոգևորական և ներկայացրեց անցնող մեկ տարվա կտրվածքով իր ծուխից ներս ծավալած եկեղեցական գործունեությունը Քննարկվեցին նաև թեմում առկա ընդ հանուր տարբեր խնդիրներ՝ ծիսական միաձևության լրատվական դաշտի առավել արդյունավետ կազմակերպման և այլ շահեկան ծրագրեր

Հավարտ նիստի ներկաները հրավիրվեցին Կրթական կենտրոնի հանդիսութ յանց սրահ ուր գեղարվեստական հայտագրով հանդես եկան կենտրոնի սաները՝ հայրենաշունչ երգ ու պարով մեծ բավականություն և ոգևորություն պարգևելով ներկաներին

Հաջոր օրը փետրվար ի առավոտյան քահանա Հայրերը ճանապարհվեցին դեպի Էրմիտաժ ուր շրջեցին թանգարանի ոսկյա և ադամանդյա ֆոնդը ներկայաց նող սրահներով ապա այցելեցին Հայաստանը ներկայացնող հարկաբաժին Հա վարտ այս պտույտի հավաքվածները ճանապարհվեցին դեպի Վասիլևսկի կղզու վրա գտնվող հայկական պատմական գերեզմանատուն ուր գտնվում է Լազարյան ների ընտանեկան դամբարանը՝ Ս. Հարություն եկեղեցում Ներկաները շրջեցին գե րեզմանատնով որի ընթացքում թեմակալ առաջնորդ Սրբազանը ներկայացրեց գե րեզմանատան պատմությունը այնտեղ թաղված նշանավոր հայ ազգային հոգևոր մշակութային գործիչներին՝ պատմելով յուրքանչյուրի մասին առանձին-առանձին և թե ինչպիսի դժվարությամբ է հնարավոր եղել վերականգնել պատմական այդ ե կեղեցի-դամբարանը և գերեզմանները Սանկտ Պետերբուրգում իր ծառայության ընթացքում

Օրվա երկրորդ կեսին շարունակվեց քահանայից ժողովի երկրորդ նիստը որ ա ռավելապես նվիրված էր թեմի գործունեության համար համընդհանուր հայեցա կարգ մշակելուն և ծխական գործունեությունը առավել օգտաշատ կազմակերպե լուն

Նույն օրը երեկոյան Սրբազան Հոր հետ բոլորը մեկնեցին առաջնորդանիստ Մոսկվա

Փետրվարի ի առավոտյան արդեն քաղաքամայր Մոսկվայում Եզրաս եպիս կոպոսի հետ հոգևորականաց դասը առաջնորդվեց դեպի նորակառույց եկեղեցու շինհրապարակ Այստեղ Սրբազան Հայրը ներկաներին ծանոթացրեց կատարված աշխատանքներին ներկայացրեց ծավալված շինարարության ընթացքը Այստեղից ներկաները մեկնեցին Մոսկվայի Հայ Եկեղեցու հոգևոր-կրթական 77777Հայորդյաց Տուն կենտրոն ուր մասնակցեցին կենտրոնի սաների պատրաստած գեղեցիկ գեղարվեստական միջոցառմանը

Ոգևորիչ ու քաջալերիչ եռօրյա այս հավաքը մեծ ոգևորություն և հոգեկան մեծ բավարարություն պարգևեց թեմի սպասավոր հոգևորականաց դասին որոնք վե րահաստատելով իրենց ուխտը Մայր Աթոռի հետ ներշնչանքի նոր ոգևորությամբ ճանապարհվեցին իրենց ծխերը՝ տանելով իրենց հետ անմոռաց տպավորություն ներ Սանկտ Պետերբուրգից և Մոսկվայից

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՎԵՐԱՕԾՎԵՑ ՍԱՅԴԱԲԱԴԻ Ս. ՄԱՐԻԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մարտի 4-ը նշանակալից օր էր հնդկահայ գաղութի համար. Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի Հայրապետական Պատվիրակ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի ձեռամբ և մասնակցությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, Մայր Աթոռի միաբաններ Տ. Վարդան աբղ. Նավասարդյանի և Տիգրան սրկ. Բաղումյանի օծվեցին Ս. Մարիամ վերանորոգված եկեղեցու Ս. Սեղանն ու սյուների 16 խաչերը:

Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին կառուցվել է 1758 թ. ջուղայեցի նշանավոր վաճառական, բարեգործ Խոջա Պետրոսի անձնական միջոցներով: Անցած տարի Կալկաթայի նորընտիր եկեղեցական վարչության նախաձեռնությամբ ամբողջովին վերանորոգվել է եկեղեցին, կառուցվել նոր զանգակատուն և հյուրատուն, բարեկարգվել է եկեղեցուն կից տարածքը և հայ համայնքին են վերադարձվել նախկինում ապօրինաբար զավթված տարածքները:

Օծման արարողությունից հետո Աղան Սրբազանը ջերմորեն շնորհավորեց ամենքին նշանակալից օրվա կապակցությամբ՝ ընդգծելով, որ հնդկահայության ուսերին ծանր և քաղցր բեռ է դրված՝ հայաշունչ պահելու այս հոյակերտ եկեղեցին, ուր դարեր շարունակ հնչել է հայ մարդու աղոթքն առ Աստված: Սրբազան Հայրը նաև իր գնահատանքը հայտնեց եկեղեցական վարչության անդամներին և հնդկահայոց հոգևոր հովվին՝ նախանձախնդիր և ջանադիր աշխատանքի համար:

Այնուհետև կատարվեց հոգեհանգիստ եկեղեցու բակում թաղված հայորդիների հոգիների խաղաղության համար:

Արարողությանը ներկա էին եկեղեցական վարչության անդամները, հնդկահայեր և ԱՄՆ-ից այս առիթով ժամանած՝ Սայդաբադի հայկական եկեղեցու վերջին խնամակալներ Մատթեոս և Մերի Կարապետյանների դուստրը՝ տիկին Լուսի Այվազյանը, և թոռնուհին՝ տիկին Հեղինե Քրեյը:

ԴԻՎԱՆ ԿԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՅՑԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՔԱՂԱՔՆԵՐ

Մարտի 2-4-ը Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը թեմի երկու հոգևորականների և թեմական խորհրդի երեք անդամների ուղեկցությամբ այցելեց Հյուսիսային Իրաքի մի շարք քաղաքներ, ուր հանդիպումներ ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Մարտի 2-ին Գերաշնորհ Ավագ Սրբազանը ժամանեց Էրբիլ քաղաք, ուր նրան միացան Քիրքուկ, Մոսուլ, Զախո և Ավզրուգ քաղաքների հոգևոր սպասավորները և ծխական խորհուրդների անդամները: Էրբիլ քաղաքի հայկական եկեղեցում հայ համայնքի մասնակցությամբ կատարվեցին Խաղաղական և Հանգստյան ժամերգություններ, ապա ներկաներին քարոզեց Ավագ Սրբազանը: Արարողությունից հետո տեղի ունեցավ հանդիպում Էրբիլի հայկական եկեղեցու անդամների հետ:

Մարտի 3-ի առավոտյան Սրբազանն իր շքախմբով ուղևորվեց Դուհոկ քաղաք, ուր տեղի ունեցավ տարածաշրջանային ժողով՝ մասնակցությամբ բոլոր հոգևորականների և ծխական խորհրդի անդամների: Ժողովի ընթացքում քննարկվեցին Իրաքի հայոց թեմին առնչվող խնդիրներ:

Մարտի 4-ին տեղի ունեցավ Դուհոկի նոր եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Ավագ Սրբազանի ձեռամբ օծվեցին եկեղեցու տասնվեց վեմ քարերը՝ համաձայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սուրբ ավանդության: Հիմնարկեքի արարողությանը ներկա էին Դուհոկի հայերը, ինչպես նաև քույր Եկեղեցիների եպիսկոպոսներն ու հոգևորականները: Արարողության ավարտին ներկաներին դիմեց Իրաքի հայոց թեմի առաջնորդը: Ավագ Սրբազանը հորդորեց հայորդիներին, որպես Հայաստանի իսկական զավակներ, հավատարիմ մնալ քրիստոնեական հավատին և ազգային ավանդներին, քանի որ անցյալի անարդարությունները պետք է սրբագրվեն, և այժմ նրանք հեռու են իրենց հայրենիքից:

ԴԻՎԱՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 21-ին Շվեդիայի Լութերական Եկեղեցու Ստոկհոլմի առաջնորդարանում տեղի ունեցավ Սկանդինավիայում Հայրապետական Պատվիրակի փոխանորդ Հոգեշնորհ Տ. Ներսեհ աբդ. Խալաթյանի հանդիպումը Ստոկհոլմի եպիսկոպոս Քարոլինե Քրուկի հետ: Զրույցի ընթացքում Հայր Սուրբը Շվեդիայի հայ համայնքի և Հայ Եկեղեցու մասին համառոտ տեղեկություններ հաղորդեց եպիսկոպոսին: Քննարկվեցին նաև Շվեդիայում Հայ Եկեղեցու և Շվեդական Եկեղեցու կապերի ամրապնդման, այլ կրոնական կազմակերպությունների հետ էկումենիկ կապերի զարգացման և Մայր Աթոռի հետ կապերի ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Փետրվարի 23-ին Հայր Սուրբը հանդիպեց նաև Շվեդիայի Կաթոլիկ Եկեղեցու և Ստոկհոլմի Կաթոլիկ թեմի առաջնորդ Անդերս եպիսկոպոս Արբորելիուսի հետ: Հանդիպման ընթացքում Հոգեշնորհ Հայր Սուրբը ներկայացրեց Շվեդիայում և Սկանդինավիայում Հայ Եկեղեցու հովվության և հայ համայնքների վիճակը, նրանց առջև ծառացած խնդիրներն ու հրամայականները և նաև Եկեղեցու զարգացման հնարավորությունները: Քննարկվեցին մոտ ապագայում Շվեդիայի էկումենիկ կյանքում Շվեդիայի հայոց հովվության մեջ ծառայող հայ եկեղեցականների ակտիվ մասնակցության հարցեր՝ հատկապես հաշվի առնելով, որ վերջին տարիներին այդ կապերը զգալիորեն թուլացել էին: Սրբազան Հայրը հնարավոր համարեց նաև ապագայում Մայր Աթոռի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի որոշ սաների ուսման շարունակությունը Շվեդական Կաթոլիկ համալսարանում:

Փետրվարի 20-ին Հոգեշնորհ Տ. Ներսեհ աբդ. Խալաթյանը հանդիպումներ ունեցավ նաև Շվեդիայի մի շարք էկումենիկ հաստատությունների ղեկավարների հետ: Հայր Սուրբը մասնավորաբար հանդիպեց Շվեդիայի Քարոզչական և Միսիոներական խորհրդի գլխավոր քարտուղար Յորան Ստուրվեյի, Շվեդիայի Քրիստոնեական Եկեղեցիների Խորհրդում Օրթոդոքս Եկեղեցու բաժնի պետ Միշա Յաքսիչի, EST-ի (Շվեդիայում Կրոնական համայնքներին Կառավարական ֆինանսական օգնության և բաշխման հատուկ կոմիտե) փոխքարտուղար Սվեն-Էրիկ Անդերսոնի հետ:

ՇՎԵԴԻԱՅԻ ԵՎ ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱՅԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀՌՈՄՈՒՄ

(հունվար 29 - փետրվար 3)

Սույն թվականի հունվարի 29-ին Վատիկանում իր աշխատանքներն է վերսկսել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի պաշտոնական չորրորդ ժողովը, որի նախորդ հանդիպումը տեղի էր ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ժողովի ընթացքում հիմնականում քննարկվում են Եկեղեցու առաքելությանը վերաբերող խնդիրներ:

Հայ Եկեղեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ներկայացնում են Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը և ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էին Գերաշնորհ Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը և Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը:

Ժողովն սկսեց հունվարի 29–ին: Առաջին երկու օրերի նիստերին մասնակցում էին միայն Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, հընթացս որի քննարկվեցին երկխոսության նախապատրաստական աշխատանքները:

Հունվարի 30–ին, ժողովից հետո, Գերաշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Խաժակ Սրբազանները, Իտալիո հայոց հոգևոր Հովիվ Տ. Առեն վարդապետ Շահինյանը հանդիպեցին Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանին և հյուպատոս Գևորգ Պետրոսյանին: Սրբազան Հայրերը, գնահատելով ՀՀ դեսպանի՝ հայ և իտալացի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված գործունեությունը, նրան փոխանցեցին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու բարեմաղթանքները:

Հունվարի 31–ին երկխոսությունն սկսվեց Արևելյան Ուղղափառ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև՝ կարդինալ Վալտեր Կասպերի և Բիշոյ մետրոպոլիտի ատենապետությամբ: Ժողովին ելույթ ունեցավ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը □Առաքելություն, վկայություն, ծառայություն և մարդորսության խնդիրները□ թեմայով:

Նույն օրը, երեկոյան, Սրբազան Հայրերը հանդիպեցին նաև Հռոմում ուսանող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Գեղարդ աբեղա Վահունու, Տ. Մուշեղ աբեղա Բաբայանի և Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանի հետ և Հոգեշնորհ Հայր Սուրբերին փոխանցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները:

ԴԻՎԱՆ ԻՏԱԼԻՈ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅԱՆ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Փետրվարի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեին:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց դեսպանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանին մատուցած ծառայությունների համար, և ցանկացավ նորանոր բարի իրագործումներ հետագա գործունեության մեջ:

Հայաստանում ծառայության շրջանի մասին իր տպավորությունները ներկայացրեց նաև պրն Կլեմենտեն՝ հաստատելով, որ Սուրբ Էջմիածինը միշտ պիտի իր սրտում պահի:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ փոխհարաբերությունների մասին:

ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտող Թուրքմենստանի արտակարգ և լիազոր դեսպան Խիդիր Սապարլիևին:

Այս առիթով Նորին Սրբությունը իր գնահատանքը հայտնեց դեսպանին և ցանկացավ նորանոր հաջողություններ հետագա ծառայության մեջ:

«Հայաստանն իմ երկրորդ հայրենիքն է»,- ասաց դեսպանն իր պատասխան խոսքում՝ նշելով, որ լավ տպավորություններով է մեկնում Հայաստանից:

Հանդիպմանը խոսվեց հայ-թուրքմենական հարաբերությունների և երկու երկրների միջև առկա համագործակցության մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Փետրվարի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր նորանշանակ հավատարմատար պրն Մամուն Հարիրիին:

Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց պրն Հարիրիին՝ բարի և արդյունավոր առաքելություն ցանկանալով Հայաստանում: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ երկու ժողովուրդների միջև առկա դարավոր բարեկամությունը նույն ջերմությամբ շարունակվում է և տարեցտարի զորանում համագործակցությունը երկու երկրների միջև:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն, ի դեմս Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարի, շնորհակալություն հայտնեց այն հոգատար վերաբերմունքի համար, որ Սիրիայի իշխանությունները մշտապես դրսևորում են հայ ժողովրդի զավակների նկատմամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը վերհիշեց նաև 2001 թվականին կատարած այցը Հալեպ և Դեր Զոր, ինչպես նաև Սիրիայի Արաբական Հանրապետության գլխավոր մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2006 թվականին:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Փետրվարի 27-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լեհաստանի արտաքին գործերի նախարար տիկին Աննա Ֆոտիգան ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր հանդիպում ունեցավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի հետ:

Գերաշնորհ Սրբազան Հայրը տիկին Ֆոտիգային փոխանցեց Հովվապետական այցով Հնդկաստանում գտնվող Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու բարեմաղթանքները: Արշակ Սրբազանը մասնավորաբար գոհունակություն հայտնեց Լեհաստանում հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների, ինչպես նաև երկու երկրների միջև զարգացող գործակցության մասին: Մասնավոր անդրադարձ կատարվեց երկու երկրների կրոնական իրավիճակին և Հայաստանյայց Առաքելական ու Հռոմեակաթոլիկ Եկեղեցիների կարևոր դերակատարությանը հայ և լեհ ժողովուրդների կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի ին կիրակի. Դ կիր. զկնի Ծննդեան

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Մա կար աբեղա Հակոբյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը Ասէ ցնո սա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գա առ Իս՝ ոչ քաղցիցէ եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի (Հովհ. Զ բնաբանով քարոզ խոսեց տե ս էջ 7

Փետրվարի ին կիրակի. Ե կիր. զկնի Ծննդեան

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղու կաս աբեղա Զաքարյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց

Փետրվարի ին երեքշաբթի. Սրբոց Ղեւոնդեանց քահանայից

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Պա ռոյր քահանա Ավետիսյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Տեր Հայրը Որ նո ին դաւանութեամբն խաչակից Քեզ ընտրեցեր զդասս քահանայիցն Շնորհաբաշխ օծութեամբ կարգեալ հովիւս եւ վարդապետս Գովեմք զՔեզ ընդ զօրս անմարմնա կանացն Որդիդ Միածին Շարական բնաբանով քարոզ խոսեց տե ս էջ 7

Փետրվարի ին չորեքշաբթի. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի Տաճարն

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Սա հակ վարդապետ Մաշալյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հա վուր պատշաճի քարոզ խոսեց տե ս էջ 7

Փետրվարի ին հինգշաբթի. Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն որք կատարեցան ի մեծի պատերազմին

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վարդապետ Նանյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Իմ հայրենեաց հոգի՛ Վարդան Հոգիս հոգւոյդ լինի ղուրբան բնաբանով քարոզ խոսեց տե ս էջ

Փետրվարի ին կիրակի. Բուն Բարեկենդան

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Նա րեկ աբեղա Ավագյանը Հայր մեր ից առաջ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալ յանը Յորում ցնծայր զուարճանայր անտխրական խնդութեամբ Շարական բնա բանով քարոզ խոսեց տե ս էջ

Փետրվարի 2 ին կիրակի. Բ կիր. Քառասնորդական Պահոց Արտաքս ման

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն աբեղա Գուլյանը Հայր մեր ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը «Մի՛ կարծեք թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա՛ ջնջելու այլ՝ լրաց

նելու Մատթ. Ե 7 բնաբանով քարոզ խոսեց տե ս էջ

Մարտի ին կիրակի. Գ կիր. Քառասնորդական Պահոց Անառակին

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբեղա Սարոյանը Հայր մեր ից առաջ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստա կեսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց տե ս էջ

Մարտի ին կիրակի. Դ կիր. Քառասնորդական Պահոց Տնտեսին

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Ի սահակ աբեղա Պողոսյանը Հայր մեր ից առաջ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատր յանը Եւ գովեաց Տէրն զտնտեսն անիրաւութեան զի իմաստութեամբ արար Ղուկ. ԺԶ բնաբանով քարոզ խոսեց տե ս էջ

Մարտի ին կիրակի. Ե կիր. Քառասնորդական Պահոց Դատաւորին

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Եփ րեմ աբեղա Սարգիսյանը Հայր մեր ից առաջ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց

Մարտի 2 ին շաբաթ. ԼԴ օր Մեծի Պահոց Տօն է Սրբոյն Հօրն մերոյ Գրիգո րի Լուսաւորչին Յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի Վիրապն

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Հով հաննես աբեղա Մայիլյանը Հայր մեր ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հա վուր պատշաճի քարոզ խոսեց

Մարտի 2 ին կիրակի. Զ կիր. Քառասնորդական Պահոց Գալստեան

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Մա կար աբեղա Հակոբյանը Հայր մեր ից առաջ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց

Մարտի ին շաբաթ. ԽԱ օր Մեծի Պահոց Յիշատակ Յարութեան Ղազա րու

Այսօր Մայր Տաճարում Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Տ. Լևոն աբեղա Գուլյանը Հայր մեր ից առաջ Հայր Սուրբը հավուր պատշաճի քա րոզ խոսեց

“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Февраль-март 2007)

1. **ПРЕПОДОБНЫЙ АСОГИК КАРАПЕТЯН** – Церемония официального открытия в Лувре Года Армении во Франции, 21 сентября 2007 г. (с. 3-4).
2 **ДЬЯКОН ВАРДАН БАГУМЯН** – Патриарший визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Индию, 23 февраля-3 марта 2007 г. (с. 5-16).
3 Соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю кончины Премьер-министра РА Андраника Маргаряна, 25 марта 2007 г. (с. 17).
4 Выступление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на похоронах Премьер-министра РА Андраника Маргаряна, 28 марта 2007 г. (с. 18).
5. Соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Святейшеству Алексию II, Патриарху Москвы и Всея Руси (по случаю трагических событий, произошедших в Российской Федерации), 22 марта 2007 г. (с. 19).
6. Панихида в Первопрестольном Св. Эчмиадзине (по случаю сороковины со дня кончины главного редактора еженедельника «Акос» Гранта Динка), 4 марта 2007 г. (с. 20).
7. Заседание Верховного Духовного Совета в Первопрестольном Св. Эчмиадзине, 7-9 марта 2007 г. (с. 21-22).
8. Доклад Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, о деятельности Первопрестольного Св. Эчмиадзина за 2006 г. на расширенном заседании Верховного Духовного Совета, 9 марта 2007 г. (с. 23-55).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

9. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Высокопреосвященству архиепископу Егише Кизиряну по случаю 60-летия его рукоположения, 21 марта 2007 г., № 720 (с. 56-57).
10. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Роберу Хаттечяну по случаю 80-летия со дня рождения, 15 марта 2007 г., № 717 (с. 58-59).
11. Патриаршие награды (пожалование в феврале-марте 2007 г. благословений, права ношения фиалковых риз и нагрудных крестов, Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) – (с. 60).
12. Его Преосвященство епископ Арис Ширванян, Его Преосвященство

епископ Севан Гарибян и Его Преосвященство епископ Виген Айказян возведены в сан архиепископов (с. 61).
13. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса Всех Армян, по случаю Женского Дня, 8 марта 2007 г. (с. 62).
14. Его Преосвященство епископ Арарат Галтагджян назначен главой ключарства Первопрестольного Св. Эчмиадзина (с. 63).
15. Священник Абгар Геледжян был лишен сана священника (с. 63).
16. Праздник святых священников Гевондян в Первопрестольном Св. Эчмиадзине, 13 февраля 2007 г. (с. 64).
17. Праздник Сретения Господне в Первопрестольном Св. Эчмиадзине, 14 февраля 2007 г. (с. 65).
18. Праздник святых Вардананц в Первопрестольном Св. Эчмиадзине, 15 февраля 2007 г. (с. 66).
19. Собрание представителей молодежи в Первопрестольном Св. Эчмиадзине, 6 марта 2007 г. (с. 68-69).
20. Собрание священников в Первопрестольном Св. Эчмиадзине, 30 марта 2007 г. (с. 70-71).
21. Делегация Первопрестольного Св. Эчмиадзина не примет участия в церемонии открытия церкви Святого Креста на Ахтамаре (с. 72).

ПРОПОВЕДИ

22. Проповедь иеромонаха Макара Акопяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 4 февраля 2007 г. (с. 73-74).
23. Проповедь Преподобного священника Паруйра Аветисяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии в праздник святых священников Гевондян, 13 февраля 2007 г. (с. 75-78).
24. Проповедь архимандрита Саака Машаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 14 февраля 2007 г. (с. 79-82).
25. Проповедь архимандрита Вазгена Наняна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии в праздник святых Вардананц, 15 февраля 2007г. (с. 83-85).
26. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина в Воскресенье Истинной Масленицы, 18 февраля 2007 г. (с. 86-88).
27. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Татева Саргсяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина в Воскресенье Изгнания, 25 февраля 2007 г. (с. 89-92).
28. Проповедь Его Преосвященства епископа Асогика Аристакесяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина в Воскресенье Блудного сына, 4 марта 2007 г. (с. 93-94).
29. Проповедь Его Преосвященства епископа Аршака Хачатряна в Воскресенье Управителя, 11 марта 2007 г. (с. 95-100).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

30 **АРТАШЕС МАТЕВОСЯН** – Геворк Скевраци, создатель и миниатюрист «Лекционария» царя Гетума II (кодикологическое исследование) – (с. 101-112).
31. **ГЕНРИ МОКОЯН** – Патриотический характер христианской нравственности в армянской духовной жизни (философское исследование) – (с. 113-122).
32. **РАИСА ХАЧАТРЯН** – «Хачтур» Кусгета как идеологическая национальная модель (литературоведческое исследование) – (с. 123-129).
33. **НАИРА ПАРОНЯН** – Использование личных форм глагола в труде «Комментарий теории календаря» Акопа Крымеци (лингвистическое исследование) – (с. 130-136).
34. **ВАРДАН ЕГИАЗАРЯН** – Идеи отваги, любви и преданности в армянской поэзии позднего средневековья (литературоведческое исследование) – (с. 137-149).
35 **ЭЛЕОНОРА ГУКАСЯН** – Вопросы истории Армении в интерпретации арменоведа Леваяна де Флориваля (историковедческое исследование) – (с. 150-157).
36. **АСАТУР ПАШАЯН** – Мхитаристы Венеции – члены европейских академий и научных ассоциаций (историковедческое исследование) – (с. 158-162).
37. **ГОАР КАЗАРЯН** – Неизданные письма Норайра Бюзандаци (историковедческое исследование) – (с. 163-179).

РЕЦЕНЗИЯ

38. **ОВАНЕС ЗАТИКЯН** – Хачатур Абовян – 200 (О сборнике статей «Хачатур Абовян – 200») – (с. 180-181).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

39. Информация (О первом собрании делегатов новообразованной Армянской епархии Франции) – (с. 182).
40. Информация (О первом заседании Епархиального совета новообразованной Армянской епархии Франции) – (с. 183).

Новости из епархии Гугарка

41. **АСТХИК АСРЯН** – Праздничная церемония, посвященная празднику Св. Саркиса в зале церкви Св. Григора Нарекаци (с. 184).
42. Сотрудничество Церковь-государство-общественная организация во имя общества, 22 марта 2007 г. (с. 185).

Новости из Армянской епархии Грузии

43. Празднества Сретения и святых Вардананц в Армянской епархии Грузии (с. 186-187).
44. Персональная выставка миниатюриста Меружана Шаумяна в Тбилиси, 22

февраля 2007 г. (с. 187-188).
45. Празднование Середины Великого Поста в Армянской епархии Грузии, 14 марта 2007 г. (с. 188-189).

46. Ежегодное собрание священников Армянской епархии России в праздник святых Вардананц, 15 февраля 2007 г. (с. 190-191).
47. Освящение армянской церкви Св. Мариам в Сайдабаде (Индия), 4 марта 2007 г. (с. 192).

В Армянской епархии Ирака

48. Визит Главы Армянской епархии Ирака в города Северного Ирака, 2-4 марта 2007 г. (с. 193).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

49. Экуменические встречи в Швеции (с. 194).
50. Теологический диалог в Риме, 29 января-3 февраля 2007 г. (с. 195).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

51. Прощальный визит Посла Италии в РА г-на Марко Клементе Его Святейшеству Гарегину II, Католикосу всех армян, 7 февраля 2007 г. (с. 196).
52. Посол Туркменистана Хидир Сапарлиев в Первопрестольном Св. Эчмиадзине, 8 февраля 2007 г. (с. 196).
53. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Временного поверенного в делах Сирии в РА г-на Мамуна Харири, 16 февраля 2007 г. (с. 197).
54. Министр Иностранных дел Польши г-жа Анна Фотига в Первопрестольном Св. Эчмиадзине, 27 февраля 2007 г. (с. 197).

55 Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение февраля-марта 2007 г. (с. 198-199).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(February-March 2007)

1. **REV. FR. ASOGHIK KARAPETIAN** – Official ceremony of inauguration of the "Year of Armenia in France" at the Louvre, September 21, 2007 (p. 3-4).
2. **DEACON VARDAN BAGHUMIAN** – Pontifical visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to India: February 23 – March 3, 2007 (p. 5-16).
3. Message of Condolences of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the death of Prime Minister of the Republic of Armenia Andranik Margarian, March 25, 2007 (p. 17).
4. Eulogy of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during the funeral of Prime Minister Andranik Margarian, 28 March, 2007 (p. 18).
5. Message of Condolences of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Holiness Alexy II, Patriarch of Moscow and All Russia, March 22, 2007 (p. 19).
6. The Repose of Souls Service in the Mother See of Holy Etchmiadzin on the 40th day following the death of Hrant Dink, chief editor of the "Agos" weekly newspaper, March 4, 2007 (p. 20).
7. Meeting of the Supreme Spiritual Council in the Mother See of Holy Etchmiadzin, March 7-9, 2007 (p. 21-22).
8. Report of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the activities of the Mother See of Holy Etchmiadzin in 2006 to the regular session of the Supreme Spiritual Council, March 9, 2007 (p. 23-55).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

9. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Yeghishe Gizirian on the occasion of the 60th anniversary of his ordination, March 21, 2007, no.720 (p. 56-57).
10. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Robert Hadjetian on his 80th birthday, March 15, 2007, no.717 (p. 58-59).
11. Pontifical Awards (messages of blessing and pectoral crosses granted in February and March 2007 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 60).
12. His Grace Bishop Aris Shirvanian, His Grace Bishop Sevan Gharibian and His Grace Bishop Vicken Aykazian elevated to the rank of Archbishop, (p. 61).
13. Message of Congratulations of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, on the occasion of Women's Day, March 8, 2007 (p.

62).
14. His Grace Bishop Ararat Kaltakjian is appointed as Grand Sacristan of the Mother See of Holy Etchmiadzin (p. 63).
15. Rev. Fr. Abgar Gelejian has been defrocked (p. 63).
16. The Feast of Saints Ghevondiants in the Mother See of Holy Etchmiadzin, February 13, 2007 (p. 64).
17. The Feast of the Presentation of the Lord to the Temple in the Mother See of Holy Etchmiadzin, February 14, 2007 (p. 65).
18. The Feast of the Saints Vartanants in the Mother See of Holy Etchmiadzin, February 15, 2007 (p. 66).
19. Meeting of youth representatives in the Mother See of Holy Etchmiadzin, March 6, 2007 (p. 68-69).
20. Meeting of priests in the Mother See of Holy Etchmiadzin, March 30, 2007 (p. 70-71).
21. The delegation of the Mother See of Holy Etchmiadzin will not participate to the opening of the Church of the Holy Cross of Aghtamar (p. 72).

SERMONS

22. Sermon delivered by Rev. Father Makar Hakobian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, February 4, 2007 (p. 73-74).
23. Sermon delivered by Rev. Father Barouy Avetisian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Feast of Ghevondiants, February 13, 2007 (p. 75-78).
24. Sermon delivered by Very Rev. Fr. Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, February 14, 2007 (p. 79-82).
25. Sermon delivered by Very Rev. Fr. Vasken Nanian during the celebration of Divine Liturgy on the Feast of the Saints Vartanants, February 15, 2007 (p. 83-85).
26. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Pozapalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Sunday of Great Barekendan, February 18, 2007 (p. 86-88).
27. Sermon delivered by His Eminence Archbishop Datev Sargisian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Sunday of the Expulsion, February 25, 2007 (p. 89-92).
28. Sermon delivered by His Grace Bishop Asoghik Aristakesian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Sunday of the Prodigal Son, March 4, 2007 (p. 93-94).
29. Sermon delivered by His Grace Bishop Arshak Khachatrian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Sunday of the Steward, March 11, 2007 (p. 95-100).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

30. **ARTASHES MATEVOSIAN** – Gevork Skevratsi, Miniature Painter of the "Lectionary" of King Hetum II (codicological research) – (p. 101-112).
31. **HENRI MOKOYAN** – The Patriotic Character of the Christian Ideology in Armenian Religious Life (religious and ethical research) – (p. 113-122).
32. **RAISA KHACHATRIAN** – The "Khachtur" Relic of Kusget as an Ideological National Model (literary research) – (p. 123-129).
33. **NAIRA PARONIAN** – Personal Forms of Verbs in the work "Commentary of the Calendar Theory" by Hacob Ghrimetsi (linguistic research) – (p. 130-136).
34. **VARDAN YEGHIAZARIAN** – Ideas of Courage, Love and Devotion in the Armenian Poetry of the Late Middle Ages (literary research) – (p. 137-149).
35. **ELEONORA GHUKASIAN** – Issues of Armenian History in the Interpretation of Armenologist Levaillant de Florival (historical research) – (p. 150-157).
36. **ASATUR PASHAYAN** – Mekhitarits of Venice Members of European Academies and Scientific Associations (historical research) – (p. 158-162).
37. **GOHAR GHAZARIAN** – Unpublished Letters of Norayr Byuzandatsi (historical research) – (p. 163-179).

LITERARY REVIEW

38. **HOVHANNES ZATIKIAN** – Khachatur Abovian – 200 (About the collection of articles "Khachatur Abovian – 200") – (p. 180-181).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

39. Information (about the first meeting of delegates of the newly formed Armenian Diocese of France) – (p. 182).
40. Information (about the first session of the Diocesan Council of the newly formed Armenian Diocese of France) – (p. 183).

News from the Diocese of Gugark

41. **ASTGHIK ASRIAN** – Ceremony devoted to the Feast of Saint Sarkis in the St. Grigor Narektsi Church hall (p. 184).
42. Cooperation of Church-State-Social organization for society, March 22, 2007 (p. 185).

News from the Armenian Diocese of Georgia

43. Festivities on the Feast of the Presentation and Saints Vartanants in the Armenian Diocese of Georgia (p. 186-187).
44. Personal Exhibition of miniaturist Meruzhan Shahumian in Tbilisi, February 22, 2007 (p. 187-188).
45. Festivities of the Middle of Lent in the Armenian Diocese of Georgia (p. 188-189).

46. Yearly meeting of the priests of the Armenian Diocese of Russia on the Feast of the Saints Vartanants, February 15, 2007 (p. 190-191).
47. Re-consecration of the St. Mary Armenian Church of Saidabad (India), March 4, 2007 (p. 192).

In the Armenian Community of Iraq

48. Visit of the Primate of the Armenian Diocese of Iraq to the cities of Northern Iraq, March 2-4, 2007 (p. 193).

INTER-ECCLESIASTIC CONNECTIONS

49. Ecumenical meeting in Sweden (p. 194).
50. Theological dialogue in Rome (p. 195).

AUDIENCES IN THE MOTHER SEE

51. Farewell visit of Mr. Marco Clemente, Ambassador of Italy to Armenia, to His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, February 7, 2007 (p. 196).
52. Visit of Mr. Khidir Saparliyev, Ambassador of Turkmenistan to Armenia, to the Mother See of Holy Etchmiadzin, February 8, 2007 (p. 196).
53. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Mamun Hariri, Chargé d'affaires of Syria to Armenia, February 16, 2007 (p. 197).
54. Visit of Mrs. Anna Fotiga, Minister of Foreign Affairs of Poland, to the Mother See of Holy Etchmiadzin, February 27, 2007 (p. 197).

55. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during February and March 2007 (p. 198-199).

“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D’ETCHMIADZINE
(Février-mars 2007)

1 **REVEREND ASSOGHIK KARAPETIAN** – Cérémonie officielle de l’inauguration de l’«Année de l’Arménie en France» 0 21 2007 3 4

2 **DIACRE VARDAN BAGHOUMIAN** – Visite pontificale de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, en Inde, 23 février 3 0 2007 5 16

3 Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’occasion du décès d’Andranik Margarian, P 0 25 0 2007 17

4 Intervention de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’occasion des obsèques d’Andranik Margarian, Premier ministre de la RA, 28 0 2007 18

5 Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Sa Sainteté Alexy II, Patriarche de Moscou et de toute la Russie (à l’occasion des événements tragiques survenus en Fédération de Russie), 22 mars 2007 19

6 0 0 Siège d’Etchmiadzine à l’occasion des 40 jours du décès de Hrant Dink, rédacteur en chef de l’hebdomadaire « » 4 0 2007 20

7 Séance du Conseil Ecclésiastique Suprême au Saint Siège d’Etchmiadzine, 7 9 0 2007 21 22

8 Rapport sur les activités du Saint ège d’Etchmiadzine au cours de l’année 2006, présenté par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la Séance élargie du Conseil Ecclésiastique Suprême, 9 mars 2007 (p. 23 55

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

9 age de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’archevêque Eghiché Kizirian, à l’occasion du 60e anniversaire de son ordination, 21 mars 2007, N° 720 (p. 56 57

10 Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l’occasion du 80e anniversaire de la naissance de Robert Hattedjian, 15 mars 2007, N° 717 (p. 58 59

11 Distinctions pontificales (messages de bénédiction, droit de porter des Croix pectorales et des Chasubles fleuries accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne aux mois de février et de mars 2007) – 60

12 Son Eminence l’évêque Aris Chirinian, Son Eminence l’évêque Sévan Gharibian et Son Eminence l’évêque Viguen Aykazian sont élevés à la dignité d’archevêque (p. 61).

13 Message de félicitations de Sa Sainteté Garéguin II, Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens, à l’occasion de la Fête des Femmes, 8 mars 2007 (p. 62).

14 Son Eminence l’évêque Ararat Galtadjian est nommé Chef du Rituel du Saint Siège d’Etchmiadzine (p. 63).

15 Le prêtre Abgar Gueledjian a été défroqué (p. 63).

16 La Fête des saints prêtres Guévondians au Saint Siège d’Etchmiadzine, 13 février 2007 64

17 La Fête de la Présentation de Jésus au Temple au Saint Siège d’Etchmiadzine, 14

février 2007 (p. 65).
18 La Fête des saints Vartanides au Saint Siège d'Etchmiadzine, 15 février 2007 66
19 Réunion des représentants de la jeunesse au Saint Siège d'Etchmiadzine, 6 mars 2007 68 69
20 Réunion de prêtres au Saint Siège d'Etchmiadzine, 30 mars 2007 (p. 70 71
21 La délégation du Saint Siège d'Etchmiadzine ne participera pas à l'inaugura l'église Sainte Croix d'Aghtamar (p. 72).

SERMONS

22 Sermon prononcé par le Révérend Père Makar Hacobian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe, 4 février 2007 (p. 73 74
23 Sermon prononcé par le Révérend Parouyr Avétissian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Fête des saints prêtres Guévondians, 13 février 2007 (p. 75 78
24 Sermon prononcé par l'archimandrite Sahak Machalian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe, 14 février 2007 (p. 79 82
25 Sermon prononcé par l'archimandrite Vazguen Nanian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe, 15 février 2007 (p. 83 85
26 Sermon prononcé par Son Eminence l'archevêque Nerses Pozapalian à la Cathédrale de 0 Etchmiadzine à la Sainte Messe du Grand Barékendan, 18 février 2007 (p. 86 88
27 Sermon prononcé par Son Eminence l'archevêque Tathev Sargsian à la Cathédrale de 0 Etchmiadzine à la Sainte Messe du Dimanche de l'Exil, 25 février 2007 (p. 89 92
28 Sermon prononcé par Son Eminence l'évêque hik Aristakessian à la Cathédrale 0 Etchmiadzine à la Sainte Messe du Dimanche du Fils Prodigue, 4 mars 2007 93 94
29 Sermon prononcé par Son Eminence l'évêque Archak Khatchatrian à la Cathédrale de 0 Etchmiadzine à la Sainte Messe du Dimanche de l'Econome, 11 mars 2007 (p. 95 100

ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

30 **ARTACHES MATHEVOSSIAN** – Guévork Skevratsi, « 0 » du roi Hétoum II (recherche codicologique) – 101 112
31 **HENRI MOKOYAN** – L'essence patriotique de la morale chrétienne dans la vie religieuse arménienne (recherche religieuse et éthique) – 113 122
32 **RAISA KHATCHATRIAN** – 0 « 0 » de Kousguet comme modèle d'idéologie nationale (recherche littéraire) – 123 129
33 **NAIRA PARONIAN** – L'emploi des formes personnelles des verbes dans l'œuvre «Commentaire du calendrier» de Hacob Ghrimétsi ((recherche linguistique) – 130 136
34 **VARDAN EGHIAZARIAN** – Les idées de bravoure, d'amour et de dévouement dans la poésie arménienne du bas recherche littéraire) – 137 149
35 **ELEONORA GHOUKASSIAN** – Les questions de l'histoire arménienne dans l'interprétation de l'arméniste Levaillant de Florival (recherche historiographique) – 150 157
36 **ASSATOUR PACHAYAN** – 0 mbres des Académies et des associations scientifiques européennes (recherche historiographique) – 158 162
37 **GOHAR GHAZARIAN** – Les lettres inédites de Norayr Buzandatsi (recherche 0 – 163 179

CRITIQUE LITTERAIRE

38 **HOVHANNES ZATIKIAN** – 0 0 0 – 200 (Sur le recueil d'articles « 0 0 0 – 200» – 180 181

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

39 Information (Sur la première réunion des délégués du Diocèse nouvellement fondé de l'Eglise arménienne de France – 182
40 Information (Sur la première réunion du Conseil diocésain du Diocèse nouvellement fondé de l'Eglise arménienne de France) – 183

Nouvelles du Diocèse du Gougark

41 **ASTGHIK ASRIAN** – Cérémonie consacrée à la fête de saint Sarkis dans la 0 l'église Saint Grigor Narékatsi, 3 février 2007 (p. 184).
42 La coopération Eglise 0 organisation publique au nom de la société, 22 mars 2007 185

Nouvelles du Diocèse arménien de Géorgie

43 Les Fêtes de la Présentation et des Saints Vartanides au Diocèse arménien de Géorgie 186 187
44 L'exposition personnelle de l'enlumineur Méroujan Chahoumian à Tbilissi, 22 février 2007 187 188
45 La Fête du Milieu du Carême au Diocèse arménien de Géorgie (p. 188 189

46 Réunion annuelle des prêtres du Diocèse arménien de Russie à l'occasion de la Fête des Vartanides, 15 février 2007 (p. 190 191
47 Seconde bénédiction de l'église arménienne Sainte Mariam de Saïdabad (Inde), 4 0 2007 192

Au Diocèse arménien d'Iraq

48 0 0 du Diocèse arménien d'Iraq aux villes du nord de l'Iraq, 2 4 0 2007 193

RELATIONS INTERECCLESIASTIQUES

49 Rencontres œcuméniques en Suède (p. 194).
50 Dialogue théologique à Rome, 29 janvier 3 février 2007 (p. 195).

AUDIENCES AU SAINT-SIEGE

51 te d'adieux de M. Marco Clemente, Ambassadeur d'Italie, à Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, 7 février 2007 (p. 196).
52 Visite de M. Khidir Saparliyev, Ambassadeur du Turkménistan au Saint Siège d'Etchmiadzine, 8 février 2007 (p. 196

53 Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Mamoun Haribi, Chargé d'Affaires de Syrie en RA, 16 février 2007 (p. 197).

54 Visite de Mme Anna Fotiga, Ministre des Affaires étrangères de Pologne, au Saint Siège d'Etchmiadzine, 27février 2007 (p. 197).

55 Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les 0 0 0 0 Siège et à la Cathédrale de Saint 0 0 mois de février et de mars 2007 (p. 198 199

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տ. ԱՍՈՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - Ֆրանսիայում Հայաստանի տարվա բացման պաշտոնական արարողությունը Լուվրում 3
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովվապետական այցը Հնդկաստան 5
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական խոսքը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մահվան առիթով 17
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հուղարկավորության ժամանակ 18
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքին 19
Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 20
Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 21
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկույցը Մայր Աթոռի մեկամյա՝ 2006 թվականի գործունեության վերաբերյալ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստում 23

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյանին քահանայական ձեռնադրության վաթսունամյակի առիթով 56
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Ռոպպեր Հատտեճյանին ծննդյան ութսունամյակի առիթով 58
Հայրապետական գնահատություն 60
Արքության պատիվ Տ. Արիս, Տ. Սևան և Տ. Վիգեն Սրբազաններին 61
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առիթով 62
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ է նշանակվել Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը 63
Կարգալույծ է հռչակվել Տ. Աբգար քահանա Գըլըճյանը 63
Սուրբ Ղևոնդյանց քահանայից տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 64
Տեառնընդառաջի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 65
Վարդանանց Տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 66
Երիտասարդական ներկայացուցչական հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 68
Քահանայական հավաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 70
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից պատվիրակություն չի մասնակցելու Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու բացմանը 72

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Մակար աբեղա Հակոբյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի

Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 73
Տ. Պարույր քահանա Ավետիսյանի Քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ղևոնդյանց տոնին մատուցված Ս. Պատարագին 75
Տ. Սահակ վարդապետ Մաշալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 79
Տ. Վազգեն վարդապետ Նանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 83
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Բուն Բարեկենդանին մատուցված Ս. Պատարագին 86
Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 89
Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Անառակի կիրակիին մատուցված Ս. Պատարագին 93
Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տնտեսի կիրակիին մատուցված Ս. Պատարագին 95

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Գևորգ Սկևռացին Հեթում Բ թագավորի «Ճաշոցի» հորինիչ և պճնազարդող 101
ՀԵՆՐԻ ՄՈՔՈՅԱՆ - Քրիստոնեական բարոյականության հայրենասիրական բնույթը հայ հոգևոր կյանքում 113
ՌԱԻՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Կուսգետի խաչթուրն (Ս. Խաչթրիկ) իբրև գաղափարակիր ազգային մոդել 123
ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ - Բայի դիմավոր ձևերի գործածությունը Հակոբ Ղրիմեցու «Մեկնություն տումարի» երկում 130
ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - Քաջության, սիրո և նվիրումի գաղափարները ուշ միջնադարյան հայ բանաստեղծության մեջ 137
ԷԼԵՈՆՈՐԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ - Հայոց պատմության հարցերը հայագետ Լըվայան դը Ֆլորիվալի մեկնաբանմամբ 150
ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ - Վենետիկի Մխիթարյանները Եվրոպայի ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամներ 158
ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ - Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները 163

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ - Խաչատուր Աբովյան - 200 180

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Հաղորդագրություն 182
Հաղորդագրություն 183

Լուրեր Գուգարաց թեմից

ԱՍՏՂԻԿ ԱՍՐՅԱՆ - Տոնական հանդիսություն Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահում՝ նվիրված Ս. Սարգսի տոնին 184
Եկեղեցի-պետություն- հասարակական կազմակերպություն համագործակցություն՝ հանուն հասարակության 185

Լուրեր Վիրահայոց թեմից

Տեառնընդառաջի և Սրբոց Վարդանանց տոնակատարությունները Վիրահայոց թեմում 186
Մանրանկարիչ Մերուժան Շահումյանի անհատական ցուցահանդեսը Թբիլիսիում 187
Միջինքի տոնակատարությունը Վիրահայոց թեմում 188

Ռուսահայոց թեմի տարեկան քահանայից հավաքը Սրբոց Վարդանանց տոնին 190
Վերաօծվեց Սայդաբադի Ս. Մարիամ հայկական եկեղեցին 192

Իրաքի հայոց թեմում

Իրաքի հայոց թեմական առաջնորդի այցը Հյուսիսային Իրաքի քաղաքներ 193

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Էկումենիկ հանդիպումներ Շվեդիայում 194
Աստվածաբանական երկխոսություն Հռոմում 195

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Իտալիայի Հանրապետության դեսպանը հրաժեշտ տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին 196
Թուրքմենստանի դեսպանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 196
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին 197
Լեհաստանի Արտաքին գործերի նախարարի այցը Սուրբ Էջմիածին 197

Եկեղեցական բեմ. լուրեր 198

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата 200
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiad 204
“Etchmiadzine” organe officiel du Saint siège d’Etchmiadzine 208